

Սյունյաց երկիր


ՄԱԿՈՒԹԱՅԻՆ

ԵՌԱՄՍՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

www.syuniacyerkir.am
syuniacyerkir@mail.ru

№21
30 ՄԱՐՏԻ
2026Թ.

Մեղրի կամ
պայծառանուն գավառ
Արևյաց տուն



ISSN 2738-2540
21001 >
9 772738 254000

Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ: Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու, և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել: Որին Հայկը չկամենալով հնազանդել, Բաբելոնում Արամանյակ որդին ծնելուց հետո. չվեց դեպի Արարադի երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, որ գորավոր մարդիկ էին, թվով մոտ երեքհարյուր հոգի, և ուրիշ ընդդիմներով, նրան հարած եկվորներով

և բոլոր տունտեղով: Գնում բնակվում է մի լեռան ստորոտում դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածում շինում է բնակության տուն և տալիս է ժառանգություն Կադմուսին, Արամանյակի որդուն: Սա արդարացնում է ասված անգիր հին գրույցները: Իսկ ինքը, ասում է (Մար Աբասը), իր մնացած մարդկանցով և տունտեղով շարժվում է դեպի հյուսիսային արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարթ, այսինքն թե այստեղ բնակողները հայրեր են Թորգոմի տան սերունդի: Շինում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն: Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդել են դյուցազնին: Այս էլ արդարացնում է ասված անգիր գրույցները:


Մովսես Խորենացի



Հայկ Նահապետի արձանը Երևանում, հեղինակ՝ Կառլեն Նուրիջանյան

Համարի աջակիցը և հովանավորը

Մեղրուն նվիրված թերթային համարների 2-րդ մասի աջակիցը և հովանավորը դարձյալ Ազատ Բենիամինի Գասպարյանն է՝ «Մեղրու ԾՆՇՁ» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրենը, Արևիք գավառի մերօրյա նվիրյալը:



Մեղրի, համայնապատկեր

Մեղրին: Հիանալի շրջան է, կոպտուրական շրջան: «Կոպտուրական» ածականը այնպես է ծուլվել այդ գավառին, որ Մեղրին մեր երևակայության մեջ աստիճանաբար վերածվում է Ատլաստիոյայի: Ասես քաղաքներով, հիմնարկներով, դպրոցներով մի ամբողջ երկրամաս է ջրասույզ եղել հեռու, անմատչելի լեռներում, իսկ նրա շուրջ վայրի, ամայի տարածություններ են...

Ամբողջ գավառը նեղ կիրճի ձևով ձգված է մի քանի վերստի վրա: Նրա աջ և ձախ կողմերում կանգնած են մերկ լեռներ, որոնք նման են խիտ մազերի միջից դուրս ցցված ցուլի եղջյուրների, ներքևում այգիների թավ կանաչն է, վերևում՝ քարքարոտ, ուղղաբարձ, գրեթե ուղղահայաց ժայռեր:

ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ
1927 Թ.

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- 2 | Հատված Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից
- 3 | Համարի աջակիցը և հովանավորը
- 3 | Հատված Մարիետա Շահինյանի հուշերից
- 6 | Արևիքը՝ գեղանկարներում

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ


- 10 | Արևիք-Մեղրին, որի մասին հիշատակություն կա Աստվածաշունչ մատյանի Ծննդոց գրքում, ինչպես և Ուրարտուի թագավոր Արգիշտի Ա-ի ու Ասորեստանի թագավոր Շամսիռամոնի արձանագրություններում (Սամվել Ալեքսանյան)

ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- 15 | Արևիք գավառը վաղ միջնադարում (Աշոտ Մանուչարյան)
- 17 | Արևիք և Մեղրի տեղանունների ստուգաբանությունը. ավանդագրույցներ, վարկածներ (Սամվել Ալեքսանյան)

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 19 | Վիմագրագիտական ակնարկ Մեղրու տարածաշրջանի



ԱՐԵՎԻՔԻ ԳԱՎԱՐԸ ՎԱՂ
ՄԻԳՆԱՂԱՐՈՒՄ
ԷԳ 15

- 21 | արձանագրությունների մասին (Աշոտ Մանուչարյան)
- 21 | Հայոց պատմությունից մեկ էջ ևս լուսավորվեց (Սամվել Կարապետյան)
- 22 | Ակնարկ Մեղրու IX-XI դդ. իշխանների մասին (Աշոտ Մանուչարյան)
- 23 | Թուագրութեամբ հնագոյն, Թ. դարի խաչաքանդակ քար Մեղրու տարածաշրջանում
- 26 | Վիմագրական նորոյթներ Մեղրու տարածաշրջանի արևմտյան հատվածից (Աշոտ Մանուչարյան)
- 28 | Երկու վիմագիր հիշատակություն մեղրեցիների մասին Տաթևի վանքից և Կապանի Հալիձորից (Աշոտ Մանուչարյան)
- 30 | Լիճքվազի հուշարձանները (Էմմա Աբրահամյան)
- 32 | Սովի վկայությունը Վահրավարի վիմագրերից մեկում (Էմմա Աբրահամյան)
- 34 | Հացի թանկության վիմագիր հիշատակություններ Մեղրու և Մարտունու շրջաններում (Աշոտ Մանուչարյան)

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 35 | Մեղրու ավանդական տարագի տոնածիսական համալիրը (Սվետլանա Պողոսյան)
- 40 | Մեղրեցիների տոնածիսական վարքագծային փոփոխությունները վերջին հարյուրամյակում (Սամվել Մկրտչյան)
- 42 | Շվանիձոր գյուղը 19-րդ դարի վերջին ըստ Նիկոլ Աղբալյանի (Արմեն Մանուկյան)
- 47 | Լեռների պաշտամունքը (Ստեփան Լիսիցյան)



ՄԵՂՐՈՒ ՇՐՋԱՆԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՀԱՏՎԱԾ
ՀԱՍՏՆՈՒՆ ՀՈՂՎԱԾԻՅՅ
ԷԳ 48

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

- 48** | Մեղրու շրջանի հուշարձանները. հատված համանուն հոդվածից (Մուրադ Հասարայան)

- 52** | Մեղրիի ժողովրդական ճարտարապետությունը. ուշ միջնադար և Նախասովետական շրջան (Նուբար Պապուխյան)

- 54** | Շվանիձորի ջրանցույց կամուրջը (17-րդ դար)

- 55** | Մեղրիի Փոքր թաղի ճարտարապետությունը 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգության համատեքստում (Համազասպ Աբրահամյան)

- 58** | Մեղրիի շրջանի հարթածածկ գյուղական տունը (Նուբար Պապուխյան)

- 59** | Մեղրու անցյալը լուսանկարներում


ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐԻՒՆԵՐ

- 63** | Վերջին կայարանապետը (Վահրամ Օրբեյան)

- 65** | Հայաստանի ամենահարավային օդանավակայանը. ինչպես հանքից աերողրոմ «ծնվեց» (Վահե Սարուխանյան)

- 68** | Մեղրու երկաթուղու օրհասը (Դավիթ Մաթևոսյան)

- 70** | Արաքսի վրա Հայաստան-իրան կամուրջը. ինչպես այն



- կառուցվեց (Ժորա (Գևորգ) Միրզաբեկյան)

- 81** | Քաջարան-Մեղրի ճանապարհի գործարկումը

- 82** | Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-45 թթ.) կառուցվեց Ջուլֆա-Մինջևան (Միջևավան) երկաթուղին, որով կապ է հաստատվել Մեղրու տարածաշրջանի ու Երևանի միջև

- 83** | Կամուրջներ Մեղրի գետի վրա, 16-17-րդ դարեր

- 85** | Մեղրի-Կապան ավտոմայրուղին հանձնվեց շահագործման

- 85** | «Ես չգիտեմ՝ ուր եմ տանում հեռավոր ուղիների ժապավեններն անհամար...» (Վահրամ Օրբեյան)

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 87** | Հատված Ղևոնդ Ալիշանի «Սիսական» գրքից՝ Արևիք

- ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾ**
- 96** | Ե՞րբ պիտի Մեղրին ունենա երկրագիտական թանգարան (Վահրամ Օրբեյան)

- 98** | Պապ Օհանյան. «Մեղրին պետք է ունենա երկրագիտական թանգարան» (Վահրամ Օրբեյան)



- 100** | Մեղրի համայնքի բնակավայրերը, 2026 թ.

- 107** | Հատված Ռաֆֆու «Սամվել» վեպից (Արաքս գետի մասին)


- 108** | Իմ Մեղրի (Լիլիկ Պողոսյան, մշակումը՝ Տիգրան Գրիգորյանի)

ԱՐԵՎԻՔԸ՝ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Ռոբերտ Կամոյան,
«Ագարակ», կտավ,
յուղաներկ, 100X80,
2009 թ.



Լեւոարդ Իսաբեկյան,
Մեղրու կիրճը, 1973 թ.




Լեւոնիկ Առաքեյան, Ագարակ,
համայնապատկեր

ԱՐԿԻՎԻՐ
ԳԵՂԱՆՎՈՐՆԵՐՈՒՄ



Խաչատուր
Եսայան,
ընանկար.
Մեղրի, 1950 թ.



Սեյրան Խաթա-
լանջյան,
Մեղրի, 1970 թ.


ԱՐԵՎԻԻԹԸ
ՈՒՍԱԳՅՈՒԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ



Պապ Օհանյան, Մեղրի, 17-18-րդ դարեր, 2024 թ.



Պապ Օհանյան, Մեղրու Սուրբ Աստվածածինը, կտավ, յուղաներկ




Պապ Օհանյան, Մեղրի, կտավ, յուղաներկ


ՄԵԼԻՔԻԸ
ՊԱՍԿԵՊՈՒԴՈՒԹՅՈՒՆ



Պապ Օհանյան, Մեղրի, կտավ, յուղաներկ



Պապ Օհանյան, Մեղրի, կտավ, յուղաներկ



Պապ Օհանյան, Մեղրի, կտավ, յուղաներկ, 2023 թ.



Արևիք-Մեղրին, որի մասին հիշատակություն կա Աստվածաշունչ մատյանի Ծննդոց գրքում, ինչպես և Ուրարտուի թագավոր Արգիշտի Ա-ի ու Ասորեստանի թագավոր Շամսիռամնի արձանագրություններում

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեղրու տարածաշրջանին նվիրված հատուկ համարների շարքի 2-րդ մասն ենք ներկայացնում ընթերցողին:

1-ին մասը, որ լույս տեսավ 2025 թ. դեկտեմբերի 16-ին («Սյունյաց երկիր. մշակութային», № 20), նվիրված էր տարածաշրջանի քրիստոնեական սրբավայրերին:

Իսկ 2-րդ մասը...

Համարը բացվում է Հայկ Նահապետի հուշարձանով (հեղինակ՝ Կառլեն Նուրիջանյան) և Պատմահոր «Հայոց պատմությունից» բերված՝ «Հայկի ապստամբության մասին» քաղվածքով, ինչից վերստին իմանում ենք, թե ինչպես մեր Նախահայրը չհնազանդվեց բռնակալ Բելին:

Մյուս կողմից՝ հիշում ենք, որ Հայկի հաջորդներից Սիսակ Նահապետն էր հազարամյակներ առաջ ձևավորել Սյունյաց աշխարհը՝ իբրև Նահանգ՝ իր 12 գավառով, որոնց թվում Արևիք-Մեղրին է:

Այնուհետև. ներկայացնում ենք մի քանի գեղանկար. դրանք յուրովի վկայություն են այն իրողության, որ Արևիք-Մեղրին՝ Արաքսի հովտի մարգարիտը, եղել և մնում է ու ընդմիշտ կմսա ոգեշնչման աղբյուր արվեստի բոլոր ոլորտների գործիչների համար:

Ծանոթացեք գեղանկարիչներ Ռոբերտ Կամոյանի, Լեռնիկ Առաքելյանի, Խաչատուր Եսայանի, Սեյրան Խաթամաջյանի, Էդուարդ Իսաբեկյանի և, իհարկե, Պապ Օհանյանի հրաշալի ստեղծագործություններին և կհամոզվեք՝ Մեղրին, հիրավի, ոգեշնչման անսպառ աղբյուր է...

Առանձնահատուկ տեղ ենք հատկացնում ստուգաբանությանը...

Թեմայի վերաբերյալ ուշարժան տեղեկություններ ենք ստանում մեր նշանավոր հայրենակից, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Մանուչարյանի «Արևիք գավառը վաղ միջնադարում» հոդվածից, ինչպես և տողերիս հեղինակի «Արևիք և Մեղրի տեղանունների ստուգաբանություն. ավանդագրույցներ, վարկածներ» հոդվածից:

Մանրամասներին ընթերցողը կծանոթանա, բայց...

Մեկ-երկու տեղեկություն կուզենայինք անմիջապես հանրայնացնել, քանզի դա կբազմապատկի մեր հպարտությունն Արևիք-Մեղրու համար, հավելյալ պատկերացում կտա մեր ինքնության արմատների մասին:

Ասորեստանյան արձանագրություններից մեկում Շամսիռամն թագավորի (825-821, մ.թ.ա.) արձանագրության մեջ, կարդում ենք՝ «**Իրենց բազմաթիւ քաղաքները թողուցին, Ուրաս իրենց ամուր քաղաքը գնացին: Այն քաղաքը պաշարեցի, անոր տիրեցի:**»:

3. Սանտալճյանն իր ուսումնասիրության մեջ (Ասորեստանեայ և պարսիկ սեպագիր արձանագրությունք կամ նոցին քաղուածք, որոնք Նահրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին: Թարգմանեաց Յովսէփ Վ. Սանտալճեան, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1901 թվական) ենթադրել է՝ «Միջին Երասխայ ձախ եզերաց վրայ գտնուելու էր այս քաղաքն, եւ ասոր անունէն առած էր անշուշտ իւր անունն այն վիճակն, զոր Ուրարտացի թագաւորն Արգիստիս Ա. (Ք. ա. իբր 780-755) իւր Շբէր Արձանագրութեան մէջ (Ա. 25) ՄԱՏ Ուրայանի «Երկիր Ուրացոց» կկոչէ: Այս վիճակն Արեւիք գաւառին հետ նոյն կը համարիմ, եւ Ուրաս ամուր քաղաքը Շննդոց (Գլ. ԺԱ. 28, 31 են) Ուր Կասդից քաղաքին հետ նոյն կը դատեմ»:

Շամսիռամն թագավորի արձանագրության սույն մեկնաբանությունը հիշատակում է նաև մեր հայրենակից Սերգեյ Ումառյանը (Սյունիքը դիցարան, Երևան-1981, էջ 89):

Իսկ ի՞նչ են վկայում Աստվածաշունչ մատյանի Ծննդոց գրքի Գլ. ԺԱ-ի նշված 28 և 31 պարբերությունները:

Ահա՝ «**Եւ Առանը մեռաւ իր հօր Թարայի առաջին իր ծննդեան երկրումը... Ուր քաղաքումը:**

Եւ Աբրամը եւ Նաբովը իրանց համար կանայք առին...

Եւ Թարան առաւ իր որդի Աբրամին եւ իր թոռը Առանի որդի Ղովտին եւ իր որդի Աբրամի կին՝ իր հարսը՝ Սարային, եւ նորանց հետ ... Ուր քաղաքիցը դուրս եկաւ Զանանի երկիրը գնալու համար...»:

Ասորական վերոնշյալ արձանագրությունում, Արգիշտի Ա-ի արձանագրությունում, իսկ մինչ այդ՝ Ծննդոց գրքում հիշատակված Ուրաս, Ուր, Մատ Ուրանայա վայրերն Արևիք գավառն են:

Հայագիտության մեջ հարյուր և ավելի տարի շարունակ շրջանառվող այդ տեսակետը մասնագետներից որևէ մեկը կասկածի տակ չի առել, ուստի և անվերապահորեն ընդունում ենք մենք նույնպես:

Արգիշտի Ա-ի արձանագրությունը վկայում է նաև, որ Արևիքի տարածաշրջանը մ.թ.ա. 8-րդ դարում արդեն իսկ Ուրարտուի թագավորության մաս էր կազմում:

Արգիշտի Ա-ն, ինչպես գիտենք, մեծ ջանքեր է գործադրել Հայկական լեռնաշխարհի ցեղերին Ուրարտու պետության մեջ միավորելու համար: Եվ նրան հաջողվել է գրեթե Հայկական ամբողջ լեռնաշխարհը միավորել Ուրարտու պետության մեջ:

Մեր տարածաշրջանի պատմության ուսումնասիրման համար չափազանց կարևոր սկզբնաղբյուր է վիմագրությունը:

Սյունիքում վիմագիր արձանագրությունների հավաքման ու հրատարակման ուղղությամբ 1950-ականներին (հինգ տարի շարունակ) մեծածավալ աշխատանք է կատարել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը:

Հավաքված նյութերը հրատարակվել են «**Դիվան հայ վիմագրության**» շարքի II պրակում:

Դրանում ամփոփվել է Գորիսի, Կապանի և Սիսիանի շրջաններում հայտնաբերված 427 արձանագրություն:

Շատ ափսոս, սակայն, որ այդ որոնումները, որ կատարվում էին անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի գլխավորությամբ, չեն ընդգրկել Մեղրու տարածաշրջանը:

Ու մինչև հիմա ամբողջապես չեն հավաքվել ու հրատարակվել Մեղրու տարածաշրջանի վիմական արձանագրությունները:

Այդ բոլորով հանդերձ՝ եղել ու կան հայագետներ, ովքեր զբաղվել ու զբաղվում են Մեղրու տարածաշրջանում եղած վիմագիր արձանագրությունների որոնումներով և ուսումնասիրությամբ:

Այդ իմաստով նշանակալի աշխատանք է կատարել և կատարում Արևիք աշխարհի արժանավոր գավակ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Մանուչարյանը:

Գնահատելի է նաև Սամվել Կարապետյանի, Էմմա Աբրահամյանի և մյուս հնագետների կատարածը:

Մենք կարևոր համարեցինք ի մի բերել եղած հոդվածները կամ ուսումնասիրությունները և գետնդել հանդեսի այս համարում:

Ներկայացվող արձանագրություններից ուշագրավ տեղեկություններ ենք քաղում Մեղրու անցյալի մասին:

Օրինակ, արձանագրություններից մեկը հնարավոր է դարձնում պարզել, թե ովքեր են եղել Մեղրու 9-11-րդ դարերի իշխանները:

Մեկ այլ վիմագրում գտնված Վահրավար գյուղում, հացի թանկության կամ սովի մասին տեղեկություն է վկայակոչվում, որը, իսկապես, բացառիկ է իր բովանդակությամբ:

Մեղրու տարածաշրջանի վերաբերյալ տեղեկություններ ենք ստանում նաև Տաթևի վանքի ու Կապանի Հայիծորի վիմագրերից:

Կան նաև շինարարական արձանագրություններ: Մեղրիում են գտնվել Հայաստանում ամենավաղ թվագրություն ունեցող երկու խաչքարը՝ Ափկետում՝ 827 թ., Վանքում՝ 851 թ.:

Մինչ այդ գիտությանը հայտնի հնագույն թվագրությամբ խաչքարերը համարվում էին հայոց Արցախի Մեծարանց Սողոմոն եպիսկոպոսի (853 թ.) և Վարդուհասի (866 թ.) կրթողները:

Համարում որոշակի տեղ է հատկացվում ազգագրությանը, որն իր մեջ ներառում է տարածաշրջանի բնակչության կենցաղը, սովորույթները, էթնիկական յուրահատ-



Սյունիքի շրջանների ազգագրության ուսումնասիրման ուղղությամբ աննախադեպ մեծ աշխատանք է կատարել պրոֆեսոր, ազգագրագետ, աշխարհագրագետ, պատմաբան Ստեփան Լիսիցյանը:

ՊՈՒՆԵՐՆԵՐ

կույունները, պատմամշակութային առևտուրները:
 Սյունիքում ազգագրական կույունների հավաքման ուղ-
 դույթամբ 19-րդ դարավերջին աշխատանքներ է ծավալել
 անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը:
 Յավաքված կույունը տեղ են գտել «Ազգագրական
 հանդեսի» հատորներում:
 Այնուհետև՝ բոլոր այդ կույունը տեղ են գտել Հնագի-
 տության և ազգագրության ինստիտուտի կողմից հրա-
 տարակվող վեց հատորով երկերի չորրորդ հատորում
 (Երևան 2021):

Ցավոք, այս դեպքում ևս Մեղրու տարածաշրջանը չի
 ընդգրկվել տվյալ ուսումնասիրությունների շրջանակում:
 Չնայած դրան, կա հիմնավոր տեղեկություն առ այն,
 որ Երվանդ Լալայանն այցելել է Մեղրու տարածաշրջան
 և զբաղվել ազգագրական կույունների հավաքմամբ: **Ու-
 սումնասիրության արդյունքները հրատարակվել
 են Թբիլիսիում լույս տեսնող «Известия» պարբե-
 րականում (1927 թ.) «Мегринское крестьянское
 жилище» վերնագրով:**
 Պարբերականի այդ համարը գտնելու մեր որոնում-
 ներն առայժմ արդյունք չեն տվել...

*Մեղրու տա-
 րածաշրջանի
 ազգագրության
 վերաբերյալ (19-
 րդ դարավերջի և
 20-րդ դարասկզ-
 բի ընդգրկու-
 մով) կարևոր
 սկզբնաղբյուր է
 Մաթևոս Շահ-
 յանի ձեռագիր
 մատյանը, որի
 բնօրինակն Ազ-
 գային արխիվում
 է (Ֆոնդ 428,
 ցուցակ 4, գործ
 335):*

**Սյունիքի շրջանների ազ-
 գագրության ուսումնասիրման
 ուղղությամբ աննախադեպ մեծ
 աշխատանք է կատարել պրո-
 ֆեսոր, ազգագրագետ, աշխար-
 հագրագետ, պատմաբան Ստե-
 փան Լիսիցյանը:**

1920-ականներից մեծանուն
 գիտնականը նվիրվել է ազգագրու-
 յանը՝ դառնալով ազգագրության
 հայ խորհրդային դպրոցի հիմնադի-
 րը:

1920-30-ական թվականներին
 նա ազգագրական կույուն է հավա-
 քել Սյունիք-Չանգեզուրում:

**19-րդ դարավերջին և 20-րդ
 դարասկզբին առնչվող այդ կու-
 յունը տեղ են գտել «Չանգեզու-
 րի հայերը» մենագրության մեջ
 (Երևան-1969, Հայկական ՍՍՀ
 Գիտությունների ակադեմիայի
 հրատարակչություն):**

Դրանում Ս. Լիսիցյանն անդրա-
 դարձներ է կատարում նաև Մեղրու տարածաշրջանին՝
 բարբառագիտություն, տների կահավորում, կանացի
 զգեստներ, հին բարավանային ճանապարհներ, այգե-
 գործություն, սրանոցներ, արհեստներ և այլն:

**Համարի ազգագրության բաժինը յուրովի է
 հարստացվում տարածաշրջանի կյանքն արտա-
 ցողը հին լուսանկարներով, որոնցից մի քանիսը
 ներկայացվում են:**

Հաճելի է նկատել, որ Մեղրու տարածաշրջանի ազ-
 գագրության ուսումնասիրումը հետագայում նույնպես
 զբաղեցրել է հայագետներից շատերի ուշադրությունը,
 որոնցից մի քանիսի հոդվածը ներկայացնում ենք:

**Այսպես՝ «Մեղրու ավանդական տարազի տո-
 նածիսական համալիրը» (Սվետլանա Պողոսյան), «Մեղրեցիների տոնածիսական վարքագծային փո-
 փոխությունները վերջին հարյուրամյակում (Էթ-
 նոսոցիոլոգիական ազգագրական հետազոտու-
 յուններ)» (Սամվել Մկրտչյան), «Շվանիձոր գյուղը
 19-րդ դարի վերջին՝ ըստ Նիկոլ Աղբալյանի» (Ար-
 մեն Մանուկյան), «Մեղրիի մշակութային զբո-
 սաշրջության զարգացման ներուժը» (Սվետլանա**

Պողոսյան):

Մեղրու տարածաշրջանի ազգագրության վերաբերյալ
 (19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ընդգրկումով)
 կարևոր սկզբնաղբյուր է Մաթևոս Շահյանի ձեռագիր
 մատյանը, որի բնօրինակն Ազգային արխիվում է (Ֆոնդ
 428, ցուցակ 4, գործ 335):

Մենք շանքեր ենք գործադրում բացառիկ այդ մատ-
 յանի օրինակը ձեռք բերելու և այն Մեղրուն նվիրված հե-
 տագր համարներում ընդգրկելու համար:

**Մեղրու տարածաշրջանի ազգագրության (և ոչ
 միայն) մասին հետաքրքիր, որոշ դեպքերում՝ բա-
 ցառիկ, տեղեկություններ են պարունակում աշ-
 խարհահռչակ ճանապարհորդների գրառումները,
 ովքեր տարբեր ժամանակներում շրջագայել են
 Սյունյաց աշխարհի այդ գավառում:**

Նկատի ունենք Նշանավոր ճանապարհորդ, բնագետ
 և հնէաբան Դյուբուա դե Մոնպերեին (1798-1850 թթ.), ով
 1834 թ. ապրիլին Մեղրիում էր:

Նկատի ունենք աշխարհագրագետ, ճանապարհորդ
 Գուստավ Ռադդեին (1831-1903 թթ.), ով 1890 թ. ամռանը
 Մեղրիում էր:

Նկատի ունենք ֆրանսիացի նշանավոր մարդաբան
 և հնագետ Էռնեստ Շանտրին (1843-1924 թթ.): Նկատի
 ունենք ֆրանսիական ծագմամբ ազգագրագետ, պատ-
 մաբան և պետական գործիչ Իվան Շոպենիս (1798-1870
 թթ.), ով Ռուսաստանի ցարական կառավարության
 հանձնարարությամբ կատարել է վիճակագրական հետա-
 զոտություններ նաև Արաքսի հովտում:

Նկատի ունենք հայ ազատագրական շարժման նշա-
 նավոր գործիչ Հովսեփ Էմինին (1726-1809 թթ.), ով Մեղրի
 է այցելել 1766-ին, երբ Գյուլիստանի Մելիք Հովսեփի հետ
 եկել էր Արցախ, տեսակցել Գանձասարի կաթողիկոս Հով-
 հանեստ Հասան Չալայանի և Արցախի մելիքների հետ,
 շրջագայել հայոց աշխարհի այդ և հարակից հատվածնե-
 րում:

**«Հովսեփ Էմին հայի կյանքը ու արկածները»
 վերտառությամբ գրքում (լույս է տեսել 1788-ին՝ անգլե-
 րեն լեզվով) հետաքրքիր տեղեկություններ կան Մեղրու
 վերաբերյալ:**

Կարծում ենք՝ ապագա ուսումնասիրողները պետք է
 այդ ճանապարհորդների գրառումները՝ Մեղրու տարա-
 ծաշրջանում կատարած շրջագայության մասին, ի մի բե-
 րեն և հասանելի դարձնեն ընթերցողին:

**Համարը հնարավորություն է ընձեռում ընդհա-
 նուր պատկերացում կազմել Մեղրու տարածաշր-
 ջանի ճարտարապետության մասին:**

Թեմայի ուսումնասիրման գործում, անշուշտ, մեծ է
 մեր նշանավոր հայրենակից, անվանի ճարտարապետ,
 պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանի դերը (պատմաբան-բա-
 նասեր Մորուս Հասրաթյանի որդին է):

Մուրադ Հասրաթյանը՝ 90 տարեկանում, վերջերս
 հրաժեշտ տվեց կյանքին:

Նա մեծ ներդրում է ունեցել Սյունիքի ճարտարապե-
 տական համալիրների և մասնավորապես Մեղրու տա-
 րածաշրջանի համալիրների ուսումնասիրման գործում:

**Դեռևս 1969-ին պաշտպանեց դիսերտացիա՝ «Սյու-
 նիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համա-
 լիրները» թեմայով:**

Մեղրու տարածաշրջանի վանքերի ու եկեղեցիների
 ճարտարապետական առանձնահատկությունների վե-
 րաբերյալ նրա ուսումնասիրությունը տեղ էր գտել «Սյուն-
 յաց երկիր. մշակութային» հանդեսի № 20-ում (15.12.2025
 թ.), որը նվիրված է Արևիք-Մեղրիին:

Այս համարում ևս նրա հոդվածն է՝ «Մեղրու շրջանի հուշարձանները» վերտառությամբ:

Սյունիքի ժողովրդական ճարտարապետության, այդ թվում՝ Մեղրիի ժողովրդական ճարտարապետության ուսումնասիրման գործում նշանակալից է Նուբար Պապուխյանի դերակատարությունը:

Համարում ծանոթանում ենք նրա՝ «Մեղրիի ժողովրդական ճարտարապետությունը», «Մեղրու շրջանի հարթածածկ գյուղական տունը» վերտառությամբ ուսումնասիրություններին, ինչպես և Շվանիձորի ջրանցույց կամրջին (17-րդ դար), «Մեղրիի Փոքր թաղի ճարտարապետությունը 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգության համատեքստում» (Համագասպ Աբրահամյան) հոդվածներին:

Մեղրու հաղորդակցության ուղիների տեղագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Քաջարան-Մեղրի ճանապարհի կառուցումը: Մերուները երբեք չեն մոռանա, որ 1980 թ. Նոյեմբերի 2-ին շարք մտավ կամ գործարկվեց Քաջարան-Մեղրի ռազմավարական ճանապարհը: Մեղրեցիների ուրախությունն ու բերկրանքը Դիբագի լեռնանցքում կիսեցին դարակազմիկ այդ նախաձեռնության հեղինակները՝ Կարեն Դեմիրճյանն ու Ֆադեյ Սարգսյանը

Երկաթուղու թեմայի շարունակությունը տեսնում ենք երջանկահիշատակ Դավիթ Մաթևոսյանի «Մեղրու երկաթուղու օրհասը» վերտառությամբ հոդվածում, նաև վերջին կայարանապետի մասին Վահրամ Օրբելյանի հրապարակման մեջ:

Զգե՛րը գիտեն, որ Մեղրիում 1980-ականներին նաև օդանավակայան է կառուցվել, այն էլ՝ Կարեն Դեմիրճյանի նախաձեռնությամբ:

Օդանավակայանի կառուցման և դրա հետագա ճակատագրի մասին Նույնպես կիմանաք համարից:

Մեղրու հաղորդակցության ուղիների տեղագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Քաջարան-Մեղրի ճանապարհի կառուցումը: Մերուները երբեք չեն մոռանա, որ 1980 թ. Նոյեմբերի 2-ին շարք մտավ կամ գործարկվեց Քաջարան-Մեղրի ռազմավարական ճանապարհը: Մեղրեցիների ուրախությունն ու բերկրանքը Դիբագի լեռնանցքում կիսեցին դարակազմիկ



Հաղորդակցության ուղիներ... Թեման չափազանց կարևոր է՝ պատկերացում կազմելու տարածաշրջանի մասին:

Այդ իմաստով նախ ուշագրավ են տարածաշրջանի միջնադարյան կամուրջները: Ուշագրավ են ոչ միայն ճարտարապետական, այլև հին ճանապարհների ուղղությունները տեղորոշելու տեսակետից:

Միջնադարյան կամուրջների մի մասի լուսանկարները ներկայացվում են համարում:

Այնուհետև՝ տեղեկանում ենք, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-45 թթ.) կառուցվեց Ջուլֆա-Մինջևան (Միջնավան) երկաթուղին, որով կապ է հաստատվել Մեղրու տարածաշրջանի ու Կապանի միջև:

Երկաթուղու թեման հետաքրքիր է ոչ միայն պատմական տեսակետից, այն նաև հույժ արդիական է:

Ընդամենը վերջերս, երբ լույս աշխարհ եկավ «Թրիփի» ծրագիր-մտադրությունը, Արդրեշանի ներկայացուցիչները բանիցս արտահայտել են իրենց հավանությունները երկաթուղու Մեղրու հատվածի հանդեպ: Հավանությունների հիմքում կեղծ դրույթ է՝ իբր 1938-ին Հայաստանն իր երկաթուղիների վերահսկողությունը փոխանցել է Ռուսաստանին: Եվ հիմա հիշեցնում են, թե փոխանցումը տարածվել է նաև Մեղրու երկաթուղու վրա, որն իբր գտնվում էր Արդրեշանի իրավասության ներքո:

այդ նախաձեռնության հեղինակները՝ Կարեն Դեմիրճյանն ու Ֆադեյ Սարգսյանը:

Ռազմավարական նշանակության մեկ այլ ճանապարհ էլ կառուցվեց 2000-ականների սկզբին: Խոսքը Կապան-Ծավ-Մեղրի ավտոճանապարհի մասին է, որի գաղափարը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանինն էր:

Այդ մասին Նույնպես ընթերցողը տեղեկություններ կստանա համարում:

Թեման, անշուշտ, ամբողջական չէր լինի, եթե չանդրադառնայինք Արաքս գետի վրա Իրան-Հայաստան կամրջի կառուցման նախապատմությանը, որը հանգամանակից ներկայացվում է Ժ. Միրզաբեկյանի «Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի սահմանում»:

Մինչ այդ՝ 1992-ի մայիսի 6-ին, բացվել է նավակամուրջը կամ պոնտոնային կամուրջը:

Այո, հենց այդ ժամանակ Մեղրու Ագարակ ավանի դիմաց մայր Արաքսի ափերը կամրջվեցին միմյանց: Բացման արարողությունը մասնակցելու էր եկել հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանը:

Հաղորդակցության ուղիների պատմությանը կանդորադառնանք նաև հանդեսի հաջորդ համարում:

ԽՈՒՄԻՆԻՍՏ

մարներում: Մասնավորապես, հանգամանակից խոսակցություն կվարենք այն մասին, թե ինչպես Հայաստանի Հանրապետության պատասխանատուները (Գրիգոր Հարությունյան, Կարեն Դեմիրճյան, Ֆադեյ Սարգսյան, Վլադիմիր Մովսիսյան) ձախողեցին Մեղրու տարածքով՝ Արաքսին զուգահեռ, ճանապարհի կառուցումը, որը պետք է շանգելանի շրջանը կապեր Օրդուբադի հետ:

Հանգամանակից խոսակցություն կվարենք «Թրամվիի ուղի» նախագծի մասին, որը, փաստորեն, Մեղրու հաշվին թուրք-սորբեջանական դարավոր երազանքի իրականացում է նշանակում:



Գուստավ Ռարոն



Երվանդ Լալայան



Ֆրեդերիկ Դյուրեա դը Մոնպերե



Էռնեստ Շամսո



Հովսեփ Էմին

Մեր խոսքի սկզբում անդրադարձանք տարածաշրջանի վիճակագրությանը՝ ցույց տալով, թե դարերի խորքից ինչպիսի արձանագրություններ են մեզ հասել:

Մեղրու տարածաշրջանում հայտնաբերված հնագիտական նյութերի վերաբերյալ տեղեկություններ ենք ստանում նաև Պապ Օհանյանի ու Նաիրա Հայրապետյանի հետ ունեցած գրույցներից:

Նրանք (սեփական նախաձեռնությամբ) տարիներ շարունակ հսկայական աշխատանք են կատարել հնագիտական նյութերի հավաքման ուղղությամբ:

Սակայն այդ բնագավառը շարունակում է դուրս մնալ պետական ուշադրությունից և հոգածությունից: Ուստի և նորից է կարևորվում Մեղրիում երկրագիտական թանգարանի հիմնելու խնդիրը:

Քանիցս առիթ ենք ունեցել նշելու բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանի «Սիսական» կորոնային գործի բացառիկ նշանակությունը Սյունիքի գավառների պատմության ուսումնասիրման և հատկապես տեղագրության հետազոտման գործում:

Ալիշանը նախատեսել էր գրել պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգների մասին պատմաաշխարհագրական բնույթի աշխատություններ, որոնք պետք է գետնովքեն 20-22 մեծադիր հատորում:

Շարքի առաջին գործերից է «Սիսականը», որը չինացող կորոն է հայագիտության գանձարանում:

Բնավ Հայաստանում եղած չլինելով, Ալիշանն այդ գործում տեղագրել է Սյունիքի բոլոր գավառների (այդ թվում՝ Արևիքի) լեռները, գետերը, լճերը, ձորերը, արժեքավոր տեղեկություններ հաղորդել նահանգում եղած մեծ ու փոքր պատմական հուշարձանների մասին:

«Սիսականի» Արևիք գավառի հատվածը՝ մեր նախաձեռնությամբ և ճանաչված գրաբարագետ Հակոբ Ջյոսեյանի ջանքով, փոխադրվել է գրական հայերենի, որը և ներկայացնում ենք համարում:

Հիշենք նաև «Սիսականը» լույս է տեսել 1893 թվականին Վենետիկի Մխիթարյան միաբանությունում:

116 տարի անց՝ 2009 թվականին, գիրքը վերահրատարակվել է Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ ու միջոցներով:

Եվ, որպես տեղագրության շարունակություն, ներկայացնում ենք այն բնակավայրերի համայնապատկերները, որոնք կան և ընդգրկված են Մեղրի խոշորացված համայնքի մեջ:

Համարն ավարտում ենք Արաքս գետի ափամերձ տարածքը ներկայացնելով, հայոց մայր գետի վերաբերյալ Բաֆֆու խոսքով, Բերդին քար ամրոց-սրբավայրը ցույց տալով, լուսահոգի Լիլիկ Պողոսյանի՝ Մեղրին փառաբանող բանաստեղծությամբ, որը (հիրավի) կատարյալ է դարձել Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի մշակմամբ:

Այդ ամենով, սակայն, Մեղրու մասին մեր պատումը չենք ավարտում:

Այն կշարունակենք Արևիք-Մեղրիին նվիրված թերթային հաջորդ համարներում, որի ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

Արևիք գավառը վաղ միջնադարում

Հնում գավառը կոչվել է Արևիք: Այն գրեթե համապատասխանում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանին: Արևիքը հյուսիսից սահմանափակված էր Մեղրու, հյուսիս-արևելքից Խաչքուլու լեռներով, հարավից՝ Երասխ գետով, արևմուտքից՝ Գողթան, իսկ արևելքից՝ Վարդանասարի լեռներով: Սկզբում մաս է կազմել Գողթան գավառի, ապա անջատվելով՝ դարձել Սյունյաց գավառներից մեկը¹: Ակնհայտ է Ագուլիսի, Ջուղայի լեզվամշակութային ազդեցությունը Մեղրու վրա:

Արևիք գավառը Հայոց Մեծաց կաթողիկոս Սարգիս Ա. Սևանցու (990-1019) 1006 թ. Սյունյաց մետրոպոլիտության վերականգնման հայրապետական կոնդակում կոչվում է «Արևեաց տունն»²:



Միհրը, ով հայոց դիցարանում Արամազդի որդին է, Արևի, Երկնային լույսի և արդարության աստվածը

Ստ. Օրբելյանը XIII դարի վերջին որպես Սյունյաց նահանգի իններորդ գավառ նշում է «Արևիք, որ այժմ կոչվում է Տաշտուն և Մեղրի»³: Կարծում ենք, պատմիչը նկատի ունի այն, որ Արևիք գավառը բաժանված էր Տաշտունի և Մեղրու գավառականների: Գավառակը վարչական գավառի ստորաբաժանում էր, որը ներառում էր գյուղերի, ագարակների խումբ⁴:

I դարում Արևիք գավառում քարոզել է Ս. Բարդուղիմեոս առաքյալը⁵: Ղ. Ալիշանը հավանական է համարում Արևիք գավառի Լուսավանքի հիմնադրումը Ս. Բարդուղիմեոսի աշակերտ Լուսիկի կողմից⁶:

Վաղ միջնադարում Արևիք գավառի մասին տեղեկություններ չկան: Սակայն պատմական այդ փուլի մասին որոշ պատկերացումներ կազմում ենք Սիսական աշխարհի, Գողթան գավառի մասին առկա պատմական վկայությունների համապատկերում:

Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ Հայոց թագավորության թուլացումից հետո (պետք է ենթադրել Հայաստանի 387 թ. բաժանումից հետո) հեթանոսական աղանդը, որը տակավին թաքնված էր մտում Սիսական աշխարհում ու Գողթան գավառում, համարձակաբար երևան եկավ⁷: Դա վերաբերում է նաև Գողթանի արևելքից սահմանակից Արևիք գավառին, որի անունն ըստ Ս. Ու-

մանյանի՝ ծագել է արևի պաշտամունքից⁸:

Ավելորդ չենք համարում նշել, որ արևի պաշտամունքն արտահայտվում է Մեղրու չորս բնակավայրերի անվանումների ստուգաբանության մեջ, որոնցից ամենաառաջինը՝ Վահրավարի: Ս. Ումանյանի ստուգաբանությամբ՝ Վահրավար գյուղանվան մեջ «հնդեվրոպական ծագումով վահ նշանակում է արև, իսկ ար անունը տեղական հոգևակի մասնիկ է»⁹, որը մեր կողմից ընդունելի չէ: Մեր ստուգաբանությամբ՝ վահ-ը պահպանվել է bag¹⁰ (Աստված, Եօր) բառի հնչյունափոխված տարբերակն է՝ բ=վ և գ=հ հնչյունադարձությամբ: Երկրորդ արմատը՝ րա-ն, ռա-ն է՝ արևի աստվածը: Հայերեն արև բառահիմքում րա-ն է: Ռա-ի պաշտամունքը Հին Եգիպտոսում սկսվել է դեռևս Ք. ա. 2500 թվականից: Ռա-ն համարվել է աշխարհի ու մարդկանց արարիչը: Վահրավար գյուղանվան վերջին արմատը՝ վար-ը, նույն «վայր» բառն է՝ սղված «յ» հնչյունով: Հետևապես՝ Վահրավար, նշանակում է արևի աստծու (պաշտամունքի) վայր: Այստեղից հետևելի է, որ Վահրավարն Արևիք գավառի ամենահին բնակավայրն է՝ նախաքրիստոնեական վաղնջական ժամանակներից:

Ավելի ուշ հայկական դիցարանում արևի աստվածը Տիրն էր, որը հետո իր տեղը զիջելով Միհրին՝ դարձավ գիտության, դպրության, ճարտարապետության աստված¹¹:

Արևիք գավառի երկրորդ հնագույն բնակավայրը, որի տեղանունը նույնպես կապված է արևի պաշտամունքի հետ, Շվանիձորն է: Ճիշտ է Ս. Ումանյանը, որ «Շվանիձոր դիցարանը նվիրված էր Վանի թագավորության արևի աստծու՝ Շիվինի անվանը»¹²: Շիվինին Արարատի (Ուրարտուի) թագավորության (Ք. ա. IX-VI դդ.) դիցարանի գերագույն եռյակ աստվածներից՝ Խալդից, Թեյշեբայից հետո երրորդն է: Ըստ Ումանյանի՝ «Շիվինի անունը ձոր մասնիկի հետ բառակազմելիս՝ սղվել է առաջին ի հնչյունը, իսկ երկրորդ ի-ն փոխարինվել է ա-ի: Հնչյունափոխության այս երևույթը հատուկ է տեղի բարբառին, ինչպես կացին-կացան, թոնիր-թորան: Այդպես էլ՝ Շիվինի ձոր>Շվանիձոր»¹³: Հայագետ, պրոֆ. Արծ. Սահակյանի բանավոր դիտարկմամբ՝ Շվանիձորը Սյունյաց նախարարների բնօրրանն է, որտեղից դուրս գալով՝ տարածվել են ողջ Սյունիքով:

Արևի պաշտամունքի հետ կապված երրորդ բնակավայրը Մեղրին է: Ճիշտ է Ումանյանը, որ տեղանունը Միհր աստծու անվան աղավաղված ձևն է: Միհրի (Միթրայի) պաշտամունքը Պարսից աշխարհակալ տերություն-

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

նում տարածվել է Ք. ա. 539 թվականից՝ արքայից արքա Կյուրոս Մեծի (Ք. ա. 559-530) ժամանակ: Ըստ Ումառյանի՝ հայերենում կա «ի>խ և խ>ղ հնչյունափոխությունը, հետևապես, հնարավոր է, որ Միհրի անունը դառնա Մեխրի: Չորրորդ Հայքում (Անգեղ տուն գավառ) կար Մեխրի ևահանգ... **հետևապես տրամաբանական է Միհրի>Մեխրի>Մեղրի փոփոխությունները**»¹⁴:

Ժայռից ծնված արևի աստված Միհրը հոգեհարազատ էր արևավառ, ժայռոտ Մեղրիին:

Մեր կարծիքով՝ Միհրի մեհյանը Մեղրիում գտնվել է կենտրոնում, քանի որ այնտեղ հնամենի հաստաբուն սոսիներ են պահպանվում, որոնց տարիքն անցնում է ավելի քան երկու հազար տարին: Տեսակետ կա, որ սոսիները տնկվել են մեհյանների մոտերքում, և դրանց տերևների սոսափյունով քրմերը գուշակություններ են կատարել, ինչպես պատմահոր վկայությամբ՝ Հայաստանի մայրաքաղաք Արմավիրում¹⁵:

Մեղրիում Միհրի մեհյանը պետք է որ տեղակայված լիներ Հայրենական մեծ պատերազմի (1941-1945) մեղրեցի զոհերի հիշատակին կանգնեցված հուշակոթողի դիմացի հաստաբուն սոսիներից մինչև ներկայիս համայնքապետարանի շենքի առջևի սոսիները ձգվող հատվածում:

Առհասարակ, հեթանոսական մեհյանների քրմերը կրել են սպիտակ հանդերձանք, բայց, կարծում ենք, արևի աստվածներին նվիրված մեհյանների սպասավորները՝ դեղնավուն: Նաև հավանական ենք համարում՝ Մեղրու Կուրիս գյուղանվան կապը Կյուրոս Մեծի անվան հետ:

Ս. Ումառյանը, անդրադառնալով Տաթևի վանքի հարկացուցակում 8 հարկաչափով Արևիք գավառում վկայված Մանաղու¹⁶ բնակավայրի ստուգաբանությանը, գտնում է, որ այն «լուսնային ծագում ուներ: Ման, մեն, մեն տարբերակները փոքրասիական լուսնի աստծու անվան շարունակությունն են... Մանաղու տեղանվան աղու ածանցը նորիստիական է»¹⁷: Դժվար Հայաստանում լուսնապաշտությունը տարածում ունենար. այն առավելապես հատուկ էր սեմական ժողովուրդներին, իսկ Մանաղու, պետք է ստուգաբանվի՝ կազմված եբրայերենից տարադարձված mān=«մանանայ»¹⁸ և հայերեն «աղու»=«քաղցր»¹⁹ բառերից:

Արևի պաշտամունքի հետ կապված չորրորդ բնակավայրը տողերիս հեղինակի պապենական հայրենիք Մալնն է, հնում՝ Մալնլ: Ըստ Ումառյանի՝ Մալնլ գյուղանունը նույնպես ծագում է լուսնի աստծու պաշտամունքից²⁰, ընդ որում չի ստուգաբանում տեղանվան երկրորդ արմատը՝ «լե»-ը: Մեր տեսակետով՝ Մալնլ կազմված է լատ. «man»=«մարդ» և հունարեն «λέω»=«առյուծ»²¹ բառերից: Հետևապես՝ Մալնլ=Մարդառյուծ: Առյուծն արևի խորհրդանշան է երկրի վրա: Մալնն Արևիքի գլխավոր գյուղերից մեկն էր: Հին ցուցակում կոչվում է Մալունու, ռուսական մեծ աշխարհացոյցով՝ Մալովալան²²:

Ահա, արևապաշտությունն ու միհրապաշտությունն էր գլուխ բարձրացրել Արևիք գավառում, երբ արքունի դիվանադպիր Մեսրոպ Մաշտոցը, միայնակյաց ճգնության նպատակով եկավ Սյունիք և հաստատվեց Գողթան գավառում, որտեղ իմացավ կռապաշտության կրկին երևալու մասին: Խստակյաց ճգնությամբ, քրիստոնեական վարդապետության քարոզչությամբ, մեծամեծ և հսկայական հրաշագործությունների կատարմամբ, Սյունյաց Վաղինակ նախարարի աջակցությամբ ու Գողթան Շաբիթա իշխանի օգնությամբ ջնջեց կռապաշտությունը տարածաշրջանից²³: Գրերի գյուղից հետո էլ առաջին դպրոցները բացեց Գողթան գավառում, Սյունիքում, որտեղ Մեսրոպի աշակերտ Անանիան, որը թարգմանիչ էր, ձեռնադրվեց եպիսկոպոս Սյունիքի մետրոպոլիտական աթոռի համար, նորոգեց իր մեծ թեմի տասներկու գավառ-

ները²⁴, որոնցից մեկն էլ Արևիքն էր:

Շաբիթայի թռուներից էր Վասակը (VI դ.), որը Որդվատ գյուղի պատկանելության համար կռվելով եղբոր՝ Շապուհի դեմ, սրով մերձ ի մահ վիրավորեց Նրան, զըջաց, ապաշխարեց, հրաժարվեց աշխարհից՝ դառնալով ճգնավոր՝ Գյուտ անվամբ, զնաց Բաղաց, ապա Քաշունիք-Բարկուշատի կողմերը՝ ճգնակեցության²⁵:

Բացառված չէ, որ Գյուտը Գողթանից Արևիքով անցնելով՝ առ ժամանակ ճգնել է ներկայիս Գուդեմնիս գյուղի տարածքում, որը պատմականորեն կոչվել է Գտանիս, այսինքն՝ Գյուտի նստելու վայր: Իսկ ավելի վաղ Վարդանիձորն է, որը, անշուշտ, կրում է սուրբ Վարդան Մամիկոնյանի (V դ. կես) անունը:

VII դ. քառասնական թվականներից արաբական տիրապետության տակ գտնվող Արևիքը ենթարկվել է Գողթան ամիրային: Պետք է ենթադրել, որ 705 թ. Նախիջևանի Նախճիհի հրե ճարակին զոհ գնացած 1200 հայ իշխանների շարքում էր նաև Արևիքի գավառակալը:

VII-VIII դդ. շարունակում էր իր բարձրության վրա գտնվել Սյունյաց վարդապետարանը, որը պատմիչի վկայությամբ՝ Հայաստանի բոլոր գիտությունների գլխավոր տեղն էր, որտեղ գտնվող դպրոցները ծաղկված էին²⁶, որոնցից չէր կարող անմասն մնալ կրթական գործն Արևիք գավառում: 735 թ. Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրվում և մետրոպոլիտ նշանակվում ժամանակի հզորագույն գիտնական, աստվածաբան, մատենագիր, թարգմանիչ (տիրապետել է լատիներեն և հունարեն լեզուներին) Ստեփանոս Սյունեցին: Նա ամռանը շրջում էր իր իշխանության ընդարձակ վիճակի տասներկու գավառներում և քարոզում ճշմարիտ գաղափարներ²⁷: Պատմիչի այս հիշատակությունից ակներև է, որ մետրոպոլիտն այցելել է նաև Արևիք գավառ:

Ծանոթագրություններ

1. Ալիշան 1893, 298:
2. Ստեփաննոս Օրբելեան 1910, 310:
3. Օրբելյան 1986, 70:
4. Բացատրական բառարան-1, 1944, 417:
5. Օրբելյան 1986, 76:
6. Ալիշան 1893, 300:
7. Օրբելյան 1986, 97:
8. Ումառյան 1981, 89:
9. Ումառյան 1981, 90:
10. Արմատական բառարան-1, 1971, 373:
11. ՀԺՊ-1, 1971, 904:
12. Ումառյան 1981, 89:
13. Ումառյան 1981, 89-90:
14. Ումառյան 1981, 90:
15. Մովսես Խորենացի 1997, 100:
16. Օրբելյան 1986, 403:
17. Ումառյան 1981, 91:
18. Արմատական բառարան-Գ, 1977, 250:
19. Արմատական բառարան-Ա, 1971, 134:
20. Ումառյան 1981, 91:
21. Անձնանունների բառարան-Բ, 1944, 408:
22. Ալիշան 1893, 305:
23. Օրբելյան 1986, 97-98:
24. Օրբելյան 1986, 98:
25. Օրբելյան 1986, 114:
26. Օրբելյան 1986, 149:
27. Օրբելյան 1986, 153:

ԱՆՈՏ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Պ.Գ.Թ., ԿՈՑԵՆՏ,

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ

ԻՆՏԻՏՈՒՏԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԾՆԻ ԱՎԱԳ ԳԻՏԱՇԽԱՏՈՂ

Արևիկա և Մեղրի տեղանունների ստուգաբանությունը. ավանդազրույցներ, վարկածներ

Նախ հիշենք՝ միջնադարում Մեղրու գավառն Արևիկ է կոչվել, ինչը տեղեկացնում է Ստեփանոս Օրբելյան պատմիչը:

Օրբելյանը ծանուցում է նաև, թե Արևիկի փոխարեն երբեմն երկու անուն էին տալիս երկրամասին՝ Դաշտոն և Մեղրի:

Տեղանվան ծագման մասին առաջին վարկածը դիցաբանական է:

Այդ տեսակետը ներկայացնում է մեր հայրենակից Սերգեյ Ումառյանը՝ «Սյունիքը դիցարան» (Երևան-1981) գրքույկում:


Ահա նրա տեսակետը. «Գավառանունը խոսում է արևադարձային իրողության մասին:

Ա. Դարիքյանն Արևիկը անունը համարել է ցեղանուն՝ «Արեւ-իք» - «արև-ներ»:

Իսկ Բ. Սանտալճյանը ենթադրել է, որ Ասորեստանի Շամսիամոն (825-821, մ. թ. ա.) թագավորի հիշատակած «Ուրաս» քաղաքը և Վանի թագավոր Արգիշտի Ա-ի (780-775) գրաված «մատ Ուրայանի»-ն Արևիկ գավառն է. «Ասորեստանի Շամսիամոնը պաշարում է Ուրաս քաղաքը (գտնվում էր Արաքս գետի ձախ ափին), երբ Վանի թագավոր Արգիշտի Ա-ն իր շքեղ արձանագրության մեջ մատ Ուրայանի «երկիր ուրացոց» կկոչի: Այս վիճակը Արևիկ գավառն է, որի հետ Նույն կհամարիմ և Ուրաս ամուր քաղաքն Մենդոց (գլ. ԺԱ. 28, 31 ան), Ուր Կաստից քաղաքին հետ Նույնն են համարում»:

Արևիկ գավառի ամեն մի գյուղ ունի իր բարբառը և ենթաբարբառը, որոնք բոլորն էլ հայերեն բարբառներ են:

Արևիկ գավառանունը ծագել է ոչ թե «արևներ» ցեղանունից, այլ արևի պաշտամունքից: Գավառում ապրել են



Ստեփանոս Օրբելյան

կողտեր ցեղը և հետագայում ներգաղթած մարերը, որոնք ծովվեցին հայերի հետ:

Շվանիծոր դիցարանը նվիրված էր Վանի թագավորության արևի Աստծո՝ Շիվինի անվանը: Շիվինի անունը ծոր մասնիկի հետ բառակազմելիս՝ սղվել է առաջին ի հնչյունը, իսկ երկրորդ ի-ն փոխարինվել է ա-ի:

Յնչյունափոխության այս երևույթը հատուկ է տեղի բարբառին, ինչպես՝ կացին-կացան, թոնիր-թորան: Այդպես էլ՝ Շիվինի ծոր>Շվանիծոր:

Վահրավար. այս գոհարանի մասին խոսել ենք, որ հնդեվրոպական ծագումով վահ նշանակում է արև, իսկ ար անունը տեղական հոգնակի մասնիկ է: Վահրավար անունը երբեմն գրափոխված գրվել է Վարիավար: Օրբելյանի ժամանակագրության մեջ «Վահրաայ» է:

Շիվինիծոր և Վահրավար անունները ցույց են տալիս գավառանվան արևային ծագումը՝ Արևիկ: Իսկ այս անունը հետագայում փոխվել է Մեղրի անունով:

Մեր կարծիքով՝ Մեղրի անունն աղավաղված ձևն է Միիր անվան: Հայերենում ունենք հ>խ և խ>ղ հնչյունափոխությունը, հետևապես, հնարավոր է, որ Միիրի անունը դառնա Մեխրի: Չորրորդ Հայքում (Անգեղ տուն գավառ) կար Մեխրի նահանգ, հնագույն Միտանի երկրում, ուր ապրում էին հնդեվրոպական միտանիները: Սեպագիր արձանագրությունները մեզ հաղորդում են նրանց աստվածների անունները՝ Միթրա, Ինդրա, Վարունա և Նասատիա: Հնարավոր է, որ Մեխրի (Նիխրիա, մ>ն) անունը ծագած լինի Միիր անունից: Յնչյունափոխության նման երևույթը նկատելի է ահմար>ախմար>աղամար (տխմար) և ահա-եղագէս>ախաեղագէս>աղաեղագէս> աղխաղեագէս (սյան խոյակ) ձևերով, հետևապես տրամաբանական է Միիրի>Մեխրի>Մեղրի փոփոխությունները: Եվ բացառված չէ, որ Միտանի անունը Նույնպես ծագած լինի նրանց արևի գլխավոր Աստծո՝ Միթրա անունից: Այս անվան և Նի հոգնակիի բառակազմության ժամանակ սղվել է ը հնչյունը: Նման օրինակները մոսքերի Միտա և փոյուզների Միդաս թագավորների անուններն են՝ Միթրա անունից: Վերջինս պաշտել են նաև փոյուզները, որոնք իրենց հա-



Արշակ Բ

ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

գուստների վրա կրել են Միթրա-արևի Նշանը»:

Պարսկերեն Միիր (արև, արեգակ) բառի հնչյունափոխությունից Մեդրի անվան ծագման տեսակետին համաձայն են ուրիշ հայագետներ ևս:


Կան նաև Արևիք՝ հնագույն ծագում ունեցող անունը «արևոտ տեղ» համարողները:

Արևիք անվան էթնիկական ծագման կողմնակից է մեր մյուս հայրենակիցը՝ պրոֆեսոր Թադևոս Հակոբյան:

Ըստ նրա՝ Հայկական լեռնաշխարհում, մինչև հայ ժողովրդի կազմավորումը, բնակվել են բազմաթիվ ցեղեր, որոնցից 8-10-ը՝ Սյունիքում: Դրանք էին՝ սյունիները, սակերը, բաղերը, գեղերը, ծավդեացիները, լաբիճները, քաշերը, արևները: Այդ ցեղերն ու խմբերն ընդգրկվելով հայ ժողովրդի կազմավորման գործընթացի մեջ՝ հետագայում դարձրեցին գոյություն ունենալուց, թողնելով այն աշխարհագրական անունները, որտեղ նրանք բնակվում էին: Պատահական չէ, որ տեղանունների զգալի մասը Սյունյաց աշխարհում ունեն էթնիկական ծագում: Հավանաբար այդպես է առաջացել Արևիք անվանումը:

Նշանավոր աշխարհագրագետ Կամսար Ավետիսյանն էլ անվան առաջացումը կապում էր Մեդրիի քաղցրահամ թզից ծորացող մեդրի հետ:

Մեկ ուրիշ տեսակետ, որի համաձայն՝ Արշակ Երկրորդ



Ալիշանը կարծում է՝ «Գողթնին սահմանակից այս բնակավայրի բնակիչները հեթանոսական պաշտամունքի Նախանձախնդիր հետևորդ էին և գրեթե արևապաշտ»:

թագավորն անցել է Մեդրիով, խմել տեղի գինին, որը բավականին քաղցր է եղել և հիացմունքից բացականչել է. «Գինու չէ նման, այլ մեդրի»: Եվ վայրը կոչվել է Մեդրի:

Հաջորդ տեսակետը՝ իբր Մեդրին այդպես է կոչվել հնում այնտեղ իշխանություն հաստատած պարսից Մեհրիի անունից:

Իսկ ինչ է ասում Ղևոնդ Ալիշանը:

Ահա՝ «... Ենթադրելի է, թե այն Նախկինում չի եղել առանձին գավառ կամ իշխանական տարածք, որովհետև չի հիշվում նրա Նահապետը կամ մասնավոր անունը, այլ ընդարձակ մի գավառի (թերևս Գողթն) մասն է եղել, որ հետագայում անջատվելով համարվել է Սյունյաց աշխարհի ինքնուրույն գավառներից մեկը: Անձանոթ է մտնում անվան ծագումն ու պատճառը. այն առհասարակ գրվում է Արևիք ձևով, սակայն Բարթոլոմեոս առաքյալի

քարոզության պատմության մեջ, որ Օրբեյանը վերցրել է մի հին պատմիչից, գրվում է նաև՝ Արևեյք, իսկ Սարգիս կաթողիկոսը կոնդակում անվանում է Արևների տուն, և տուն անվանվելով ցույց է տալիս երկրի փոքրությունը, որի աներկբա վկայությունը նաև սակավությունն է Սյունիքի աթոռահարկի մեջ հիշատակված գյուղերի, որոնք ընդամենը 24 են...»:

Ալիշանը կարծում է նաև՝ «Գողթնին սահմանակից այս բնակավայրի բնակիչները հեթանոսական պաշտամունքի Նախանձախնդիր հետևորդ էին և գրեթե արևապաշտ»:

Հին ժամանակներում, պատմում են, որ տարածաշրջանի անտառներում վայրի միրգ շատ է եղել: Եվ երբ մարդիկ գնացել են միրգ հավաքելու ու երբ նրանց հարցրել են՝ ո՞ր եք գնում, պատասխանել են՝ մեդրի, ինչպես, ասենք, հացի, քրի և այլն:

Վերջին օրինակը ժողովրդական ստուգաբանության նմուշ է՝ ի տարբերություն գիտական ստուգաբանության:

Պատմական որոշ փուլերում Մեդրու տարածաշրջանը կամ տարածաշրջանի առանձին հատվածներ նաև այլ կերպ են կոչվել:

Դավիթ Բեկի պատմության մեջ Մեդրածորի միջև-կողմը կամ մեծ մասը Նոր անվամբ է կոչվում՝ Կենավուգ:



Տեղանվան ծագման մասին առաջին վարկածը դիցաբանական է: Այդ տեսակետը ներկայացնում է մեր հայրենակից Սեդրեյ Ումառյանը՝ «Սյունիքը դիցարան» (Երևան-1981) գրքույկում:

Իսկ Տաթևի թեմի վերջին ցուցակում դրանց փոխարեն գործածվում է երկու այլ անուն կամ վիճակ՝ Մացրու և Կաքավաբերդ:

20-րդ դարասկզբին՝ Գարեգին Նժդեհի ազատագրական պայքարի տարիներին, Կուրիսի, Գուդեմնիսի, Կալեբրի, Վանքի տարածքը Գենվագ է կոչվել՝ գյուղն էլ արևկող և վագ, նաև Գյունեյ-մահալ:

Վարկածների այդպիսի առատությունը, կարծիքների բազմազանությունը դժվարացնում են Մեդրի անվան ծագման և ստուգաբանության խնդրում անաչառ դիրքորոշում ունենալ: Հատկապես այն պատճառով, որ մոտեցումներից յուրաքանչյուրն էլ պարունակում է տրամաբանությանը մոտ և ճշմարտությանը հավակնող տեսակետ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Վիճակագրագիտական ակնարկ Մեղրու տարածաշրջանի արձանագրությունների մասին

ԱՆՈՏ ՄԱՆՈՒԳԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մեղրին հնագիտական առումով գրեթե ուսումնասիրված չէ: Պատճառը սահմանային փակ գոտի լինելն էր խորհրդային տարիներին, ուր մուտքը թույլատրվում էր միայն անցագրի առկայության դեպքում, իսկ հետանկախության շրջանում՝ հեռավորությունը կենտրոնից և գիտությանը պատշաճ ուշադրություն չդարձնելը: Մինչդեռ Մեղրիում հնագետը շատ անելիքներ ունի. տարածաշրջանում կան Բ.ա. III-I հազարամյակներով թվագրվող դամբարաններ, մենհիրներ, ամրոցներ, միջնադարյան ինքնատիպ եկեղեցիներ, կամուրջներ, կարավանատներ, խաչքարեր և այլն: Տարածաշրջանի հնագիտական ուսումնասիրությունները կնպաստեն զբոսաշրջության զարգացմանը, զբոսաշրջիկը միայն այստեղ կարող է տեսնել Հայաստանում ամենավաղ թվագրություն ունեցող հնագույն խաչքարերը, Մեղրու անպարհսպ բերդը, Նրա կլորավուն և ուղղանկյունաձև աշտարակները, 17-րդ դարի ինքնատիպ եկեղեցիները, միջնադարյան միաթաղիք կամարակապ կամուրջները, Շվանիձորի ջրանցույցը, քարիզները, իջևանատները, Մեղրու Սբ Աստվածածին և Փոքր թաղի Ս. Սարգիս եկեղեցիների բարձրարվեստ որմնանկարները, ժայռապատկերները, բազմաթիվ բնական հուշարձաններ, գեղատեսիլ բնապատկերներ, ջրվեժներ և այլն: Զբոսաշրջության զարգացումը կբերի աշխատատեղերի ստեղծման և բնակչության կենսամակարդակի բարձրացման:

Մեղրու տարածաշրջանը վատ է ուսումնասիրված Նաև վիճակագրագիտական տեսանկյունից: Բավական է նշել այն փաստը, որ Մեղրու շրջանը դուրս է մնացել «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի Զանգեզուրի ժողովածուից (պրակ II, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երևան, 1960): Անխույզ վիճագրագետ Սեդրակ Բարխուդարյանի Մեղրի չայցելելը, մեր կարծիքով, պայմանավորված էր ոչ այնքան անցագրային խնդրի, որքան Նշանավոր գիտնականի անձի հետ, ինչքանով ԿԳԵ-ի համար ցանկալի կլիներ այլախոհության սին մեղադրանքով հանիրավի 17 տարի աքսորավայրերում անցկացրած անձնավորության այցը, թեկնուց գիտական, սահմանային գոտի:

Մեղրու արձանագրությունների վերաբերյալ կար մասնագիտական կարծրացած մի տեսակետ, որի հետ մենք մասամբ ենք համամիտ եղել նախկինում, թե այստեղ քիչ են վիճագրերը: Պատճառը երևի այն է եղել, որ Մեղրու ողջ տարածքում պատմական Արևիք գավառում, Հայաստանի շատ վայրերի նման չկան սրբատաշ, հեշտ մշակվող քարից՝ տուֆից կերտված եկեղեցիներ, վանական շինություններ, վանքային Նշանավոր համալիրներ: Ըստ ճարտարապետ Մ. Հասարայանի՝ Մեղրու շրջանում 17-րդ դ. կիրառվել է պաշտամունքային կառուցվածքների մի հետաքրքրական ենթատիպ՝ որմնախորշերով թաղածածկ դահլիճի իորիսկվածք, որն այդ ժամանակաշրջանում ողջ Հայաստանում հանդիպում է միայն Մեղրիում... Մեղրու շրջանի որմնամույթերով դահլիճները կառուցված են պարզ, անպարզույց, համարյա առանց որևէ դեկորատիվ հարդարանքի: Միջոցների սղությունը ստիպել է կառուցողներին ուշադրություն դարձնել միայն շինության ու-



տիլիտար, ֆունկցիոնալ կողմի վրա: Եկեղեցիները արտաքինից ուղղանկյուն ծավալ են ներկայացնում՝ երկթեք ծածկով կառուցված անմշակ բազալտից: Ինչպես տեսնում ենք, եկեղեցի կառուցելու հիմնական շինանյութը Մեղրիում եղել է կոպտատաշ բազալտը, օգտագործվել է նաև ավելի կարծր քար՝ գրանիտ: Բայց այդ հանգամանքը դժվարությունների առջև չընկրկող այունեցի մեր նախնիներին չի խանգարել կարծր քարերի մակերեսների բազմաթիվ հիշատակություններ փորագրել գալիք սերունդների համար: Պետք է ընդամենը մերժել այն տեսակետը, թե Մեղրու տարածքում արձանագրություններ չկան: Մեղրիում կան արձանագրություններ, և դրանք շատ են: Քսան տարի առաջ մեզ բախտ վիճակվեց ուսումնասիրել Մեղրու տարածաշրջանի արևմտյան հատվածը: Այն ժամանակ սկսված գործը թերի մնաց՝ ոչ միայն Նյութական անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով, այլև այնպես ստացվեց, որ մենք երկարամյա գիտական հետազոտություններ կատարեցինք Լոռիում, Շիրակում, Արագածոտնում: Եվ հիմա, քսան տարի անց, վերստին այցելելով հարևանի Մեղրի, աշխատեցինք ավելի քան երկուսուկես տասնյակ հնավայրերում՝ հավաքելով մոտ երկու հարյուր արձանագրություն: Գիտական մշակման ենթարկվելուց հետո Նորահայտ այդ վիճագրերը զետեղվելու են մեր ուսուցչի՝ Կապանի պատվավոր քաղաքացի, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Գրիգորյանի աշխատասիրությանը կազմվող Մյունխենի արձանագրությունների լրացուցիչ պրակում: Մեղրիում այս վիճակագրագիտական ուսումնասիրության ընթացքում մեզ բախտ վիճակվեց հայտնաբերելու Հայաստանում ամենավաղ թվագրություն ունեցող երկու խաչքարերը. Ավկեսում՝ 827 թ. և Վանքում՝ 851 թ.: Մինչև այսօր գիտությանը հայտնի հնագույն թվագրությամբ խաչքարերը համարվում են Արցախի Մեծարանց Սողոմոն եպիսկոպոսի 853 թ., Վաղուհասի 866 թ., Գառնիի 879

ԴԱՇԵՍԱՆԻՈՒԹՅՈՒՆ

թ. Կատրանիդե թագուհու (կինը՝ Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանի, հետագայի Աշոտ Ա արքայի՝ 885-890, ով տակավին Սևանի 874 թ. վիմագրում թագավոր է հիշատակվում), Մեծ Մասրիկի 881 թ. Աղվանքի ու Սյունիքի իշխան Գրիգոր Ատրնետրեչյանի (Աղվանից Յամամ թագավոր), Դաշտաղեմի 882 թ., Կեչուտի 886 թ. կոթողները:

Յետաքրքրականն այն է, որ Վանք գյուղի եկեղեցու արևելյան պատի հարավային անկյունում թեքությամբ ազուցված 851 թ. տէր Սևպատի (Սմբատի) խաչքարի հիշատակությունը կատարված է բոլորգիր տառերով, այսինքն՝ փոքրատառերով (ա, ա): Մինչդեռ պալեոգրաֆիկ տեսանկյունով բոլորգիր կիրառություն է ունեցել հիմնականում 12-րդ դարից: Բացի տէր Սևպատի 851 թ. հիշատակությունից, Վանք գյուղի տարածքից գտնվեց երկրորդ հին արձանագրությունը, որը թվագրվում է 917 թ. և Լիճքվազի 941 թ. խաչքարի հետ միասին ամբողջացնում 10-րդ դարը:

Լիճքվազում է գտնվում 12-րդ դարասկզբով թվագրվող խաչքար՝ 1103 թ.:

Տաշտունի սբ Ստեփանոս և Լիճքի 17-րդ դարի եկեղեցիների պատերին զետեղված համապատասխանաբար 1246 թ. և 1284 թ. արձանագիր քարերը հաստատում են Մ. Յարսթայի այն տեսակետը, թե Մեղրու հուշարձանները դարերի ընթացքում բազմիցս ավերվել են բնության արհավիրքներից, պատերազմներից, այսինքն՝ ունեցել են նույն ճակատագիրը, ինչ-որ Յայաստանի մյուս գավառների հուշարձանները: Սակայն ստեղծագործ հայ ժողովուրդը երբեք չի թողել դրանք կործանված վիճակում, առաջին իսկ բարենպաստ պահին վերակառուցել և վերականգնել է իր նախնիների կերտածը: Մեղրու շրջանի պատմաճարտարապետական հուշարձանների ճնշող մեծամասնությունը մեզ է հասել հիմնովին վերակառուցված: Ծրջանի տարածքի վանքերը և եկեղեցիները, ամրոցներն ու կամուրջները պատկանում են ուշ միջնադարին՝ 17-18-րդ դարերին:

14-րդ դ. մեկական խաչքարեր կան Լիճքվազում (1348 թ.) և Տերտերասարում (1349 թ.) Սյունիքի 18-րդ դարի ազգային ազատագրական շարժումը ոգեշնչող Ստեփանոս Ծահումյանի հայրենիքում:

Համեմատաբար շատ են 15-րդ և 17-րդ դդ. թվագրվող արձանագրությունները: Դրանք փաստում են, որ Արևիք գավառը՝ հիշյալ դարերում ունեցել է խիտ բնակչություն՝ օժտված մշակութային արժեքների կերտման ձիրքով: 15-րդ դարի արձանագրություններում հանդիպում ենք Սյունյաց խաղբակյան և Օրբեյան տոհմերին բնորոշ անունների՝ Պռոշ, Բէշքէ: Իզական անուններից տարածված են Գոհարը, Մարիամը:

Չուտ գեղագիտական տեսանկյունով առանձնանում է Զվարավանքի մուտքի մոտ գտնվող Պողոսի որդի Մարտիրոսի 1729 թ. տապանաքարի արձանագրությունը՝ կատարված բարձրարվեստ վայելչագիր շեղագրով:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Թաղամայրի կամրջի 1676 թ. շինարարական վկայագիրը: Առհասարակ 17-18-րդ դդ., ինչպես նշում է Մ. Յարսթայանը, կամրջաշինությամբ Սյունիքը քանակական տեսակետից գերազանցում էր Յայաստանի մյուս գավառներին: Բազմաթիվ կամուրջներ կառուցվեցին հատկապես Մեղրի գետի և Նրա վտակների վրա (Արևիկ, Լիճք, Վանք և այլն): Ծիշտ է, սրանք ձևերով պարզ էին, միաթռիչք բայց տեղանքի ճիշտ ընտրության, շինանյութի ծացինալ օգտագործման, ճարտարապետական ձևերի լավնիզմի մեջ եղած յուրօրինակ արտահայտչականությամբ նույնպես իրենց արժանի տեղն ունեն Յայաստանի կամրջաշինության պատմության մեջ:

Առհասարակ Մեղրու արձանագրությունները, որոնք

հիմնականում կարճ հիշատակություններ են (պատճառը դժվար մշակվող գրանիտն է), Յայաստանի տարածաշրջանների վիմագրերից տարբերվում են նրանով, որ այստեղ չկան համընդհանուր տարածում գտած շինարարական, նվիրատվական, հիշատակագրային բնագրերին յուրահատուկ շաբլոնային բանաձևերը: Բացառություն է կազմում թերևս Թոսի եկեղեցու մուտքի բարավորի 1763 թ. ընդարձակ շինարարական արձանագրության սկզբնամասը, ՇՆՈՐՅՕՔ ԵՒ ՁՐՈՐՈՒ [ԹԵԱՄԲ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՂ]Յ... Ե: Մեղրիում կա միայն մեկ շաբլոնային բանաձև. ած ողորմի (Աստուած ողորմի), այն էլ առավելապես բոլորգիր՝ փոքրատառերով, երբեմն ողորմի բառը փորագրված է կրճատ՝ ողմի կամ ողի. դա արված է քարի մակերևույթին տեղ խնայելու միտումով:

Ընդհանրապես Մեղրու արձանագրությունների տառատեսակը գլխավորապես բոլորգիրն է, որին, ինչպես վերը նշել ենք, տեղում հանդիպում ենք դեռևս 9-րդ դարի կեսից:

Յետաքրքրական արձանագրությունների տարատեսակ գտանք Մեղրու վանքի սբ Յովհաննես եկեղեցում: Սրբարանի սվաղված որմերին փորագրված են հազիվ նշմարելի, մանրատառ մակագրություններ, որոնք բարձրվում են 17-րդ դարով: Ուշագրավ են խորանի բեմ բարձրացող աստիճանները հատող հյուսիսային և հարավային պատերի արևմտյան մակերեսներին պատկերված շախմատաձև որմնակարների վրայի փակագրությունները՝ ԴԱԻԻԹ, ՍԱԴԱՓ: Փակագիրը դա մեկ տառամայրի վրա, որի դերում հիմնականում Ա-ն է հանդես գալիս, հնարամիտ վայելչագրությամբ այլ տառերի մասնիկների ավելացմամբ մեկ միանական պատկերով առանձին բառ կամ բառեր գաղտնագրելն է: Մեկ ուրիշ փակագիր էլ հայտնի է Հին Ագարակի սբ Ամենափրկիչ եկեղեցուց՝ ՍԱՐԳԻՍ: Վիմագրագետ Սուրեն Սաղումյանը այդ փակագիրը համարում է 17-րդ դարի առաջին կեսի փորագրություն:

Մեղրու վանքի սբ Յովհաննես եկեղեցում պահպանվել են որմնակարների հետքեր: Յարավարևելյան սյան հյուսիսային կողին պատկերված է վիշապասպան հեծյալ: Երևի սուրբ Գևորգ Ջորավարն է, քանի որ ջնջված մակագրության մեջ նշմարվում է ո տառը: Մեկ ուրիշ հեծյալ պատկերված է հյուսիսարևելյան սյան հարավային մասում: Եկեղեցու խորանում նշվարվում են հրեշտակների որմնակարների հետքեր:

Ինչ վերաբերում է որմնակարներին ընդհանրապես, ապա հարկ է նշել, որ Մեղրի քաղաքի կաթողիկե սբ Աստվածածին և Փոքր թաղի սբ Սարգիս եկեղեցիների պատերը ներքուստ պատված են ուշ միջնադարյան անգուգակյան որմնակարներով: Դրանք հարուստ նյութ են պարունակում արվեստաբանական և աստվածաբանական ուսումնասիրությունների համար: Այդ որմնակարներում պատկերված են Ադամի և Եվայի վտարումը դրախտից, Որդու ծնունդն ավետող հրեշտակները, սբ Մարիամ Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, 12 առաքյալները, խաչելությունը, չորս ավետարանիչները, սբ Յովհաննիսյաց 37 Նահատակ կուսաններից չորսը, սբ Սարգիսը, սբ Գևորգը, սբ Մինասը, սբ Անդրեասը, Հռոմի հայրապետ սբ Սեդեքտորոսը, որի հետ սբ Գրիգոր Լուսավորիչը «Դաշանց թուղթը» կնքեց՝ հայ եկեղեցու անկախության վավերագիրը, սբ Կոստանդիանոս կայսրը բյուզանդական կայսրությունում քրիստոնեությունը պետական կրոն հռչակողը և տիեզերաքաղաք Կոստանդնուպոլիս կառուցողը, ահեսարսոս Վերջին Դատաստանը և այլն: Սբ Աստվածածին եկեղեցու բոլոր չորս սյուների կամարների հատման կետերում պատկերված են վեցաթև հրեշտակներ՝ սերոբվներ: Դա խորհրդանշում է երկնային հովանավորությունը ողջ

Հայոց պատմությունից մեկ էջ ևս լուսավորվեց



ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2 018 թվականի ապրիլի 7-ին Նաիրա Հայրապետյանի առաջնորդությամբ մեզ բախտ վիճակվեց լինելու Մեղրու շրջանի հին ու լքյալ բնակավայրերից մեկում՝ Թոս գյուղատեղիում: Ձեզ եմ ներկայացնում

գյուղատեղիի եկեղեցու՝ ցարդ անտես մնացած շինարարական արձանագրությունը, որն աչքի է ընկնում հարուստ տեղեկությամբ:

Շնորհոք եւ զօրու(թեամբ) ամենակալին ա(ստուծոյ) եւ՝ | ամենանու(ա)ստ ծառայ Ք(րիստոս)ի մահտեսի Մարութաս, որ եմ ի | գեղջէն Տաշտօնու, շինեցի զս(ուր) ը եկ(ե)ղ(ե)ց(ի)ս ի հալալ արդեանց իմոց | յիշ(ա)տ(ա)կ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց եւ հոգետր որդոյն իմոյ՝ խօճա Հ(ա)յր(ա)պ(ե)տ(ի)ն, | ի հ(ա)յր(ա)պ(ետո)ութե(ան) էջմիածնա զՆահապետ կաթ(ո)ղ(իկոս)ի, վկա[ու]թե(ամբ) յեպի(ս)կ(ոպո)սութե(ան) Սիւնեաց Նահանգիս մերոյ | տ(եառ)ն Յովհաննէսի եւ տ(եառ)ն Չաքարիայի վ(ա)րդ(ա)պ(ե)տ(ա)ցն եւ զվերակացու սորին, որ շինեցաւ | զմեղապարտ տաթեացի տ(է)ր Սիմէոնն եւ զԾատո(ւ)րո, որ է եղբայր՝ Արտսուն եւ Չարնուն, | յիշեց(է)ք ի Ք(րիստո)ս ա(ստուա)ծ, ամէն: Գրեցաւ ի ՌճԻԲ (1693) թվական(ին), արարող սորա՝ տ(ա)շտ(ու)նցի զտ(է)ր Միքայէ:

«ՎԱՐՁՔ», 2020, N 14, էջ 56



Մեղրու շրջանի Թոս գյուղատեղիի եկեղեցու շինարարական արձանագրությունը (Նու. Կ. Կ. Կարապետյան, 2018 թ.)

սրբարանի վրա:

Բարձրարվեստ որմնակարները կատարված են հայկական մանրանկարչությանը հատուկ գույների մեծաճաշակ զուգակցմամբ և ներդաշնակությամբ: Սրբապատկերների մի մասի վրա կան մակագրություններ, հիմնականում սև մելանով արված: Փոքր թաղի եկեղեցու որմնակարներում կան նաև լատինատառ հակիրճ մակագրություններ: Հայերեն գրություններից հատուկ ուշադրության արժանի է երկնակամարի ֆոնի վրա պատկերված է տառը (էություն, Գոյ, Աստված):

Սրանով չի սահմանափակվում Մեղրու տարածաշրջանի վիճագրագիտական ուսումնասիրությունը: Դեռևս մոտ երկու տասնյակ հնավայրեր կարող են այցելության: Մեղրու վիճագրերի մեջ առանձին խումբ են կազմում արաբատառ արձանագրությունները, որոնց ուսումնասիրման և հավաքման գործին ձեռնամուխ կլինենք...

Առհասարակ Մեղրու վիճագրերի հավաքչական աշխատանքները, Հայաստանի մյուս տարածաշրջանների և Արցախի հետ համեմատած, բարդանում են նրանով, որ այստեղ հիմնական վիճագրական նյութը գտնվում է հեռավոր գյուղատեղիներում, վարույց լքված բնակավայրերում, որոնց ճանապարհները, եթե կարելի է այդպես կոչել, վտանգավոր են, դժվարանցանելի, տեղ-տեղ նույնիսկ անանցանելի: Երբեմն հնավայր հասնելու համար հարկավոր է ոտքով գնալ մի քանի կիլոմետր: Սակայն դժվարությունները չքանում, աշխատանքները դյուրանում են մեր բնաշխարհը սիրող, մեր բնօրրանի պատմամշակութային, ճարտարապետական, հնագիտական ինքնաստիպ հուշարձաններով հպարտացող, քաջ ու արի սյունեցիների անկողում ու պատրաստակամ ուղեկցությամբ:



ՎԻՍՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ակնարկ Մեղրու IX-XI դդ. իշխանների մասին

Տարիներ առաջ Մեղրու տարածաշրջանի Ափկես գյուղատեղիից մեր կողմից հրատարակվել է 827 թ. խաչաքանդակ քարի արձանագրություն՝ Զրահատ հիշատակությամբ¹: Մենք այդ Զրահատին նույնացրել ենք Կովսական և Քաշունիք գավառների տեր Զրահատ Սյունեցու հետ, ով իր տիրոջներին էր միացրել նաև Արևիք գավառի արևելյան՝ Ափկես-Թոս-Վերին Մալև-Քուջերի շրջանը²: Քանի որ Զրահատն անժառանգ էր, ապա նրանից հետո (մահ. 867 թ.) վերականգնվել է Արևիքի տարածքային ամբողջականությունը:

Ժամանակին պատմաբան Զայկարամ Ութմազյանը կազմել է Սյունիքի Սիսական տոհմի հինգ գահակալ իշխանների ճյուղերը³: Մեր կողմից հավելվել է վեցերորդը՝ Արևիք գավառի տիրակալ Սմբատի ճյուղը⁴:

Սմբատը հիշատակվում է երկիցս՝ մեկական անգամ Վանքի և Լիճքվազի արձանագրություններում:

Վանք գյուղի 1554 թ. կառուցված եկեղեցու արևելյան պատի հարավային անկյունում արտաքուստ թեքությամբ ազուցված է հետևյալ խաչքարը: Այն ներկայացնում ենք գրչապատկերով.

Խաչքարի ստորին մասում չորս տողով արձանագրված է հետևյալը.


Թ ՎԻՆ :ՅԾԱ: (902) / Զ ՄՆ/ՊՍԱ ԻԾԵՑ/ԵԹ⁵:

Չիշյալ ժամանակներում Տէր պատվամամբ աղբյուրներում հիշատակվում են թեմակալ առաջնորդները և ըստ Զ. Ութմազյանի՝ գահակալ իշխանները⁶, հետևապես Տէր Մսպատը Արևիք գավառի գահակալ իշխանն է:

X դ. սկզբներին Արևիք գավառի իշխանական նստավայրը եղել է Վանք գյուղից 3 կմ արևմուտք գտնվող Թաղամայրի գյուղատեղին, որը հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակում՝ 6 միավոր հարկաչափով⁷: Թաղամայրին մեղրեցիները կոչում են Թաղամիր: Այն ստուգաբանվում է «թաղ»+«ամիր» արաբ. «իշխան», հետևապես նշանակում է «իշխանաթաղ»: Իսկ Վանքը հանդիսացել է քրեպիսկոպոսանիստ: Մեղրու բերդի կառուցումից հետո (X դ. վերջ-XI դ. սկիզբ) իշխանանիստը տեղափոխվել է Մեղրի ավան:

Սմբատի երկրորդ հիշատակությունը Լիճքվազ գյուղատեղիում է, որտեղ մի խաչքարի վերնամասում պահպանվել է մեկ տող արձանագրություն.

Գրչագիրն ըստ Էմմա Աբրահամյանի, Լիճքվազի հուշարձանները, «Վարձք»,




2021, N 16, էջ 16:

ՅԿ (911) ՍՄԲԱՍ ՅԱ...⁸

Կարելի է այս հիշատակությունը շարունակել. ՅԿ (911) ՍՄԲԱՍ ՅԱ/ՂԱԻԹՍ ՅԻԾԵՑԷԹ Ի:

Ենթադրելի է, որ 906 թ. Տաթևի վանքի Աբ Պողոս Պետրոս եկեղեցու նավակառուցիչի մասնակից Զայոց թագավոր Սմբատ I Բագրատունին (890-914) Մեղրածորի Կարճավան մեծ ավանը (ներկայիս Կարճևան գյուղը) գնել է ու հիշյալ մենաստանի կաթողիկեին նվիրել⁹ Արևիք գավառի գահակալ իշխան Սմբատ Սյունեցուց:

Նույն Լիճքվազում է գտնվում հետևյալ խնդրակատար խաչքարը (գյուղատեղիի կենտրոնից 0,5 կմ արևելք, դաշ-



տի մեջ՝ 11 տող արձանագրությամբ.

ՅՂ (941) ՀԱՅՈՑ: / ԳԹԱՏՈՒՆ, / ԶԸ/ԱՄ/ՏԻԿԻՆ/՝ Հ ՎԱ/ԱԱ/ԿԱ ԱՄ/ՈՒ/ՍԻՆՍ, ՅԱՂԱԻ/ԹՍՆ ԻԾԵՑԷՔ: Այս արձանագրությունն ավելի վաղ հրատարակել է է. Աբրահամյանը՝ աղճատումներով¹⁰:

Ակնհայտ է, որ Արևիքի գահակալի այթոռին Սմբատին հաջորդել է Վասակը, ով, անշուշտ, նրա արյունակից հարազատն է՝ որդին կամ եղբայրը: Տիկնոջ անունը՝ Շամ, արաբական է, որը նշանակում է «Հմայք»¹¹:

Արևիք գավառի՝ սկզբնաղբյուրներից հայտնի հաջորդ իշխանը Աբուսահլն է՝ Մեղրու բերդի տերը, որը 1083 թ. Մեղրու ձորի Բերդավազյանների մեծ այգին նվիրում է Տաթևի վանքին¹²:

Արաբերենից թարգմանաբար Աբուսահլ նշանակում է Սահլի հայր, իսկ Սահլ, Հր. Աճառյանի ստուգաբանությամբ, արաբական անուն է, որի բուն նշանակությունն է «երեսի միսը մի քիչ նիհար մարդ (նշան է գեղեցկության)»¹³: Չի բացառված, որ Սահլը նույնանա հայկական Սահակ անվան հետ: Այդ դեպքում տեսնում ենք, որ Սյունյաց իշխանական անունները՝ Սմբատ, Վասակ, Սահակ, կրկնվում են Արևիքի տիրակալների շարքում:

Առայժմ մեզ Արևիք գավառի իշխաններից սրանք են հայտնի: Հուսանք, որ առաջիկայում տարածաշրջանում մեր հետազոտ վիճակագրական ուսումնասիրության ընթացքում ի հայտ կգան իշխանների նոր անուններ, որոնք կհամարեն նրանց արդեն հայտնի շարքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա. Մանուչարեան, Թուրքագրությամբ հնագոյն, Թ. դարի խաչաքանդակ քար Մեղրու տարածաշրջանում, «Հայկագետն հայագիտական հանդէս», Պէյրուֆ, 2014, էջ 403-409: Ա. Մանուչարյան, Վիճագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), Եր., 2015, էջ 52:

2. Ա. Մանուչարյան, Վիճագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), էջ 56:

3. Հ. Ութմազյան, Սյունիքը 9-10-րդ դդ., Եր., 1958, էջ 26:

4. Ա. Մանուչարյան, Վիճագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), էջ 58:

5. Նույն տեղում, էջ 57:

6. Հ. Ութմազյան, Նույն տեղում, էջ 152:

7. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն (թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Ա. Աբրահամյանի), Եր., 1986, էջ 403:

8. Է. Աբրահամյան, Կիճքվազի հուշարձանները, «Վարձք», 2021, N 16, էջ 16:

9. Ստեփանոս Օրբելյան, էջ 210:

10. Է. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:

11. X. Баранов, Арабско-русский словарь, М., 1977, с. 415.

12. Ստեփանոս Օրբելյան, էջ 276: Մեղրու բերդի մասին տե՛ս Մ. Հասրաթյան, Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, 1987, էջ 5-9:

13. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Եր., 1948, էջ 374:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՋԱՐՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՊՏԵՆՏ, ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՎԱԳ ԳԻՏԱԾԵՆԱՏՈՂ:

ԹՈՒԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՀՆԱԳՈՅՆ, Թ. ԴԱՐԻ ԽԱՉԱՔԱՆԴԱԿ ՔԱՐ ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Ս ինիքի արձանագրությունների լրացուցիչ ժողովածուի կազմման շրջանակներում (աշխատասիրությամբ Գ. Գրիգորեանի) 2013-ի ամռանը շրջագայելով Մեղրու տարածաշրջանում՝ գրանցեցինք մի խաչաքանդակ քար, որը թուրքագրությամբ ավելի հին է, քան Թ. դ. թուրքագիր, ցարդ յայտնի հետետեալ վեց խաչքարերը.

- 853-ի Արցախի Մեծարանց Սողոմոն եպիսկոպոսի¹,
- 866-ի Վաղուհաս գիւղի մօտի՝ Սարգսի²,
- 879-ի Գառնիի՝ Կատրանիղէ թագուհու³,
- 881-ի Մեծ Մասրիկի՝ Սիւնեաց եւ Աղուանից իշխան Գրիգոր Ատրնետրսեհեանի⁴,
- 882-ի Դաշտաղէմի Սուէի⁵,
- 886-ի Կեչուտի Դաւթի⁶:

Նորայայտ խաչաքանդակ քարը⁷ գտնուում է Ափկէս⁸ գիւղատեղիում, ԺԷ. դ. եկեղեցուց մօտ 500 մ. հիսախ: Քարը գրանիտ է: Նրա արեամտեան մակերեսին կերտուած է հինգ խաչապատկեր՝ երկուսը մեծ, կողք կողքի եւ երեքը՝ փոքր: Դրանցից երեքը՝ մէկ մեծը եւ երկու փոքրերը, հորմահարուած են:

Այն յաակնում է դաստեյու խաչքարերի նախօրինակների շարքին, քանի որ բնութագրելով Հայաստանի վաղ խաչքարային կոթողային յուշարձանները՝ Ստեփան Մնացականեանը գրում է. «**Խաչքարի ընդհանուր կոմպոզիցիոն մշակումը հնագոյն խաչքարերում պարզ, առանց որեւէ պաճուճանքի խաչեր են, քանդակուած հարթ, կիսաշրջանաձեւ աարտուող սպերի վրայ», նաեւ «Յայտնի է, որ հնագոյն խաչքարերն աչքի են ընկնում իրենց պարզ ու յստակ ձեւերով, ընդ որում հիմնականը, որոշիչը այստեղ բուն խաչի կոմպոզիցիան է, իսկ օժանդակ մոտիւները եւ զարդաձեւերն ունեն անհամեմատ ավելի աննշան ու երկրորդական նշանակութիւն»⁹:**

Մեր կողմից յաւելենք, որ գրանիտը կարծր, դժուար մշակուող քար է. ուստի պատուիրատուն եւ վարպետը՝ բաւարարուել են՝ խաչեր ու հակիրճ յիշատակութիւն թողնելով:

Ափկէսի նորայայտ յուշքարի խաչապատկերների շուրջ Ուձեւ փորագրուած է հետետեալ արձանագրութիւնը¹⁰.

Ի., Թ. ՈՒԻՆ., ՄՅՁ (827)... / ՄՔ ԽԱՉՍ Հ ԸՆԴՅԱՏԱՄ՝:

Համլէտ Պետրոսեանը նկատել է, որ առաջին խաչքարեր կանգնեցնողների շարքում են պետութեան եւ եկեղեցու մի շարք աչքի ընկնող դէմքեր՝ թագուհի, Արեւելից Կողմանց իշխանը, եպիսկոպոսներ, քահանաներ եւ այլք¹²: Նշանակում է՝ արձանագրութեան մէջ յիշատակուող Հրահատը պէտք է որ իշխան եղած լինի:

Յիշեալ ժամանակաշրջանում՝ պատմական աղբիւրներից Հրահատ անունով յայտնի է չորս իշխան. -

1. Տաթևի 839-ի վաւերագրում, որով Սիւնեաց տէր Դաւիթ եպիսկոպոսը (836-853) 10.000 դրամով նահանգի գահերէց իշխան Փիլիպէ Ա.ից (821-844) գնում է Արծիւ եւ

ՊԱՇՏԱՆԻՈՒԹՅՈՒՆ

Բերդկաներիչ գիւղերը, որպէս գործարքի վկայ յիշատակում է Նաե տէր «Յրահատ՝ տեառն Սահակայ որդի»¹³:

Յայկարամ Ութմազեանն այս Յրահատին համարում է որդին Գեղարքունիքի տէր, գահակալ իշխան Սահակի, ով զոհուել էր Կաակերտի ճակատամարտում 831/832-ին¹⁴:

Յետեապէս այս Յրահատը չէր կարող լինել Ափկէսի խաչքարում յիշատակուող անձը, քանի որ նրա տիրույթները գտնուել են Գեղարքունիքում:

2. Սիսական տոհմի Գեղարքունեաց ճիւղում հանդիպում ենք Յրահատ անունով մէկ ուրիշ իշխանի, ով եղբայրն էր Նշանատր Կասակ Գաբունի (851-859) եւ որդին Գրիգոր Ա. Սուփանի (832-851): Նա հանդէս է գալիս Թ. դարի վերջին քառորդում՝ 874-ի Շողազազանքի վանքագրում իր հորեղբոր՝ Գեղարքունեաց Գաւառի գահակալ իշխան Գագիկի հետ¹⁵:

3. 844-ի ընծայագրում, որով Սիւնեաց գահերէց իշխան Փիլիպէն Տաթևի վանքին է նուիրաբերում իր սեփական համանուն գիւղը, վկաների շարքում ներկայ են «Տէր Յրահատ եւ Գագիկ՝ որդիք Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառն»¹⁶:

Սիւնեաց տէր Գրիգորը, ըստ Ութմազեանի, չէր կարող Գեղարքունիքի տէր Սուփան Ա.ն լինել, քանի որ նա Գագիկ անունով որդի չի ունեցել¹⁷: Նրա որդիները Կասակ Գաբունն ու Յրահատն էին: Յետեապէս, ըստ պատմաբանի, նա 881-ին յիշատակուող իշխանաց իշխան Յրահատն է¹⁸:

Այդ թուականին, Սիւնեաց տէր, իշխանաց իշխան Յրահատը՝ Գրիգորի որդին, ըստ Սողոմոն եպիսկոպոսի (863-880) վանքագրի, Տաթևի վանքին է յանձնել իր հայրենի Դարասափ գիւղը¹⁹: Կարծում ենք, որ նա չէր կարող Ափկէսի խաչքարի Յրահատը լինել, քանի որ ժամանակային վիճակայ 827 եւ 881 թուականների միջեւ՝ 54 տարի, եւ որ իշխանը 827-ին շատ երիտասարդ պէտք է լինէր, ուստի դժուար թէ կարողանար կոթող կանգնեցուելու պատուին արժանանալ:

4. Տաթևի նոյն 844-ի ընծայագրում վկաների մէջ են «տէր Յրահատ եւ տէր Արուման՝ Սահակայ որդիք»²⁰: Ստեփանոս Օրբէլեանը նշում է, որ նոյն 844-ին տեսնելով Սիւնեաց գահերէց Փիլիպէի նուիրատուութիւնը՝ մեծ իշխան Յրահատը՝ Սահակի որդին եւ Գրիգոր Արումանի եղբայրը, Յայկազուն, նոյն Սիսական տոհմից, որ «ունէր իր բաժին ժառանգութեան զԿովսական գաւառ եւ զՔաշունիք», գնում է տէր Դաւիթ եպիսկոպոսի մօտ եւ Տաթևի վանքին ընծայում Կովսական Գաւառի Նորաշինկ անունով գիւղը՝ «իւր բոլոր սահմանօք, լերամբ եւ դաշտաւ, ջերմաւ եւ ցրտով, ծառով եւ տնկով...»²¹:

Այս նոյն Յրահատը յիշատակում է նաե իր տիկնոջ՝ Զուպիդուխտի 867-ի նուիրագրում²²: Զուպիդուխտը դուստրն էր Սիւնեաց մեծ Նահապետ, իշխանաց իշխան Կասակի (մ.հ. 821) եւ քոյրը գահերէց իշխան Փիլիպէի (821-844): Իշխանուիին արդէն ծեր էր, ինչպէս ինքն է ասում՝ «մերձեցայ ի ժամանակս ծերութեան»²³, երբ Տաթևի վանքին է նուիրաբերում իր Մաճ գիւղը՝ լեռներով, դաշտերով, մարգով եւ այգով, ջրով ու ցամաքով, ծառերով ու տունկերով:

Այն, որ Զուպիդուխտի ամուսին Յրահատ իշխանը Սահակի որդի ու Գրիգոր Արումանի եղբայր Յրահատն է, ինչպէս նշում է Ութմազեանը, ակնբախ է հետեւեալ երեք փաստերից.

ա) Մաճը գտնուում էր Քաշունիքում, որի տէրը Յրահատն էր:

բ) Երկուսն էլ գանգատուում են անգաւակութիւնից. Զուպիդուխտ իշխանուիին իր 867-ի ընծայագրում տրտնջում է, որ «զրկեալ էի ի գաւակէ մասանց»²⁴, իսկ Յրահատ իշխանը 844-ի նուիրագրում նշում է. «զմտաւ ածեալ գանգաւակութիւնս իմ...»²⁵:

գ) Երկուսն էլ խօսում են Յրահատի գործած ինչ-որ մեղքերի ու յանցանքների մասին: Իշխանուիին, որպէսզի հաստատուն պահի Տաթևի վանքին իր կատարած նուիրատուութիւնը, վճիռը խախտողներին սպառնում է Աստուծոց եւ Ս. Խաչից դատապարտմամբ, ինչպէս նաեւ նզովքով հոգեւոր տէրերի, ծնողների, եւ տեառն Յրահատայ, որ իմ կենաց կցորդն էր զամենայն մեղս եւ զյանցանս Աստուած ի նմանէ տուժեցցէ»²⁶: Յրահատը 844-ի Նորաշինկի կտակագրում խոստովանում է. «Ես Յրահատ բազմամեղ՝ երանելի տեառն Սահակայ որդի, վասն իմ չար եւ անիրաւ գնացից, որ որսացեալ էի ի սատանայէ բազում եւ ազգ ազգի յանցանօք եւ լցեալ իբրեւ զօժ անթիւ չարեօք ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան յահեղ աւուր դատաստանին...»²⁷:

Ըստ Ութմազեանի, այս Յրահատը 867-ին արդէն վախճանուել էր²⁸: Մենք այս բազմամեղ իշխանին համարում ենք Ափկէսի Նորայայտ խաչքարի արձանագրութիւնում յիշատակուող Յրահատը: Նախ ժամանակները լիովին համընկնում են, երկրորդ՝ նրա տիրոջութիւնից Կովսականը հարաւ-արեւմուտքից սահմանակից էր Արեւիք Գաւառին²⁹, որի արեւելեան մասում է գտնուել Ափկէս գիւղը: Չի բացառում, որ Թ. դ. սկզբներին Արեւիք Գաւառի արեւելեան՝ Ափկէս-Թոս-Վերին Մալե-Քուջերթ հատուածը ներառուած լինէր Կովսականի եւ Քաշունիքի տէր, Յրահատ որդի Սահակի տիրոջութեամբ, միաժամանակ եւնթադրելով, որ, հնարաւոր է՝ իշխանը՝ դրանց տիրացած լինէր բռնութեամբ, այսինքն՝ յանցաւոր ճանապարհով, մեղք գործելով, ինչը բնութագրական էր նրան:

Ուշագրաւ է Պետրոսեանի այն դիտարկումը, թէ «խաչքարերը երեան եկան արաբական լծի թուլացմանը զուգահեռ, աննկատից դեպի նկատելի, համեստից դէպի ճոխը սկզբունքով, դառնալով մի տեսակ քաղաքական-դաւանական տեղաշարժերի արձագանգը: Հագի թէ պատահականութեան արդիւնք է այն իրողութիւնը, որ առաջին թուագիր խաչքարերը համապատասխանում են Արաբական խալիֆայութիւնից Յայաստանի քաղաքական անկախութիւն ձեռք բերելու ժամանակին... Ինչ-որ իմաստով խաչքարը հանդէս եկաւ որպէս վերականգնուող հայկական պետութեան ինքնութեան խորհրդանշան եւ նրա զարգացումն էլ սկզբնական շրջանում՝ պիտի որ անելի «զգայունօրէն» արձագանգէր տարածաշրջանում եւ երկրում տեղի ունեցող քաղաքական-դաւանական փոփոխութիւններին»³⁰:

Ապա, անդրադառնալով՝ Քոլատակի Մեծարանց եւ Վաղուտի թուագիր երկու հնագոյն խաչքարերին (853 եւ 866) Պետրոսեանը եզրակացնում է, որ «Արցախը ոչ միայն ներառուած էր խաչքարակերտման գործընթացի մէջ, այլեւ հնարաւոր է, որ որոշ քայլեր այստեղ, կապուած քաղաքական իրավիճակի հետ, անելի վաղ կարող էին տեղի ունենալ»³¹:

Հնագէտի այս որակումն անելի յատկանշական է Սիւնիքի համար, քանի որ, այն ժամանակ, երբ Արցախում՝ երկրամասի բնիկ տէրեր Առանշահիկ իշխաններն ի դէմս հզօրագոյն Սահլ Իբն Սումբատի (Թ. դ. Ա. կէս) զբաղուած էին իրենց աւատական խլուած իրաւունքների վերականգնմամբ, նոյն միջոցին Սիսական աշխարհում գործում էր կառավարման կայացած համակարգ՝ գահերէցութեան եւ գահակալութեան կուռ կառուցուածքով:

Բայց եւ այնպէս, այդ ծայրամասային երկու հզօրացած Նահանգների, Նաե Վասպուրականի, եւ ինչպէս հայրենասէր՝ պատմիչն է յայտնում, հայոց միա իշխանների՝ ուժեղ կենտրոն Շիրակ-Այրարատի շուրջ համախմբուելու շնորհիւ էր, որ վերականգնուեց Յայաստանի պետականութիւնը»³²:

ԾԱՆՕԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԼԵՐ

1. Դիան Չայ Վիմագրութեան Պր. V. Արցախ, կազմեց Սեդրաք Բարխուդարեան, Երեւան, ՅՍՄՐ ԳԱ Հրատ., 1982, էջ 12: Խաչքարը չկայ, նրա մասին արձանագրութիւնը փորագրուած է պատուանդանին:
2. Նոյն, էջ 113:
3. Babken Arakelian, Garni, Tom I. Rezultatei Raskopok 1949-1950 gg. (Գառնի, Հտր. 1, 1949-1950 թթ. պեղումների արդիւնքները), Երեւան, 1952, էջ 84: Կատրանիդէն կիւն է Աշոտ Ա. Բագրատունի արքայի (885-890), ով Սեանի 874-ի վիմագրում երկիցս յիշատակուում է որպէս թագաւոր (Կարո Ղաֆադարեան, Չայկական Գրի Սկզբնական Տեսակները, Երեւան, Արմֆան, 1939, էջ 68):
4. Դիան Չայ Վիմագրութեան Պր. IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու եւ Վարդենիսի Շրջաններ, կազմեց Սեդրաք Բարխուդարեան, Երեւան, ՅՍՄՐ ԳԱ հրատ., 1973, էջ 334:
5. Չայաստանի Միջնադարեան Կոթողային Յուշարձանները, IX-XIII դդ. Խաչքարերը, Երեւան, ՅՍՄՐ ԳԱ Հրատ., 1984, էջ 14:
6. Դիան Չայ Վիմագրութեան, Պր. III. Վայոց Ձոր եղեգնաձորի, Ազիզբեկովի Շրջաններ, կազմեց Սեդրաք Բարխուդարեան, Երեւան, ՅՍՄՐ ԳԱ Հրատ., 1967, էջ 21: Ըստ Ա. Ծահինեանի, Թ. դարից են նաեւ այն երկու որմնախաչերը, որոնցից մէկը զետեղուած է Տաթեւի վանքի Ս. Պողոս-Պետրոս կաթողիկէի արեւմտեան մուտքից վերեւ, այդ տաճարը կառուցող Յովհաննէս եպիսկոպոսի յիշատակութեամբ, որը թէ է թուական չունի, բայց թուագրում է սրբարանի շինութեան ժամանակով՝ 895-906, իսկ միւսը ներկայիս Գեղարքունիքի Մարզի Չայաստան Գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու արեւելեան պատին ագուցուած անարձանագիր խաչքարն է, որի թուագրութիւնը որոշում է աղօթարանի կառուցմամբ՝ 898-899 թթ. (Չայաստանի Միջնադարեան Կոթողային, էջ 15):
7. Դեպի խաչքար դժուարանցանելի, վթարավտանգ, վաղուց աչքաթող արուած ճանապարհով մեզ առաջնորդել են Պատմական Միջավայրի Պահպանութեան Սիւնիքի Մարզային Ծառայութեան պետի տեղակալ, պատմաբան Ն. Չայրապետեանը եւ ազատամարտիկ Գ. Պողոսեանը, որոնց յայտնում ենք մեր խորին երախտագիտութիւնը:
8. Տաթեւի վանքին հարկատու գիւղերի ցուցակում յիշատակում է Աբգավանք՝ 8 միւտոր հարկաչափով (Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, Տպ. Աղանեան, 1910, էջ 521):
9. Ստեփան Մնացականեան, Չայկական ճարտարապետութեան Սիւնիքի Դպրոցը, Երեւան, ՅՍՄՐ ԳԱ Հրատ., 1960, էջ 177:
10. Նոյն, էջ 174:
11. Քարի վրայի անունը փորձել ենք կարդալ ԱԲՐԱՀԱՄԱ, բայց այդ դէպքում չեն նշմարում ԱԲ տառերի կամ կցագրերի հետքեր, այլ դրանց փոխարէն երեւում է Հի տառահետք: Այն նման է ՀԻՐԱՍ անուն երկրորդ Հին: Ինչ վերաբերում է բառի նախավերջին տառին, որը նման է Մի, ապա այն 5 ենք կարծում, գտնելով, որ վերեւից իջնող նրա փոքր մասնիկը ջնջուած է, ինչպէս ՀԻՐԱՍ անուն վերջին Ա տառի աջ սիւնագծի վերնամասը:
12. Համլետ Պետրոսեան, Խաչքար: Ծագումը, Գործառնությունը, Պատկերագրութիւնը, Իմաստաբանութիւնը, Երեւան, Փրինթինֆո, 2008, էջ 95:
13. Օրբելեան, էջ 205:
14. Չայկարան Ութմագեան, Սիւնիքը IX-X Դարերում, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1958, էջ 309:
15. Նոյն, էջ 312. Նաեւ՝ Օրբելեան, էջ 175:

16. Օրբելեան, էջ 215:
17. Ութմագեան, էջ 318:
18. Նոյն:
19. Օրբելեանի հարկացուցակում Դարատափ չի յիշատակում (Օրբելեան, էջ 509-523): Ութմագեանը գրում է, թէ Դարատափի տեղադրութիւնը յայտնի չէ, որով հնարաւոր կը լինէր՝ որոշել իշխանաց իշխան Չրահատի՝ որդի Գրիգորի Սիւնեաց տեառնի բուն տիրոջները (Ութմագեան, էջ 319), չնայած մի այլ տեղ հաւանական է համարում դրանց գտնուելը Սիւնիքի հարաւում (Նոյն, էջ 26): Խիստ գայթակղիչ կը լինէր Դարատափի Նոյնացումը Մեղրու տարածաշրջանի նախկին ադրբեջանաբնակ Ալդարայի հետ (Ներկայիս Ալվանք): Տեղանունների բառարանում Դարատափը տեղադրում է կամ Բաղք կամ Կովսական գաւառներում (Թ. Յակոբեան, Ս. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, Չայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 2. Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 55-56): Ըստ Ալիշանի, Դարատափը եղել է Խոտ գիւղի մօտ (Չայր Անտոն Ալիշան, Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1898, էջ 227): Իսկ Խոտ գիւղը Ութմագեանը տեղադրում է Հաբանդ Գաւառում (Ութմագեան, էջ 295):
20. Օրբելեան 207:
21. Նոյն, էջ 208-211: Նորաշինիկը, ըստ Ա. Աբրահամեանի, Ղափանի շրջանի մէջ մտնող Նորաշենիկ գիւղն է (Ստեփանոս Օրբելեան, Սիւնիքի Պատմութիւն, թարգմանութիւնը, Ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները և Ա. Ա. Աբրահամեանի, Երեւան, 1986, էջ 466): Քաջունիքը Սիւնիքի գաւառներից էր, որը որպէս վարչական միւտոր կազմաւորուել է Ը դ. վերջերին՝ Բաղքի մասնատմամբ: Սահմանակից էր Սիւնիքի Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Կովսական եւ Արցախի Միւս Հաբանդ գաւառներին (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, Չայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 5, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2001, էջ 300):
22. Օրբելեան, էջ 220:
23. Նոյն, էջ 219: Մաճ գիւղը գտնուել է Միւս Բաղք կամ Քաջունիք Գաւառում՝ 7 միւտոր՝ հարկաչափով (Օրբելեան, էջ 519): Այն եղել է Կապանի Առաջաձոր գիւղի մօտ, ինչպէս պարզել է Գ. Գրիգորեանը (տե՛ս՝ նրա «Պատմական Սիւնիքի Մի Շարք Գիւղերի Տեղադրութեան Շուրջը», Պատմաբանասիրական Հանդէս, 1966, N 4, էջ 236 նաեւ՝ Օրբելեան, Սիւնիքի Պատմութիւն, Ա. Աբրահամեանի ծանօթութիւնը, էջ 468):
24. Օրբելեան, էջ 219:
25. Նոյն, էջ 209:
26. Նոյն, էջ 220:
27. Նոյն, էջ 209:
28. Ութմագեան, էջ 321:
29. Տե՛ս Չայկական Սովետական Հանրապետարան, Հտր. 5, Երեւան, ՅՍՄՐ Յ. Մեղապարտի Տպ. 1979, էջ 637, նաեւ Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, Չայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 3, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1991, էջ 223:
30. Պետրոսեան, էջ 95:
31. Նոյն, էջ 97:
32. Օրբելեան, էջ 175:

ԳԳ-Հիմա IX դ. թվագրված խաչքարերի թիվը ինչ է՝ երկու հատ համալրված Սամվել Կարապետյանի, մեկ հատ՝ մեր կողմից (այն դեռևս անտիպ է՝ ներառված Արագածոտնի պրակում):
«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», ՊԵՅՐՈՒԹ, 2014 Թ.

Վիճակագրական նորույթներ Մեղրու տարածաշրջանի արևմտյան հատվածից

Մեղրու տարածաշրջանը հնում կազմել է Սիսական նահանգի Արևիք գավառը (ըստ «Աշխարհացոյց»-ի՝ 11-րդ), իսկ ավելի վաղ վարչականորեն ներառված է եղել Գողթնի մեջ: Այստեղից իր քարոզչական գործունեությունն է սկսել սբ Բարդուղիմեոս Նաթանայել առաքյալը: Նա, անցնելով Երասխ գետը, Պարսկաստանից մտել է Հայաստան՝ քարոզելով Որդվատ գյուղում, Արևիք գավառում, Բաղքում և Գողթնում¹:

Երկու հարուստ մշակույթների՝ Սյունյաց և Նախիջևանի խաչմերուկում գտնվելը էապես նպաստել է Մեղրու հոգևոր զարգացմանը: Մեղրին երբեմն անվանել են Ջուրայի քաղաքակրթության մի բեկորը: Մեղրեցիները 18-19-րդ դարերում մեծարվել են իբրև «լուսատրչեաններ»:

Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանը կամ պատմական Արևիք գավառը հարուստ է հնագիտական ու ճարտարապետական հուշարձաններով: Այնտեղ կան մեծ թվով վանքեր և եկեղեցիներ, պատմական գերեզմանոցներ, միջնադարյան բերդեր, կամուրջներ, իջևանատներ և այլ հնություններ:

Ցավոք, հեռավորության, ճանապարհների կտրտվածության, խորհրդային ժամանակներում այնտեղ այցելելու համար հատուկ թույլտվություն՝ անցաթուղթ ունենալու անհրաժեշտության, հետո էլ նյութական միջոցների անբավարարության և զանազան այլ պատճառաբանություններով այդ ամենը քիչ, վատ կամ ընդհանրապես ուսումնասիրված չէ: Մինչդեռ Մեղրու տարածաշրջանում կան և այսօր էլ դեռ կանգուն են այնպիսի հուշարձաններ, որոնք իրենց ինքնատիպությամբ, կատարողական բարձր վարպետությամբ ու անկրկնելիությամբ միակն են հանրապետությունում:

Սակայն, այդքան բազմազան հուշարձաններով հանդերձ, ինչպես մասնագետներն են նկատել և մենք էլ մասամբ համոզվել ենք մեր շրջագայությունների ընթացքում, Մեղրու տարածաշրջանը սակավ է արձանագրություններով: Դրա հիմնական պատճառը բնական արհավիրքներից, տարերային աղետներից, պատերազմական և այլ ավերածություններից զատ կայանում է նրանում, որ շինությունները հիմնականում կառուցվել են կոպտատաշ քարերով, անմշակ գրանիտով, բազալտով և 17-18-րդ դարերում էլ ենթարկվել են վերակառուցման:

Ինչևէ, հարկ է առկա վիճակագրական նյութը հավաքել և ներկայացնել, ինչն սկսել ենք տարածաշրջանի արևմտյան հատվածից²:

1. Ագարակ քաղաք. Արաքսի ձախ ափից ոչ հեռու 1949 թ. հիմնադրված բանավան՝ Մեղրիից 9 կմ հվ-ամ: Հանդիսանում է գունավոր մետաղագործության կենտրոն: Քաղաքի չորս հազարանոց բնակչության մի մասն աշխատում է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում: Ագարակում ավելի վաղ բնակավայրի հետքեր չեն երևում:

Կա երկու արձանագրություն ոչ տեղական ծագմամբ, այլ դրսից բերված: Մեկը Ախպերջանյանների տան բալկոն պահպանվող, հացի թանկության հիշատակությամբ սալաքարն է, որի մասին արդեն խոսել ենք³, իսկ մյուսը գտնվում է Մարգարյան Գառնիկի հողամասում: Դա ժա-

մանակին Ջուրայից բերված 130 սմ երկարությամբ, 80 սմ լայնությամբ և 25 սմ հաստությամբ գեղաքանդակ տապանաքար է, որի մակերևույթին պատկերված են աղջկա և պատանայակ՝ ձեռքերին բռնած սափոր և գավաթ, տապանաքարի մակերեսին հինգ տողով արձանագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ի ՀԱՆԿՍՏԵԱՆ / Ի ՋԵԱԼ
ՄԱՐՄԵՕՎ Ի ԳԵՐԵՉ/ՄԱՆ ՀԱՄԲԱՐՑՈՒՄ ՔՈՒՄ/
ՎԱ ՄԷԼԻԹ - ԸՍՏԵՓԱՆԵԱՆ /1877-ԻՆ ԴԵՎՏԵՄԵՐԻԻ
2 - .ի.ն:

Մանթություն. Սյունիքի 18-րդ դարի 20-ական թթ. ազգային-ազատագրական շարժման հերոսներ Մխիթար Սպարապետի և մելիք Բարխուդարի տապանաքարերը ինձորեսկում ունեն գրեթե նույն սկզբնամասում հիշատակագրություններ⁴:

2. Կարճան գյուղ. գտնվում է Ագարակից 3 կմ հյուսիս: 906 թ. Հայոց Ամբատ Ա Բագրատունի թագավորը (890-914) Տաթևի վանքին է ընծայել «զմեծ ասանն Կարճանն յԱրևիք գառառի, ի Մեղրաձորի ընդ զնոյ ստացեալ»⁵: Ըստ Ստեփանոս Օրբելյանի կազմած Տաթևի հարկատու վանքերի ու եկեղեցիների ցուցակի՝ Կարճանի հարկաչափը եղել է 12 միավոր⁶: Գյուղի սբ Աստվածածին եկեղեցին 12-րդ դ. կառուցվել է վերանորոգված 17-րդ դարում:

ԽԱՉԲԱՐ՝ գլխիվայր ագուցված մուտքի պատին, ներքուստ, մակերևույթին բոլորգիր արձանագրություն, 3 տող.

ՅԻՇ Ա, ՏԱԿ / Է ՆՈՒՐԸՍ/ԻՆ Թ Վ. .ԻՆ., ՌՖ Բ (1653):

Մանթություն. Եկեղեցու որմի մեջ է տեղադրվել 17-րդ դարում վերանորոգչական աշխատանքների ժամանակ:

ՏԱՊԱՆԱՔԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ, արձանագրություն, երկաթագիր, 3 տող ԱՍՏ ՀԱ ՆԳ ՉԻ ԱԲ ՐԱ /ՀԱՄ ՔՐՆՅՅ ՍԱՀԱԿԵԱՆ /ՄՆ... 1854:

Մանթություն. Աբրահամ քահանայի ծննդյան թվականն ամբողջովին եղծված է, բայց վերջում պահպանվել է նրա մահվան տարեթիվը՝ 1854:

Գյուղի հյուսիսային կողմում գտնվում է հին գերեզմանոցը:

ՏԱՊԱՆԱՔԱՐ հանգստարանում, շրջանաձև արձանագրություն մակերևույթին փորագրված խաչաքանդակի շուրջը, բոլորգիր, 1 տող.

ՈՒՍԻԱՆ ԹՎ .ԻՆ, Վ ՌՃԳ (1654):

ՏԱՊԱՆԱՔԱՐ, շրջանաձև արձանագրություն խաչաքանդակի ձախ կողմում, բոլորգիր, 1 տող.

ՍԱՆԱՄԷ:

Մանթություն. Ժամանակով մոտ է Նախորդին:

ՏԱՊԱՆԱՔԱՐ, շրջանաձև արձանագրություն խաչապատկերի շուրջը.

բոլորգիր, 1 տող. ԱՄՈՂՈՂՈՄԻ ԱՄԻՐԱՅ ԻՆ:

Մանթություն. Ժամանակով մոտ է Նախորդներին: Տապանագիրը շատ է, շարունակությունը հողածածկ էր և խիստ եղծված:

Կարճանից 4-5 կմ հյուսիս գտնվում է հին Ագարակ

գյուղատեղին: Ըստ Օրբեյանի հարկացուցակի Ագարակի գանձման չափը 8 միավոր էր⁷: Վաղուց լքյալ բնակավայրը խորհրդային տարիներին կուլ է գնացել պղնձի և մոլիբդենի արդյունահանմանը: Այնտեղ են գտնվել Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հիմնական հանքավայրերը: Պահպանվել է գյուղատեղիի սբ Ամենափրկիչ եկեղեցին: Այն ուղղանկյուն կառուցվածքով, թաղածածկ, երկու զույգ որմնամույթով բազիլիկա է: Ընդհանրապես, ըստ Մ. Հասրաթյանի, 17-րդ դ. Հայաստանում, այն էլ միայն Մեղրու տարածաշրջանում հանդիպում են պաշտամունքային կառուցվածքների նոր տիպային հորինվածքի որմնամույթերով դահլիճների⁸:

ՓԱԿԱԳԻՐ արձանագրության եկեղեցու աջ պատին, արտաքուստ, 1 տող. ՍԱՐԳԻՍ Հրատ. Սաղումյան, 87:

Ծանոթություն. Ըստ Ա. Սաղումյանի, 17-րդ դ. առաջին կեսի փորագրություն է⁹:

ԽԱԶՔԱՐ կանգնեցված եկեղեցու ներսում, վերևամասում արձանագրություն, 2 տող ՏԱԲ / ԵԱՐ Ծանոթություն. հավանաբար անձնանուն է: Արևիք գավառի տարածքում հնում եղել է Տափեար (Տափյար) անունով գյուղ: Այն ըստ Օրբեյանի հարկացուցակի ունեցել է 8 միավոր հարկաչափ¹⁰: ԽԱԶՔԱՐ թեքությամբ ագուցված Հվ ավանդատան մուտքի վերևում շրջանաձև արձանագրություն, 5 տող.

ԿԱՆԿՆԵՑ ԱԻ/ՁԽԱԶՍ ՀԱՍ/ ԱՆԱՅ/ Թ Վ ԻՆ, ՉՀԳ (1324):

ԽԱԶԱՔԱՆԴԱԿ քար գլխավայր ագուցված Հս պատուհանի մոտ. ներքուստ, 1 տող. ԱՄ ՌՐՄԻ: ԱՐՁԱՆԱԳԻՐ քար՝ ներքուստ ագուցված Հս պատի պատուհանի մոտ, 1 տող. Թվ ին, Պ (1351):

5. ԿՈՒՐԻՍ, գտնվում է Հին Ագարակից 3-4 կմ հյուսիսարևելք: Գյուղի կենտրոնական մասում կանգուն է սբ Ստեփանոս եկեղեցին (17-րդ դ.): Այն իրենից ներկայացնում է երկու զույգ որմնամույթերով երկթեք թաղածածկ ուղղանկյուն դահլիճ:

Կուրիսի հյուսիսային մասում Կուրավան գյուղատեղին է: Նախկին Կուրավանքից կամ Կորոնքից 8 միավոր հարկաչափով¹¹, պահպանվել է մատուռը:

ԽԱԶՔԱՐ, մատուռի բակում, ճակատային մասում շրջանաձև արձանագրություն, 1 տող:

ԱՄ ՌՐԻ ԳՈՂԱՐԱ ԹՎ ին, ՌՃԲ (1653):

ԽԱԶՔԱՐ, Նախորդի կողքին, ճակատային մասում շրջանաձև արձանագրություն, 1 տող.

ԱՄ ՌՐԻ ՀԱՍԱՅԳՈՒԼ ԻՆ, ՌԵ (1556):

ԽԱԶՔԱՐ, Նախորդի կողքին, ճակատային մասում շրջանաձև արձանագրություն, 1 տող. ԱՄ ՌՐԻ ՄԱՅՐԻԱՆԱՅ. ՌԸ (1559):

Մատուռից ոչ հեռու գտնվում է հին գերեզմանոցը, որն այսօր էլ գործում է:

ՏԱՊԱՆԱՔԱՐ գերեզմանոցում, մակերեսին թվակառուցված.

ՌՃ (1651):

5. **Կուրիսից 1 կմ արևելք գտնվում է Գուղեմսիսը:** Թյուրիմացաբար ենթադրվել է, թե այն Օրբեյանի հիշատակած Գուղեմսի¹² գյուղն է¹³: Մինչդեռ այդ անվամբ տեղանուններ՝ ձորահովիտ, գետակ, գյուղ հայտնի են Վայոց ձորում¹⁴: Գուղեմսիսը ուշ միջնադարյան Գուղեմսի բնակավայրն է¹⁵, որին Ղ. Ալիշանը նաև Գիտեմսա է անվանում¹⁶:

Գուղեմսիս գյուղի եկեղեցին՝ սբ Աստվածածինը, 17-րդ դ. կառուց է՝ երկթեք թաղածածկ, ուղղանկյուն կառուցվածքով, մեկ զույգ որմնամույթով դահլիճ: Գյուղի Նավիդարա կոչվող հանդամասում հին գերեզմանոցն է: Այնտեղ, սակայն, միջնադարյան կոթողներ չեն

պահպանված: Տապանաքարերը նոր ժամանակների են: 6. Գուղեմսիսից 3 կմ հարավ-արևելք գտնվում է Վահրավարը: Գյուղի մերձակայքում պատմական գերեզմանոցն է: Տապանաքար, մակերևույթին շրջանաձև արձանագրություն, խիստ եղծված.

ԱՄ ՈՂՈՐՄԻ ՄԱՄԱԶԱ Յ Թ ՎԻՆ Չ (1251):

ՏԱՊԱՆԱՔԱՐ, Նախորդի կողքին, 1 տող.

Թ ՎԻՆ ՌԾՉ (1607):

7. Վահրավարից մոտ 2 կմ հարավ, ճանապարհի ծախ եզրին գտնվում է 17-րդ դ. մի եկեղեցի՝ թաղածածկ, ուղղանկյուն կառուցվածքով: Դատելով մոտակայքում գտնվող պատերի մնացորդներից՝ այստեղ նախկինում եղել է բնակավայր:

ԽԱԶՔԱՐ. կանգնեցված եկեղեցու ներսում, ճակատային մասում, արձանագրություն 3 տող.

ՊՈՂՈՍ ԳՐԻԿՈՐ / ԱՊԱՇՆ Ա Ռ/ՈՂ:

ԽԱԶՔԱՐ, Նախորդի կողքին, ճակատային մասում արձանագրություն, 2 տող.

ԱՄԻՐ ՂՈՂԻ / ԹԻՎ ՌԵ (1556):

ԽԱԶՔԱՐ, Նախորդի կողքին, ճակատային մասում արձանագրություն, 1 տող.

ԸԱՀԱՆԱ ԹՎ ին, (1584):

Ծանոթություն. Խաչքարը կանգնեցվել է մի քահանայի հիշատակին, որի անունը չի պահպանվել:

Սրանով գրեթե ամփոփվում են Մեղրու արևմտյան հատվածի վիմագրերը: Ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս արձանագրություններին, ապա դրանք ամբողջովին կներկայացվեն ավելի ուշ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստեփանոս Օրբեյան, Պատմություն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 21:
2. Մեղրու վանքի, ս. Աստվածածին, ս. Սարգիս եկեղեցիների արձանագրությունները լրացնելու ամբողջացնելուց հետո կներկայացվեն մեկ այլ առիթով:
3. Տես՝ Ա. Գ. Մանուչարյան, «Հացի թանկության վիմագիր հիշատակություններ Մեղրու և Մարտունու շրջաններից», ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին ամփոփված X գիտական Նստաշրջանի նյութեր, Ե., 1996, էջ 51-52:
4. Տես՝ Դիվան հայ վիմագրության, պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Ե., 1960, էջ 64:
5. Օրբեյան, էջ 228:
6. Նույն տեղում, էջ 521:
7. Նույն տեղում:
8. Հասրաթյան, Մեղրու շրջանի հուշարձանները, Ե., 1987, էջ 17:
9. Ա. Սաղումյան, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, ԼՀԳ, Ե., 1980, 3. էջ 85, 87:
10. Օրբեյան, էջ 21:
11. Նույն տեղում
12. Նույն տեղում, էջ 406:
13. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Ե., 1977, էջ 243:
14. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 109. Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Ֆախջյան, Հ. Բարսեղյան:
15. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 980:
16. Տեղանունների բառարան, Նույն տեղում, էջ 959:
17. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 299:

Երկու վիճազիր հիշատակություն մեղրեցիների մասին Տաթևի վանքից եւ Կապանի Յալիձորից

Այս շրջանում (1705 թ.) Մեղրու Տաշտուն գյուղը վարչականորեն ենթարկվել է Ղափան գավառին: Ըստ Ստ. Մալխասյանցի՝ խոջաներ էին կոչվում Ջուղայի, Ագուլիսի հայ վաճառականները XVI-XVIII դարերում: Խոջաները հիշյալ դարերում մեծ դերակատարություն են ունեցել եկեղեցիների կառուցման, վերանորոգման մեջ: Ահա դրանցից մեկն էլ տաշտունեցի՝ խոջա Անտոնն էր, որ 1705 թ. ձեռամբ Տեր Միքայելի Նորոգել է Տաթևի վանքի կաթողիկե Սբ Պողոս-Պետրոս եկեղեցին:

1. Յալիձորի բերդ-անապատ. գտնվում է Կապանից դեպի արևմուտք երեք չորս կիլոմետր հեռու, մի բարձրության վրա, ամայի տեղում, շրջապատված է անտառներով: Վանք-բերդը պարսպապատ է, ունի մի քանի բուրգեր: Ընդարձակ բակի հարավային կողմում կիսավեր վիճակում մտնում են եկեղեցի և այլ շենքեր, իսկ արևմտյան մասում բազմաթիվ այլ շինությունների հիմնապատեր: Այս բերդ-վանքը նշանավոր է նրանով, որ դարձավ կենտրոններից մեկը 18-րդ դարի սկզբի Դավիթբեկյան ազատագրական շարժումների:

Բերդի բլրի արևելյան լանջում, կես կիլոմետր հեռավորության վրա, մտնում են գյուղատեղիի ավերակներ, ծածկված վայրի և պտղատու ծառերով:



144

Այս վայրի հին անունը մոռացված է, ժամանակակից Յալիձոր անունը վերջին դարերից է և հաճախ գրակաության մեջ շփոթվում է Գորիսի շրջանի Յալիձոր գյուղի հետ. (օր. Սիսական, 258-257):

Մեր աշխատության մեջ հավաքած մի քանի արձանագրությունները ևս հնարավորություն չեն տալիս հին



անունը պարզելու:

2. Փառաարտա վանք, գյուղատեղի և վանք. գտնվում է գյուղից մոտ չորս կիլոմետր դեպի հյուսիս, լեռնաշղթայի կատարների տակ, ամայի տեղում, շրջապատված խիտ անտառներով: Պարսպապատ բակի մեջ գտնվում են 2-3 կիսավեր եկեղեցիների և գավիթների շենքեր: Օրբեյյանի ցուցակների մեջ հիշատակված է որպես փոքր գյուղ, 6 չափ հարկով՝ Կովսական գավառի մեջ:

Այստեղ ևս պահպանվել են արձանագրությունների չնչին մասեր:

Տեղացիները կոչում են պարզապես ԱՆԱՊԱՏ:

410. ՀԱԼԻՉՈՐ (Դավիթ Բեկի բերդ) դարպասից դուրս, հարավում, մեծ և տափակ գերեզմանաքարի երեսին. 14 տ.

Արձանագրության լուսանկարն ըստ Ս. Բարխուդարյանի:

Խոսքը Կապանի Բեկ գյուղի մասին է:

Հայերեն մահտեսի բառը ստուգաբանվում է իբրև ծագած արաբերեն մուկադդիսից «մուղղուսի» և նշանակում «ուխտավոր», այսինքն՝ Երուսաղեմ, արաբ.՝ Ալ-Կողոս ուխտագնացություն կատարած²: Բայց մենք կարծում ենք, որ մահտեսի բառը պետք է ստուգաբանվի հայերեն՝ մահ և տեսնել, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի գերեզմանը տեսնող:

Ըստ տապանագրի՝ 1691 թ. վախճանված կալերեցի Տեր Հայրապետ վարդապետը կրել է «տաստչի» մականունը: «Տաստ» բարբառային ձև է, որը նշանակում է «պղնձյա կաթսա»³: Հետևապես՝ «տաստչի»-ն կաթսայագործն է: Զարմանալի ոչինչ չկա, քանի որ բազմաթիվ են սկզբնաղբյուրներում վկայությունները, երբ հոգևորականները, անգամ եպիսկոպոսներ, նույնիսկ կաթողիկոսներ, տիրապետել են զանազան արհեստների՝ ոսկերչության, կաշվեգործության, խաչքարագործության, դերձակության և այլն:

Ակնբախ է, որ Տեր Հայրապետը վախճանվել է գառնյալ տարիքում, քանի որ վանքում կրոնավորել է 71

տարի՝ հասնելով վարդապետի բարձր նվիրապետական աստիճանի: Դատելով դրանից՝ կարելի է ենթադրել, թեև դրա մասին չի նշվում տապանագրում, որ նա եղել է Հայկ-ծորի անապատի (մենաստանի) վանահայրը:

Ա. ՄԱՆՈՒԿԱՐՅԱՆ
02.06.2024 Թ.

ԵՍԻՈՒՄԱՐԻ ՈՐԻԻ
ԾՆՏՈՆ: ԻՅԵԳՐԵՆ
ՓՆԱԻԳԵՆԵՆ
ՏԱԷՏՈՒՆՈՒ: ԲԵՆ
ՅԵՅԲ ՌՃԾԴՆ
ՆՈԳԵՑԻԶԵՆՈՒՄ
ԷՂՅԵԵ

19. ՏԱԹԵՎ. ԳՈՂՈՍ-ԳԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ, ար-
տաբուստ. հյուսիսային պատի արևելյան մասի
բարձրում. 7 տ.

ԵՍ ԵՍԻՈՒՄԱՐԻ ՈՐԻԻ ԵՍՁԱ ԱՆՏՈՆ, Ի ՅԵՐԿԻԵՆ
ՎԱՍԻՍՏԱՆԻ Ի ԳԵՂԵՆՆ | ՏԱԷՏՈՒՆՈՒ, ՅԵՆԵՑԻԲ.
ԹՎԻՆ: ԲՃԾԴՆ ՆՈՐՈԳԵՑԱՆ ԶԵՆՈՒՄ
ՏՐ ՄԻՔԱՆԵԼԻ:

ՅԻՆԵՑԻԲ բառը սեզագրում ենք ըստ խմբագրի:

ԱՅՍԵՏԱՊԱՆՆԵՆ
ԱՍՆԻՍԱՅՏԵՍՏ
ՆՅՐԴՏԻՍԱԻԳԵՆՆ
ԷՆԿԵՆՑԻԱԵԼԱՆՈՒ
ՆՍԱՍԱՏՉԻՆՍ
ԱՐՄԵՆԱՆԻԵՆԵԼ
ԲԵՆՈՒՄԱՐԻՎՈՐՍ
ԵՂԱ ՎՐԴԱԻՉԻՆ
ՈՒՅԻՆԻՉՎԻՈՐՍ
ՍՈՂՆԱՐԲԵԼԱՆՈՒ
ԱՄՍԱՅՆՎԴԱՊՏԻ
ՈՎՈՒՄԱՅՍՏԵՆԻ
ԱՍԱՅՈՐՈՄՄՈՐ
ՔԱԻՆՈՂՈՐՍ

ԱՅՍ ԵՍԱՊԱՆ ԷՊԻՍԿՕՊՈՒՄ, ՄԱՇՏՈՒ ՏՐ |
ԷՊԱՐԿՈՒՄ, ՄԱ ԵՂԵՆՆ ԿԱՆՈՒՄ,
ԱՅՍ, ԱՆՈՆ, ՄԱ ՏԱՍՏՉ, Ի ՏԱՆԱ | ՄԻ
ՄԵՆԿԱՍՏԱՆ, ՄԱՍ | ԲԱՍՏՈՒՄ: ԶԱ: ՏԱՊԻ
ԿՈՍՄՈՍ, ԵՂԱ ՎԱՐԴԱՊԵՏ, ՉԻՆ ...
: ԲՃԾ: Ի ԹՎԻՆ ԳՈՂՈՍ | ՄՈՂՆ ԱՍԱՊԱ,
ԱՄՈՒՄՄ ՄԱՍՆ ՎԱՐԿԱՊԵՏ | ՈՎ ՈՐ
ԿԱ, ԱՅՍ ՏԵՆ | ԱՍԱ ԱՐ ՈՂՈՒՄ, ՏՐ ԳՈ
ԻՐԻՆ ՈՂՈՐՍ:

Ըստ ին. արք. XXXIX 14

ՂԵՑԻ, ար-
կան մասի

ՅԵՐԿԻԵՆ
ՅԵՆԵՑԻԲ.
ԱՄՄ

առաջի



ՎԻՍՏԱԿՆԵՐ

Լիճքվազի հուշարձանները



ԷՄՄԱ
ԱՐԲԱՅԱՅԱՆ

Սույն հոդվածով ներկայացնում ենք ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու ենթաշրջանի Լիճքվազ գյուղատեղիի տարածքում պահպանված վիմագիր հուշարձանները¹, որոնք ուսումնասիրողները ցարդ պատշաճ ուշադրության չեն արժանացրել: Դրանք, ըստ էության, միջնադարյան բնակավայրի գոյության քարտեղեն վկայություններն են:

Լիճքվազ գյուղատեղի. Երբեմնի հայաշեն գյուղը տարածված է եղել Մեղրի քաղաքից 11 կմ, իսկ Վարդանիձոր գյուղից՝ 3 կմ հյուսիս-արևմուտք՝ անտառապատ հովտում (N 38°59'05.4", E 46°11'06.3", ծ. մ.՝ 1340 մ):

Առնվազն զարգացած միջնադարից գոյություն ունեցող բնակավայրի մասին, ցավոք, գրավոր աղբյուրներում որևէ տեղեկություն չենք գտել: Հնավայրի մասին լռում են մինչև իսկ դիվանական վավերագրերը: Լիճքվազի պատմական անցյալը վեր հանելու գործում օգնում են ներկայիս գյուղատեղիի տարածքում ցիրուցան վիճակում պահ-

պանված գերեզմանական հուշարձաններն ու եկեղեցու բարավորը:

Գյուղը թերևս հայաթափվել է 1604 թ.՝ Շահ Աբասի բռնագաղթի ժամանակ: Հայտնի է միայն, որ 1831 թ. բնակեցված էր 5 տուն թյուրքական ծագմամբ մահմեդականներով², որոնք կարճ ժամանակ անց հեռանում են, իսկ տարածքը վերածվում է մեղրեցի երևելի հայերի ամառանոցի:

Երբեմնի հայաշեն բնակավայրը տեղագիր հեղինակները նույնացնում են Վերին Լեհվազի (Լեշկվազ, Լիշկվազ) հետ. «Ռուսաց պաշտօնական աշխարհացոյց քարտեզի մէջ նշանակուած է միայն Ներքին Լեազ գիւղը...: Իսկ Վերին Լեազը լինելու է անշուշտ դէպի հիսիսային արեւելք նշանակուած Լեշկուազ գիւղը, որ կը թուի, թէ այժմ հաստատուն բնակիչներ չունի, որովհետև վիճակագրութեան մէջ նշանակուած չգտանք: Լեշկուազ անունը աղաաղութին է Լիճքվազի, որ այսպէս կոչուած է գետոյն ջրերու հոսանց և կամ Ալանկէզ լեռան լճակազ համար»³:

Պետք է նշել, որ բնական գեղեցկությամբ դրախտավայր հիշեցնող տարածքն անտես չի մնացել և առնվազն ժԹ դարի կեսերից սկսած՝ ամառանոց է ծառայել և ցարդ շարունակում է ծառայել մեղրեցիների համար: Այդ է վկայում, օրինակ, Ռ. գրչանունով հեղինակի՝ 1882 թ. նկարագրությունը. «Լիճքվազը մեղրեցոց ամառանոցն է, ընկած նոյն անունով գետակի երկու կողմերում, Արագածի կամ Ալագեզի (Ալագէազ) ստորոտում...: Մի հինգ-վեց տարի սրանից առաջ, բացի մի քանի հին էյվանից, մնացածը պաշտոններ էին (իմն վրան), թաղիքներով ծածկուտած, իսկ այժմ տարեցտարի վերջիններիս թիւը ընկնում է. շինում են այնպիսի էյվաններ, որոնց առջև գտնվում են բանջարանոցները: Հին գերեզմանատունը և արեւակ դարձած եկեղեցին վկայում են, որ մի ժամանակ այստեղ ապրել են հայեր, բայց ոչ նման նրանց տեղը բռնողներին...»⁴: Նիկողայոս (հոգևորական անունը՝ Ներսես) Մելիք-Թանգյանն էլ (1866-1948) հավելում է. «Լեշկուազը բարձր է Մեղրու դիրքից, շրջապատուած անտառապատ լեռներով լայն հովտի մէջ, օդը հովասուն, արելի տաք, քան



ցուրտ, որ շատ յարմարում է մեղրեցոց բնութեան: Ապրում են վրաններում և մասամբ սենեակներում, ջուրը լաւ և առատ, թէև ջրից օգտուելու ցանկութիւն նոր էր յղացել նրանց մէջ: Այստեղ էր Մեղրու քաղաքակիրթ դասը. ուսուցչական խումբը և քահանան»⁵:

Ի դեպ, խորհրդային տարիներին Լիճքվազում գործել է նաև պիոներական ճամբար⁶:

Եկեղեցի. հողևոր այս կառուցից պատմության և ճարտարապետական նկարագրի վերաբերյալ տեղեկությունների չենք տիրապետում: Միայն հայտնի է, որ 1882 թ. արդեն ավերակ էր⁷:

Եկեղեցու գոյությունը հաստատվում է շինարարական արձանագրությամբ, որը փորագրված է որպէս ճակատակալ քար օգտագործված խաչքարի թիկունքին (չափերն են՝ 108 x 40 x 12 սմ).

Ես Պողոս տիրացոյ, Սիրավազ, Խաթուն կա... Աագ, լոր շինեցիք ս(ուր)բ եկեղեցիս: Ա(ստուա)ծ ողորմի, թվ(ին) ԶՂԷ (1348): || Յիշեալ(յ) | Թ(րիստո)ս ս(ստուա)ծ | ԳՄ-իք(ր):

Գերեզմանոց. մնացորդները գտնվում են Լիճքվազ տանող ճանապարհի աջ կողմում (N 38°59'08.7, E 46°11'10.6", ծ. մ.՝ 1312 մ): 1882 թ. հիշատակվում է որպէս «հին գերեզմանատուն»⁸:

Գյուղատեղիի տարածքում ցիրուցան վիճակում սփռված և տեղահան 6 խաչքարերը (դրանցից մեկը, ինչպէս վերևում նշեցինք, օգտագործվել է որպէս եկեղեցու բարավոր) հուշում են, որ թաղումներ կատարվել են առնվազն Ժ դարից: Խաչքարերից միայն մեկն է անարձանագիր (չափերն են՝ 141x64x16 սմ), որը գտնվում է աղբյուրի մոտ՝ ճանապարհի եզրին՝ ծորակում և թվագրվում ԺԱ-ԺԲ դարերով:

Ստորև գիտական շրջանառության մեջ է դրվում ցարո անտիպ 4 արձանագրություն.

ա) Խաչքար (չափերն են՝ 128x64x20 սմ). քայքայված, վերևամասում պահպանվել է 1 տող.

ՅԿ (911) Սմբատ յա...:

բ) Խաչքար (չափերն են՝ 113x54x13 սմ). ուշագրավ, վերին աջ անկյունը՝ կտրված, խաչաթևերի միջև՝ 8 տող.

ՅԱԱ (932) ... | յաղավթս|իւր| գարութին սոլւրբ խաչի թր պահեայ զՈսկեան՝ հար | իմոյ, | Ստեփանոսէ | խաչս:

գ) Խաչքար (չափերն են՝ 116x51x17 սմ). 14 կարճ տող.

ՅՂԻԲ (945) թ(վին) Սլամոֆոսուկին, | ԳՇլամ(ա-մին), | Գմֆաճը (տեսի) | Վալսակա | ամուլսին՝ յա-ղավթս(յ)իշեցէք:

դ) Խաչքար (չափերն են՝ 89x59x19 սմ). գեղազարդ, խաչաթևերի միջև և ստորին մասում՝ 7 տող.


ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրությունը կատարել է ԶՃՈՒ հիմնադրամի արշավախումբը 2018 թ. Սամվել Կարապետյանի գլխավորությամբ: Խորին շնորհակալություն ենք հայտնում Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետի տեղակալ Նաիրա Զայրապետյանին՝ մեր աշխատանքներին մեծազույն սիրով աջակցելու համար:


2. Կորկոտյան Զ., Խորհրդային Զայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Երևան, 1932:

3. Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բանարան, հ. Բ, Վենետիկ, 1903-905, էջ 97: Տե՛ս նաև Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 302: Բ., Մի կտոր իմ յիշատակարանից, «Մշակ», 1883, N 160, 25 հոկտեմբերի, էջ 2: Մ. Թանգ. Ն., Շուշուց դէպի Զին Նախիջևան, «Նոր-Դար», 1891, N 159, 2 նոյեմբերի, էջ 3:

4. Բ., Նույն տեղում:



Եկեղեցու շինարարական արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Խաչքար ա (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



Ճակատակալի խաչազարդ երեսը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

- 5. Մ. Թանգ. Ն., Նույն տեղում:
- 6. Մարտիրոսյան Ժ., Բոլորը գոհ են, «Արաքս» (Մեղրի), 1965, N 38, 11 օգոստոսի, էջ 4:
- 7. Բ., Նույն տեղում:
- 8. Նույն տեղում:

Սովի վկայությունը Վահրավարի վիմագրերից մեկում

Այս փոքրիկ հոդվածով անդրադառնում ենք ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու շրջանի Վահրավար՝ գյուղի վիմագրերից մեկին, որը կարևոր է Հայաստանի ժԹ դարի երկրորդ կեսի պատմության դրվագներից մեկի ուսումնասիրության առումով:

Խնդրո առարկա վիմագրի բովանդակությունից պարզվում է, որ այն կերտվել և կանգնեցվել է 1880 թ. ստեղծված աղետալի իրավիճակի՝ համատարած սովի հետևանքներից մեկի՝ հացամթերքի թանկությունը շեշտելու նպատակով: Սակայն մինչ արձանագրությանն անցնելը հայ ժողովրդին պատուհասած այդ աղետի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարում համառոտ նկարագրել ստեղծված կացությունը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Հայոց աշխարհը հայտնվում է մի Նոր փորձության՝ սովի ճիրաններում: Վերջինս արտահայտվում էր՝ գլխավորապես կամ ցանքատարածությունների ոչնչացման, կամ դրանց չմշակման և կենսական անհրաժեշտության առաջին մթերքների թանկության, կամ մահա-

ցության բարձր աստիճանի և արտագաղթի եղանակով: Խնդիրն արձարծել են թե՛ ականատեսները և թե՛ ժամանակի մամուլը: Սովի մասին հիշատակումներով առանձնանում է հատկապես Վանի նահանգը: Այս առումով կարևոր են 1876-1880 թթ. Վանի առաջնորդական փոխստորդ երեմիա Տևկանցի² տեղեկագրությունները: Օրինակ՝ 1880 թ. սկզբին ցավով գրում է. «1877 թուականին սկսեալ մինչև 1879 թուականի վերջեր սոսկալի սովն տանջեց զՎասպուրական աշխարհս, որոյ վասն ունիմք ընդարձակ գրիչ: Զի եթէ կառավարութեան պաշտօնեայք մեր կիսոյ չափ հեռատեսութիւն ունենային և ասպատակութիւն և ասարառութիւն արգելելով երկրագործութեան խափանման պատճառ չտային, այն սովն տեղի չի պիտի ունենար: Բայց ավանդ, զի մեք բողոքեցինք այս մասին և մեք լսեցինք»³: 1879 թ. Նոյեմբերի 20-ին Կոստանդնուպոլսի պատրիարքարանին հղած գրությամբ էլ հաղորդում է սովի և արտագաղթի մասին. «Պատերազմի հարուածներուն անդուլ հարստահարութեանց, կառավարութեան անհոգութեան պատճառաւ սով տիրած է, ժողովուրդ յուսաստած կգաղթեն...»⁴:


1880 թ. մարտի 14/26-ին «Մշակ» թերթին Վանից ուղարկված նամակում նկարագրվում է սովի ճիրաններում հայտնված մարդկանց ծանր դրությունը. «...Աղբակայ մէջ սովն անբացատրելի կերպիւ սաստկացած է, 150 ոգի անդ սովամահ եղած են, հարիւրաւոր աղջկունք զի գիւղօրէից փախստական Վանայ քաղաքին փողոցներուն մէջ կը թափուին և կը պառկին, երեք հարիւր մանուկ անօթութենէ հիւանդ են...»⁵:

Հիշատակելի է նաև Նույն նահանգի Խնուս գավառում 1880 թ. մայիսի 24-ին արձանագրված հետևյալ տեղեկությունը. «...գարուն մտանք... իսկ սերմանոցը հազուագիտ են...: Մարդիկ ցորեն կը փնտռեն սերմանելու եւ հաց ուտելու, բայց չգտնուիր...: Եթէ գաւառիս բնակչաց օգնութիւն չհասնի, շատերը սովալլուլի պիտի կորսուին: Հիմա շատերը կանանչ խոտ ուտելով, ոմանք ալ քանի մը ամիսներէ հետէ սատկած անասնոց դիակներ ուտելով, եւ ոմանք ալ մուրալով կապրին եւ այլք մեռած են անօթութենէ...: Այս աղետից վրայ անելի ծանր են գաղթական չէրթեգաց ըրածները, որոնք ուր որ ցորեն գտնեն, յարձակելով կը յափշտակեն եւ կը տանին»⁶:

Ինչ վերաբերում է սովի հետևանքով կենսամթերքի գնաճին և դրա հետ կապված գողությունների թվաքանակի ավելացմանը, ապա դրանց վերաբերյալ բազմաթիվ ահազանգեր են հնչել ժամանակի մամուլում: Օրինակ, Մեղրիից «Մշակ» թերթին ուղարկված հաղորդագրության մեջ շեշտվում է, որ սովի հետևանքով առաջացած «թանկութեան պատճառով ասագակութիւնները՝ օրըստօրէ բազմանում են»⁷: Շուշիից էլ գուժում են, թե «...ալիւրի պուղը՝ արժէ 4 րուբ: Քաղաքի հայ բնակիչներից մինչև 500 ընտանիք համարեա թէ ուտեստի պաշար չունեն»⁸: Նույն ժամանակաշրջանում Նոր Բայազետում «...ալիւրի պուղը, որ առաջ ծախվում էր 50 կօպէկով, այժմ արժէ 2 ր. 60 կ. և բարձր»⁹, Ագուլիսում՝ «Ցորենի պուղը, որ սովորաբար 40 կօպէկ արժէ...», բարձրացել է այժմ մինչև 7 րուբ»¹⁰, իսկ Իգդիրում՝ «...հացը օրըստօրէ թանգանում է. կորեկի մի խավարը (30 պուղ), որ առաջ արժէր 2-3 րուբ, այժմ 150 րուբով չէ ճարվում: Ցորենի խավարը ծախվում է 200 րուբով, միս պաշարէղէները վ դրանց համեմատ թանգ են»¹¹:

Սայմաստից էլ տեղեկագրել են, թե «...հացի թանկութիւնը սովի կերպարանք է ստացել. տեղային ժողովուրդը մեծ նեղութեան մէջ է»¹²:

Օրինակներն այսպես անվերջ կարելի է շարունակել, սակայն այսքանն էլ բավական է պատկերացում կազմելու սովի և անդառնալի հետևանքների մասին:



Այժմ անդրադառնանք մեր բուն նպատակին՝ այն վիճակի արձանագրությանը, որի բացառիկ բովանդակությունը և հավաստում է սովի տարածման հետևանքով հացեղենի թանկության մասին: Ծիշտ է, վիճակում բառացի չի արձարծվում սովի մասին, սակայն գնահան անուղղակիորեն կապված է դրա հետ:


ՀՀ Սյունիքի մարզում՝ Մեղրի քաղաքից մոտ 6 կմ հարավ-արևմուտք գտնվող Ագարակ ավանում՝ Ծինարարների փողոցում Ախպերջանյանների տան մոտ, ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբը¹⁵ 2016 թ. վավերագրում է ուղղանկյանը մոտ եզրագծով արձանագիր մի սալաքար, որը, ցավոք, «պոկված» է իր բնական միջավայրից: Ըստ տեղացիների վկայության՝ բերվել է Նույն շրջանի՝ միջնադարյան հուշարձաններով հարուստ Վահրավար գյուղից: Վիճակը փորագրված է անվարժ գրչի ձեռքով, պահպանված չէ ո՛չ տողերի և ո՛չ էլ տառերի համաչափությունը: Ստորև ներկայացնում ենք ութ տողից կազմված արձանագրությունը.

Վասն 1880 դարուն | հացըն փուլըն դառաւ | դասն մանէք ոռուսաց | փող: Աստած ազատէ, էլ չի լիեսնէք էնպէս հրաշքն: | Ես մեռնեմ, դարնամ հող, այս | գիրըս մնայ յիշատակող: Մկրտիչ | Առաքելեան Մելիք-Ախպերջանեանց:

Գրատ. Մանուչարյան Ա., Հացի թանկության վիճակի հիշատակություններ Մեղրու և Մարտունու շրջաններում, «Հայաստանի Հանրապետությունում 1993-1995 թթ.

Ծանոթագրություններ

1. Գտնվում է Մեղրիից 8 կմ հյուսիս-արևմուտք, իսկ Ագարակից՝ 9,5 կմ հյուսիս՝ Վահրավար գետի աջակողմյան լեռնալանջին (N 38.950642, E 46.175814, ծ. մ. Միջին բարձրությունը՝ 1287 մ):
2. Երեմիա վարդապետ Տևկանց (1829-1885). հեղինակել է «Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թվականներին» (Երևան, 1991, աշխատասիր.՝ Հ. Պողոսյանի): Նրա ձեռագրական ժառանգությունից մի աշխատություն էլ՝ «Տոմարյան հիշատակարան» (գիրք Ը) խորագրով, հրատարակության է պատրաստել Հ. Մուրադյանը (Երևան, 2018):
3. Մաշտոցի անվան Մատենադարան, Զանազան հեղինակների ֆոնդ, Երեմիա Տևկանց, վավ. 4182, թ. 56:
4. Նշվ. վավ., թ. 543:
5. Կիլիպենկեան Ս., Նամակ Թիրքիայից, «Մշակ», 1880, N 55, 2/14 ապրիլի, էջ 3:
6. «Մշակ», 1880, N 58, 5/17 ապրիլի, էջ 3:
7. Սիրաքեան Մ., Խնուսէն Նամակ մը, «Աւետաբեր», 1880, N 30, 27 յուլիսի, էջ 119: Տե՛ս Նան Քորթոշյան Ր., Խնուս, Երևան, 2021, էջ 20:
8. «Մշակ», 1880, N 57, 4/16 ապրիլի, էջ 3:
9. Ծանրության ռուսական չափ, որը հավասար էր 16,3 կգ:
10. «Մշակ», 1880, N 57, 4/16 ապրիլի, էջ 3:
11. «Մշակ», 1880, N 35, 5/17 մարտի, էջ 3:



Վահրավարի վիճակը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2016 թ.)

հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր», Երևան, 1996, էջ 51:

Տարընթերցում. Մանուչարյանի մոտ ազատէ, էլ չի-ի փոխարեն՝ ազատել չի, էնպէս-ի փոխարեն՝ էսպէս, գիրըս-ի փոխարեն՝ գիրս, Առաքելեան Մելիք-Ախպերջանեանց-ի փոխարեն՝ Առաքելեան Մելիք-Ախպերջանեանց:

Ծանոթ. հրաշք բառն օգտագործված է անբնական, չտեսնված երևույթ իմաստով (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Գ, Երևան, 2004, էջ 310):

Մեր խոսքն ամփոփելով՝ կարելի է ասել, որ այս արձանագրությունը Հայաստանի ԺԹ դարի պատմության դեպքերից մեկի՝ 1877-1880 թթ. համատարած սովի ուսումնասիրման արժանահավատ և իր բովանդակությամբ սակավադեպ «քարե վավերագիր»-ներից է:

12. «Մշակ», 1880, N 66, 24 ապրիլի/6 մայիսի, էջ 3:
13. «Մշակ», 1880, N 79, 14/26 մայիսի, էջ 2:
14. «Մշակ», 1880, N 44, 18/30 մարտի, էջ 3:
15. Հուշարձանագետ Սամվել Կարապետյանի առաջ-տորությունը:

**ԷՄՄԱ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ
«ՎԱՐՁՔ», N 17, 2022 Թ.**

Հացի թանկության վիճակի հիշատակություններ Մեղրու եւ Մարտունու շրջաններում

Մեղրու շրջանի Ագարակ ավանում, տոհմիկ բժիշկ-ներ Ախաբերջանյանների տան բակում, իբրև գերդաստանի մասունք պահպանվում է ժամանակին Վահրավար գյուղից այստեղ տեղափոխված 90X60 սմ մեծությամբ մի սալաքար, որի վրա արձանագրված է հետևյալը.

ՎԱՄՆ 1880 ԴԱՐՈՒՄ / ՅԱՏԸՆ ՓՈՒԹԸՆ ԴԱՌԱԲ / ԴԱՄՆ ՄԱՆԷԹ ՌՈՒՌՈՒՄԱՅ / ՓՈՂ: ԱՍՏԻՍ ԸԱՍՏԵԼ ԶԻ / ԴԵՄՆԷԲ ԷՆՊԷՍ ԶՐԱՇԲԸ: / ԵՍ ՄԵՌՆԵՄ, ԴԱՐՆԱՄ ԶՈՂ, ԱՅՍ / ԳԻՐԸՍ ՄԱՅ ՅԻՇԱՍԱԿՈՂ: ՄԿՐՏԻՉ / ԱՌԱՔԵԼԵԱՆ ՄԷԼԻԹ ԱՆՊԵՐՋԱՆԵԱՆՅ:

Հացի այս աննախադեպ թանկությունը (հմմտ. 1800-1860 թթ. մեկ փուլից հացի գինը Մոսկվայում կազմել է 33-60 արծաթ կոպեկ), որն այդպես զարմացրել էր Վահրավար գյուղի տանուտերին և ստացել նրան հավերժացնելու այդ «արտասովոր հրաշքը», բացատրվում է հետևյալ երկու գլխավոր պատճառներով:

1. 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմով: Ճանապարհային առումով Անդրկովկասի կտրվածությունը Ռուսաստանից պատճառ հանդիսացավ այն իրողության, որ ռուսական զորքերն այդ ճակատում ժամանակին չկարողանալին ստանալ անհրաժեշտ համալրում և բավարար պարենմատակարարում: Հացը, որպեսզի Ռուսաստանի հացառատ շրջաններից (Նովոռոսիյսկի, Խերսոնի, Դոնի, Սարատովի և այլ նահանգներից) հասցվեր անդրկովկասյան բանակին, պետք է Սև ծովով տեղափոխվեր

Փոթի նավահանգիստ, այնտեղից փոխադրվեր Փոթի-Թիֆլիս երկաթուղով, ապա Թիֆլիս-Էրիվան ճանապարհով: Այս տարբերակը բավականին վտանգավոր էր, քանի որ Սև ծովում թուրքական ռազմականները կարող էին խոչընդոտել ռուսական բեռնափոխադրումները: Մտում էր երկրորդը և միակ հարմարը՝ Ռազմա-Վիրական ճանապարհը: Սակայն այստեղ անասելի կուտակումներ եղան դաժան ձմռան պայմաններում: (Պատահական չէ, որ պատերազմի ավարտից հետո ցարական կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրեց Անդրկովկասում ճանապարհների շինարարության խնդրին՝ ելնելով դրանց, նախ ռազմական, ապա տնտեսական նշանակությունից): Ռուսական կառավարությունը, բանակը պարենով ապահովելու հարցում, պետք է գլխավորապես հենվեր տեղական միջոցների վրա: Այլ խոսքով հացը պետք է հայթաթեր տեղում: Իսկ դրանից առավելապես պետք է տուժեին գյուղացիները: Հայաստանում 1864, 1870, 1877 թթ. իրականացված գյուղացիական բարեփոխումներից հետո, հողի մոտավորապես 65%-ը պետական կամ արքունական էր, որը վարձակալությամբ հանձնվում էր գյուղացիներին:

2. Ամենայն հավանականությամբ, ռուս-թուրքական պատերազմին հաջորդել են երկու անբերրի տարիներ, որոնք հանգեցրել են պարենամթերքի ճգնաժամի: Ընդհանրապես, անբերրի տարիները Հայաստանի համար միաժամանակ հանդիսացել են նաև սովի ժամանակներ: Ի դեպ, անբերքատու 1880 թվականը խիստ անբարենպաստ է եղել մի այնպիսի հաց արտահանող երկրի համար, ինչպիսին Ռուսաստանն էր: 1880 թ. Ռուսաստանի պատմության մեջ հայտնի է դարձել սովի տարի անունով: Հացի կտրուկ թանկացումն ազդել է նաև մյուս գյուղմթերքների վրա: Ահավասիկ, այդ է արձանագրված (զարմանալիորեն Նույն թվականին) Մարտունու շրջանի Ջուլաքար գյուղի գերեզմանատանը կանգնեցված 13-14-րդ դդ. Ջուլախաչի թիկունքին, 14 տողանի վիճակից, որը մեզ է տրամադրել մեր ավագ գործընկեր Ս. Ս. Սաղումյանը, ունի հետևյալ բովանդակությունը՝

ԱՐԴԵՆ ԳՐԱԾԻՍ ՅԱՌԱՋ ԿԱՐ ԽԱԶՆ/ԱՍԻ ՀԱԶԱՐ ԱԶԱՐ ՌՈՒ ՅԱՐԻՐ ՌՈՒՄՈՒՆԻՆ ԵՐԿԻՐՍ ԵՂԵՒ ՍԱՏԻԿ ԹԱՆԿՈՒԹԻՆ, ԵՕԹ ՍԱՆԷԹ ԾԱԽՎԵՑ ՄԻ ՓՈՒԴ ՑՈՐԵԱՆ/ԳԱՐՈՒ ԼԻՏՐ ՍԱՆԷԹ ԱՐԺՕՂՈՒԹԻՆ, ԽՈՏԻ, ԴԱՐՄԱՆԻ ՓՈՒԴՆ ԶՈՐՍ ՄԱՆԷԹ, ՀԱԶԻՎ ԿԱՐԱՑԱԸ ԱՌՆԵԼ ԹԵՊԵՏ, ԼԻՑԻ ԳԻՐՍ ԸՆԴԵՐՁ ԸՆԴԵՐՁՕՂԻՆ ԴԷՏ (ԶԻ ԼԻ) ԺԱՄՈՒՄ ԵՂԻՑԻ ԱՆ-ԳԷՏ, ՉԸՊԱԿԱՍԵՑՆԷ ՀԱՑ ԱՍԵՆ ԴԵՊ, ՏԷՐ ՎԱՀԱՆ ՍԱՐԳԻՍՈՎ ԳՐԱԳԷՏ. /...../ ԱԼԷՔՍԱՆԻՐ ԹԱԳԱԿՈՐ .../ՅՈՒՄՈՎ ՅԱՇԽԱՐՀՍ ԲՈՂՈՐ:

Հացի գնի 3 ռուբլու տարբերությունը Ջուլաքարի և Ագարակի արձանագրությունների միջև, հավանաբար բացատրվում է այն հանգամանքով, որ այսֆները գյուղմթերքները առուծախով զբաղվող վաճառականները, ապրանքը Հայաստանի հասկավոր կուլտուրաներ (ցորեն, գարի) մշակող շրջաններից (Նոր-Բայազետի, էրիվանի, էջմիածնի, Ալեքսանդրապոլի գավառներ) մինչև հասցնեին սակավահող Ջանգեզուրի հեռավոր լեռնային գյուղը, պետք է որոշակի չափով թանկացնեին:

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ



գ. Վահրավար

Մեղրու ավանդական տարագի տոնածիսական համալիրը

ՍՎԵՏԼԱՆԱ ՊՐՈՒՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Մեղրին, ընդգրկվելով Սյունիք-Արցախի պատմաագագրական մարզի սահմաններում, մշակութային նկատելի գուգահեռներ է դրսևորում Գողթան գավառի մշակույթի հետ: Մեղրու մշակույթը սյունյաց մշակութային խճանկարի մի ուրույն մասն է:

Գողթնի և Մեղրու կանանց տարագում ինքնատիպ տարր էր կրծկալ մանդիլը, որը, ի տարբերություն Բարձր Զայքի, Վասպուրականի, Տուրուբերանի տարագախմբերի /որտեղ կրծկալը կապվել է զգեստի տակից, փակելով կրծքամասի բացվածքը/, կրել են վերնագգեստի, անգամ բուրբի վրայից: Սյունիք-արցախյան տարագախմբում այն բոլորովին բացակայում է: Ըստ Ն. Ավագյանի՝ կրծկալը Գողթնից տարածվել է Մեղրի, հատկապես Ագուլխի աղջիկների՝ մեղրեցի տղաների հետ ամուսնանալու և Մեղրի տեղափոխվելու շնորհիվ: Այս տարագամասն, ըստ էության, փոխառված է վասպուրականյան տարագախմբից: Մեղրին յուրատեսակ միջանկյալ գուտի է, այդ սահմանայնությունը երևում է մշակույթի, այդ թվում և տարագի առանձնահատկությունների մեջ:

Գլխաշորի վրայի խաչաձև ամրացող կտորը կեռագարդի հետ միասին ընդհանրական են Սյունիք-Արցախին: Շատ ուշագրավ է այդ գարդերի տեղաբաշխվածությունը, դրանք թռչնի ճանկեր են հիշեցնում:

Տարագլ սամոգլացել է Նախշագարդ գուլպաներով և ոտնամանով: Զայտնի էր միշտի անվամբ կեռ կտուցով, առանց կրունկների, չստերի ձևով ոտնամանը: Այստեղ ևս օգտագործված է կենդանու դիմամասի անվանումը:

Մեղրեցի կնոջ տարագահամալիրը կազմված էր ոսկյա կամ արծաթյա մատանիներից /հայտնի են արծաթյա գլանաձև, թագային հորինվածքով, փորագիր բուսանախշ օրինակներ/, ականջօղերից և գարդանախշերով գուտուց: Կանայք բուր մատին կրել են բթանոց, որը եղել էր նաև Վասպուրականում: Գլխագարդերից գործածել են արծաթյա կեռագարդը, երեսնոցը և ճակատի դրամաշարը: Կեռագարդն ամրացվել է գլխաշորի վրա, յուրաքանչյուր մասը բաղկացած է երեք տարբեր գարդատախտակներից՝ հնգական շրթաներով:

Բացի շարժական գարդերից, կանանց հագուստի մասերին կցվել են գարդերի տարրեր: Զգեստը զեղագարդվել է մետաքսաթելերով հյուսված տրեզով, ոսկեթելով: Զգեստի թեքաբերանը հարդարվել է շեղանկյունաձև, տափակ ու սևամեջ կախիկներով և բոժոժների շարանով:

XX դ. սկզբներին մեղրեցի կնոջ ավանդական տարագը դուրս է եկել կենցաղավարումից, դրա փոխարեն կիրառության մեջ է մտել քաղաքային եվրոպական հագուստը՝ երևանի և Թիֆլիսի կանանց գլխի հարդարանքի տարրերով: Այն կազմված էր ճակատակալից՝ կենտրոնական քորոցով, դրա վրայից կրել են սպիտակ ժանեկագարդ քոր, քունքամասերի մագափնջերը ոլորել, ճավլեր են արել:

Ազգային տարագը, իր տեղային խմբերով հանդերձ, բազմագործառույթային է և որպես մշակութային կարևոր տարր, ունի սոցիալական խմբերի, սեռատարիքային և էթնիկ ընդհանրության հոգևոր պահանջմունքների ցուցիչ դեր: Տարագը յուրատեսակ նշանային համակարգ



է, որոշակի տեղեկությամբ՝ նրա կրողի վերաբերյալ, որը հաղորդվում և դրսևորվում է կրվող համալիրի, տիպի, գույնի, ձևվածքի, գարդարանքի միջոցով: Զագուստի նշանային գործառույթներում զեղագիտական հատկանիշները միահյուսված են կրոնածիսական ոլորտներին:

Ազգային տարագը, մասնավորապես տղամարդկանց տարագի համալիրը, որպես համեմատաբար բաց համակարգ, նկատելիորեն արծագանջում է տվյալ հանրույթի պատմամշակութային, սոցիալ-տնտեսական գործընթացների փոփոխություններին: Ազգային տարագում խորհրդանշական դեր ունեն բոլոր տարրերը, սակայն, եթե ձևվածքը, ուրվագիծը, չափերը պակաս նշանայնացված են, ապա զեղագարդման և գունային համակարգն ուղղակիորեն կապված են հոգևոր ոլորտի հետ, իմաստային խորը ծանրաբեռնվածությամբ մատանաշում են հագուստը կրողի դերն ու կարգավիճակը:

Զագուստի նշանայնությունն առանձնապես ակնհայտ է ծիսական հանդերձանքում: Զագուստը ծիսական նշանակություն ստացել է որոշ տարրերի պարտադիր կիրառմամբ: Տղամարդկանց հագուստի նշանային համակարգի միտվածությունը դրսևորվել է գուտու, չուխայի, գլխարկի, ուսկապի, նարրտի առկայությամբ, իսկ կանանց տարագում գուտու, գոգնոցի, թագի, գլխի հարդարանքի տարրերի, գարդերի միջոցով:


Մեղրու ավանդական տարագում ծիսական հանդերձանքն ուներ հետևյալ նշանային դերն ու իմաստային ծանրաբեռնվածությունը. օրորոցախագի դեպքում նորածին աղջկա կրծքից կախված արծաթյա դրամը կատարել է նշանի դեր:³ Ծաղկագարդին նշանված տղան եկեղեցում ձեռքին մի գույգ մոմ բռնած կանգնել է աղջկա առջև, և մայրն աղջկա գլխին օգել է քոջարդաթ, որպես նշանի հրապարակայնացում: Ուշագրավ է, որ Մեղրիում ուրախության առիթներով տուն եկողն ասել է պարտապարիլիս, անգամ երեկոյան՝ չար ոգիների վնասաբեր ազդեցությունն ու անհարկի ուշադրությունը փարատելու նպատակով: Որպես նշան-նիշեն տվել են ոսկե մատանի, վզնոց, դրամաշարան և այլն: Նշանուլեքի ժամանակ փեսացուից և նրա ծնողներից հարսնացուին տրված նվե-

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՇԵԱՍԵՈՒՅՈՒՆ

րը կոչվել է երեսաջուր-իրսաջուր: Նշանը դրվել է խնձորի կամ նռան մեջ՝ ոսկե կամ արծաթե դրամի ձևով: Խնձորն ու նուռն արգասավորության, ամուսնական ապագա զույգի բեղմնավորության խորհրդանիշներն էին: Նշանդրեքի վերջում աղջկան ներս են բերել՝ գլխին չարդաթ գցած, և նա համբուրել է տարեցների ձեռքը՝ նրանցից որպես նվեր ստանալով մանր դրամներ:⁴ Տոներին տղայի տևից աղջկան ուղարկվել են նվերներ, խոնջաներ, մեջը միրգ, քաղցրավենիք, մեջտեղում վառվող մոմ:

Նավասարդին ուղարկել են լուս՝ մի պղնձյա սինի /մեծմահի/՝ վրան մի գավ գինի կամ մի շիշ օղի, միրգ, անպատճառ խնձոր կամ նուռ, մեջը վառած մոմ դրած, անպայման մի քող/չարդաթ, որպես հարսնության խորհրդանիշ: Հարսնացուին նվերներ ուղարկել են նաև Բարեկենդանին /Բրիգինդանին/, Մեծ պասի առաջին օրը, Միջինքին՝ որպես մերձեցման, սիրաշահման դրսևորումներ: Զատկին հարսնացուին ուղարկել են ներկած ձվեր, յուղով հաց, երբեմն գառ, ճակատը ներկած, վզին թաշկինակ կամ չարդաթ կապած: Գառը կոչվել է ախառնը: Վարդավառին աղջիկն ու տղան միասին գնացել են խաչ: Գարնանը տղայի բարեկամ աղջիկները և հարսները հարսնացուին տարել են այգիներ, դաշտեր՝ զբոսանքի: Աղջկա կողմն իր հերթին խոնջաներին պատասխանել է դարձով՝ շշի բերանակալ կամ պօսի՝ ուլունքներով զարդարուն խցան, զուլպա, թաշկինակ նվիրելով:⁵ Վերջին երկուսը հատկապես կարևոր դեր ուներ ապագա խնամիների փոխադարձաբար ընծայվող նվերների մեջ: Ծեսերի, տոների ժամանակ ընդունված նվերների մեջ կարևորվել են հագուստի տարրերը, որպես ընդհանրական փոխա-



Վիլիան, Մեղրի, 20-րդ դարի առաջին կես

նակում՝ նյութական բարիքների ձևով: Նվերների փոխանակումը տուր և առ էր ամուսնացող կողմերի միջև: Ըստ ազգագրագետ Զավեն Խառատյանի՝ դա նշանակել է նաև ամուսնություն-խնամություն:⁶ Հագուստի նվերները, ուտելիքի, համատեղ հացկերույթի հետ միասին կազմել են ընդհանրական փոխանակությունը՝ որպես ամուսնա-

կան փոխանակության ձև:

Հարսանիքից առաջ ընդունված էր կարգի բերել տունը՝ միկրոկոսմոսը, որպեսզի «հարթընը»/հարթը տուն մտնելիս կանգնի աստղագարդ երկնքի տակ՝ ակնկալելով ներդաշն, երջանիկ ամուսնություն և ապագա: Բնակարանը մաքրելուց, կարգի բերելուց հետո տան առաստաղին և սյուներին այլուրով տիեզերական պատկերներ են արել՝ աստղեր, արև, լուսին:⁷ Այդ ծիսական նկարազարդումը արել է քավորկիներ՝ կրկին նվեր ստանալով: Տղամարդկանց համար նախատեսված նվերների մեջ կարևոր էին հետևյալ տարազամասերը. գուլպաներ և տնապաններ, ինչպես և թաշկինակ: Քա-



Հայոց ազգագրության թանգարանի լուսանկարների հավաքածուից՝ խմբանկար, ուխտավորներ, Մեղրի, 1910-ական թթ.

վորին որպես նվեր մատուցվել է մի շիշ օղի, հավ, արխալուղ կամ ոտնաման /չմոշկ/, առանձնապես այն դեպքերում, եթե նա սգի մեջ էր:⁸

Փեսացուն և նրա նշանային համարժեք արջառը՝ մնացու եզը,⁹ զարդարվել են ժապավեններով, վերջինս՝ նաև խնձորների շարանով: Թագավորի /թաքավորի/ և թագուհու պարանոցին, երբեմն նաև՝ ձեռքերին կապել են կարմիր, կանաչ, սպիտակ բրդյա թելերից ոլորուն նարոտ: Նման կարմիր թել կապել են նաև օրորոցախազի դեպքում, օրորոցների լծերին՝ դանակով խաչ կամ գիր խազելուց հետո: Այդ թելը կարող էր նույնացվել նարոտի



Բացօթյա խնջույք Մեղրիում

հետ, որը կոչվել է նաև կանաչ-կարմիր: Իմաստային առումով դա նշանակել է կարգել, ամուսնացնել,¹⁰ իսկ խոսքը կանաչըցնել՝ ասածն անպատճառ կատարելը:

Փեսացուի կրծքին և ուտերին քավորկինը խաչաձև ամրացրել է հուսպենք-օսկապ-ուսկապը՝ սպիտակ, կարմիր, կանաչ գույների թաշկինակներից: Հարսնացուն և փեսացուն կրել են կարմիր, կանաչ, սպիտակ թելերից զարդարուն ասեղնագործ թագ-վարսակալ-ճակատակալ /որից կախված էին բազմագույն ծոփքեր/, ուտի և կրողները կոչվել են թագավոր և թագուհի: Տղայի զգեստավորումը ևս ծիսական բնույթ է ունեցել: Նախ օրինվել է քթեթը՝ հարսանեկան հանդերձանքը, որ տղայի կողմից ուղարկվել է աղջկա տուն: Դրա հետ մեկտեղ օրինվել են նույն սկուտեղի վրա դրված քաղցրեղենը, շաքարը, տղայի գլխարկն ու քավորի սուրը: Դրան հաջորդել է տղայի երեսի սափրումը. մազերը խուզել են, մատը թաթախելով այն գինու մեջ, որ քավորը պահել է աջ ձեռքում, վառած մոմը՝ ձախ ձեռքում: Դա անցման նվիրագործման ծես էր, որով տղան սահմանային վիճակից անցնում էր նոր, ամուսնական տարիքային խումբ:

Քթեթ բերողին ևս նվեր են տվել՝ թաշկինակի, գուլպայի ձևով: Աղջկա կողմից նվիրվել է գոտի, գլխարկ: Քավորը քթեթը հանձնել է հարսին զգեստավորող կնոջը՝

մի քանի կոպեկ դրամի ձևով նվեր տալով: Հարսնացուին հազգրել են տան օթախ/սենյակում: Գոտին կապել է քավորը կամ սկեսրայրը՝ երեք անգամ աջից ձախ պտտեցնելով, վերցրել ոտքերի կողմից և կապել մեջքին՝ կամացուկ խփելով՝ որդեծնությունն ապահովելու միտումով:

Քավորկինը չարդաթի վրայից կապել է թագը՝ Նախշուն բազմագույն ծոփքերով ժապավենը: Նարտուն ու ուսակապը հանել են ամուսնական առաջաստից առաջ:

Հարսնացուի գլխի հարդարանքում կատարված փոփոխությունները խորհրդանշել են նրա սոցիալ-ընտանեկան կարգավիճակում տեղի ունեցած առաջընթացը: Գլխի հարդարանքը ներկայացնում է հագուստի հմայական, պաշտպանական գործառույթները:

Ավանդական տարազի դերն այսօր լրիվ փոխվել է: Այն դուրս է եկել կենցաղավարումից, կորցրել էրբեմնի կիրառական նշանակությունը և դարձել ազգային մշակույթի էթնոսիմվոլիկ հատկանիշ՝ կատարելով էթնիկ ցուցիչի դեր:

Կենսաապահովման մշակույթի կարևոր տարրերից է ազգային խոհանոցը: Ուտեստը մարդու հիմնական, ամենօրյա կենսական միջոցներից է, միաժամանակ այն ազգային մշակույթի առավել ավանդութայնությամբ ու կայունությամբ աչքի ընկնող մշակութային տարրերից է: Կերակուրները կազմել են ուտեստի համակարգը, որը բաժանվում է հացամթերքների, կաթնեղենի, մսեղենի, ձկնեղենի ուտեստների, բանջարեղենի, մրգեղենի: Ուտեստի համակարգը համալրում են քաղցրավենիքները, խմիչքն ու համեմունքները: Այն ունի տեղական առանձնահատկություններ: Ուտեստի ազգագրական ուսումնասիրությունը էականորեն տարբերվում է խոհարարականից: Ուտեստը ազգագրագետին հետաքրքրում է ոչ միայն պատրաստման տեխնոլոգիայի տեսանկյունից, այլ որպես մշակութային տարր, որը կապված է մշակութային համակարգի այլ երևույթների հետ: Ուշագրավ են Մեղրու ուտեստի առանձնահատկությունների բացահայտումը և դրանց կիրառումը արդի կենցաղում և հատկապես Փոքր թաղում գործող հյուրատանը:

Այսօր մսեղենից ուտեստն ավելի մեծ պահանջարկ ունի ուտեստի համակարգում և ձեռք է բերել պրեստիժային նշանակություն: Հյուրին գերադասում են հյուրասիրել մսեղենից ուտեստներով՝ խորոված, խաշլամա, տոլմա, քյաբաբ, կոտլետ, քյուֆթա և այլն:

Մեղրին հայտնի է իր մրգերով՝ խաղողով, ծիրանով, դեղձով, խնձորով, տանձով, սերկևիլով, բալով, սալորով, ընկուզով, հոնով, նռով, փշատով, թզով, կշով, և մեղրեցիները կարողանում են մրգերը պահել և թարմ վիճակում, և չորացրած: Ծատ մրգեր՝ օրինակ սերկևիլ, խնձոր, նուռ, այլոճ, լցրել են ճաշերի մեջ: Խաղողից և թթից, գինուց և օղուց բացի պատրաստում են դոշաք՝ բուժական նպատակով:

Սուջուխ /շարոց/ պատրաստում են ընկուզից, որը թաթախում են դոշաքի մեջ, չորացնում և ցանում փշատի այլուր:



Հայոց ազգագրության թանգարանի լուսանկարների հավաքածուից Ամուսնական զույգ, Մեղրի, 1870-ական թթ., Գևորգ Իսրաբեյան և Մանյա Խոջամիրյան

ԴԱՇԵՍԱԿԻՈՒԹՅՈՒՆ

Ալանին պատրաստել են թզից, դեղձից՝ մեջը ընկույզ, շաքարավազ, մեխակ, դարչին լցնելով:

Ավանդական քաղցրավենիք է մեղրը, որը կերել են հացի, յուղի, թեյի, մածոնի հետ: Դա ավելացրել են խմորեղենի, հալվայի, շիլայի, ձվածեղի մեջ: Ընկույզի հետ դրանից պատրաստել են գոգինախ: Լավ բացած մեղրաջուրը գործածել են գլխացավի համար:

Խաղողը լայնորեն օգտագործվել է նաև տնական պահածո քաղցրավենիքներ պատրաստելու նպատակով: Խաղողից և թթից պատրաստել են դոշաք: Դրանից պատրաստել են մի շարք քաղցր կերակուրներ՝ փոխիկո, հալվա, խավիժ և այլն: Այն կազմել է անուշների /մուրաբաների/ բաղադրիչ մասը:

Միրգ-բանջարեղենային մթերքներն ավանդական ուտեստում ունեցել են իրենց հաստատուն տեղը, որը պայմանավորված էր զարգացած այգեգործությամբ և բանջարաբուծությամբ, հնագույն արխեստիպային զբաղմունք՝ բուսահավաքչության առկայությամբ:

Մշակովի ու վայրի մրգերը գործածվել են թարմ, չոր, եփած, թթվեցրած, հազվադեպ՝ խորոված վիճակում: Բոլոր մրգերը թարմ վիճակում օգտագործվել են որպես աղանդեր և կազմել տոնական սեղանի պարտադիր տարրը: Որոշ մրգեր որպես համեմունք գցել են կերակուրների մեջ /չամիչով փլավ, տոլմա, ավելով, ձավարով ապուր/: Չկեռը և տանձը խառնել են թթուներին: Մրգերից պատրաստել են քաղցր շարոց /սուջուխ/, պաստեղ, պանի: Ալանին, իբրև ախորժեղի քաղցրավենիք, անցյալում պահել են Նոր տարուն ճաշակելու կամ պատվավոր հյուրին հյուրասիրելու համար:

Ի տարբերություն մրգերի, բանջարեղենի օգտագործման եղանակները բազմազան էին: Դրանք գործածվել են թարմ, եփած, տապակած, չորացրած, խորոված, աղ

դրած վիճակում:

Վայրի բանջարեղենի մի շարք տեսակներից պատրաստել են հատուկ թխվածք՝ բանջարով /ժանգյալով/ հաց կամ կոտապ անուններով:

Կերակրատեսակներում մրգերը, բանջարեղենն օգտագործվել են և առանձին, և այլ մթերքների /ձավարեղեն, մեղեղեն, կաթնեղեն/ համադրությամբ, որտեղ միրգը հանդես է եկել որպես համեմունք, իսկ բանջարեղենը՝ և գլխավոր, և լրացուցիչ բաղադրիչ: Սննդում մեծ տեղ են գրավում թթուները՝ որպես նախուտեստ և որպես կերակրատեսակների առանձին բաղադրիչ: Ձմռանը և գարնան սկզբին մշակովի բանջարեղենի պակասը սննդի մեջ լրացրել են վայրի բույսերը /չորացրած, թթու, իսկ գարնանը՝ թարմ վիճակում: Սիրված էին ավելույզ, բոխին, սիբեխը, եղինջը:

Թարմ վիճակում օգտագործել էին եղինջը, սինձը, շուշանը, դաևդուրը, քեղը, և այլն: Բանջարի տեսակներից պատրաստել են աղցաններ, ապուրներ, հատկապես հացահատիկի համադրությամբ:

Վայրի և մշակովի բանջարեղենից կերակուրների օգտագործումն ավելի հաճախակի էր դառնում պաստերի ժամանակ, երբ կերակուրները պատրաստվել են բուսական յուղով:

Ուրցը, դադձը, ծիրանը, վայրի համեմը փոխարինելի համեմունքներն էին: Ուրցը, դադձը, սարի թեյը՝ դանթափան ու մասուրը գործածվել են թեյի համար և հուսալի դեղամիջոցներ էին մրսածության ու այլ հիվանդությունների ժամանակ:

Դարերով մշակվել են միրգ-բանջարեղեն մթերքների պահպանման ժողովրդական հմտություններ, որոնք սերնդեսերունդ փոխանցվելով հասել են մինչև մեր օրերը: Այդ հմտությունների շնորհիվ միրգ-բանջարեղենի մի մեծ քանակ հնարավոր է լինում կյոռ տարին գործածել թարմ վիճակում:

Դոշաքով պատրաստել են ախորժեղի ըմպելիք՝ թերմուն /թերմոն/: Այն յուրատեսակ խմիչք էր, որ պատրաստել են գինին եփելով, զանազան քաղցրեղեններով՝ ռուբով /պտղից քամած հյութը եփած, թանձրացրած/, մեղրով ու պղպեղով: Թերմոնին վերագրվել է բուժիչ հատկություն, օգտագործել են բաղնիքի ծեսի ժամանակ, լուգանքից հետո /մրսածության դեմ/, իսկ տոներին՝ գործածել են որպես օշարակ:

Հյուրընկալության սովորույթը տվյալ մշակույթը կրողների և տարբեր էթնիկ պատկանելության մարդկանց խմբերի փոխադարձ առնչությունները կարգավորող համակարգն է, ուր կարևոր է հյուրի ընդունումը, ուշադրության նշանները, հյուրի տեղը տանը, սեղանի մոտ: Հայոց ավանդական հյուրընկալման սովորույթն ինքնաբերական և կամովին է եղել: Ըստ ավանդության իրավունքի Նորմերի հյուրընկալները պարտավոր էին հյուրին դիմավորել, ողջունել, տեղավորել, հանգիստը և ուտեստն ապահովելուց հետո՝ ճանապարհի դնել: Հատկանշական է՝ «Հյուրն Աստծուն է» ժողովրդական ասացվածքը: Անհատական հյուրընկալման դեպքում տանտերը ընդունելով մեկ և ավելի



Հայոց ազգագրության թանգարանի լուսանկարների հավաքածուից՝ սեպտեմբերի 15, 1897 թ., Մեղրի

այցելու, պարտավորված էր զգում ապահովել սննդով, իսկ նրանց կենդանիներին՝ կերով:

Այսօր էլ հյուրասիրության ավանդույթը պահպանվել է հայերի մեջ: Հյուրին հյուրասիրում են գոնե մեկ բաժակ սուրճով, գյուղերում՝ հաց ու պանրով, մածոնով և այլն: Հայերը հյուրասիրելիս մեկ-երկու անգամ հյուրին առաջարկում են հյուրասիրվել, այլապես հյուրը կարող է չօգտվել սեղանից: Հայերի մեջ ընդունված չէ ուղքի վրա հաց ունել և հացկերույթի ընթացքում լուրջ աշխատանքային քննարկումներով, գործնական գրույցներով զբաղվելը:

Հայկական ավանդական ուտեստը տարբերվում էր զանազան համեմունքների առատ կիրառությամբ, բացի ամենատարբեր տեսակի կանաչեղենից, կիրառվում են սև և կարմիր պղպեղը, սխտորը, մեխակը, դարչինը: Մյուս առանձնահատկությունն աղի առատ գործածությունն է, որը հինգ համարվել է ուտեստի կարևոր տարր: Հայերն աղի նկատմամբ հատուկ վերաբերմունք են ունեցել: Աղ ու հացը հյուրասիրության հատուկ հարգանքի նշան էր, որպես համեմունք օգտագործվել են չիրը, թթու լավաշը, գինու քացախը:

Մեղրեցիների սիրած կերակուրներից էին՝ ձու խաշու, կըճըճ խորովածը, մաջուրը, լոբոճի քյուֆթան, շրեշով կոտակ, չքալոկը, սխաթանը: Մեղրիում հարգի էին հարիսա, կոլուակ-քյուֆթա, կըճըճ խաշու (կաքավի մսով) կերակրատեսակները, ինչպես նաև խավիճը, թանով ապուրը (թանավ), սամլը (կորեկի այուրից և կաթից պատրաստված ապուր էր):

Անցյալում Մեղրի քաղաքում պատրաստում էին հեյլուֆ անունով թանձր ապուր (բրինձ, յուղ, քունջութ): Մեղրիի բարբառով ուտեստը հայտնի էր օտմունք բառով:

Ցորենի այուրից պատրաստել են խավիճ՝ յուղով, հավվայով, խաղողի դոշաքով: Շփոթը պատրաստվել է կրկին այուրից, բայց առանց կարմրացնելու (ջուր կամ կաթ, յուղ): Թխել են նաև բաղաբաժնի այուրով, կաթով և յուղով (լի՛նում էր, որ մեջը խորիզ հետո են դրել):

Ջրօրհնեքին կերել են բրնձով փլավ, տակին քիշմիշով են արել:

Վարդավառին կաթնապուր են պատրաստել մսից և ձավարից պատրաստել են հարիսա:

Մեղրիում սիրված կերակուր է կտրտովի տոլման, որը պատրաստել են վաղ զարևանը:

Այգու կինձը չորացվել և պահեստավորվել է ձմռան համար: Թարմ վիճակում զգել են նաև ձվածեղի մեջ:

Համեմունքներից օգտագործվել են ռեհան, սամիթ, բիբար, համեն և այլն: Բանջարեղենից օգտագործել են կաղամբ, որը բերել են Տաշտուն և Լիճք գյուղերից: Այսօր օգտագործում են կարոտֆիլ, պոմիդոր, վարունգ և այլն:

Մեղրին հայտնի էր և այսօր էլ հայտնի է իր մեղրահամ ու արևաբույր մրգերի առատ տեսակներով՝ խաղող, թուզ, հայկական խնձոր (ծիրան), սերկևիլ, խնձոր, բալ, կեռաս, սալոր, նուռ, ընկույզ, նուշ (ջիպիճ), հոն, փշատ և այլն: Դեղձից, թթից, ծիրանից, բալից, թզից, սալորից, հոնից չիր են դրել՝ նախապես ծխահարելով: Չիրն օգտագործել են և որպես աղանդեր, ու զգել են կերակուրների մեջ, մսով տոլմայի մեջ: Խաղողից և թթից՝ չամիչից բացի, պատրաստել են դոշաք: Թարմ ընկույզից և դոշաքից ստացել են քաղցր շարոց-սուջուխներ:

Մեղրին հայտնի է իր անգերազանցելի ալանիով և չրեղենով, որը սարքում են դեղձից և թզից: Ծեծած ընկույզի միջուկը խառնելով շաքարավազի հետ՝ համեմելով դարչինով և մեխակով, ցոննել են չորացրած միրգը: Դեռ անցյալում Մեղրիում պատրաստել են սալորի, կեռասի անուշներ-մուրաբաներ:

Մեղրեցիների ուտեստի համակարգում կարևոր դեր ուներ թեյը՝ թեյախմության հատուկ սովորույթով:



Հայոց ազգագրության թանգարանի լուսանկարների հավաքածուից՝ Տաշտունեցի տատիկը, 1960 թ.

Որպես ոգելից ըմպելիք օգտագործել և օգտագործում են խաղողի, նռան գինի: Խաղողի չանչից-ճեճից օղի են քաշել: Այսօր մեղրեցին օղի է քաշում գրեթե բոլոր մրգերից՝ թզից, կարայուկից, թթից, ծիրանից, խնձորից և այլն:

Մեղրեցին շատ հյուրասեր է և հյուրասիրում է հատուկ շնորհքով: Հյուրասիրության ընթացքում կարևորվում են սեղանի հարդարումը՝ սպիտակ սփռոցով և գեղեցիկ սպասքով: Մեղրեցու հյուրասիրության սեղանից անսպակաս են իրենց իսկ պատրաստած տարբեր չրերը (չոր միրգ), իսկ սեղանին թարմ մրգերը: Թեյի սեղանին մատուցում են տարբեր մուրաբաներ, որոնք հատուկ ռեցեպտով պատրաստելու պատճառով շատ յուրահատուկ համ և գեղեցիկ ախորժաբեր տեսք ունեն: Հյուրասիրելիս ամենաառաջինը դնում են սուրճ, չրեղեն, քաղցրավենիք, թարմ մրգեր:

Ծանոթագրություններ

1. Ն. Ավագյան, Գողթն գավառի տարազը 19-րդ դ. 20-րդ դ. սկիզբ - ՀՊՊԹ, 6, Եր., 1975, էջ 93-114:
2. Վ. Փարսադանյան, Մեղրու անցյալը, ՀԱԽ ԱԲԱ, 82, էջ 81:
3. Ե. Լալայեան, Ձանգեզուր, ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 70:
4. Ստ. Լիսիցյան, Ձանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 186:
5. Անդ, էջ 187:
6. Զ. Խառատյան, Խոսքի փոխանակումը հայոց հարսանիքում. - Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, II, Եր., 2003, էջ 144:
7. Ստ. Լիսիցյան, Նշվ. աշխ., էջ 188:
8. Անդ., էջ 189:
9. Երինջ-աղջիկ, արջառ-տղա նշանային համարժեքներ են, իմաստային նույնությամբ: Զ. Խառատյան, Եզն մորթելու սովորույթը և փեսան հայոց ընտանիքում, ՀԳԼ, 1991, 2, էջ 116-125:
10. Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան. Էմիլեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 498, 546:

Մեղրեցիների տոնածիսական վարքագծային փոփոխությունները վերջին հարյուրամյակում

Էթնոսոցիոլոգիական-ազգագրական հետազոտություն

ՍԱՄՎԷԼ ՄԿՐՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ազգագրագետ



Մեղրեցիների տոնածիսական համալիրի պատմահամեմատական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ համալիրը ժամանակի ընթացքում որոշակի փոփոխությունների է ենթարկվել:

Այսօր կենցաղում ամբողջությամբ մոռացված են Նավասարդը (Շըմբըթե կամ Շըմբըթե), ինչպես նաև հայոց կրոնաավանդական տոնացույցի հենքը կազմող գլխավոր տոները (Քրիստոսի ծնունդ, Տեառնընդառաջ [Տնդալեջ], Սուրբ Սարգիս, Բարեկենդան [Բըրգինդան], Միջինք [Մաջինք], Ջատիկ, Համբարձում, Վարդավառ [Վըրդիվուր], Սուրբ Աստվածածին [Խաղողօրհնեք] եւ այլն):¹

Մեղրեցիների կենցաղն ու մշակույթը շատ ավելի ընդհանրություններ ունեն Գողթն գավառի հետ, քան թե Սյունիքի (Ջանգեզուրի): Պատմականորեն ձեւավորված այդ ընդհանրությունները դրսևորվում են նաև նրանց տոնածիսական համալիրներում: Այդ են վկայում Մեղրու (Արեւիքի), Գողթնի² եւ Սյունիքի³ բնակչության կենցաղի եւ մասնավորապես տոնածիսական վարքագծային ուսումնասիրությունները, ինչպես նաև դրանց համադրական վերլուծությունը:

Ավանդական Ամանոր-Նավասարդը կամ Շըմբըթեն, որ նշվում էր աշնանը՝ նոյեմբերին, եւ պահպանվել էր մեղրեցիների կենցաղում ընդհուպ մինչեւ XX դ. 30-ական թթ., աստիճանաբար տեղը զիջեց քրիստոնեական ամանորին՝ հունվարի 1-ին, որն այսօր մեղրեցիների ամենատարածված եւ սիրված տոնն է:⁴

Անցյալում մեղրեցիների կենցաղում տարածված տոներից էր նաև Վարդավառը (Վըրդիվուրը),⁵ որի կապակցությամբ ուխտագնացություններ էին կազմակերպվում Ջվար եւ Խուստուի: Ի դեպ, այդ ուխտագնացություններին մասնակցում էին էւ քրիստոնյաները, էւ մահմեդականները:⁶

Այսօր, ցավոք, Վարդավառի տոնի հետ կապված ավանդույթները գրեթե մոռացվել են: Ներկայումս այն մասամբ նշվում է, որը, սակայն, խաղային երանգներ ստացած զուտ ջրցանության բնույթի արարողություն է:⁷

Ճիշտ է, վերջին շրջանում նկատվում է ավանդական տոների գարթոնքի մասնակի միտում (հատկապես Քրիստոսի ծնունդ (10%), Ջատիկ (33%), Վարդավառ (13%), Տեառնընդառաջ (6%) եւ այլն), բայց դրանք, ըստ երեւույթին, առավելապես արժեքային փոփոխություններ են՝ պայմանավորված Ղարաբաղյան շարժման ալիքով ձեւավորված ազգային գարթոնքի գործոնով: Այդ տոների «վերակենդանացումը» որոշ չափով արագ կընթանար, եթե Մեղրիում գոյություն ունենար գործող եկեղեցի... Չնայած իրենց աշխարհիկ վարքագծին՝ այս խնդիրը որոշակիորեն հուզում էր մեղրեցի գրեթե բոլոր բանասացների:⁸

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մեղրեցիների կենցաղում այսօր առավելապես տարածված են աշխարհիկ բնույթի, հիմնականում խորհրդային ծագում ունեցող տոները: Այս առումով մասնավորապես առանձնանում է Կանանց միջազգային օրը (Մարտի 8) /83, 3%/ , Հաղթանակի տոնը (Մայիսի 9) /33%/ եւ Աշխատավորների միջազգային օրը (Մայիսի 1) /23, 3%/:⁹ Նույնը վերաբերում է նաև Նախնիների հիշատակի հետ առնչվող արարողություններին, ուր ամենից տարածվածը շուրջ կեսդարյա պատմություն ունեցող գերեզմանների օրն է՝ հունվարի 2-ը, որը գրեթե ամբողջությամբ այսօր դուրս է մղել ավանդական տաղավարային տոների մեռելոցներին:

«Գերեզմաններ գնալու ամենատարածված օրն այսօր հունվարի 2-ն է, – ասում է բանասացը: – Այդ օրը Մեղրիում բոլորն անխտիր այցելում են գերեզմաններ: Թե ինչո՞ւ են հատկապես այդ օրն այցելում՝ չգիտեմ: Գնում են, որովհետեւ պապերից եկած սովորույթ է»:¹⁰ «Շուրհանրապես, «մեռելոց» հասկացությունը մեղրեցուն շատ խորթ է, – նշում է երեսնամեյակ մեղրեցի: Ամենից տարածվածն այս առումով հունվարի 2-ն է, որը կոչվում է «Գերեզմաններ գնալու օր»:¹¹

Սակայն պետք է նշել, որ ինչպես ողջ հայ էթնոսի, այնպես էլ մեղրեցիների համար, ընդհուպ մինչեւ XX դ. 30-ական թթ., խորթ չեն եղել ավանդական մեռելոցները, ինչը հաստատում են ազգագրական հետազոտությունները:¹²

Հետազոտված խնդիրների այս համալիրում նաև ուշադրություն է դարձվել այն հարցերին, որոնք միտված են Մեղրիում միջազգային մշակութային զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանը: Այս առումով կարելի էր վերջինների նախընտրելի տոների ու ծեսերի բացահայտումը, որն անհրաժեշտ է՝ արտասահմանցի զբոսաշրջիկների անմիջական մասնակցությանն առնչվող խնդիրներին:

Այսօր մեղրեցիները նախընտրությունը տալիս է Նոր տարվա եւ հատկապես Կանաչ-կարմիր կիրակի տոնախանդներին:

Ինչ վերաբերում է Նոր տարվան, ապա այն ոչ միայն մեղրեցիների ամենասիրված ընտանեկան տոնն է, այլ նաև համահամայնքային ամենատարածված եւ նախընտրելի հանդիսությունը:

Մեղրեցիների մեծամասնությունը հավանություն է տալիս Ամանորի նմանատիպ միջոցառումների կազմա-

կերպմանը, որը, անշուշտ, կգրավի նաև արտասահման-
ցի զբոսաշրջիկներին: Ի դեպ, մեղրեցիների գերակշռող
մասը (73.3%) ընդհանրապես կողմ է թատերականաց-
ված միջոցառումներին: Այս խնդրում դժվարացել են կողմ-
նորոշվել հարցման ենթարկված մեղրեցիների 23.4%-ը:
Իսկ կարող բացասական դիրքորոշում ունեցողները կազ-
մում էին ընդամենը 3.3%,¹³ որոնք մեծ մասամբ դրանք հա-
մարում են արհեստական միջոցառումներ:

Այս խնդիրներին իրազեկ մեղրեցի բանասացների
կարծիքով առավել նախընտրելի տոնը Կանաչ-կարմիր
կիրակին է, որը ցանկալի է վերականգնել իր երբեմնի
թատերականացված տոնախմբության ողջ համալիրով:
Կանաչ-կարմիր կիրակին կամ Արեւիքը նշվում էր հոկտեմ-
բերին եւ դա բերքին կամ բերքահավաքին նվիրված հա-
մաժողովրդական մեծ տոնախմբություն էր: Մեղրու քա-
ղաքային մարզադաշտում ավանդաբար նշվող այդ տոնն
արդեն շուրջ 15 տարի է, ինչ դուրս է մնացել ասպարեզից:
Այդ տոնահանդեսը Մեղրու եւ շրջանի բոլոր գյուղերի բերք
ու բարիքի, կենցաղի ու մշակույթի, ըստ այդմ՝ նաև ավան-
դական արհեստների ու զբաղմունքների ցուցադրման մի
յուրատեսակ միջոցառում էր, որի ժամանակ տեղի էին
ունենում Մեղրու պատվավոր քաղաքացու շնորհումներ,
հարսանեկան հանդիսություններ եւ այլն: Այդ ամենն ու-
ղեկցվում էր երգ ու երաժշտությամբ, մարզական միջոցա-
ռումներով:

Մեղրեցիներն անցյալում ունեցել են նաև շատ գե-
ղեցիկ մի տոն՝ «Չիմպելիքի օրը»*, որը բանասաց Թեոս
Ալեքսանյանի կարծիքով՝ «աշխարհում ոչ մի տեղ չկա,
բացի Մեղրիից»:¹⁴ Դա նշվել է դեկտեմբեր ամսվա երկ-
րորդ կեսին, որի հիմնական արարողությունը կապված
էր Մեղրու չոր մրգերի, չարազների մեծարման եւ մատուց-
ման հետ: Այս տոնը եւս հանգամանակից ուսումնասի-
րության կարիք ունի՝ այն վերականգնելու նկատառմամբ:
Որոշ բանասացների կարծիքով՝ թատերականացված մի-
ջոցառումների ձեռնարկ շատ գեղեցիկ կլինի ներկայացնել
Նաե Տրնդեզը, Բարեկենդանը, Ս. Աստվածածինը եւ, բնա-
կանաբար, ավանդական Նավասարդը:

Ընդհանուր առմամբ այս պատկերն ունեն մեղրեցի-
ների տոնածիսական վարքագծային փոփոխությունները
վերջին հարյուրամյակում եւ մասնավորապես դրա արդի
բնութագիրը, որը շատ կարևորում ենք նաև այդ բնակա-
վայրում մշակութային զբոսաշրջության զարգացման
առումով:

Ծանոթագրություններ

* Մեղրեցիների տոնածիսական վարքագիծը հետա-
զոտվել է պատմական և արդի տեսանկյուններով: Այս
առումով մենք արժեւորում ենք ինչպես անցյալին վերա-
բերող ազգագրական ուսումնասիրությունները, այնպես
էլ 2002 թ. մեր էթնոսոցիոլոգիական եւ ազգագրական
հետազոտությունները: Վերջիններս անցկացվել են խո-
րացված անհատական զրույցների, ֆոկլոր-խմբային եւ
սոցիոլոգիական հարցումների մեթոդներով: Հարցազ-
րույցներում ընդգրկվել են սեռատարիքային եւ սոցիալ-
մասնագիտական տարբեր խմբեր ներկայացնող բնակիչ-
ներ եւ քննարկվող հիմնախնդիրներին առավել իրազեկ
փորձագետներ:

1. Ստ. Լիսիցյան, Մեղրի, 1931, Անձնական արխիվ, էջ
27/29-30/32, 38/40-43/4:
2. Եր. Լալայան, Գողթան գավառ. - Ազգագրական
հանդես (այսու՝ ԱՀ), գ. XII, Թիֆլիս, 1904, էջ 142-154:
3. Եր. Լալայան, Զանգեզուր. - ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898,
էջ 8-112, նաե՛ Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Եր.,
1969:
4. Ս. Մկրտչյան, Դաշտային ազգագրական նյութեր

(այսու՝ ԴԱՆ), Մեղրի, 2002, թ/14:

5. Ստ. Լիսիցյան, Մեղրի, 1931, էջ 15/17-16/18: Նաե՛
Զանգեզուրի հայերը, էջ 280-282:

Ըստ Ստ. Լիսիցյանի, մահմեդական գլխավոր ուխտա-
վայրեր համարվող Զվարը եւ Փիրոզուրանը (կամ՝ Դով-
դան, Փիր-Դովդանին) ծագումով հայկական են: Առաջինը
Զվար քրիստոնեական տաճարն է, որը բազիլիկ կառույց
է, իսկ երկրորդը կապված է սուրբ Դավթի հետ, որի գերեզ-
մանը մահմեդականները սեփականել են անվանափոխել
են:

6. Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 282:
7. ԴԱՆ, Մեղրի, 2002, թ/14:
8. ԴԱՆ, բանասաց՝ Կարմեն, Մեղրի, 2002, տետր 5, էջ
9: ԴԱՆ, բանասաց՝ Ազգուշ Մանուչարյան, Մեղրի, 2002,
տետր 2, էջ 44: ԴԱՆ, բանասաց (փ/զ)՝ Սիրուն Սարգսյան,
Մեղրի, 2002, տետր 1, էջ 27:
9. ԴԱՆ, Մեղրի, 2002, թ/14:
10. ԴԱՆ, բանասաց՝ Կարմեն, նշվ. տեղը, էջ 63:
11. ԴԱՆ, բանասաց՝ Գրետա Սարգսյան, Մեղրի, 2002,
տետր 2, էջ 40:
12. Ստ. Լիսիցյան, Մեղրի, էջ 43/45:
13. ԴԱՆ, Մեղրի, 2002, թ/15:

Կարծում ենք, որ բանասացի նշած այս տոնը նույն
ավանդական Նավասարդն է, որը կենցաղում հայտնի
էր Շըմբըլբե կամ Շըմըլբե անվանմամբ, իսկ «Չիմպելի-
քի օրը» վերը նշած անվանումների վերափոխված տար-
բերակն է: Բացի այդ, նշված տոները նման են ոչ միայն
անվանմամբ, այլևե կատարման ժամկետներով (տեղի էր
ունենում աշնանը՝ նոյեմբերին): Եվ, որ ամենակարևորն
է, եւ Շըմբըլբե-Նավասարդի, եւ Չիմպելիք տոների կենտ-
րոնական պլանում գրեթե նույն արարողություններն են՝
նվիրված չոր մրգերի մեծարմանը: Շըմբըլբեի կապակ-
ցությամբ բավական տարածված էր չոր մրգեղենի փոխն-
վիրապետությունը հատկապես Նորապատկների ազգա-
կանների միջև (նվիրում էին նաև այլուր, մեղր, հավա, յուղ
եւ այլն): Ստ. Լիսիցյան, անդ, էջ 28/30, 38/40:

Շատ ուշագրավ է, որ հայոց ներէթնիկ առանձին
խմբերի, այդ թվում, ամենայն հավանականությամբ, նաև
մեղրեցիների խոսվածքներում «չափազանց առատ»
ածականն ունեցել է իր զուգահեռը կամ հոմանիշը, որը
«շմբլան» (տես Ստ. Մալխասյան, հայերեն բացատրա-
կան բառարան, հ. 3, Եր., 1944, էջ 522) էր կոչվում եւ հե-
տագայում մոռացվել է: Վերոհիշյալ անվանումները, ըստ
իս, «շմբլան»-ի տարբերակներն են եւ, որն ամբողջությամբ
արտացոլում է ավանդական Նավասարդ-բերքի տոնի
էությունը:

14. ԴԱՆ, բանասաց՝ Թեոս Ալեքսանյան, Մեղրի, 2002,
տետր 2, էջ 70:

Ս. Աստվածածին-Խաղողօրինեք տոնի ընտրությու-
նը պատահական չէ: Այսօր գրեթե մոռացված այդ տոնն
անցյալում մեծ ավանդույթներ է ունեցել: Տոնի կապակ-
ցությամբ մեղրեցիները Մեծ թաղի Ս. Աստվածածնի
եկեղեցում օրինել են խաղողը, որից հետո մեծ տոնախմ-
բություն կազմակերպել բազարի չինարիների տակ: Այդ
խնջույքն ուղեկցվել է երգ ու պարով՝ սազանդարների
նվագով, որից հետո մեղրեցիները սովորաբար այցելել
են Լիչքվազ՝ իրենց ավանդական գեղատեսիլ հանգստա-
վայրը եւ այնտեղ շարունակել տոնախմբությունը: Տես՝ Ստ.
Լիսիցյան, անդ, էջ 43/45:

Բարեկենդանի տոնն այսօր ևս շատ բանասացներ
կարևորում են թատերականացված ձեռվ ներկայացնելու
անհրաժեշտությունը: Մեր օրերում մոռացված այդ տոնը
նախկինում ևս լավ ավանդույթներ է ունեցել:

Շվանիձոր գյուղը 19-րդ դարի վերջին ըստ Նիկոլ Աղբալյանի



ԱՐՍԵՆ ԱՎԱԿՅԱՆ
Բ. գ. թ., 37 ՊԱԱ Մ.
Աբեղյանի անվան
գրականության
ինստիտուտի ավագ
գիտաշխատող

Ներածություն

Միջնադարյան գրավոր աղբյուրներում («Աշխարհացոյց», Ստեփանոս Օրբելյան, Ղուկաս Սեբաստացի և այլն) Մեծ Հայքի Սյունիք նահանգի Արևիք գավառի մասին տեղեկություններն առանձնապես առատ չեն, այդ պատճառով էլ ուսումնասիրողները բավականին դժվարությունների են հանդիպում Արևիքի մասին գրելիս¹: Նոր ժամանակներում ևս, որքան էլ ցավալի է, գավառը շատ քիչ ուշադրության է արժանացել պատմաբանների, ազգագրագետների, մշակութաբանների ու կիճակագիրների կողմից, և այնտեղ ապրող ժողովրդի վրաս չեն ունենում գրեթե չեն արտացոլվել տպագիր բազմաթիվ նյութերում. այսպես, «Ազգագրական հանդեսում» տպագրված իր «Ձանգեզուր» փաստագրական ծավալուն նյութի մեջ Ե. Լալայանը որևէ կերպ չի անդրադարձել Արևիքին², իսկ Ստ. Լիսիցյանի «Ձանգեզուրի հայերը» բավականին ընդարձակ ուսումնասիրության մեջ թեև տեղ-տեղ հանդիպում ենք Արևիք և Մեղրի անունները, այնուամենայնիվ առաջինը նշված է միայն քարտեզի վրա³, իսկ երկրորդը հիշատակվում է Գորիսում, Կապանում կամ այլուր օգտագործվող որևէ առարկայի, գործիքի կամ ինչ-որ իրողության անվան Մեղրիի տարբերակի հետ կապված, հիմնականում էջի ներքևի ծանոթությունների մեջ⁴:

Արևիքի այս «անտեսման» պատճառը շատ պարզ է. ցարական տիրապետության ժամանակ Մեղրին կազմել է առանձին ոստիկանական շրջան, իսկ սովետական իշխանության հաստատումից հետո՝ առանձին գավառ, ապա՝ դարձյալ առանձին շրջան և գուցե իր փոքրության պատճառով դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից:

Արևիքի մասին անհամեմատ ավելի շատ տեղեկություններ հաղորդել է Ղևոնդ Ալիշանին իր «Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի» աշխատության մեջ⁵: Արձանագրելով, որ «անձուկ են սահմանք երկրին Արեւեաց», և «անծանօթ և անյիշատակ է զաւառս ըստ քաղաքական պատմութեան»⁶, նա համառոտ անդրադարձել է գավառի անվանն ու պատմությանը՝ հիմնականում հիմնվելով Ստ. Օրբելյանի և Ղուկաս Սեբաստացու տեղեկությունների վրա, Ստեփանոս Ծախումյանի տոհմաբանությանը, գավառի բնակավայրերին, մասնավորապես՝ Մեղրիին, Կարճավանին, Աստագորին ու Նյուվատիին, սովել է որոշ հետաքրքիր տեղեկություններ դրանց

տեղադրության, բնության, բնակչության թվի, զբաղմունքների և այլնի մասին՝ օգտագործելով եվրոպացի գիտնականների տվյալները, բայց, ընդհանուր առմամբ, հասկանալի պատճառով նրա տեղեկություններն առավելապես պատմաաշխարհագրական բնույթի են և բնորոշ մանրամասներով հանդերձ սոսկ ընդհանուր ծանոթություն են տալիս Արևիքի մասին:

Տեղեկությունների սակավության այս ֆոնի վրա բացառիկ կարևորություն է ստանում անվանի գրականագետ, քաղաքական, հանրային և պետական գործիչ, մանկավարժ Նիկոլ Աղբալյանի (1875-1947) «Նամակներ Ձանգեզուրի գավառից» ժողովրդագրական նյութը, որը տպագրվել է Թիֆլիսի «Մուրճ» ամսագրի 1900 թ. 3-րդ և 4-րդ համարներում, և որի վրա, չգիտես ինչու, գիտնականները մինչ օրս պատշաճ ուշադրություն չեն դարձրել:

«Նամակներ Ձանգեզուրի գավառից». Շվանիձոր

1896 թ. գարնանը երիտասարդ Աղբալյանը ճանապարհորդել է Ձանգեզուրում, ինչպես ինքն է գրել, «առավելապես գյուղական ժողովրդի դրության հետ ծանոթանալու համար»⁷: Ճանապարհորդության ընթացքում նա անցել է շատ բնակավայրերով և կանգ առել (գիշերել) որոշ բնակավայրերում, այդ է, ըստ երևույթի, պատճառը, որ նա իր հուշատետրում գրառումներ է կատարել իր այցելած ընդամենը հինգ գյուղի մասին՝ Շվանիձոր, Կեմանց, Շիկահող, ճըկետեն (ճակատեն) և Կյուտկյում (Գեղանուշ), որոնցից միայն առաջինն է մտնում պատմական Արևիք գավառի մեջ, բայց նրան Աղբալյանը մեծ տեղ է հատկացրել իր առաջին նամակում՝ 7 էջ՝ մոտ 12-ից⁸:

Աղբալյանի տեղեկությունները Շվանիձորի մասին բավականին հարուստ ու բազմակողմանի են՝ սկսած գյուղի պաշտոնական Աստագոր անունից և տեղադրությունից մինչև բնակիչների արտաքին տվյալները, գյուղական (և ընդհանրապես գավառի) ճանապարհներից մինչև գյուղի եկեղեցին: Նա իր ուշադրությունը կենտրոնացրել է հատկապես մի քանի հարցերի վրա, որոնք, իր կարծիքով, գյուղի (և իր այցելած բոլոր գյուղերի) կյանքում կարևոր նշանակություն ունեն: Դրանցից առաջինը գյուղացիների՝ հողով ապահովվածության հարցն է: Արձանագրելով, որ 1896 թ. գյուղը պետական հաշվով ուներ 99 ծուխ, բայց իրականում ծխերի թիվը 152 էր, Աղբալյանը դրանով իսկ հաստատել է այն իրողությունը, որ դարավերջին հայ նահապետական ընտանիքն արագորեն քայքայվում էր. հայրական տանը, որպես կանոն, մնում էր փոքր որդին, իսկ նրանից ավագը կամ ավագները բաժանվում և հիմնում էին իրենց օջախը՝ ստանալով իրենց բաժին վարելահողը, այգին, անասունները և այլն: Նահապետական ընտանիքի քայքայման ապացույց է նաև Աղբալյանի բերած բնակիչների ընդհանուր թիվը՝ 795, այսինքն՝ հինգ, սակավաթիվ դեպքերում՝ վեց մարդ ամեն տանը: Ասենք ինքը՝ հեղինակն էլ է խոստովանում, որ «ինչպես ծուխերը, այնպես էլ ընտանիքները շուտ են բաժանվում. նահապետական ընտանիք չկա»⁹: Ավելի ու ավելի փոքրացող հողաբաժինները դրանց տերերը աղքատության (որպես հետևանք անպտղության կամ վաշխառության)

կամ կողակցի մահվան պատճառով հաճախ ստիպված էին լինում մասամբ կամ ամբողջովին վաճառել և համալրել ապագա բանվոր դասակարգի շարքերը: Այսպիսով, հետզհետե աճող բնակչությունը և Նոր ընտանիքների առաջացումը իրենց հետ բերում էին սակավահողություն, վերջինս էլ՝ սոցիալական խոր հակասություններ, որոնք շատ արտահայտիչ կերպով նկարագրված են գեղարվեստական գրականության մեջ, ինչպես, օրինակ, Պերճ Պռոշյանի և Ղազարոս Աղայանի մի շարք վեպերում:

Մյուս կարևոր հարցը շվանիծորցիների եկամտների աղբյուրի պարզաբանումն է: Աղբայանը գյուղացիների զբաղմունքներն ըստ եկամտաբերության դասակարգել է հետևյալ կերպ.

- այգեգործություն, որը գյուղացիների հիմնական զբաղմունքն է, քանի որ այգեգործության համար պայմանները նպաստավոր են, և իրենք էլ լավ այգեգործներ են ու գինեգործներ: Նոռն ու թուզ¹⁰, միրգ չեն վաճառում, այլ չիր ու չամիչ են պատրաստում և պահում իրենց համար:
- Հողագործություն, որը «մինչև անգամ ապրուստի միջոց չի ճանաչվում»¹¹: Հողը վարում են երկյուծ արորով (վեսկի)¹², ընկերովի, ավելի շատ անասնակեր, քան ցորեն ու գարի ստանալու համար, իսկ հացահատիկ կամ այլուր ձեռք են բերում շրջակա գյուղերից՝ գինու հետ փոխելով:
- Ծերամապահություն, որով զբաղվում են բոլոր տներում և բացառապես կանայք, և որը միջակ արդյունք է տալիս:
- Անասնապահություն, պահում են այծ, ոչխար, կով, որոնց տված արդյունքն այնքան քիչ է, որ հազիվ իրենց է հերիքում, ու նաև եզներ ու բեռնակիր ջորիներ:
- Արհեստներ, որոնցից ամենահասարակները (տրեխ կամ գործիքների փայտե մասերը պատրաստել և այլն) բոլորը գիտեն, իսկ բարդ արհեստների համար գյուղն ունի մեկ որմնադիր և մեկ հյուան, ինչպես նաև մեկ վաճառական և մեկ մսագործ:
- Պանդխտություն, որը Նոր է սկսվել, և որի գլխավոր պատճառը սակավահողությունն է: Գյուղից պանդխտող երիտասարդների համար հատկանշական է այն, որ նրանք թիֆլիսում, Բաքվում կամ Բաթումում դառնում են ոչ թե սևագործ բանվորներ, այլ խոհարարներ, տան ու երկաթուղու ծառայողներ և այլն:

Անշուշտ, Աղբայանը ոչ ժամանակ, ոչ էլ հնարավորություն ուներ Շվանիծ-

րի բնակչության ապրուստի աղբյուրները հանգամանորեն ուսումնասիրելու (դա նրա ծրագրերի մեջ չէր էլ մտնում). նա առաջնորդվել է իր տեսածով, առավելապես՝ գյուղացիների պատմածով, ինչպես նաև Ջանգեզուրում ու շրջակա գավառներում լավ հայտնի իրողություններով, օրինակ՝ Շվանիծորի գինու համբավը տարածված էր ամենուրեք, և գինու առևտուրն ապահովում էր գյուղացիների եկամտի հիմնական մասը:

Հաջորդ կարևոր հարցը, որին ուշադրություն է դարձրել Աղբայանը, կանանց



դրությունն է գյուղական ընտանիքներում: Հեղինակն արձանագրել է, որ Շվանիծորում «կանանց դիրքն ընտանիքում շատ նախանձելի է՝ ուրիշ գյուղերի կանանց հետ համեմատած», քանի որ «մարդիկ լավ են վարվում իրենց կանանց հետ»¹³, նրանց տեղյակ են պահում տան բոլոր գործերին ու խորհրդակցում են նրանց հետ: Գյուղի կանայք բնութագրվում են որպես աշխատասեր և ամեն տեսակ աշխատանք (բացի հողագործությունից) կատարելու ունակ, բարոյապես մաքուր, կրոնասեր ու ժամասեր, գինու նկատմամբ անտարբեր ու չափազանց համեստ¹⁴: Կանանցից հետ չեն մնում նաև տղամարդիկ, որոնց Աղբայանը բնութագրել է այսպես. «Ուղհանուր ամամբ շվանիծորից քաջ են և սրտոտ. քիչ մարդ կլինի, որ հրացան բանացնել չիմանա և որս անելիս չլինի. լավ աշխատողներ են և լավ կոնծողներ, բայց հարբեցող՝ ռուսի մտքով՝ ինչպես մեր ոչ մի գյուղում, այնպես էլ այս կողմերը չկա»¹⁵: Շվանիծորցիներին բնութագրում է նաև այն, որ թեև նրանց ընդհանուր գիտակցությունը ցածր է, և օրենքից ոչինչ չեն հասկանում, այնուամենայնիվ պարզ գիտակցում են ուսման կարևորությունը

Անշուշտ, Նիկոլ Աղբայանը ոչ ժամանակ, ոչ էլ հնարավորություն ուներ Շվանիծորի բնակչության ապրուստի աղբյուրները հանգամանորեն ուսումնասիրելու (դա նրա ծրագրերի մեջ չէր էլ մտնում). նա առաջնորդվել է իր տեսածով, առավելապես՝ գյուղացիների պատմածով, ինչպես նաև Ջանգեզուրում ու շրջակա գավառներում լավ հայտնի իրողություններով, օրինակ՝ Շվանիծորի գինու համբավը տարածված էր ամենուրեք, և գինու առևտուրն ապահովում էր գյուղացիների եկամտի հիմնական մասը:


ՂԱՇՁԱՍԵՆՈՒԹՅՈՒՆ

և դպրոց են բացել՝ երկու ուսուցչով¹⁶, իրենց միջոցներով կառուցել են եկեղեցի և ցանկանում են ունենալ սեփական քահանա իրենց ժամանակավորապես հովվող Շիկահող գյուղի քահանայի փոխարեն: Ինչպես տեսնում ենք, Աղբալյանն իր ուշադրության կենտրոնում է պահել հայ գյուղի համար կարևորագույն հարցեր՝ տնտեսական, հասարակական, բարոյական, կրթական, և սա վերաբերում է ոչ միայն Շվանիձորին, այլև, որոշ տարբերություններով հանդերձ, մյուս չորս գյուղերին, որոնց կյանքն ու կենցաղը նա նկարագրել է իր երկու նամակներում:

Տվյալների վերլուծություն և ամփոփում

Աղբալյանի երկու նամակների բովանդակությունը, սակայն, վերը գրվածով չի սահմանափակվում. նա բազմաթիվ ուշագրավ մանրամասներ է հաղորդում ինչպես կարևոր, այնպես էլ երկրորդական հարցերի վերաբերյալ, թեև, պետք է ընդգծել, նրա տվյալների մեջ անկարևոր բաներ գրեթե չկան: Այսպես, նրա բերած մանրամասները վերաբերում են՝

- ցեխապատ ճանապարհներին, «ցեխ, որ ձիու պայտն է պոկում սմբակից՝ այնքան թանձր է»¹⁷,
- գյուղացիների պահած այծերի, ոչխարների, կովերի, եզների և ջորիների թվին¹⁸,
- գյուղացիների այգիների չափին՝ ամեն տան հաշվով, ամենաքիչն ու ամենաշատը վերցրած,
- ընտանեկան բարքերին, մասնավորապես՝ ամուսնությանը (ամուսնության տարիք, չհաս ամուսնություններ, հարսնացուների առևանգում),
- կերակրացանկին, որը այլ գյուղերի հետ համեմատած՝ ճոխ է, օրինակ՝ միս ուտում են ամեն կիրակի և տոն օրերին,
- գյուղացիների միջև ծագած վեճերի լուծմանը (գերադասում են դատարանի ձեռքը չընկնել, հարցերն իրենց մեջ լուծել, որ իրենց «սըռը» (գաղտնիքը) մարդիկ չհիմանան),
- գյուղացիների տարիքին, կազմվածքին ու արտա-



քինին (միջահասակ, դիմագծերը խոշոր, մագերը շագանակագույն, աչքերը սև ու շագանակագույն, «ոչխարաչք», քթերը աղավաղված),

- գրագիտությանն ու ընթերցասիրությանը (բարեգործությամբ ստացած «Մշակ» լրագիրը կարդում են միայն երկու ուսուցիչներն ու խանութպանը),
- վաշխառությանը (գյուղի եկեղեցին փող ունի և առաջ տալիս էր 20 տոկոսով, այժմ՝ 12, բայց քանի որ փողի կարիքը մեծ է, գյուղում կան տասը վաշխառուներ, որոնք թե՛ շվանիձորցիներին, թե՛ շրջակա գյուղացիներին դրամ են տալիս 20 տոկոսով) և այլև:

Հետաքրքիր է նաև այն նախադասությունը, որով Աղբալյանն ավարտել է Շվանիձորի վերաբերյալ իր գրառումները. «**Չասարակական հիմնարկություններից չմոռանանք հիշել նաև գյուղական կշիռը**»¹⁹: Թե ինչ է այս «գյուղական կշիռը», դժվար է ճշգրիտ բացատրելը, քանի որ աղբյուրներից ոչ մեկում որևէ տեղեկություն չգտնվեց այդ մասին: Ենթադրաբար կարող է լինել գյուղի ավագներից կամ մեծ հարգանք վայելող գյուղացիներից կազմված խորհուրդ, որը քննում է գյուղի համար կենսական նշանակություն ունեցող կամ որևէ նրբություն պարունակող հարցերը և կայացնում առավել խելամիտ որոշումը: Նման մարմնի գոյությունը, ինչ խոսք, վկայում է գյուղի բնակիչների խելամտության և կազմակերպվածության մասին:

Աղբալյանի տեղեկությունները, այս ամենով հանդերձ, ամբողջական չեն և այդպիսին չէին էլ կարող լինել, մասնավաճ որ այս պարագայում այդ ամբողջական ասվածը խիստ հարաբերական է: Ինչպես ինքն է գրել իր առաջին նամակի նախաբանում. «**Պարզ է, որ դիտել և արձանագրել եմ չմոռանալու համար միայն այն, ինչ հետաքրքրական է թվացել ինձ: Հավաքած տեղեկություններս վերաբերում են գյուղական կյանքի մի քանի կող-**

Շվանիձորում 17-րդ դարում կառուցված ջրանցույցը կամուրջ-ջրատարը





մերին և նույնիսկ դրանց վերաբերմամբ պակասավոր են»²⁰: ...«Թող ոչ ոք չկարծի, թե հավակնություն ունիմ մի գավառի ուսումնասիրություն տալու»²¹: Չունենալով որևէ նախնական ծրագիր՝ նա կողմնորոշվել է հենց տեղում և, ինչպես արդեն նշվեց, հետևել որոշակի ուղեգծի՝ ամենուր ուշադրության կենտրոնում պահելով կարևոր հարցերը: Պետք է նշել նաև, որ իր գրառումները նա կատարել է «Ազգագրական հանդեսի» ամսաթիվի լույս տեսնելուց էլ ամառ և չունեի նմուշ, որին կարողանար հետևել: Բնականաբար, շատ տեղեկություններ նրան հաղորդել են տեղի բնակիչները, բայց բոլոր հինգ գյուղերի մասին բազմաթիվ տվյալներով նրան մեծապես օգնել է արդեն հիշատակված մեղրեցի ուսուցիչ Մաթևոս Շահյանը, որին հեղինակը հարկ է համարել իր ամառին նամակի նախաբանում հայտնել իր հատուկ շնորհակալությունը²²:

Չեղինակի բերած տվյալների մեջ կան ճշտելու կարիք ունեցողներ, ինչպես, օրինակ, Շվանիծորի բնակիչների թիվը. գյուղում, ըստ նրա, 1896 թ. ապրում էր 795 մարդ, 423 տղամարդ և 372 կին, բայց ստուգումը ցույց է տալիս, որ այս 795-ը 1886 թ. Անդրկովկասյան համապարփակ աշխարհամարի թիվն է²³, իսկ 1897 թ. Համառոտական ամառին մարդահամարը արձանագրել է 957 բնակիչ²⁴: Հետևություն՝ 1896 թ. գյուղի բնակիչների թիվը եղել է մոտավորապես 920-930-ի սահմաններում:

Եվս մեկ դիտարկում. լինելով գյուղում՝ Աղբայանը «գարմանալիորեն» չի նկատել և չի հիշատակել 17-րդ դ. նշանավոր ճարտարապետական հուշարձանը՝ ջրանցույցը, որն իր տեսակի մեջ եզակի կառույց է և հիշատակված է այն չտեսած Ղևոնդ Ալիշանի կողմից՝ շվեյցարացի ճանապարհորդ և գիտնական Ֆրեդերիկ Դյուբուային վկայակոչելով²⁵:

Շատ հետաքրքիր թվեր է բերել Աղբայանը շվանիծորցիների պահած անասունների վերաբերյալ, որոնք

հիմք ընդունելով՝ պետք է որ գյուղի բնակիչները հենց միայն անասնապահության հաշվին այնքան էլ վատ չապրեին, մինչդեռ այծերից, ոչխարներից և կովերից ստացված մթերքը հազիվ հերիքում է իրենց: Մնում է ենթադրել, որ այդ կենդանիներին պահելու ծախսերը մեծ են եղել, արդյունավետությունը՝ ցածր, իսկ պետական հարկերն ու տուրքերը՝ բարձր, թեև Աղբայանը նշել է, որ ամառները գյուղացիները տավարն ու ոչխարը սար տանելու համար ոչինչ չեն վճարում²⁶: Այսպես թե այնպես, ինչպես երևում է նաև այդ թվերից, գյուղում բավականին ունևորներ են եղել, որոնցից տասը զբաղվել են վաճառությամբ, և գյուղն էլ այլ գյուղերի հետ համեմատած եղել է բարվոք վիճակում, քանի որ իր միջոցներով եկեղեցի է կառուցել և դպրոց պահել:

Իր գրառումները Շվանիծորի և իր այցելած այլ գյուղերի մասին Աղբայանը կատարել է 1896 թ. և 1900-ին. տպագրվելուց առաջ անկասկած կարգի է բերել դրանք, ինչպես երևում է՝ այլ աղբյուրներից Նոր տվյալներ ավելացնելով: 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. սկզբներին մեծապես աճել է հետաքրքրությունը գյուղական հայ բնակչության կյանքի ու կենցաղի նկատմամբ, և այդ օր օրի մեծացող հետաքրքրությանը բավարարելու նպատակով երևան են եկել Նոր պարբերականներ ու բազմաթիվ հրատարակումներ, որոնց միացել է նաև երիտասարդ մտավորականը՝ հանրայնացնելով իր ճանապարհորդության արդյունքները: Թիֆլիսի հեղինակավոր «Մուրճ» ամսագրում այդ նամակների տպագրությունն արդեն վկայում է, որ դրանց հեղինակին հաջողվել է պատրաստել հետաքրքիր և առանձին կողմերով Նույնիսկ բացառիկ Նյութ, որն արժեքավոր սկզբնաղբյուր կարող է լինել Շվանիծոր գյուղի մոտ 130 տարվա վաղեմության կյանքի մասին որոշակի պատկերացում կազմելու համար:

Օգտագործված գրականություն

- Ազգաբնակչությունը և բառարաններ
- Աղբայան 1900 ա
- Աղբայան Ն., Նամակներ Հանգեզուրի գավառից // «Մուրճ», Թիֆլիս, 1900, N 3, 342-353:
- Աղբայան 1900 բ
- Աղբայան Ն., Նամակներ Հանգեզուրի գավառից // «Մուրճ», Թիֆլիս, 1900, N 4, 488-497:
- Լալաբեան և այլք 1897
- Լալաբեան Ե. և այլք, Վարանդա // «Ազգագրական հանդես», 1897, գիրք Բ, 5-244:
- Լալաբեան 1898 ա
- Լալաբեան Ե., Սիսիան // Ազգագրական հանդես, 1898, գիրք Գ, 105-272:
- Լալաբեան 1898 բ
- Լալաբեան Ե., Հանգեզուր // Ազգագրական հանդես, 1898, գիրք Դ, 7-116:
- Լալաբեան 1983
- Լալաբեան Ե., Ջավախք // Երկեր 5 հատորով, հ. 1, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 457 էջ:
- Լալաբեան 1904
- Լալաբեան Ե., Հանգեզուրի գավառ. Կապան կամ Ղափան // «Ազգագրական հանդես», 1904, գիրք XII, 175-202:
- Խորենացի 1843
- Մովսէս Խորենացի, Մովսէսի Խորենացույ մատենագրությունը, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1843, 653 էջ:
- Հակոբյան և այլք
- Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, ԵՊՀ հրատ.,

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1998, 992 էջ:
- Սեբաստացի 1988
- Ղուկաս Սեբաստացի, Դավիթ-Բեկի պատմությունը, Երևան, «Արևիկ», 1988, 44 էջ:
- Օրբելեան 1861
- Օրբելեան Ստ., Պատմություն տանն Սիսական, Մոսկվա, տպ. Լազարյան ճեմարանի, 1861, 386 էջ:
- Ուսումնասիրություններ
- Ալիշան 1893
- Ալիշան Ղ., Սիսական. Տեղագրություն Սիսեաց աշխարհի, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1893, Թ + 561 էջ:
- Լիսիցյան 1966
- Լիսիցյան Ստ., Ձանգեզուրի հայերը, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1966, 334+150 էջ:
- Կարապետյան 1990
- Կարապետյան Բ., Հարյուր տարվա երկխոսություն (Ռաֆֆու ճանապարհորդ. հետքերով), Երևան, «Հայաստան», 224 էջ:
- Կորկոտյան 1932
- Կորկոտյան Ջ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Երևան, Հայպետհրատ, 1932, LIV +188 էջ:
- Հովհաննիսյան 2017
- Հովհաննիսյան Ա., Ռաֆֆու ոտնահետքերով, Երևան, «Տիգրան Մեծ», 232 էջ:

Ծանոթագրություններ

1.«Աշխարհացույցում», օրինակ, բերված է միայն գավառի անունը, և հիշատակվում է նույն (տե՛ս, օրինակ, Խորենացի 1843, 609), նույնն է Ստ. Օրբելեանի «Պատմություն տանն Սիսական» ծավալուն երկում. շատ քիչ պատմական տեղեկություններ, մեծ մասամբ՝ գյուղերի ու վանքերի անուններ (Օրբելեան 1861, 245-246, 377-378), իսկ ահա Ղուկաս Սեբաստացու «Դավիթ-Բեկի պատմությունը» երկում հանդիպում ենք որոշակի տեղեկությունների Դավիթ-Բեկի զինակիցներից մեկի՝ Ստեփանոս Շահումյանի, Կալերի Պապ զորավարի, Լիճք ավանի (Սեբաստացի 1988, 26), Մեղրիում թուրքերի դեմ հայերի մղած կռիվների և տարած հաղթանակների (նույն տեղում, 27-28, 37-38), «Կարճիվան ավանի» (նույն տեղում, 39) և Շվանիձորի Սարգիս զորավարի մասին (նույն տեղում, 43): Սեբաստացու հաղորդած որոշ տեղեկություններ Դավիթ-Բեկի ապստամբության պատմությունը լուսաբանելու համար կարևոր նշանակություն ունեն, հետաքրքիր են նաև նրա տեղեկությունները Մեղրիի Մեծ ու Փոքր թաղերի և «քաջ ու արի մեղրեցիների» մասին (նույն տեղում, 27-28):

- 2.Լալաբեան 1898 ք. 7-116:
- 3.Լիսիցյան 1966, քարտեզ 16-րդ և 17-րդ էջերի միջև:
- 4.Նույն տեղում, 144, 155, 174, 186, 187, 188 և այլն:
- 5.Ալիշան 1893, 298-308:
- 6.Նույն տեղում, 298 և 299:
- 7.Աղբալեան 1900 ա, 342:
- 8.Նույն տեղում, 343-350:
- 9.Նույն տեղում, 344:
- 10.Նույն տեղում, 347:
- 11.Նույն տեղում, 345:
- 12.Ստ. Լիսիցյանի մոտ Ձանգեզուրում էլ հողը մշակելու նույն ձևն է՝ նույն վեճակով, «որը ոմանք համարում էին վէճկի, այսինքն վեց եզը լծած արորի բառի աղավաղում (Լիսիցյան 1966, 126-127, ընդգծումը Լիսիցյանինն է): Հետաքրքիր է, որ ըստ Լիսիցյանի՝ «Ձանգեզուրում հայտնի չէ հարևան Մեղրու հայկական գործէն անունը» (նույն տեղում, 126, ընդգծումը հեղինակինն է):
- 13.Աղբալեան 1900ա, 347-348:
- 14. Ինչ խոսք, հաճելի է կարդալ հայ կնոջ բարոյական

կերպարը գովերգող այս տողերը, և պետք է ընդգծել, որ Ձանգեզուրում (Լիսիցյան 1966, 220-222), Սիսիանում (Լալաբեան 1898ա, 234), Ջավախքում (Լալաբեան 1983, 176) և Վարանդայում (Արցախ, Լալաբեան և այլք 1897, 151) նույնպես հայ կինը ընտանիքում ունեցել է նույն դիրքը և վայելել նույն հարգանքը:

15.Աղբալեան 1900 ա, 348-349:

16. Ի դեպ, Շվանիձորի այս դպրոցը բացվել է 1883 թ., և 2023 թ. տոնվել է նրա հիմնադրման 140-ամյակը: Գյուղի բնակիչները, ում հետ հաջողվեց գրուցել նույն 2023 թ. Նոյեմբերին, դպրոցի հիմնադրումը կապում են Ռաֆֆիի անվան հետ, այնինչ Ռաֆֆին իր «Դավիթ-Բեկ» պատմավեպի համար նյութեր հավաքելու նպատակով 1881 թ. Արցախում և Սյունիքում շրջագայելիս չի եղել Շվանիձորում և Արևիքում ընդհանրապես (Հովհաննիսյան 2016, 139) կամ եղել է Արևիքում, մասնավորապես՝ Մեղրիում, ուր տեղացի ուսուցիչ, մասնավոր երեք դպրոցներից մեկի տնօրեն Մատթեոս Շահյանի խնդրանքով նա հետագայում միջնորդել է, որ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի կոնդակով 1882-ին Մեղրիում բացվի ծխական մեկ դասայա դպրոց (Կարապետյան 1990, 217-222): Շվանիձորի դպրոցի բացման գործում ևս իր ներդրումն է ունեցել Մ. Շահյանը, և հնարավոր է, որ այս դպրոցի բացման համար ևս Ռաֆֆին միջնորդած լինի, ինչի մասին գյուղացիները կարող էին լսած լինել հենց Շահյանից: Թեև փաստացի վկայություններ չկան, այնուամենայնիվ հնարավոր է, որ մեծ վիպասանը գոնե անցել է Շվանիձորով, և այս փաստը, գումարով երկ Մ. Շահյանի ջանքերին և խոսքերին, հիմք է տվել գյուղացիներին գյուղի դպրոցի հիմնումը կապել Ռաֆֆու անվան հետ:

17.Աղբալեան 1900 ա, 343:

18.«Ամեն տուն, ամենաքիչն ու ամենաշատը վերցրած, ունի 2-20 հատ այծ, միայն տասը տուն ունի 30-200 հատ ոչխար, սակավ բացառությամբ ամենքն ունի 2-5 կով, մի քանիսը միայն 1 հատ, տասը տան բացառությամբ ամենքն ունի 1-4 եզ, իսկ ջորին, որ անհրաժեշտ և ամենահարմար գրաստն է այս կողմերում, ամեն տուն ունի 1-2 հատ» (նույն տեղում, 346):

19.Նույն տեղում, 350:

20.Նույն տեղում, 342:

21.Նույն տեղում, 343:

22.Ի դեպ, Մաթևոս Շահյանը տեղեկություններ է տրամադրել ու նաև հավաքել երվանդ Լալաբեանի համար, որն իր «Ձանգեզուրի գավառ. Կապան կամ Ղափան» ազգագրական երկը պատրաստելիս իր աղբյուրների թվում հիշատակել է նաև նրան. «Երկրորդ ծերունին մեղրեցի Մաթևոս Շահյանն է, մի անձնավորություն, որ շատ լավ ծանոթ է Ձանգեզուրի ամբողջ գավառին, որովհետև երկար տարիներ վարել է ուսուցչի, գյուղական գրագրի, ծաղկահատի և փաստաբանի պաշտոններ» (Լալաբեան 1904, 176):

23.Կորկոտյան 1932, 142:

24.Նույն տեղում, LIII և 69: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը (Հակոբյան և այլք 1998, 154) 957-ի տեղ նշում է 977 թիվը, որը պետք է համարել վրիպակ:

25.Ալիշան 1893, 307:

26.Աղբալեան 1900ա, 346: Շվանիձորի այսօրվա բնակիչների ասելով՝ գյուղացիները նախկինում լրջորեն չեն բթալվել անասնաբուծությամբ՝ այդ ծանր ու չսիրված գործը թողնելով ինքնահոսի, ինչը կատարվի՝ կատարվի, և ոչ էլ այժմ են զբաղվում, քանի որ անհամեմատ քիչ ջանքեր պահանջող այգեգործությունն ավելի շատ եկամուտ է տալիս:

Լեռների պաշտամունքը


ԴԱՏԵՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեռների գագաթների պաշտամունքի հետ զուգորդված է նաև լեռնանցքների ոգիների պաշտամունքը: Իմ մի աշխատության մեջ՝ Նկարագրել են Հայկական լեռնաշխարհում լեռնանցքների մոտ կառուցված սրբավայրերը, որտեղ, ինչպես այլայն Ս. Բերնարի և Ս. Գոտարդի լեռնանցքների մոտ կառուցված սրբավայրերում՝ ուղևորներն աղոթելով և մոմեր վառելով, աշխատում էին ձեռք բերել սրբավայրերի հովանավորությունը լեռնանցքներում վխտող ոգիների դեմ: Զանգեզուրում այդպիսի մի սրբավայր էր մահմեդական Փիրոսուդանը Ողջիի՝ Օխչի գյուղի դիմաց, որտեղից սկսվում է վերելքը Մեղրու (Մեղրի-Գյունեյի Չավուրդուրի-Արևիքի) շղթայի վրայով դեպի Տաշտունու (Դիբազուրի) լեռնանցքը՝ Մեղրիի գետահովիտն իջնելու համար: Մի այլ ճանապարհ այդ սրբավայրի մոտից տանում է դեպի Կապուտջուղ՝ Կապուտջուղ լեռնանցքը, որը տանում է Օրդուբադ-Ագուլիս:

Այդտեղ քառանկյունի պարիսպների մեջ կառուցված են մի քանի շենքեր, որոնց մեջ երկուսը մատուռներ են գումբէթներ: Այդ մատուռներից ամենաընդարձակի մեջ կիսազնդած թաղով ծածկված կտր սրահի հատակին ցույց է տրված փիրի2 սուրբի գերեզմանը, որի վրա ուղևորները, թե՛ մահմեդական և թե՛ քրիստոնյա, մոմեր և ճրագներ էին վառում և հայցում սրբի օգնությունը՝ լեռնանցքը հաջող, անվտանգ անցնելու համար: Մահմեդականների և քրիստոնյաների հավատալիքների և սրբավայրերի համընկնումն ապացուցում է, որ երկու կողմերի մտածելակերպը կապված էր Նախաքրիստոնեական, Նախամահմեդական հեթանոսական պաշտամունքի հետ: Նրանց ակունքները կապված էին Նախնական հասարակության միանման մտածելակերպի, մանավանդ բնության ուժերի և պտղաբերությանը նվիրված պաշտամունքների հետ:

Այդ լեռնանցքներում փչում են մշտական քամիներ, բարձրացնելով ձմեռվա ամիսներին ձյան փոշի. այդ բուք ու բորանի ժամանակ բազմաթիվ ուղևորներ թաղվել են ձյան ահագին կիտվածքի տակ: Ծենքերը քանդվելուց և ավերվելուց պահպանվում էին ոչ միայն մահմեդական, այլև քրիստոնյա բնակիչների նվիրաբերություններով: Վայրը հավասարապես նվիրական էր երկու կրոնների հետևորդների համար էլ: Հայ ծերունիները պատմում էին, որ այդտեղ թաղված է հայ ճգնավոր՝ սուրբ Դավիթը, որի գերեզմանը մահմեդականները սեփականել են, անունը փոխելով Դավիթի: Փիր-Դավիթանին, Փիր-Դուրդանին՝ լեռնանցքի հարավում Մեղրու գետահովտի վերնագավառում համապատասխանում է Չվար քրիստոնեական տաճարը, որը մի բազիլիկաձև շենք է: Սրա ուխտը Վարդավառն է: Այդտեղ ևս այցելության էին գնում թե՛ քրիստոնյաները և թե՛ մահմեդականները, որոնք դեպի լեռնանցքը բարձրանալիս մոմեր էին վառում և աղոթում ճանապարհին անվտանգ անցկացնելու համար:

Այսպիսով, Նախնական մտածողությունն արևի առաջին շողերով ողողված լեռնագագաթները կապել էր Նոր ծագող և իր վաղորդյան ճանապարհները սփռող արևի աստվածության հետ, իսկ լեռներում, մանավանդ լեռնանցքներում փչող քամիներն՝ այնտեղ վխտացող



ոգիների հետ: Գագաթների վրայից Նախնական մարդն իր աղերսներն էր ուղղում ամբողջ զորությամբ ելնող արևին, ինչպես և Նորածին երեխային գրկած՝ տատները կտուրը բարձրանալով և երեխան ցույց տալով արևին՝ նրա համար արևաշատություն էր հայցում: Նա լեռնային քամիների դեմ հովանավորություն էր որոնում լեռնանցքների ստորոտում թաղված գերեզմանների և հրաշագործ վայրերի մոտ:

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆ

Ծանոթագրություններ

- Святини у перевалов, «Советская этнография», 1936 г., № 4-5 էջ 200-201:
- Փիր-բիր-պարսկ. բառ է, նշանակում է ծեր՝ առաջնորդ, կրոնական միավորման գլուխ, սուրբ՝ որևէ արհեստի հովանավորող:

ՃԱՐՏԱՐԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեղրու շրջանի հուշարձանները (հատված համանուն հոդվածից)

ՄՈՒՐԱԴ ԴԱՄՐԱԹՅԱՆ



Մեղրու շրջանը՝ պատմական Սյունիքի Արևիք գավառը, հարուստ է պատմական, հնագիտական, ճարտարապետական հուշարձաններով: Դարերի ընթացքում դրանք բազմիցս ավերվել են բնության արհավիրքներից, պատերազմներից, այսինքն՝ ունեցել են նույն ճակատագիրը, ինչ որ Զայաստանի մյուս գավառների հուշարձանները: Սակայն ստեղծագործ հայ ժողովուրդը երբեք չի թողել դրանք կործանված վիճակում, առաջին իսկ բարենպաստ պահին վերակառուցել և վերականգնել է իր նախնիների կերտածը: Մեղրու շրջանի պատմաճարտարապետական հուշարձանների ճնշող մեծամասնությունը մեզ է հասել հիմնովին վերակառուցված: Շրջանի տարածքի վանքերը և եկեղեցիները, ամրոցներն ու կամուրջները պատկանում են ուշ միջնադարին՝ 17-18-րդ դարերին:

Գուցե այդ է պատճառը, որ Մեղրու հուշարձանները քիչ են ուսումնասիրված ու քիչ են հայտնի գիտական աշխարհին, և հաշվել են, որ նրանք չունեն մեր մշակույթի համար այն արժեքը, ինչ Զայաստանի մյուս շրջանների միջնադարյան կառույցները: Սակայն Մեղրու հուշարձանների առաջին իսկ հետազոտությունից պարզվում է, որ

նրանք ունեն մի շարք հետաքրքրական առանձնահատկություններ, որոնցով հարստացնում են հայ ճարտարապետության պատմությունը, հատկապես վերջինիս ուշ միջնադարի հատվածը: Շրջանի հուշարձանները աչքի են ընկնում բազմազանությամբ՝ կան պաշտամունքային, պաշտպանական, բնակելի, ինժեներական բազմաթիվ կառույցներ, ուշ միջնադարի հետաքրքիր որմնակարներ և այլն: Հատկապես հարուստ է նրանցով շրջկենտրոնը՝ Մեղրի ավանը, որտեղ առաջին հերթին աչքի է ընկնում Նշանավոր բերդը:

Մեղրու բերդի մասին առաջին պատմական տեղեկությանը հանդիպում ենք Ստ. Օրբեյանի մոտ, ըստ որի 1083 թ. բերդն արդեն կանգուն էր և հայտնի: Բերդի կառուցման ժամանակը ճշգրիտ հայտնի չէ, սակայն, մեր կարծիքով, ամենահավանականը Սյունիքի թագավորության ստեղծման և հզորացման տարիներն են՝ 10-րդ դարի վերջը և 11-րդ դարի սկիզբը: Մեղրու բերդը հետագա դարերում չի հիշատակվում, բայց, անշուշտ, այն ակտիվ դեր է խաղացել Սյունիքի հարավային գավառում Արևիքում, տեղի ունեցած բոլոր պատերազմական գործողությունների ժամանակ:

Այս պատերազմների հետևանքով բերդը ենթարկվել է բազմաթիվ ավերածությունների ու վերակառուցումների, որոնց պատճառով դժվար է վերականգնել նրա սկզբնական հորինվածքը:

Մեղրին նորից պատերազմների թատերաբեմ է դառնում 18-րդ դարի սկզբին Ղափանի անկախ իշխանության կողմից թուրք նվաճողների դեմ մղած կռիվների ժամանակ:

Թուրքական զորքերի հարձակմանը դիմագրավելու համար պետք էր, որ մինչ այդ Դավիթ Բեկը հիմնովին վերակառուցած լիներ Մեղրու բերդը: Վերակառուցումն անհրաժեշտ էր ոչ միայն ժամանակի ու թշնամիների ավերածությունների պատճառով, այլև ռազմական նոր տեխնիկայի և հատկապես հրազենի օգտագործման համար:

Բերդը բաղկացած է վեց աշտարակից, որոնք բարձրանում են Մեղրու Մեծ թաղի հյուսիսային կողմում: Երկու լեռնաշղթաներ հատվելով հյուսիսում ստեղծում են եռանկյունաձև գոգավորություն, որի հարավային լանջին տեղադրված է Մեղրի ավանը: Այս լեռնաշղթաների առանձին դժվարամատչելի գագաթների վրա կառուցված են բերդի աշտարակները, որոնք պայտաձև ընդգրկում են ավանը հյուսիսից: Այսպիսի տեղադրումը հուսալի պաշտպանում է ավանի մատույցները հյուսիսային, արևելյան և արևմտյան կողմերից:

Մեղրու բերդի աշտարակները հատակագծով ու տարածական ձևերով երկու տեսակ են՝ կլոր և ուղղանկյուն:

Առաջին խմբին են պատկանում չորսը, որից երեքը տեղադրված են արևմտյան լեռնաշղթայի վրա, իսկ մեկը՝ արևելյան: Ուղղանկյուն աշտարակները երկուսն են՝ յուրաքանչյուր լեռնաշղթայի վրա մեկական:

Վեց աշտարակներն էլ կառուցված են նույն շինանյութից՝ կոպտատաշ և անմշակ գրանիտից (ժայռերը, որոնց վրա բարձրանում են աշտարակները՝ գրանիտ են), կավե շաղախով շարված:

Պատերի մեջ, որպես սեյսմիկ գոտիներ, օգտագործված են փայտե հեծաններ, դրված աշտարակի ամբողջ պարագծով, մի քանի շարքով: Այս փայտե գոտիներից մի քանիսը ծառայում են նաև հրակնաստների որոշ շարքերի համար որպես բարավոր: Քարի մշակման աստիճանը, շաղախը նույնն են, ինչ և Մեղրու շրջանի ժողովրդական բնակելի տներինը:

Բոլոր կանգուն աշտարակների պատերը դեպի վերն ետևանում են՝ հիմքի մոտ նրանք ունեն 0,9–1,0 մ լայնությամբ

Մեղրու բերդ





ՃԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Մեղրու բերդ


յուն, իսկ գագաթի մոտ՝ 0,7 մ: Նեղացումը կատարվում է դրսից՝ աշտարակների ներսում պատերն ուղղաձիգ են: Սա դրական հանգամանք է աշտարակի կայունությունն ուժեղացնելու համար, առանձնապես տվյալ շարվածքի դեպքում: Նման երևույթի հանդիպում ենք նաև 10–12-րդ դարերի հայկական ամրոցաշինության մեջ (Բջևի, Ասբերդ, Կիլիկիայի մի շարք ամրոցներ):

Կլոր աշտարակները նման են միմյանց հատակագծի չափերով և պահպանված մասի ծավալային լուծումով: Փոքր-ինչ տարբերվում է արևելյան լեռնաշղթայի կլոր աշտարակը՝ այստեղ պատերը նեղանում են ոչ թե հիմքից սկսած, այլ մոտ երկու մետր բարձրությունից: Արևմտյան լեռնաշղթայի հարավից հաշված առաջին և երրորդ աշտարակները վատ են պահպանվել՝ պատերը մնացել են գետնից շուրջ 1,5 մ բարձրությամբ միայն, ընդ որում առաջին աշտարակը լրիվ հողով է լցված, իսկ երրորդը կիսով չափ: Սա հնարավորություն է տալիս ծանոթանալու միայն մուտքի տեղադրմանը և հրակնատների չափերին ու դասավորությանը:

Հատակագծերը կանոնավոր շրջագծեր են, Նույն տրամագծով՝ երկուսի արտաքին տրամագծերը հավասար են 5,5 մետրի, իսկ պատերի հաստությունը՝ մեկ մետրի: Մուտքերը հյուսիսային կողմից են: Հրակնատները բացված են ամբողջ շրջագծով ճառագայթաձև, հատակից շուրջ մեկ մետր բարձրությամբ: Հեռավորությունը միմյանցից աշտարակի պատի դրսի կողմից 1.00-1,15 մ է, անցքերի չափերն են 0,16x0,60 մ:

Մյուս երկու շրջանաձև աշտարակները՝ արևմտյանը և արևելյանը, արտաքին տրամագծով չեն տարբերվում առաջիններից և ունեն պատերի նույն հաստությունը: Բայց ավելի լավ են պահպանված և կարելի է դատել նրանց ծավալային հորինվածքների մասին: Այս աշտարակներում հրակնատներն ըստ բարձրության եռաշարք են և շարքերը շեղված են այնպես, որ բացվածքները միմյանց նկատմամբ շախմատաձև են դասավորված:

Ուղղանկյուն բացվածքներով և փայտե բարավորներով աշտարակների մուտքերը նույնպես հյուսիսային կողմից են: Տվյալ կողմորոշումն ունի այն առավելությունը, որ հյուսիսից բերող պաշտպանված է բնական պատնեշներով և թշնամու հարձակումը միայն հակառակ կողմից է



Մեղրու բերդի գլխավոր հատակագիծը. 1, 2, 8, 6 - կլոր աշտարակները, 4, 5 - ուղղանկյուն աշտարակները, 7- ս. Աստվածածին եկեղեցին, 8- Մեծ թաղը

հնարավոր:

Ուղղանկյուն հատակագծով երկու աշտարակների երկարությունները համարյա նույնն են՝ 10,2 մ և 10,6 մ, բայց լայնությունները տարբեր են՝ համապատասխանաբար 2,7 մ և 3,9մ: Այս պատճառով արևմտյան աշտարակն ունի ավելի ձգված համաչափություններ:

Ուղղանկյուն աշտարակների պատերի հաստությունը և շարման տեխնիկան նույնն է՝ ինչ կլորներից, նրանց անկյունները կտրված են, որի հետևանքով աշտարակները փաստորեն ութանիստ են դառնում:

Արևելյան աշտարակի հարավային պատում կա կիսաքանդ բացվածք, որը նայում է դեպի բնակավայրը: Բայց սա որպես մուտք չէր կարող ծառայել, որովհետև դրսից՝ գետնից զգալի բարձր է: Հրակնատները շախմատաձև դասավորված են աշտարակների ամբողջ պա-

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

րագծով, արևմտյանում՝ երկշարք, իսկ արևելյանում՝ չորս շարքով: Հրակնատների կառուցվածքն ընդհանուր է Մեղրու բերդի բոլոր աշտարակների համար: Սրանք ուղղանկյուն բացվածքներ են, ուղղաձիգ համաչափություններով, որոնք կտրվածքում դեպի դուրս թեք են 30°: Հետաքրքիր է հրակնատների բարավոների կոնստրուկցիան՝ քարից, եռաշարք, դրված միմյանց հանդեպ աստիճանաձև, իջնելով դեպի դուրս: Բացվածքի տվյալ ձևը միաժամանակ պաշտպանում է նաև թշնամու գնդակներից:

Թե՛ ուղղանկյուն և թե՛ կանգուն կլոր աշտարակները երկհարկանի են եղել: Այսպիսի եզրակացության համար հիմք են ծառայում պատերի մեջ պահպանված միջհարկային ծածկերի փայտե հեծանների հետքերը և այն հանգամանքը, որ հրակնատների շարքերը դասավորված են ըստ հարկերի՝ երկուական շարք ներքևում և վերևում: Հարկերի բարձրությունները երկու մետրի սահմաններում է: Դեպի երկրորդ հարկ տանող աստիճանները հավանաբար փայտյա են եղել՝ աշտարակներից և ոչ մեկում չեն պահպանվել ո՛չ աստիճանները և ո՛չ էլ միջհարկային ծածկերը:

Հրակնատների շահմատաձև դասավորությունը տարբեր բարձրությունների շարքերով (ներքևի շարքը ծնկաչոք կրակելու համար է, իսկ վերևինը՝ կանգնած) հնարավորություն է տվել առավելագույն օգտագործել պատը ըստ երկարության և ըստ բարձրության: Օրինակ, արևելյան ուղղանկյուն աշտարակից միաժամանակ կարող են կրակել շուրջ 70 հրաձիգ: Կրակի այսպիսի կենտրոնացումը համեմատաբար փոքր պաշտպանական կառուցվածքում ստեղծում է 18-րդ դարի ռազմական տեխնիկայի դեքում հզոր հարվածային ուժ, մասնավոր տեղադրված լինելով լեռնաշղթայի բարձր կատարներին աշտարակներն անմատչելի են թնդանոթի կրակի նկատմամբ:

Մեղրու բերդն իր ճարտարապետությամբ ուրույն տեղ է գրավում Հայաստանի պաշտպանական կառուցվածքների շարքում: Բերդը հիմնովին վերակառուցված լինելով 18-րդ դարում այդ ժամանակաշրջանում իր տեսակի մեջ սակավաթիվ օրինակներից է: Իսկապես, 14-17-րդ դարերում, երբ Հայաստանը վերջնականապես կորցրեց իր անկախությունը և դարձավ հարևան պետությունների համար ռազմադաշտ, երկրում բացարձակորեն ոչ մի հնարավորություն չկար հայերի կողմից հայկական բերդեր և ամրոցներ կառուցելու համար: Եվ Ղափանի անկախ իշխանության կարճատև գոյությունը միայն հնարավորություն տվեց Սյունիքում վերանորոգել և օգտագործել որոշ հին ամրոցներ (Բաղաբերդ) կամ հիմնովին վերակառուցել (Մեղրի, Հալիձոր):

Առաջին կարևոր առանձնահատկությունն այն է, որ Մեղրու բերդը հայկական ճարտարապետության մեջ հայտնի միակ պաշտպանական կառույցն է՝ իրականացված հրագնի օգտագործումը հաշվի առնելով:

Երկրորդ, Մեղրու բերդը տարբերվում է նախորդ բոլոր օրինակներից իր կառուցապատման ստրուկտուրայով՝ այն կազմված է առանձին կանգնած աշտարակներից՝ առանց պարսպապատերի:

Հայկական բոլոր պաշտպանական կառուցվածքներն ունեն միևնույն կոմպոզիցիոն սկզբունքը՝ աշտարակներով ուժեղացված պարիսպներով շրջափակվող տարածություն, որտեղ գտնվում են միջնաբերդը կամ բնակավայրը, վանքը, իշխանական կամ թագավորական դղյակը: Այսպես են Անբերդը, Տիգնիսը, Մաղաբերդը, Անին, Լոռի բերդը:

Մեղրու բերդը չունի պարսպապատեր, որովհետև լեռնաշղթաներն իրենք են ծառայում պարիսպների փոխարեն, և բնակավայրը ոչ թե աշտարակների միջև է

գտնվում, այլ նրանց հարևան: Իսկ հրագնի օգտագործման ժամանակաշրջանում պարտադիր չէ բնակավայրը անմիջականորեն շրջափակել պաշտպանական կառուցվածքներով, այլ կարելի է ավելի հարմար դիրքից այն պաշտպանել, թեկուզև որոշ հեռավորությունից: Այդպիսին է Մեղրին, որի բերդը հսկողության տակ է առնում ոչ միայն Մեծ թաղը, այլև ամբողջ բնակավայրը:

Մեղրու բերդի պաշտպանական այս հիանալի հատկությունների շնորհիվ է, որ 1723 թ. չորս հարյուր հոգով պաշարված լինելով թուրքական տասնյակ հազարանոց բանակի կողմից, Դավիթ Բեկի համախոհները հինգ օր անընդհատ հաջողությամբ դիմադրել են գրոհներին՝ մինչև հիմնական ուժերի Մեղրի հասնելը և թշնամու զորքերին ետ մղելը: Եվ, իրավամբ, Մեղրու բերդը կարելի է համարել ուշ միջնադարի հայկական ամրոցաշինության նվաճումը:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մեղրու շրջանի միջնադարյան ինժեներական կառուցվածքները:

Հայաստանի լեռնային տեղանքի խիստ կտրտվածության հետևանքով հաղորդակցական կապերի դժվարություններն առանձին գավառների կամ նույն գավառի առանձին բնակավայրերի միջև պատճառ են հանդիսացել դեռ վաղ միջնադարից բազմաթիվ կամուրջներ կառուցելու համար:

Կամրջաշինությունը Հայաստանում առանձնապես զարգացավ 12-14-րդ դարերում, երբ թագավորները, իշխանները, քաղաքների համայնքները բազմաթիվ կամուրջներ են շինել, որոնցից շատերը դեռ մինչև հիմա էլ կանգուն են և նույնիսկ ծառայում են իրենց նպատակին: Կամրջաշինությունը, ընդհատվելով օսմանապարսկական պատերազմների ժամանակ, նոր թափ է առնում 17-18-րդ դարերում: Այդ ժամանակաշրջանում են կառուցվել Աշտարակի, Օշականի, Երևանի բազմաթիվ խոշոր կամուրջները, որոնք իր ժամանակի ինժեներական տեխնիկայի նվաճումներն էին:

Այս դարերում կամրջաշինությամբ Սյունիքը քանակական տեսակետից գերազանցում էր Հայաստանի մյուս գավառներին: Բազմաթիվ կամուրջներ կառուցվեցին հատկապես Մեղրի գետի և Նրա վտակների վրա (Արևիկ, Լիճք, Վանք և այլն): Ճիշտ է, սրանք ձևերով պարզ էին, միաթիղջ, բայց տեղանքի ճիշտ ընտրության, շինանյութի ռացիոնալ օգտագործման, ճարտարապետական ձևերի լակոնիզմի մեջ եղած յուրօրինակ արտահայտչականությամբ նույնպես իրենց արժանի տեղն ունեն Հայաստանի կամրջաշինության, պատմության մեջ:

Կամրջաշինության կուլտուրան Հայաստանում ինչպես 10-14-րդ, այնպես էլ 17-18-րդ դարերում անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա է եղել, քան հարևան բոլոր երկրներում ու ընդհանրապես Արևելքում: Իրավամբ նշանավոր գիտնական Ծչուսը նշել է, որ Հայաստանի միջնադարյան կամուրջները «...այն կառուցվածքներից են, որոնք համաշխարհային ճարտարապետության ամենաարժեքավոր ստեղծագործությունների շարքին են պատկանում»:

Պատմական Հայաստանն ունենալով զարգացած կամրջաշինություն, բնականաբար պետք է կառուցեր նաև ջրանցույցներ: Սակայն, ի տարբերություն կամուրջների, դրանք չեն պահպանվել, բացառությամբ մեկի: Եվ այս մեկը գտնվում է Մեղրու շրջանում:

Հայաստանի միջնադարյան ջրանցույցներից ամենաարժեքավորը և միակ կանգունը (որը գործում է մինչև այսօր) Մեղրու շրջանի Ծվանիձոր գյուղում է (Նախկին Աստազուր): Աստազուրի կառուցվածքի մասին մասնագիտական գրականության մեջ տեղեկություններ չկան, թեպետ այն տեսել և նկարագրել է դեռևս 19-րդ դարում

Դյուբուան: «Աստագուրը փոքրիկ հայկական գյուղ է, գրում է նա,- որտեղ ես զարմացա, տեսնելով մի գեղեցիկ ակվեդուկ՝ մի կամարով և մեծ բարձրությամբ, որն ուղղում է ջուրը ձորի մի կողմից մյուսը, պարտեզների ոռոգման համար»:

Շվանիձորի ջրանցույցը կառուցված է բազալտե ոչ մեծ քարերից՝ 0,25- 0,30 մ չափերի, բավական խնամքով տաշված և շարված կրաշաղախով՝ 17-րդ դարի Հայաստանի կամրջաշինությանը հատուկ շինարարական տեխնիկայով: Թաղի և ճակատների քարերի մշակման մեջ տարբերություն չկա: Միաթռիչք թաղի սլաքաձև կամարը երկկենտրոն է, կենտրոնները գտնվում են հիմքերից բարձր, թաղի պատերն իջնում են մոտ երկու մետր և նստում ձորակի երկու ափերի ժայռերի վրա: Ձորակը ցամաք է և ծառայում է որպես գյուղից այգիները իջնելու ճանապարհ:

Ջրանցույցը կառուցված է հյուսիս-հարավ ուղղությամբ, և ջուրը գյուղի հյուսիսային կողմի աղբյուրներից բավական խոր ձորակի վրայով անց է կացված հարավային դարավանդի վրա փռված խաղողի այգիները: Կառուցվածքը չափերով մեծ չէ՝ թաղի թռիչքի չափը 8,10 մետր է, բարձրությունը վերևից, ջրատար նավից մինչև ձորակի հատակը՝ 9,30 մետր: Հարավային պատում կա փոքր, շեշտված սլաքաձև կամարով բացվածք, որը ջրանցքի տարբեր կողմերում փռված խաղողի այգիները կապում է միմյանց: Բացվածքը, 1,80 մետր լայնությամբ և նույնքան էլ բարձրությամբ, հնարավորություն է տալիս բեռնված գրաստներ անցկացնելու մի կողմից մյուսը: Ջրատարի նավը, 0,30 մետր լայնությամբ և 0,15 մետր խորությամբ, իրականացված է մաքուր տաշած բազալտե քարերից և սվաղված է կրաշաղախով:

Շինարարական տեխնիկայով, շինանյութով, կամարի ուրվագծով, թաղի կոնստրուկցիայով և այլն, շատ ընդհանուր գծեր ունենալով Ջանգեզուրի և առանձնապես Մեղրու շրջանի 17-18-րդ դդ. կամուրջների հետ, Շվանիձորի կառուցվածքն ստեղծված է միմիայն որպես ջրանցույց և իր էական առանձնահատկություններով տարբերվում է կամուրջներից:

Առաջին: Կոնստրուկտիվ իրականացմամբ ջրանցույցը կազմված է երկու մասից՝ հիմնական կենտրոնական, որի մեջ գտնվում է կամարակապ մեծ բացվածքը, և հյուսիսից հարավ շարունակվող պատերից, որոնք սպառնում են ջրանցույցի հավասարաչափ թեքությունը: Հետաքրքիրն այն է, որ հիմնական մասը՝ 15,5 մետր երկարությամբ, վերին մասում ավելի լայն է (1,45 մետր), քան պատերի շարունակությունը, որոնց լայնությունը վերևում ընդամենը 0,90 մետր է: Սա արդյունք է այն բանի, որ կառուցվածքը սկզբից էլ ծառայել է որպես ջրանցույց և չի նախատեսվել երթևեկության համար: Իրականացնել այն ամբողջովին նույն լայնությամբ, անհիմն կլիներ և՛ կոնստրուկտիվ, և՛ տնտեսական տեսակետից: Կառուցողները, ում հատուկ է եղել ռացիոնալ մտածողությունը, հիմնական մասի պատերը բացվածքից 3,70 մետր հեռավորության վրա նեղացրել են և դեպի հյուսիս ու հարավ ձգվող պատերը շարունակել արդեն մեկ մետրից պակաս հաստությամբ: Այս նեղացումը կատարված է միայն մի կողմից՝ արևմուտքից, կորագիծ անցումով, այնպես որ արևելքից՝ բնակավայրից նայելիս ստեղծվում է անփոփոխ լայնություն ունեցող կառուցվածքի տպավորություն:

Երկրորդ առանձնահատկությունը ջրանցույցի հիմնական բացվածքի թաղի նեղացումն է դեպի վեր: Հիմքերի մոտ ունենալով 1,85 մետր լայնություն, թաղն իր վերին մասում նեղանում է մինչև 1,45 մետր: Պատի այսպիսի նեղացումը լրացուցիչ կայունություն է տալիս կառուցվածքին, որը շատ կարևոր է Հայաստանի սեյսմիկ պայմաններում:



Մեղրու բերդ



Մեղրու բերդ

Կամրջաշինության մեջ չեն նկատում նման օրինակներ. ֆունկցիոնալ տարբերություն կա կամուրջների ու ակվեդուկների շինարարական տեխնիկայում. եթե կամուրջների համար հարկավոր է ունենալ լայն երթևեկելի մաս, ապա երկրորդ դեպքում դա ավելորդ է և պահանջվում է նվազագույն լայնություն՝ ջրատար նավի համար:

Ջրանցույցի կառուցման ժամանակաշրջանը ստույգ հայտնի չէ: Բայց այն պետք է համարել 17-րդ դ. գործ, որովհետև այդ շրջանի կամուրջների հետ համեմատելիս նկատվում է, որ, անկախ ֆունկցիոնալ բնույթի տարբերություններից, այն կառուցված է շինարարական և կոնստրուկտիվ նույն սկզբունքներով: Նշված ժամանակաշրջանում՝ Սյունիքի սոցիալ-տնտեսական դրությունը նույնպես բարենպաստ էր, որպեսզի Հին Աստագուրի նման ոչ մեծ գյուղը այսպիսի մոնումենտալ կառուցվածք ստեղծեր:

Հայկական ժողովրդական ճարտարապետության լավագույն կառույցներից են Մեղրու բնակելի տները, հատկապես շրջկենտրոնի՝ Մեղրի ավանի դեռ անցյալ դարում կառուցված քաղաքատիպ բնակելի շենքերը: Դրանք, երկու՝ որոշ դեպքերում երեք հարկանի են, պարտադիր պատշգամբներով: Այդպիսի շենքերի լավագույն օրինակներ պահպանվել են Մեղրու Փոքր թաղում: Ուշագրավ է այստեղի շենքերից մեկի հյուրասենյակի լուսամուտը՝ գեղեցիկ փայտե ցանցավոր փեղկերով (դրանց գունավոր ապակիները չեն պահպանվել): Ընդհանրապես, Փոքր թաղի բնակելի տները, որոնց մի մասը, ցավոք, սկսել է քանդվել, իրենից ներկայացնում է ժողովրդական ճարտարապետության մի բացօթյա թանգարան, արժեքավոր հատկապես նրանում, որ այստեղ պահպանվել են ոչ թե առանձին շենքեր, այլ բնակավայրի կառուցապատման մի մեծ հատված, որի պահպանումը խիստ անհրաժեշտ է և այժմ արդեն դա հրատապ խնդիր է դարձել:

Մեղրիի ժողովրդական ճարտարապետությունը (ուշ միջնադար և նախասովետական շրջան)

Մեղրին աչքի է ընկել պարսկական տիրապետության վերջին շրջանում իբրև մելիքանիստ: 1766 թվականին հայ ազգային-ազատագրական պայքարի գործիչ Հովսեփ Էմինն անցնելով այստեղով՝ բնակավայրը քաղաք է անվանել, ուր, Նրա ասելով, եղել է «հասարակապետություն», 3000 տուն, զարգացած գյուղատնտեսություն, կտավագործություն և ջուլիակագործություն¹: Քաղաքական ճնշման, հարստահարությունների և պարբերական գաղթերի ու կոտորածների պայմաններում մեղրեցիք երկար ժամանակ պահպանել են իրենց ազգային- կենցաղային յուրահատկությունները և առևտրական հարաբերությունները հարևան երկրների ու քաղաքների հետ:


19-րդ դարի վերջին քառորդում տեղական մտավորականությունը գործուն մասնակցություն է ունեցել բնակավայրերի բարեկարգման աշխատանքներին: Երիտասարդների մի խումբ, որը հաճախ գրական երեկոներ էր կազմակերպում, բազմապիսի այլ հարցերի հետ «մշակում է գյուղի բարեկարգման և տնտեսական բարեփոխումների որոշակի ծրագիր: Խմբակի մասնակիցները լուծում են գյուղի պլանավորման, փողոցները սալահատակելու, ստորերկրյա խողովակներով խմելու ջուր բերելու, բաղնիք կառուցելու, գյուղամիջյան ճանապարհները բարեկարգելու և բնակչությանը հուզող այլ հարցեր»²:



Մեղրին գտնվում է Մեղրագետի ստորին մասում, բավականաչափ լայն ձորի մեջ: Գետի ափերին, բարձր լանջերի վրա ընկած են Նրա երկու թաղերը, որոնք իրենց կենտրոններում ունեցել են առանձին եկեղեցիներ: Աջափնյա լանջի վրա տեղավորված է այսպես կոչված Փոքր թաղը, իսկ ձախափնյա մասում՝ Մեծ թաղը, որի ստորին մասը կոչվել է Մաջթաղ (Միջնաթաղ): Սրանք աստիճանաձև դասավորված են լանջերի միջին մասերում, ինչպես հատուկ է Հանգեգուրի բնակավայրերին: Ստորին մասերը, որոնք հարմար են այգեմշակության համար, չեն կառուցապատվել: Այգեստանի մեջ ցրված են եղել բազմաթիվ հնձաններ, ընդ որում յուրաքանչյուր այգետեր ու-

նեցել է իր սեփական հնձանը, որը Նրա համար ծառայել է ոչ միայն որպես արտադրական կառուցվածք, այլև ամառանոց՝ սովետախիտ ծառերի հովանու տակ: Փոքր թաղը ավելի ուշ շրջանում է առաջացել: Բնակավայրի կորիզը հանդիսացել է Մեծ թաղի եկեղեցու շուրջը ամֆիթատրոնաձև դասավորված մասը, որի ստորոտում են եղել հասարակական շենքերը (դպրոց, ժողովասրահ և այլն) և շուկան: Այս մասը այժմ ևս բնակավայրի կենտրոնն է, ուր տեղավորված են հասարակական և վարչական շենքերը: Հսկա սոսենիներով սովետավորված նախկին շուկայի տեղում այժմ հրապարակ է կենտրոնական փողոցի պուրակով: Ավանի ձախափնյա այս մասը շրջապատված է եղել ամրություններով: Առանձին կանգնած աշտարակների մնացորդները պահպանվել են ժայռերի վրա: Այս մասում եղած կառուցվածքների ստորին և վերին մակարդակների տարբերությունը հարյուր մետրի է հասնում:

Մեծ թաղի հասարակական կենտրոնից դեպի բնակավայրի բոլոր կողմերը ձգվում են Նեղ փողոցներ, որոնք հեռոկետե նեղանում են և դառնում անկանոն: Մեծ և Փոքր թաղերի փողոցներից աջ և ձախ հաճախ բաժանվում են փակուղիներ և անցուղիներ: Փողոցներից շատերն ունեն թեքություններ, որոնք մեղմացնելու համար Նրանց սալարկած մակերեսները երբեմն աստիճանաձև մասերի են բաժանել: Ուշագրավ երևույթ են շենքերի մեխանիկական վնասվածքներից խուսափելու համար կատարված անկյունային մասերի բթացումները, որոնք երբեմն ամբողջ պատի բարձրությունն ունեն կամ վերջանում են կտուրին չհասած: Ստորին մասում պատերի անկյունը փոքր բարձրությամբ երբեմն լրացվում է քարե շարվածքով, որը ծառայում է իբրև նստարան: Անկյունային բթացումները հիմնականում երթևեկությունը դյուրացնելու համար են: Դրանք հանդիպում են նաև Հայաստանի այլ վայրերում, Նույնիսկ այլ երկրներում³: Կարճ ցանկապատների, դարպասների և շենքերի որթատունկով զարդարված շարքերից դուրս պատշգամբներով, երբեմն նաև կամրջաձև շինություններով այս փողոցները խիստ յուրօրինակ տեսք ունեն:

Նախքան 17-րդ դարը Մեղրին այլ տեսք է ունեցել.





Նկ. 27. Հին և նոր մասերով տուն Մեղրիում

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

գրեթե ամբողջովին կառուցապատված է եղել մեծ մասամբ միահարկ, հարթածածկ, սյունազարդ Նախասրահ ունեցող գյուղատիպ շենքերի խիտ, աստիճանաձև դասավորությամբ: Այդ մասին են վկայում նոր կառույցների մեջ առնված հին շենքերի մնացորդները:

Ներկայումս ավանը, ժողովրդական ավանդույթներին հակառակ, կառուցապատվում է ստորին մասում (ծորով դեպի վեր ու վար) բազմահարկ բնակելի շենքերով: Ծրագրված է կառուցապատել Մեծ և Փոքր թաղերի միջև ընկած ամբողջ տարածությունը և խիտ մասերի բնակչությանը տեղափոխել այնտեղ, որպեսզի կառուցապատման ընդհանուր խտությունն իջնի 40 տոկոսի: Մեղրին ընդարձակվում է Նան դեպի կայարան տանող խճուղու ուղղությամբ. այստեղ Նախկին լերկ տարածությունները ծածկվում են առանձնատներով և կանաչ տնամերձերով: Այստեղ է գտնվում արդյունաբերական թաղամասը: Բնակավայրը աճել է Նան դեպի արևմուտք. Վարդանիձոր տանող ճանապարհի վրա առաջացել է կանաչազարդ

Այգեստան թաղամասը, ուր հաստատվել են պարսկահայ շատ նոր հայրենադարձներ:

Ծանոթագրություններ

1. Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 304:
2. Խ. Ա. Ավետիսյան, Ջանգեզուրի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում (1920 –1960), էջ 19:
3. Ցավոք, լանջերի կառուցապատման ավանդական եղանակը, հակառակ գոյություն ունեցող առաջավոր տեսակետների, շարունակում է անտեսվել, որի հետևանքով լեռնային բնակավայրերի կառուցապատումը ֆունկցիոնալ, տնտեսական և գեղագիտական առումով շատ է սուժում:

Ն. Ծ. ՊԱՊՈՒՅԱՆ
«ՍՅՈՒՆԻՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»,
(ԵՐԱՆ 1972)

Շվանիձորի ջրանցույց կամուրջը (17-րդ դար)

Շվանիձորի միջնադարյան ջրանցույցը ջուրը գյուղի հյուսիսային կողմի աղբյուրներից բավականին խոր ձորակի վրայով անց է կացնում հարավային դարավանդի վրա փռված խաղողի այգիները: Ձորակը հիմնականում ցամաք է և ծառայում է որպես ճանապարհ: Ջրանցույցի առանձնահատկությունը հիմնականում այն է, որ, հիմքերի մոտ ունենալով 1,85 մ լայնություն, թաղն իր վերևի մասում նեղանում է մինչև 1,45 մ: Սյունիքը ակտիվ սեյսմիկ գոտում է, և պատի այսպիսի նեղացումը լրացուցիչ կայունություն է հաղորդում կառուցվածքին:

Ճարտարապետին հաջողվել է ընտրել այն միակ տարբերակը, որն ապահովում է ջրանցույցի ճարտարապետագեղագիտական, ճարտարագիտակառուցվածքային հատկանիշների ներդաշնակություն: Որպես արդյունք ճարտարապետի բնատուր կռահողականությամբ ու սեփական կենսափորձի շնորհիվ ստացվել է այնպիսի պատկերավոր կառույց, որով հիացած՝ եվրոպացի ճանապարհորդ Դյուբուան Փարիզում 1839-1843 թվականներին լույս ընծայած գրքում գրում է. «Աստազուրը փոքրիկ հայկական գյուղ է, որտեղ ես զարմացա՝ տեսնելով մի փոքրիկ ակվեդուկ՝ մի կամարով և մեծ

բարձրությամբ, որն ուղղում է ջուրը ձորի մի կողմից մյուսը՝ պարտեզների ոռոգման համար»:

Կառուցման համար օգտագործել են բազալտե ոչ մեծ քարեր՝ խնամքով տաշված և շարված կրաշաղախով: Միաթռիչք թաղի սլաքածն կամարը երկկենտրոն է, կենտրոնները գտնվում են հիմքից բարձր, թաղի պատերն իջնում են մոտ երկու մետր և Նստում ձորակի երկու ափերի ժայռերի վրա: Կառուցվածքի չափերն են. թաղի թռիչքը՝ 8,10 մ, բարձրությունը ջրատար Նավից մինչև ձորակի հատակը՝ 9,30 մ:



Շվանիձորի ջրանցույց կամուրջը, 17-րդ դար

Մեղրիի Փոքր թաղի ճարտարապետությունը 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգության համատեքստում

ՀԱՄԱՁԱՍԿ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ
հնագիտության և
ազգագրության
ինստիտուտ



Դատմական Արևիկի գավառի Մեղրի բնակավայրը պատմության գրեթե ամբողջ ընթացքում գտնվել է մշակույթների խաչմերուկում, ինչը իր ազդեցությունն է ունեցել բնակավայրի ինքնատիպ մշակութային կերպարի ձևավորման վրա: Բնակավայրի հարուստ ժառանգության մեջ առանձնանում է նաև ճարտարապետությունը, որը, Սյունիքի ճարտարապետական ժառանգության մաս կազմելով, համեմված է նաև իրանական մշակույթի ազդեցությամբ:

Հողվածում քննարկվում է Մեղրիի 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգությունը, նրա զուգահեռները Արարատյան դաշտի մեզ հայտնի օրինակների հետ. ծագման խնդիրները, տեխնիկական ընդհանրությունները, տեսականին: Հետազոտության թեման ընդհանուր առմամբ ուսումնասիրված չէ, դրանով իսկ այս հետազոտությունը դաշտ է բացում ոչ միայն Մեղրիի այլ ընդհանրապես Հայաստանի հողաշեն ժառանգության ուսումնասիրությունների համար:

Հողվածում ամփոփված եզրակացությունները հիմնված են դաշտային հետազոտությունների, հանրային հնագիտության և մշակութային մարդաբանության համալիր մեթոդների կիրառման վրա: Հղում արվել է ինչպես լուսանկարների քննությունը ևս համալրել է մեր հետազոտությունը:

Հայաստանի սահմանային տարբեր հատվածներում մշակութային լանդշաֆտի ձևավորման վրա մեծապես ազդում են մշակութային փոխազդեցությունները: Այս առումով Մեղրին հանդիսանում է ոչ միայն Իրանի Իսլամական Հանրապետության հետ պետական սահմանին մոտ գտնվող բնակավայր, այլ նաև մշակութային սահման՝ հագեցած տարբեր փոխազդեցություններով: Այդ փոխազդեցությունները նախ և առաջ քննարկում ենք հողաշեն մշակույթի դրսևորումներով: Մեղրիի մշակութային կերպարի կարևոր բաղադրիչներից մեկը հողի ճարտարապետության լայն տարածումն է:

ճարտարապետության մեջ հողն օգտագործվել է ինչպես համաշխարհային, այնպես էլ հայկական մշակույթում: Այն կիրառական է եղել պաշտպանական, բնակելի, տնտեսական, պաշտամունքային նշանակություն ունեցող շինությունների կառուցման մեջ: Հայկական լեռ-

նաշխարհում հողի ճարտարապետությունն օգտագործվել է պատմության գրեթե բոլոր փուլերում:

19-20-րդ դարերում Արարատյան դաշտում և հարակից շրջաններում ձևավորվում ու զարգանում է հողաշեն ժառանգության նոր փուլ, որի կրողներն են 1928 թ. վերաբնակեցված պարսկահայերը:

Թուրքմենչայի պայմանագրի արդյունքում շուրջ 45000 մարդ հաստատվեց Երևան, Նախիջևան, Օրդուբադ քաղաքներում, Ջանգիբասարի, Կարբիբասարի, Սարդարապատի, Վեդիբասարի, Կրխբուլաղի, Դարաչիչակի, Ապարանի, Սուրմալուի, ինչպես նաև Նախիջևանի ու Օրդուբադի մահալներում և Վայոց ձորում: Մի քանի հարյուր ընտանիք բնակություն հաստատեց Ղարաբաղում և այլ վայրերում:

Այսպիսով 1828 թ. վերաբնակվողները, ովքեր իրենց Նախիկին բնակավայրերում, պարսկական մշակույթի ազդեցությամբ և այլ բնական շինանյութի բացակայության պայմաններում ճարտարապետության մեջ որպես հումք օգտագործում էին հիմնականում հող, տեղափոխվելով Հայաստան՝ իրենց հետ բերեցին արդեն իսկ ավանդա-



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



կան դարձած հողի ճարտարապետությունը: Կավահողով հարուստ Արարատյան դաշտում և առատ քարանյութով Վայոց ձորի, Սյունիքի նախալեռնային, լեռնային շրջաններում հողի ճարտարապետության 19-20-րդ դարի կառույցների առկայությունը համապատասխանում է պարսկահայերի վերաբնակեցման տարածքներին:

Արարատյան դաշտի բնակավայրերը եղել են գրեթե ամբողջությամբ հողաշեն: Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ սկսեցին կարգավորել նախկին բնակավայրերը և հիմնել հստակ հատակագծերով նոր բնակավայրեր, գերիշխող շինանյութը շարունակում էր մնալ հողը: Մինչև 1950-ական թվականները դաշտի բնակավայրերում հողից էին պատրաստում ոչ միայն բնակելի-տնտեսական համալիրներն ու եկեղեցիները, այլև համայնքային նշանակություն ունեցող մշակույթի տները, դպրոցները, մանկապարտեզները, համայնքային պահեստներն ու արտադրամասերը և այլն:

ՄԵՂՐԻԻ ՓՈՔՐ ԹԱՂ

Հողաշեն մշակույթի համատեքստում առանձնանում է Մեղրիի Փոքր թաղի ժողովրդական ճարտարապետությունը: Այստեղ հողաշեն ժառանգության առկայությունը ոչ միայն պայմանավորված է 1930-ական թվականների վերաբնակեցմամբ, այլ նաև իրանական մշակույթի հետ անմիջական փոխազդեցությունների առկայությամբ:

Մեղրիի Փոքր թաղում երկու, որոշ դեպքերում երեք հարկանի պարտադիր պատշգամբներով շինությունների համար որպես հիմնական շինանյութ է ծառայել տեղի կոպտատաշ գրանիտը : Հուշարձան հանդիսացող համալիրները կրկնում են Արևիք գավառի 17-18-րդ դարերի հուշարձանների ճարտարապետությունը և մաս են կազմում Սյունիքի ճարտարապետական ժառանգության: Թաղի բնակելի համալիրներին իր աշխատություններում անդրադարձել է հետազոտող Հասրաթյանը, բնութագրել դրանք որպես ժողովրդական ճարտարապետության բացօթյա թանգարան և շենտել դրանց պահպանման անհրաժեշտությունն ու հրատապությունը:

Ուշագրավ են կառույցների դեկորատիվ լուծումները և ներքին հարդարանքը: Դեկորատիվ լուծումներից առանձնանում է կառույցներից մեկի հյուրասենյակի լուսամուտը՝ ռճավորված փայտե ցանցավոր փեղկերով, որոնց գունավոր ապակիները չեն պահպանվել : Ներքին հարդարման

տեսանկյունից իրանական մշակույթի ազդեցությունը տեսանելի է եղել կառույցների նախնական շրջանում՝ մինչև նորոգումը, և արտահայտվել է հատկապես բազմաթիվ ռճավորված խորշերի առկայությամբ:

Մեղրին իր մշակութային համատեքստով լայն ընդհանրություններ ունի Ագուլիսի և Ջուղայի, Խոյի և Սալմաստի ճարտարապետության հետ, ինչը բացի դեկորատիվ լուծումներից, արտահայտվում է նաև հողաշեն մշակույթի առկայությամբ: Այստեղ գրանիտի հետ միաժամանակ լայն կիրառություն ունեն նաև հողի ճարտարապետության տեսակներ հանդիսացող հում աղյուսը, թրծած աղյուսը և կավաշաղախը: Թաղի կառույցների ճարտարապետության մեջ կավահողով պատրաստված հատվածները տարբեր բնակարանային համալիրների դեպքում ունեն տարբեր տոկոսային հարաբերություն: Քարաշեն բնակարանային համալիրներում տարբեր դեպքերում կավահողով են կառուցված բնակարանի միջևորմը կամ արտաքին պատերի որևէ հատվածը կամ երկրորդ հարկը ամբողջությամբ:

Հողի ճարտարապետության տեսանկյունից Փոքր թաղում, ինչպես Արարատյան դաշտում և հարակից շրջաններում, ամենամեծ բաժինը զբաղեցնում է հում աղյուսը: Առկա շինություններում կիրառված հում աղյուսները ունեն հիմնականում 21x21x5, 22x22x5, 25x25x6 չափերի հարաբերություն: Համեմատության համար նույն ժամանակաշրջանում Արարատյան դաշտում կիրառվում էին հիմնականում 19.50x19.50x4.5, 20.50x20.50x5, 21x21x5.5, 25x15x10, 30x30x10 սմ չափերի հարաբերակցությամբ հում աղյուսներ: Օգտագործված հում աղյուսների հիմնական չափերի ոչ մեծ տարբերությունը ցույց է տալիս, որ դրանք կախված են եղել ոչ թե կիրառական նշանակությունից, այլ վարպետների օգտագործած կաղապարների չափերի փոքր տարբերությունից: Աղյուսների համար օգտագործված կավահողը վերցված է Մեղրիի լեռների ստորին հատվածներում՝ Մեղրի գետի շուրջ երևացող կավահողային լիցքերից:

Հողաշեն ժառանգության մեջ համեմատաբար ավելի փոքր մաս է կազմում թրծած աղյուսը: Այստեղ թրծած աղյուսից պատրաստված հատվածների (դռների և պատուհանների եզրագոտիներ, դեկորատիվ և ծանրություն կրող հատվածներ) մեջ առանձնանում են շրջանի 17-րդ դ. եկեղեցիների գմբեթներն ու գանգաշտարակները [Լկ. 5]:

Փոքր թաղի դեպքում օրինակ է հանդիսանում Սբ Յովհաննես եկեղեցու տանիքի կենտրոնի վեց սյունանի ռոտոնդան: Արարատյան դաշտում և հարակից շրջաններում թրծած աղյուսով կառուցել են եկեղեցիների խորանների կամարակապերը, գմբեթարդները, մուտքի կամ պատուհանների եզրաշարերը և այլն: Թրծած աղյուս են կիրառել նաև բնակելի տնտեսական համալիրներում, ծանրություն կրող հատվածների ամրությունը ապահովելու համար: Ի տարբերություն հում աղյուսների՝ թրծած աղյուսների դեպքում բազմաթիվ են վերօգտագործման դեպքերը:

Յոթի ճարտարապետության մյուս տեսակը կապակցող կամ արտաքին ծեփման կավաշաղախն է: Արտաքին ծեփապատման կավաշաղախը տարբերվում է հում աղյուսների և դրանց շարման ժամանակ կիրառվող կավաշաղախից: Այստեղ ամենամեծ տարբերությունը շաղախի մեջ մեծ քանակությամբ հարդի ամպայությունն է: Շաղախի մեջ մեծ քանակությամբ հարդը չի նպաստում նյութի ամրությանը, բայց մեծացնում է ջրակայունությունն ու նվազեցնում չորանալիս ճաքերի առաջացման հավանականությունը: Փոքր թաղում նման շաղախներով են ծեփվել նաև քարաշար հատվածները:

Ինչպես ավանդական ճարտարապետության այլ դրսևորումներում, այստեղ ևս տանիքների ծածկման համար որպես հիմնական նյութ են հանդիսացել գերանները և կավահողը: Գերանների հետ կիրառվել են նաև ավելի բարակ ճյուղեր, գերանների ճեղքած հատվածներ կամ եղեգ: Այս կառույցները նախնական շրջանում ունեցել են փայտե կոնստրուկցիայով և կավահողով պատրաստված հարթ տանիքներ, որոնք, կախված տեղանքի առանձնահատկություններից, կարող էին բակի նշանակություն ունենալ ավելի բարձր դիրքում գտնվող բնակարանների համար:

Կարևոր են նաև պատերի վրա հորիզոնական կայունացնող գոտիների կիրառման ընդհանրությունները:

Չասրայանը Մեղրիին նվիրված իր աշխատություններում խոսում է գերաններով հորիզոնական կայունացնող հատվածների լայն կիրառման մասին, բայց քարաշեն կառույցների դեպքում, այդ թվում՝ նաև Մեղրու բերդում: Նման կայունացնող գոտիներ ունեն նաև Փոքր թաղի հողաշեն կառույցները: Արարատյան դաշտում և հարակից շրջաններում հում աղյուսե պատերի համար նույնպես կիրառել են այս եղանակը: Նույն նկատառումով կիրառել են նաև թրծած աղյուսից պատրաստված շարքեր: Կավաշաղախի շերտերով լցման-ծեփման եղանակով պատրաստված պատերի համար նույն նշանակությունն են ունեցել հում աղյուսից պատրաստված շարքերը:

Հայաստանի հողաշեն ժառանգության մասին գոյություն ունեն սակավ հետազոտություններ: Հայաստանը լինելով քարի երկիր, այնուամենայնիվ, ունի բավականին մեծ հողաշեն ժառանգություն ծագման, տեսակների և կիրառման եղանակների հետազոտությունները այսօր դեռևս թերի են: Յոթի օգտագործումը և տարածումը Հայաստանում պայմանավորված է 19-րդ դարում Իրանից գաղթած հայերի ներմուծած մշակույթով: Յոթի օգտագործումը ճարտարապետության մեջ մնաց ակտուալ մինչև 20-րդ դարի 70-ականները:

Մեղրիի հողաշեն ժառանգությունը հետազոտությունը, կառուցվածքի, օգտագործման եղանակների վերլուծությունը թույլ է տալիս մեթոդական հիմք կազմել Հայաստանի այլ տարածաշրջանների հետազոտության համար, որտեղ նույնպես առկա է հողաշեն ժառանգություն: Ավելին, Մեղրիի նմանությունը Ագուլիսին, Ջուղային, Նախիջևանին, Օրդուբադին, հնարավորություն է տալիս ոչ միայն վերականգնել հողի ժառանգությունը, այլև հասկանալ տվյալ բնակավայրերի մշակութային առանձնահատկությունները:

Մեղրիի հողաշեն ժառանգությունը՝ խոյի, Սալմաստի, Թավրիզի հետ ունեցած ընդհանրություններով, թույլ է տալիս քննել հայ-իրանական մշակութային փոխազդեցությունները, իրանական մշակույթի ազդեցությունը Հայաստանի սահմանային բնակավայրերի, մասնավորապես Մեղրիի վրա:

Այսպիսով, զեկույցում առաջին անգամ փորձ է արվում դիտարկել Փոքր թաղի հողաշեն ճարտարապետությունն իր ընդհանրություններով և ինքնատիպ դրսևորումներով Արարատյան դաշտի և հարակից շրջանների 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգության համատեքստում:

Գրականության ցանկ

Աբրահամյան 2023 - Աբրահամյան Յ. Թ., Պարսկահայերի միգրացիան և Արարատյան դաշտի 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգությունը // Միգրացիոն գործընթացները Հայկական լեռնաշխարհում հնագույն շրջանից մինչև 20-րդ դարակիզբ, 2023, 106-114:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 1987 - Հասրայան Մ. Մ., Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, 65:

ՊԱՐՍԱՄՅԱՆ 1974 - Պարսամյան Վ. Ա., Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը և հայերի ներգաղթը Պարսկաստանից // Հայ ժողովրդի պատմություն, հատոր 5, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1974, 168-175:

ՏԻՐԱՅՅԱՆ (պատ. խմբ.) 1996 - Հայկական ճարտարապետության պատմություն, հատոր 1, պատասխանատու խմբագիր՝ Տիրացյան Գ. Ա., Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1996, 298 էջ:

PETROSYAN et al. 2016 - Petrosyan H, Kirakosyan L 2016 Adobe Structures of Tigranakert in Artsakh // Terra Lyon 2016, XII World Congress on Earthen Architecture, Lyon, 2016.



Մեղրիի շրջանի հարթածածկ գյուղական տունը

Իբրև բնակելի տան ուրույն տիպար գյուղական հարթածածկ բնակարանային համակառուցող հատկանշական է եղել Մեղրու շրջանի զգալի մասի համար: Նրա առանձին նմուշները հիշեցնում են մեգարոնը, որը Հայաստանում հայտնի է Ուրարտուի գոյության ժամանակաշրջանից: Այսպիսի տան համակառուցումը նույնպես համադրվածքային գլխավոր դերը պատկանել է մի բնակելի սենյակի, որը գլխատան նման բազմազան դեր է կատարել կենցաղում: Համակառուցողը նույնպես մասամբ խորացվել է սարայանքի մեջ, ունենալով սյունավոր պատշգամբի կամ սենյակի ձևով նախամուտք և հողե ծածկ, կառուցված գերանների վրա: Այս ընդհանրությունների հետ առկա են եղել նաև էական տարբերություններ: Այստեղ համակառուցողների մեծ մասում մի երկրորդ սենյակ հանդես է եկել բնակելի սենյակի ֆունկցիաներով, թեև հիմնականում օժանդակ նշանակություն է ունեցել (օգտագործվել է որպես մառան): Վերջինս տան հատակագծում այնքան սերտորեն է եղել շաղկապված հիմնական սենյակի հետ, որ նախասենյակի նման մեծ մասամբ միջանցքի դեր է կատարել: «Դրսի տուն» և «Ներսի տուն» (նեսմանց և դյուսմանց տուն) անվանումներն ինքնին ցույց են տալիս բնակելի հիմնական սենյակի ֆունկցիաների բաշխված լինելը այդ բաժանմունքների միջև: Մյուս տարբերիչ հանգամանքը օդափոխման և լուսավորման կազմակերպումն է: Կտուրի մեջ բացված երդիկներից ծուխն այնպես արագ էր կարող հեռանալ, ինչպես գլխատանը, քանի որ դրանք բացված են եղել հարթ կտուրի մեջ. ուստի, որպես օդափոխման օժանդակ միջոց, սենյակների արտաքին պատերի վերնամասերում դեպի ցած լայնացող դրսի կողմից նեղ լուսամուտներ են բացել: Նոր պայմանները նպաստել են սենյակների ուղղանկյուն ձևի առաջացմանը: Այս հանգամանքը կառուցողին դյուրություններ է ընծայել նաև տեղանքի հարթեցման ժամանակ. ուղղանկյուն ձգված ծավալը լանջի թեթևության ուղղահայաց անհամեմատ ավելի քիչ հողափորման աշխատանք է պահանջել, քան քառակուսուն մոտ հատակագծով նույն

չափի մակերեսի դեպքում:

Մեղրու շրջանի գյուղական հին տիպի տան պարզագույն համակառուցող կազմված է եղել մի սենյակից և նրա առաջ «անտ»-երի միջև պարփակված պատշգամբից: Այդպիսի տները համեմատաբար շատ քիչ են եղել: Ամենաշատ տարածված համակառուցող բաղկացած էր երկու սենյակից և մի պատշգամբից, որոնք իրար նկատմամբ ունեն մի քանի դասավորություն: Ամենատարածվածը մի առանցքի ուղղությամբ սենյակների կցումն է լայնական կամ երկայնական կողմերով, կապված տեղանքի թեթևության նկատմամբ համակառուցողի դիրքից և կառուցողի ճաշակից:

Բոլոր դեպքերում պատշգամբը պարտադիր համախմբող տարր է հանդիսացել, որի մեջ են բացվել երկ-սենյակ համակառուցողի սենյակներից մեկի կամ եռասենյակ լինելու դեպքում երկուսի դռները: Երբեմն բարձրադիր գյուղերում դրան փոխարինել է պատշգամբաձև խորը նախամուտքը: Հիշյալ համակառուցողներին կցվել է անասուններին հատկացվող մի փոքր բաժին առանձին մուտքով, որը մեծ մասամբ իբրև ախոռ է ծառայել: Մեծ թեթևությունների դեպքում բնակելի համակառուցող երկհարկանի է եղել. կիսագետնափոր կամ լրիվ գետնափոր առաջին հարկը հատկացվել է անասուններ պահելու կամ օժանդակ այլ կարիքների, այդ թվում հնձանի ու մառանի համար: Եղել են թաքնված գետնահարկեր՝ քողարկված մուտքերով: Գետնահարկերը կամ առաջին հարկերը երբեմն թաղակապ կառուցվածք են ունեցել, ինչպես Ջանգեզուրի գրեթե բոլոր մյուս շրջաններում:

Բնակելի սենյակը լանջին կառուցվելու դեպքում երբեմն պատի և լանջի միջև նեղ միջանցք են թողել՝ պատը խոնավությունից զերծ պահելու համար: Այդ միջանցքը բնակարանի ամենագուլ մասն էր, այդ իսկ պատճառով կողքերից ու վերևից փակվել է և ծառայել իբրև մառան:


Այժմ նշված կառուցողների չնչին մնացողները կան միայն, այն էլ ընդգրկված Նոր համակառուցողների մեջ իբրև օժանդակ մաս: Երբեմն Նոր համակառուցողի մեջ կառուցվում է հնատիպ մի սենյակ՝ իբրև մառան կամ խոհանոց:

Տանը կից անասուններ պահող տնտեսություններից շատերը ունեցել են խոտանոցներ, որոնք պատնեշված, խորը սյունասարահի կամ սովորական սենյակների նման են եղել՝ այն տարբերությամբ, որ պատերի վերնամասերում լայն բացվածքներ են ունեցել խոտը ներս գցելու համար: Դրանք մեծ մասամբ անասանոցին կից են շինվել: Գյուղերից դուրս, կալերի անմիջապես կողքին կառուցված խոտանոցների մեջ հարող լցվել է կալի մակարդակին հավասարվող, խոտանոցի կտուրին բացված անցքից:

Բնակելի տան ներքին մանրամասնությունները բավականաչափ նման են գլխատների համապատասխան մասերին: Սենյակների և պատշգամբի պատերի մեջ եղել են փեղկերով և անփեղկ բազմաթիվ խորշեր՝ իրեր պահելու համար, լայն տարածում են ունեցել իրար վրա ռիթմիկ դասավորված մեծ ու փոքր խորշերը՝ հիմնական կացարաններում, տարբեր մեծությամբ և հարդարման խնամքով: Այստեղ էլ, ինչպես այլ շրջաններում, պատերին կային հատուկ ելուստներ՝ իրերը գետնից բարձր դասավորելու համար: Պատերի ստորին մասում տեղավորվել են փոքրիկ շարժադռնակով ամբարներ: Ըստ Լիսիցյանի հարողորդած տեղեկությունների՝ կից բնակելի համակառուցողների հետ հարողորակցելու և իրեր փոխանակելու համար բացվել են հատուկ անցքեր: Օդափոխման դժվարությունը ստիպել է ջեռուցումն իրականացնել բուխարիների միջոցով: Թոնիր և բուխարի եղել է նաև պատշգամբում:

Ն. Ծ. Պապուխյան

«Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը», (Երևան 1972)



Աջից՝ Գուսան Աշոտը, Մեղրիի «Արաքս» թերթի խմբագիր Արամայիս Սարգսյանը և Մեղրիի նոտար Կարապետ Պողոսյանը



Բոժոժաբաղի տոնախմբություն Մեղրիում, 1912 թ., Ճահսուվարյան ընտանիքն է

Կարեն Դեմիրճյանը Մեղրի-Քաջարան 48 կմ ավտո-ճանապարհի բացմանը, 1980 թ.



ՄԵՂՐՈՒ ԱՅԶԱՆ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐՈՒՄ



Մեղրեցիներ
Գրիգորի և
Արևիկայի
հարսանիքը
Մեղրիում, 1910 թ.

Մեղրիի կանանց
պարի խումբը,
1930-ականներ



Գրուսան Աշոտը
Մեղրիում՝
«Արաքս» թերթի
խմբագրու-
թյունում, 1970-
ական թթ.

Մեղրու կոլխոզի կուլտուրայի տան ժողգործիքների անսամբլը



Վ. Համբարձումյան,
Ս.Թևանյան,
Մ.Մարգարյան:
Ձախ կողմում
Արամ Շամիրիչն է:

Վիկտոր Համբարձումյանի կողքինը Մարջանյանն է, այնուհետև՝ Սերգեյ Թևանյան, Մուկուչ Մարգարյան, Սուրիկ Հարությունյան, Վարդան Բաղդասարյան



ՄԵՂՐՈՒ ԱՆՑՅԱԼ ԼՈՒՍԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՄԵՂՐՈՒ ԱՅԶԱՆԸ ԼՈՒՄԱՆԱՐԱՐՆԵՐՈՒՄ



Վահրավար,
Խուդիյանց
գերդաստանը, 1909-
1914 թթ.



Մեղրու գինու
գործարանի
աշխատակիցները,
1955 թ.



Հայրենական մեծ
պատերազմում
զոհվածների
հիշատակին
կառուցված՝
տարածաշրջանում
առաջին հուշարձանը
բացվել է Մալև
գյուղում 1966 թ.
մայիսի 9-ին: Բացման
արարողության
ժամանակ ժապավենը
կտրել է 3 որդի
կորցրած Սաթենիկ
Բաղայանը: Սաթի
տատին օգնում են՝
Թագուհի Ստեփանյանը
և Լիաննա
Ահարոնյանը:

Վերջին կայարանապետը

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
«Սյունյաց երկիր» N19,
2009



Մեղրիի կայարանապետ Գեորգի Չայրապետյանը, ով իր երկաթուղային գործընկերների, մտերիմ-հարազատների հետ անցյալ տարի նշեց 80-ամյակը, Ազարակ քաղաքի տարեգիրներից է: Աչք է բացել 1928-ին շինարարի ընտանիքում, Կիրովական քաղաքում, 1933-ին ընտանիքով տեղափոխվել են Նավթագործների քաղաք՝ Բաքու, որտեղ նախնական կրթություն է ստացել, այնուհետև՝ միջնակարգ-մասնագիտական կրթություն, որպես երկաթուղային՝ 1946-ից սկսել է աշխատանքային կենսագրություն հյուսել: Ադրբեջանի այն ժամանակվա երկաթուղային տրանսպորտի նախարար Աբաս Բադիրովի հրամանով տեղափոխվեց Մեղրիի կայարան, որն ամենավաղից էր համարվում: Դա 1956 թվականի հունվարի 15-ն էր, Մեղրիի կայարանի եղած-չեղածը մի վազոն-տնակ էր: Այդ մասին է նաև վկայում ընտանեկան այլըմում պահպանվող արդեն խոնացած լուսանկարը: «Կզնաս, կայարանը ոտքի կկանգնեցնես, կտեղափոխենք Բաքու՝ վարչական աշխատանքի», – վերադասի խոստումն էր: Բայց նախնիների հողի կանչն ավելի զորեղ էր. մնաց ու ընդմիջտ կապվեց Մեղրիի հող ու ջրին,

նրա աշխատասեր ժողովրդին: Եվ հիմա՝ տարիների հեռվից, խոստովանում է, որ չի զղջացել: Աշխատանքին զուգընթաց 1962-ին ավարտել է Մոսկվայի երկաթուղային տրանսպորտի ինստիտուտը: Գեորգի Չայրապետյանի՝ Մեղրիի կայարանապետի աշխատանքային գործունեությունը համընկավ Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրական հզորությունների ընդլայնման և Ազարակ բնակավայրի կառուցապատման հետ: Գիշերք, որ հանրապետության Գերագույն խորհրդի հրամանով 1954-ին Ազարակը ստացավ քաղաքատիպ ավանի կարգավիճակ, ինչը Ազարակը կառուցապատելու, շեն ու բարեկարգ բնակավայր դարձնելու հեռանկարներ էր բացում: Միամտություն է մտածել, որ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով հնարավոր կլիներ լեռնագործների քաղաք և պղնձամոլիբդենային կոմբինատ կառուցել: Ազարակի և պղնձամոլիբդենային կոմբինատի համար օրական երկաթուղով ստացվում էին 15-20 վագոն ժողովրդատնտեսական բեռներ՝ շինանյութեր, մեքենասարքավորումներ, առաջին անհրաժեշտության ապրանքներ, որոնք հիմնականում բեռնաթափում էին Մեղրիի կայարանում, քանի որ Կարճնաև-Ազարակ կայարանն ավելի սուղ հնարավորություններ ուներ:



Գեորգի Չայրապետյանի՝ գործին, ծառայողական պարտականություններին նվիրվածությունն աննկատ չի անցել: Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» և «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, մեդալներով ու պատվոգրերով



ՎԵՐԿՈՒՄ ԴՈՅՆՈՒՄՆԵՐ

«Պարապորտներ լինում էին», – փորձում եմ դավադիր հարց տալ: «Ամեն ինչ պատահում էր, երբ, ասենք, օրվա ընթացքում 20 վագոն շինաքար էր ստացվում, բնականաբար, բեռնաթափման գործում դժվարություններ էին ծագում», – հետևում է անկեղծ պատասխանը:

Լրագրողիս խնդրանքը՝ «մի հիշարժան դեպք պատմեք Ձեր աշխատանքային գործունեությունից», անպատասխան չի մնում. 1970 թվականին, վերհիշում է, Ադրբեջանի երկաթուղային տրանսպորտի նախարար Բաղիրովից (խորհրդային տարիներին այժմյան Սյունիքի մարզով անցնող երկաթգիծը՝ Կապանից Մեղրի, գտնվում էր Ադրբեջանի երկաթուղային տրանսպորտի նախարարության ենթակայության տակ) մի հեռագիր է ստանում, ըստ որի՝ նախարարը պահանջում էր Մեղրիի կայարանում Բաքվի 26 կոմիսարներից մեկի՝ Մեշադի Ազիզբեկովի կիսանդրիի տեղադրման համար տարածք հատկացնել: Գեորգի Միխայիլիչն անմիջապես զանգահարում է Մեղրիի այն ժամանակվա շրջգործկոմի նախագահ Սերգեյ Թևանյանին, հայտնում հեռագրի բովան-

երկու հանրապետությունների միջև հարաբերությունները սրվեցին, և հարևան հանրապետությունում բնակվող մեր հայրենակիցները, թողած տարիների չարչարանքով ձեռք բերած կայքն ու գույքը, մազապործ բռնեցին բռնագաղթի ճամփան: Նույն ճակատագիրն էր կանխորոշված Մեղրիում բնակվող ադրբեջանցիներին: Բայց, ի տարբերություն մեր հայրենակիցների, ինչպես Գ.Յայրապետյանն է հավաստում, այստեղի ադրբեջանցիներն իրենց ունեցվածքով, աման-չամանով (նույնիսկ մարդ կար՝ իր տան տանիքի ազբոշիֆերն է քանդել և բարձել վագոնը) հեռացան: Ոչ մեկի քիթը չի արնոտվել, իսկ շաբաթներ անց Բաքվում կայացած հանրահավաքներում լայնահառաչ ելույթներ են ունեցել, թե իբր Յայաստանից իրենք մի կերպ են ճողոպրել՝ այնտեղ թողնելով ամեն ինչ: Յետագայում հակամարտությունը վերածեց պատերազմի, և երկաթուղային շրջափակումը դարձավ իրողություն: Վերջին գևացքը Մեղրիի կայարանով երթեկել է 1992-ի ապրիլի 23-ի գիշերը...

Վաստակաշատ երկաթուղայինը սրտի ցավով է պատմում, որ Ագարակի կայարանն այժմ թալանված է, շենքը՝ վաճառված, իսկ մոտ 70 վագոնները և ռելսերը դարձան մետաղի ջարդոն՝ հարստացնելով ինչ-որ մեկի գրպանը: Մինչդեռ կար ժամանակ, երբ օրական Մեղրիից, Ագարակից 100-120 ուղևոր էր մեկնում մայրաքաղաք: Իսկ այսօր Մեղրիի կայարանի «գինևանցում» մի երկաթուղային սայլակ (дрезина) կա, որ Մեղրիի սահմանապահ ջոկատին է ծառայում. Կարճևան-Նյուվադի երթուղով բեռներ է տեղափոխում:



Յոզիկ Չարեյանի ԲԻՈԳ

դակության մասին, որի էությունը հանգում էր կայարանը «թուրքացնելուն» (իր բնորոշումն է): Թևանյանը հարցնում է՝ ի՞նչ կարող ենք անել, կայարանապետը հուշում է՝ Ստեփան Շահումյանի արձանը Ագարակի կոմբինատում կա, այս գիշեր պիտի տեղափոխենք և տեղադրենք: Խոսքը գործի է վերածվում. առավոտ ծեփին, գործն ավարտվում է, իսկ կեսօրին հեռագրում են նախարարին, թե օրերս տեղի պիտի ունենա Ստ. Շահումյանի կիսանդրու բացումը, և նախարարությանը հրավիրում են մասնակցելու կոթողի բացման արարողությանը: Այն տեղի է ունենում մի քանի օր հետո, իսկ մինչ այսօր էլ կիսանդրին պահպանվել է իր սկզբնական տեսքով:

Վերջերս զանգվածային լրատվամիջոցները հայտնեցին, որ Բաքվում պղծել են Բաքվի 26 կոմունարների գերեզմանները: Ի հեճուկս այդ քստմնելի արարքի՝ Գեորգի Յայրապետյանը թարմացրել է Ստ. Շահումյանի կիսանդրիի տեսքը:

Յայ-ադրբեջանական հակամարտությունը սրբազրումներ արեց Մեղրիի երկաթուղայինների կյանքում. ներքին կարգադրություն կար՝ երկաթուղայիններին չներքաշել հակամարտությունների մեջ: 1988-ից հետո

պիտի ունենա: Ի դեպ, ասենք, որ այս օրերին լայնորեն քննարկվում են Իրան-Յայաստան երկաթուղու նախագծերը, որոնցից լավագույն տարբերակ է համարվել Սևանա լճի արևմտյան ափով անցնողը՝ Սևան քաղաքից դեպի Սիսիան, Կապան և Մեղրի: Ութսունն անց երկաթուղայինը մինչև այսօր աշխատում է, և վերջերս փորձում էր անցնել կենսաթոշակի, բայց վերադասից կես-ուրջ, կես-կատակ փոխանցել են, որ այնքան պիտի աշխատի, որ ավարտվի Իրան-Յայաստան երկաթուղու շինարարությունը, որպեսզի կտրի երկաթուղու բացումը խորհրդանշող ժապավենը:

Իսկ ընդհանրապես Գեորգի Յայրապետյանի՝ գործին, ծառայողական պարտականություններին նվիրվածությունն աննկատ չի անցել: Պարզևատրվել է (թող այս թվարկումները ժամանակավորեպ չինչեն) «Աշխատանքային կարմիր դրոշի» և «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, մեդալներով ու պատվոգրերով: Բայց ամենամեծ գնահատանքն այն սերն ու հարգանքն է, որ նրա հանդեպ տածում են իր երբեմնի երկաթուղային գործընկերները, Մեղրիի և Ագարակի բնակիչները:



Հայաստանի ամենահարավային օդանավակայանը. ինչպես հանքից աներոդրոմ «ծնվեց»

Արցախյան վերջին պատերազմից հետո հատկապես Հայաստանի հարավ-արեւելքում՝ Սյունիքում, առավել սրվել է անվտանգ հաղորդակցության հարցը: Անկախությունից հետո մինչեւ հիմա Երեւանից մարզկենտրոն Կապան հնարավոր է հասնել միայն ցամաքով՝ անցնելով Գորիսով կամ Տաթևով: Եթե մինչեւ 2020 թ. աշուն անվտանգ էին երկու ճանապարհներն էլ, ապա հիմա Գորիս-Կապան ճանապարհի մոտ 4 կմ-ը անցնում է թշնամու վերահսկողության տակ գտնվող տարածքով: Տաթևի ճանապարհն էլ չնայած անվտանգ է այդ տեսանկյունից, բավական անհարմար է բազմաթիվ ոլորտների ու ավելի երկար լինելու պատճառով: Պատահական չէ, որ հիմա էլ շատերը նախընտրում են Կապան, այնտեղից էլ Քաջարան ու Մեղրի հասնել Գորիսի ճանապարհով: Այս երթուղին օգտագործում են նաեւ դեպի Իրան մեկնող եւ Իրանից եկող բեռնատարները:

Պատերազմը չի ավարտվել, ու հայտնի չէ, թե ինչ զարգացումներ կլինեն Հայաստանի համար բառիս բուն իմաստով կենսական նշանակություն ունեցող Մեղրու տարածաշրջանում, որի հանդեպ թուրք-ադրբեջանական հավակնություններն ու Բաքվի բռնատիրական ռեժիմի այսօրվան հատկապես մեծացել են պատերազմի՝ իրենց համար հաջող ելքից հետո: «Ձանգեզուրի միջանցք» արտահայտությունը չի իջնում թշնամու բերանից, չնայած

այդ գաղափարը մեր արեւմտյան ու արեւելյան հարեաները նոր չէ, որ հղացել են:

Այս ֆունի Հայաստանի համար առավել կարեւոր է դառնում նոր կոմունիկացիոն ուղիների ստեղծման հարցը: Կարեւոր է, որ այդ ուղիներով հնարավոր լինի տեղ հասնել արագ եւ անվտանգ: «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհի ամենաերկար 4-րդ տրանշի (Արտաշատ-Եղեգնաձոր-Քաջարան-Ագարակ) իրականացումը, կարծես, դեռ սարերի հետեւում է, ու այսօր Քաջարան եւ Մեղրի հասնելու միակ տարբերակը սահմանամերձ դարձած Կապանով երթեւեկելն է: Այս առումով ամենաանհարմարը Մեղրու աշխարհագրական դիրքն է, որը Երեւանից ամենահեռուն է:

Ադրբեջանն իր վերահսկողության տակ անցած Ֆիզուլիում (Վարանդա) արդեն սկսել է նոր օդանավակայանի կառուցումը, որը նախատեսված է ավարտին հասցնել մինչեւ այս տարվա վերջը: Բաքուն ծրագրում է եւս 2 օդանավակայան կառուցել Ձանգեզանի (Կովսական) եւ Լաչինի (Քաջաթաղ) շրջաններում: Հասկանալի է, որ չավարտված պատերազմի պայմաններում անհրաժեշտության դեպքում դրանք թշնամուն ծառայելու են ոչ միայն քաղաքացիական, այլեւ ռազմական կարիքների համար, քանի որ գտնվում են Արցախի ու Հայաստանի անմիջական հարեանությամբ եւ շատ հարմար կլինեն ռազմական տեխնիկա ու անձնակազմ տեղափոխելու համար:

Նոր օդանավակայաններ կառուցելու առումով (վերանորոգման մասին չենք խոսում) Հայաստանը շահեկան դիրքում է, քանի որ նույն Սյունիքում նման 4 կառույց կա՝ Սիսիանում, Գորիսում, Կապանում ու Մեղրիում:

1970-80-ականներին կառուցված այս աներոդրոմները խորհրդային տարիներին ծառայել են քաղաքացիական կարիքների համար, սակայն անկախությունից հետո դրանց նշանակությունը, բացի Կապանի կառույցից, փոխվել է: Սիսիանի, Գորիսի ու Մեղրու օդանավակայանները ներկայում ռազմական նշանակության են:

«Շետքը» հողվածաշարով անդրադարձել է Հայաստանի շրջանային օդանավակայանների անցած ճանապարհին ու ներկային: Առավել մանրամասն գրել ենք Կա-

ՎԱՐՇԱԿԱՆ ԿԱՐԱԿԵՏՈՒՄՆԵՐ

պանի օդանավակայանի վերակառուցման մասին, որն այսօր պատրաստ է շահագործման, սակայն պատերազմից հետո ի հայտ եկած Նոր պայմաններում, երբ թշնամին աերոդրոմից մի քանի տասնյակ մետրի վրա է ու վիզուալ կարողանում է այն դիտարկել, պատասխանատուները դեռևս չեն շտապում իրականացնել Երեան-Կապան առաջին թռիչքը:

Այդուհանդերձ, թվում է, թե այս օդանավակայանի շահագործման մեկնարկը միայն ժամանակի հարց է, եւ այն տեղի է ունենալու թեկուզ թշնամու քթի տակ:

1997 թ. Գորիսի, իսկ 2001 թ. Սիսիանի օդանավակայանը հանձնվել են ՊՆ-ին:


2017 թ. այն ժամանակվա վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորած կառավարությունը հայտնել էր, որ ուսումնասիրվել են Ստեփանավան, Ջերմուկ, Սիսիան, Գորիս, Կապան եւ Մեղրի (Ագարակ) քաղաքների օդանավակայանների վերագործարկման հնարավորությունները: Սրանցից Սիսիանի, Գորիսի ու Մեղրու օդանավակայանները, ինչպես ասվեց, ՊՆ-ի տիրույթում են, իսկ մյուսները, որոնք քաղաքացիական աերոդրոմներ են, մինչ օրս չեն շահագործվում:

Վարչապետ Կարապետյանին 2018 թ. հարցրել էինք, թե հնարավոր է, որ կառավարությունը Սյունիքի 3 ռազմական աերոդրոմները հետ վերցնի ՊՆ-ից եւ ծառայեցնի քաղաքացիայի կարիքներին կամ նվազագույնը դրանք դարձնի համատեղ բազավորման (կամ օգտագործման) աերոդրոմ՝ հաշվի առնելով քաղաքացիայի հանդեպ հետաքրքրությունը Սյունիքի մարզում, ինչպես նաեւ Մեղրիում թռիչքների գործարկման մասին Կ. Կարապետյանի հայտարարությունը: Բանն այն է, որ 2018-ի փետրվարին Կարապետյանը քաղաքացիայի ոլորտի պատասխանատուների հետ հանդիպմանն անհրաժեշտ էր համարել փոքր ավիացիայի զարգացումը եւ հատկապես կարեւորել դեպի Մեղրի թռիչքների գործարկումը՝ հաշվի առնելով ազատ տնտեսական գոտու առկայությունն այդտեղ՝ հայիրանական սահմանին: Վարչապետին ուղղված մեր հարցին պատասխանել էր ԶՅ քաղաքացիայի կոմիտեն (այն ժամանակ՝ գլխավոր վարչություն)։ «Փոքր ավիացիայի զարգացման եւ շուկայի աճին զուգահեռ չի բացառվում նաեւ Գորիսի, Սիսիանի եւ Մեղրու օդանավակայանների վերագործարկման հնարավորությունը»:

Բնականաբար, անցած 3,5 տարիներին էական փոփոխություններ են տեղի ունեցել, հատկապես՝ երկրի ավտանազային միջավայրում: Ներկա պայմաններում, երբ ամբողջ Սյունիքում կան չլուծված անվտանգային հարցեր, դժվար է հավատալ, որ Սիսիանի ու Գորիսի օդանավակայանները, բացի ռազմական ավիացիայից, այլ նպատակների եւս կծառայեն:

Մի փոքր այլ է Մեղրու պարագան, քանի որ այստեղ, ինչպես ասվեց, գոյություն ունի տնտեսական բաղադրիչ՝ «Մեղրի» ազատ տնտեսական գոտին: Բացի դրանից՝ ի տարբերություն Սիսիանի ու Գորիսի, ավտոմայրուղով Մեղրի հասնելը շատ ավելի երկար է ու հոգնեցուցիչ, այսինքն՝ ավիահաղորդակցությունը կարող է իրական այլընտրանք լինել ցամաքային տարբերակին:

Հաշվի առնելով Մեղրու տարածաշրջանի հանդեպ աճող հետաքրքրությունը Հայաստանի ներսում եւ ամբողջ ռեգիոնում՝ հարկ ենք համարում անդրադառնալ այստեղի օդանավակայանի պատմությանը, որի դերը մոտ ապագայում կարող է աճել թե՛ ռազմական, թե՛



տնտեսական տեսանկյունից:

Ավիացիայով չհետաքրքրվողներից շատերը երեւի չգիտեն էլ, որ Մեղրիում օդանավակայան կա: Եվ այն մեր երկրի ամենահարավային աերոդրոմն է: Բայց առավել հետաքրքիր է, թե ինչ տեղանքում ու ինչ ջանքերով կառուցվեց օդանավակայանը:

1971-1987 թթ. քաղաքացիայի հայկական վարչության պետ Դմիտրի Աթբաշյանը, ում օրոք՝ 1972-ի ամռանը, բացվել էր Կապանի օդանավակայանը, իր անտիպ գրքում պատմում է, որ Նույն ամռանն իր աշխատասենյակ մտավ գիտնական Ալեքսանդր (Ալիս) Մարջանյանն ու փոխանցեց Գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանի խնդրանքը՝ զեկույց պատրաստել «Օդանավակայան Մեղրիում» թեմայով, որը պետք է ներկայացվեր երկու օր անց Մեղրիում կայանալիք ԳԱ արտագնա Նիստում: Աթբաշյանը հակադարձել էր, թե Մեղրիում օդանավակայան չկա, եւ Նույնիսկ ուղղաթիռը, որն այնտեղ էր թռել սանիտարական նպատակներով, երկար ժամանակ պտտվել էր երկնքում, մինչեւ փոքր հարթակ էր գտել վայրէջք կատարելու համար. ահա այդքան անբարենպաստ է Մեղրու ռելիեֆը օդանավակայան կառուցելու համար: Մարջանյանն իր հերթին Նշել էր, թե հենց այդ մասին էլ կարելի է զեկույց կազմել:

Հաջորդ օրը քաղաքացիայի վարչության պետը «Մի-8» ուղղաթիռով թռել էր Մեղրի: Աթբաշյանն ասում է, որ լրիվ լիցքավորել էին ուղղաթիռն ու վառելիքի լրացուցիչ բաք էին վերցրել: Այդ ամբողջ օրը տարբեր տեղանքներ



էին փորձարկել ապագա օդանավակայանի համար: Ի վերջո, եկել էին այն եզրահանգման, որ միակ հարմար վայրը հենց այն է, որտեղ այսօր գտնվում է օդանավակայանը, այսինքն՝ Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատի կողմից շահագործվող բաց հանքավայրի անմիջական հարեանությամբ:

Սակայն այդ տեղանքում նոր օդանավակայան կառուցելու համար հսկայական ծավալի հողային աշխատանքներ պիտի կատարվեին ու ֆինանսական միջոցներ ծախսվեին: Հաջորդ օրը՝ ԳԱ Նիստին, Աթբաշյանը ներկայացրեց համապատասխան զեկույցը, սակայն ամենագարմանալին այն էր, որ մի երկու շաբաթ անց Հայաստանի մինիստրների խորհուրդը քաղաքից հայի ղեկավարին հանձնարարեց զբաղվել Մեղրիում աերոդրոմ կառուցելու խնդրով:

Շուտով Աթբաշյանը մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Կարլեն Ղամբարյանի հետ մեքենայով մեկնեց Մեղրի, որտեղ վերջինս ապագա օդանավակայանի տարածքում հավաքեց Մեղրու շրջանի եւ Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատի ղեկավարությանը: Քննարկումից հետո վերցնելով կոմբինատի գեոդեզիական քարտեզները՝ պաշտոնյաները վերադարձան Երեւան, իսկ մի քանի օր անց նույն կազմով հավաքվեցին նույն տեղում: Աթբաշյանը կոմբինատի քարտեզների վրա գծագրեց, թե որտեղ եւ ինչպես պետք է կոմբինատը լցնի դատարկ ապարները՝ այդպիսով հարթակ պատրաստելով աերոդրոմի համար: Քաղաքից վարչության այն ժամանակվա պետն իր գրքում հիշում է, թե տպավորություն էր, որ աշխատելու են Լուսինի մակերեսային, ու նախագծի իրականացումն անհավատալի էր թվում:

Այդուհանդերձ, նշանակալի էր ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի նախարար Պյոտր Լոմակոյի աջակցությունը, որն Ագարակի կոմբինատի տարեկան պլանային շահույթը նվազեցրեց 1 մլն ռուբլով, որպեսզի այդ գումարն ուղղվի «ԲելԱՁ» հսկա բեռնատարներով դատարկ ապարները օդանավակայանի հարթակ տեղափոխելուն:

Աթբաշյանն ասում է, որ շուրջ 15 տարի այստեղ հսկայական ծավալի աշխատանք կատարվեց. աերոդրոմի տեղանքում լցվեց 35 մլն խմ գրունտ: Այս առումով,

ըստ նրա, Մեղրին աշխարհի չեմպիոն է, քանի որ ուրիշ ոչ մի օդանավակայանի համար այսքան ծավալի հողային աշխատանք չէր կատարվել: Համեմատելով Տոկիոյի «Նարիտա» օդանավակայանի հետ, որը բացվել է 1978-ին՝ ավիատորն ասում է, որ այդտեղ լցվել է «ընդամենը» 5 մլն խմ գրունտ:

Լուսանկարիչ Հերբերտ Բադրասարյանը ժամանակին ֆիքսել է Ագարակի բաց հանքավայրի հարեանությամբ կատարվող հողային աշխատանքների ընթացքը (տես այստեղ):

Զսպասելով դրանց ավարտին, ինչպես գրում է Դմիտրի Աթբաշյանը, սկսվեցին ապագա թռիչքուղու եւ օդանավակայանի շենքի նախագծման աշխատանքները, իսկ շուտով մեկնարկեց շինարարությունը: Արդեն 1985 թ. Մեղրու օդանավակայանը պատրաստ էր օդանավեր ընդունել (լուսանկարը տես այստեղ):

Օդանավակայանի գրանցման համար մեկ ստորագրություն էր պակասում

Սակայն որքան բարդ էր կառույցի շինարարությունը, գրեթե նույնքան բարդ էր դրա գրանցումը: Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի օդային տարածքը խորհրդային տարիներին վերահսկում էին ԽՍՀՄ զինված ուժերի անդրկովկասյան ռազմական օկրուգի (ԱՌՕ) ՀՅՊ ուժերը, որոնց հրամանատարությունը հրաժարվում էր ստորագրել այն քարտեզի վրա, որում ներկայացված էր Մեղրու աերոդրոմի գլխավոր հատակագիծը: Ամբողջ շինարարության ընթացքում աշխատանքներն ընթացել էին առանց այդ ստորագրության:

Երբ այդ մասին խոսք էր բացվել քաղաքից հայկական վարչությունում, ինչ-որ մեկն անանուն նամակ էր ուղարկել ԽՍՀՄ քաղաքից հայի նախարարություն, որի հետքերով Մոսկվայից պատվիրակություն ժամանեց Հայաստան՝ փոխնախարար Բիկովի գլխավորությամբ: Հաջորդ օրն Աթբաշյանը մոսկովյան հյուրերի հետ «Յակ-40»-ով թռավ Կապան, որտեղ նրանց սպասում էր Թոֆիկ Ալավերդյանի «Մի-8» ուղղաթիռը:

Հայկական քաղաքից հայի նախկին ղեկավարը հիշում է, որ Կապանից Մեղրի թռչելիս Քաջարանի հատվածում ուղղաթիռը հայտնվեց արդեն ծյունածածակ լեռների

ՎՊՐԱԿԱՆ ԴՈՅՈՒՆՈՒՄԱՆՈՂ

զագաթների ու աշխատանքային ամպերի արանքում, եւ «միջանցք» գտնելը բավական բարդ էր: Այդուհանդերձ, օդաչուի հմտության շնորհիվ ուղղաթիռը հաջող վայելք կատարեց հենց Մեղրու անդրդրոմում, ինչը տպավորեց Մոսկվայից ժամանածներին: Աթաբայանը տեղում նրանց ներկայացրեց Մեղրու օդանավակայանի սոցիալական եւ պաշտպանական նշանակությունը, ինչի հետ բոլորը համաձայնեցին:

Սրանից մի քանի ամիս անց, երբ ռազմական խորհրդի նիստին մասնակցելու համար Երեւան էին ժամանում Վրաստանի, Ադրբեջանի ու ԱՌՕ-ի պատվիրակությունները, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը հենց «Չվարթնոց» օդանավակայանի կառավարչությունում ստիպեց ռազմական օկրուզի ԳՕԳ-ի հրամանատարին ստորագրել քարտեզի վրա, ինչը Մեղրու օդանավակայանի գործարկման վերջին քայլն էր:

Պաշտոնական տվյալներով՝ Մեղրու թռիչքուղու երկարությունը 800 մ է (փաստացի այն 1120 մ է), լայնությունը՝ 28 մ, ծովի մակարդակից բարձրությունը՝ 1204 մ:

Խորհրդային տարիներին Երեւանի «Էրեբունի» օդանավակայանից դեպի Մեղրի փոխադրումները կատարվում էին «Ան-2» ինքնաթիռներով (ժողովրդի շրջանում հայտնի են իբրեւ «Կուկուռուզնիկ», լուսանկարը տես այստեղ): Թռիչքը տեւում էր 1,5 ժամ: Ընդ որում՝ թռիչքը կատարվում էր Նախիջեւանի տարածքով: Նկատենք, որ Ադրբեջանի մաս կազմող Նախիջեւանի ավիակարգավորները (դիսպետները) խորհրդային տարիներին ենթարկվում էին Երեւանի կարգավարական կենտրոնին, փոխարենն ադրբեջանական կողմին էին ենթարկվում Բերդի կարգավարները:

Հայաստանի շրջաններում գործող օդանավակայանները անկախությունից հետո ենթարկվում էին «Էրեբունի» տարածքային օդանավակայաններ» պետական ՓԲԸ-ին: Սակայն 1990-ականների երկրորդ կեսին եւ 2000-ականների սկզբին դրանք հանձնվեցին համայնքներին կամ էլ ՊՆ-ին, իսկ ՓԲԸ-ն լուծարվեց:

Կոնկրետ Մեղրու վերաբերյալ որոշումը կայացվել է 1997 թ. դեկտեմբերի 25-ին այն ժամանակվա ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանի կողմից: Քոչարյանը հանձնարարել էր մեկամսյա ժամկետում ՀՀ քաղաքացիայի գլխավոր վարչությունից ՊՆ-ի հաշվեկշիռ տեղափոխել օդանավակայանի գոյքը, այդ թվում՝ շենք-շինություններն ու սարքավորումները՝ բացառությամբ 2 ռադիոփարոսի եւ 1 դիզել-գեներատորի (իրենց զբաղեցրած տարածքներով): Այսինքն՝ դրանք մնացին ԶԱԳՎ-ի հաշվեկշռում: Վարչապետն իր որոշմամբ նաեւ հանձնարարել էր միջոցառումների ծրագիր հաստատել՝ Մեղրու օդային տարածքով անցնող միջազգային օդային մայրուղիներով իրականացվող թռիչքներն սպասարկելու եւ դրանց անվտանգությունն ապահովելու, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, քաղաքացիական օդանավերի թռիչքներ կատարելու համար:

Իրականում Մեղրու օդանավակայանը գտնվում էր ոչ թե Մեղրի քաղաքի վարչական տարածքում, այլ Ազարակ քաղաքի հարեան Կարճեան գյուղի հողերում, սակայն 2016-ին Մեղրու Նախկին շրջանի բոլոր բնակավայրերը՝ 2 քաղաք եւ 13 գյուղ, միավորվել են մեկ համայնքի՝ Մեղրու մեջ: Համայնքային կենտրոնը Մեղրին է: Օդանավակայանի զբաղեցրած տարածքը 8,98 հա է, որը պետական սեփականություն է:

ՎԱՅԵ ՍԱՐՈՒՍԱՆՅԱՆ
HETQ, 01.07.2021Թ.

Մեղրու երկաթուղու օրհասը



ՂԱԿԻՑ
ՄԱՔՆԱՆՅԱՆ

Երեւան-Բաքու երկաթուղու վերջին՝ Ջուլֆա-Մինջեան հատվածը կառուցվել է հրատապ, երկրորդ աշխարհամարտի առաջին շրջանում եւ շահագործման է հանձնվել 1941թ. աշխատը: Նույն շրջանում՝ ամերիկյան ներդրումների հաշվին, Իրանում բարելավվել ու կառուցվել են Նավահանագիստներ, ավտոճանապարհներ, երկաթուղի: Ջուլֆան եւ Մեղրիով անցնող Երեւան-Բաքու երկաթուղին մեծ դեր են խաղացել պատերազմի շրջանում՝ Իրանով ՍՍՀՄ-ին մատակարարվող ամերիկյան բեռների տեղափոխման համար:

Ընդհանուր առմամբ, 17 մլն տոննա ամերիկյան մատակարարումներից Իրանով է անցել 4.2 մլն տոննան, որի ծանրակշիռ մասը՝ հիշյալ ճանապարհով:

Առհասարակ հայկական երկաթուղին կապող օղակ է՝ մի կողմից Ռուսաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի, մյուս կողմից՝ Իրանի եւ Թուրքիայի միջեւ:

Թե՛ն Մեղրիի հատվածում երկաթուղին միագիծ էր, եւ հանդիպակաց շարժվող գնացքները հարկադրված էին կայարաններում սպասելով ճանապարհը գիծել միմյանց, բայց փոքր, գրեթե զրոյական թեթւության հաշվին ապահովվում էր հսկայական բեռնաշրջանառություն: Տեսնել է պետք, թե ինչ ծավալուն ու բարեխիղճ աշխատանք է կատարվել ժամանակին՝ Արաքսի ձախակողմյան ավի ուղղաձիգ ժայռերից մի քանի մետր հորիզոնական լայնություն կորզելու համար: Մինչեւ 1971 թ.-ը՝ Նախիջեւանի ջրամբարի շահագործումը, Արաքսը մայիսի վերջին այնքան էր վարարում, այնպես էր կատարում, որ ջուրը տեղ-տեղ ծածկում էր երկաթուղին, բայց երկաթուղու աշխատանքը գրեթե չէր ընդհատվում:

Երկաթուղու գործունեության վերջին տարիներին յուրաքանչյուր ուղղությամբ օրական անցնում էր 20-ից 23 շարժակազմ: Յուրաքանչյուր շարժակազմի բեռնավորված վագոնների նվազագույն քանակը 50-ից ավելի էր: Մի քանի ամիս շարունակ՝ ամեն օր կեպիշերին, աշխատանքից տուն գնալուս ճանապարհն անցնում էր Մեղրու կայարանով: Այնտեղ ինձ պարտաճանաչ սպասում էր կայարանապետ ժորա Հայրապետյանը: Բարեխիղճ կայարանապետը մի գավաթ թեյ հյուրասիրելուն զուգահեռ, ինձ էր հանձնում թղթի մի կտոր, որում հաշվառված էր Մեղրիով անցած ու Նախիջեւան մտած հայկական բեռներ տեղափոխող վագոնների քանակը, ընդ որում՝ մագութի վագոններինը առանձնացված: Ձմեռ էր՝ 1992թ.-ի սկիզբը, ջերմակայաններն աշխատում էին մագութով, որը ծայրը ծայրին հասցվում էր անիվների վրա: Առավոտյան այդ տվյալները

հաղորդում էի վերադասին, որը համեմատվում էր Երեւանի հասած բեռների տվյալների հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք Նախիջեւանում չեն յուրացվում հայկական բեռները: Ապրիլի կեսին Մեղրիով անցնող բեռները Երեւան չհասան, եւ երկաթուղին դադարեց գործել:

Կարճ ժամանակ անց Մեղրի այցելեց ձեավորվող բանակի Նորանշանակ գլխավոր շտաբի պետ Նորատ Տեր-Գրիգորյանցը՝ բարձրաստիճան սպայակազմի ուղեկցությամբ: Արեւելյան սահմանի պաշտպանվածության ուսումնասիրության ժամանակ՝ իմանալով, որ չգործող երկաթուղին սահմանագծում երթեւեկելի է, մտավախություն հայտնեց, թե գրահապատ գնացքի ներխուժումը կործանարար կարող է լինել Մեղրիի համար: Նա պնդեց, որ սահմանագծի վրա երթեւեկության խոչընդոտումը պարտադիր է: Հենց նույն պահին՝ նրանց ներկայությամբ, սահմանագծի մոտ ջրթող կամրջակի հեծանների տակ տեղադրված ամուսնիտի պայթեցումով փարատվեց գետերալի մտավախությունը:

Արաքս գետի վրա լողացող կամուրջի գործելուն պես՝ իրանական Ջուլֆայի երկաթուղու ղեկավարը ժամանեց Մեղրի եւ սասց, որ մեր թույլտվությամբ ուզում են Մինչեւանում մնացած 250 վագոն իրանական բեռները Մեղրիով տեղափոխել Ջուլֆա: Ասաց, որ ադրբեջանական կողմը համաձայն է: Մենք, իհարկե, սասցինք, որ բեռները հազիվ թե պահպանված լինեն, բայց անմիջապես ընդառաջեցինք եւ համատեղ ջանքերով վերականգնեցինք սահմանագծի պայթեցված հատվածը: Դրանից անմիջապես հետո՝ 1992թ.-ի հունիսի սկզբին՝ կազմակերպվեց եռակողմ հանդիպում հայկական, իրանական եւ ադրբեջանական պատվիրակությունների մասնակցությամբ: Քննարկումը տեղի ունեցավ սահմանամերձ ուղեկալով: Ադրբեջանական պատվիրակությունը՝ գետերալ Բյազիմովի գլխավորությամբ, եկավ երկաթուղով՝ ոտքով: Մենք նրանց դիմավորեցինք սահմանագծին ու ուղեկցեցինք ուղեկալ: Գրավոր արձանագրվեց, որ բեռների տեղափոխման խոչընդոտները վերացված են, եւ որոշվեց՝ հաջորդ օրվանից սկսել բեռների տեղափոխումը: Հանդիպման ավարտին՝ մեր վաշտի մի քանի զինվորի ուղեկցությամբ, ճանապարհեցինք ադրբեջանական պատվիրակությանը, իսկ մենք՝ իրանական պատվիրակության հետ, մեքենաներով շարժվեցինք դեպի Մեղրի: Ուղեկալից հազիվ երկու հարյուր մետր էինք հեռացել՝ ադրբեջանական դիրքից սկսեցին մեզ ուժգին զնդակոծել: Այդ դիրքից մեր ճանապարհի մոտ 100 մետրանոց մի հատված էր տեսանելի: Բարեբախտություն էր, որ ոչ ոք չտուժեց: Գնդակոծության պահին ադրբեջանական պատվիրակությունը դեռ սահմանագծի չէր հասել: Ուղեկցող տղաները, սակայն, ռադիոկապով ցուցում ստացան շարունակել ուղեկցումը: Իրանական պատվիրակության ղեկավարն անմիջապես արձագանքեց. «Դուք ճիշտ էիք, ուրեմն Մինչեւանում ոչ մի բեռ էլ չի մնացել»:

Մեկ շաբաթ անց երկաթուղու կապով միացավ Նախիջեւանում տեղակայված ռուսական 75-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ Մարկելովը: Այն նույն դիվիզիայի, որը մինչեւ 1991 թ.-ի օգոստոսի 8-ը պաշտպանում էր Մեղրիի ադրբեջանաբնակ Նյուվադի գյուղի կենսագործունեությունն Ադրբեջանի կազմում: Նա խնդրեց օժանդակել, որ Մեղրիով տեղափոխեն սննդամթերքի դեֆիցիտ ունեցող դիվիզիայի Մինչեւանում մնացած մեկ վագոն պահածոն: Հաջորդ օրը նա իմ հյուրն էր, իսկ նրա մի քանի ենթակաները քարշակով շարունակեցին ճանապարհը Մինչեւան: Վերադարձան Նախատեսվածից շատ ուշ: Քաջքոցների էին ենթարկվել: Հազիվ էին գործը գլուխ բերել: Պատմեցին, որ, բացի իրենց պատկանող վագոնից, մնացած բոլոր վագոնները կանգնած

էին բաց դռներով՝ դատարկ: Սա Մեղրիով անցած վերջին գնացքն էր:

Երկաթուղու չգործելու հետեանքով Հայաստանը հայտնվեց խոր շրջափակման մեջ: Սկսվեց էներգետիկ ճգնաժամը: Առաջիկա ծմբը ծանր էր լինելու: Այդ ծմբան ընդառաջ էր, որ ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանը ուստիկանապետերի խորհրդակցություն հրավիրեց եւ իրեն հատուկ խորհմատությամբ արտասանեց ընդամենը մեկ նախադասություն. «Ձեր աշխատանքի գնահատման առաջին չափանիշը լինելու է այն, որ ձեր պատասխանատվության տարածքներում ցրտից ու սովից մարդ չմահանա»...

Լեւոն Տեր-Պետրոսյանի պաշտոնավարման շրջանում, Սյունիք հաճախակի այցելող առաջատար երկրների դեսպաններն առաջին հերթին հետաքրքրվում էին, թե արդյո՞ք պահպանվում է երկաթուղին: Ստանալով համոզիչ պատասխան, որ հնարավոր է Կապանից երկաթուղով՝ ազատագրված տարածքներով երթեւեկել Մեղրի՝ բավարարված հեռանում էին:

Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման շրջանում՝ 2003 թ. սկսած, ապամոնտաժվեց ողջ երկաթուղին՝ Կապանից մինչեւ Մեղրի: Նյուվադիի բարդ ու դժվարանցանելի ճանապարհի այլընտրանք կիսակառույց ճանապարհը շարունակելու փոխարեն՝ թույլատրեցին մեքենաների երթեւեկը քանդված երկաթուղու Շվանիձոր-Նյուվադի հատվածի հարթակով:

Մերժ Սարգսյանի պաշտոնավարման ընթացքում, Նախ, Ագարակի կոմբինատի հիմնականում չգործող՝ ցուցադրական Նպատակներով կառուցված հետադարձ ջրամատակարարման խողովակաշարը հատվածաբար անցկացվեց երկաթուղու հարթակով:

2015-2016 թթ. կառուցվեց դեռ 1996 թ.-ից նախագծվող Մեղրի գետից ջրընդունմամբ Արաքսի հովտի գյուղատնտեսական նշանակության հողերի ինքնահոս ոռոգման ծրագրի ծախսակողմյան ճյուղը: Սակայն, այլընտրանքի առկայության պայմաններում, Լեւոնից գյուղից մինչեւ Նյուվադի ձգվող խողովակաշարի հիմնական մասը անցկացվել է երկաթուղու առանցքով:

Վերջին ամիսներին իրականացվում է Մեղրիի մաքսային կետից սկսած՝ Արաքսի ափով երկաթուղու հարթակին զուգահեռ ձգվող միջպետական ճանապարհի 7-8 կմ հատվածի անիմաստ լուսավորության մի ծրագիր: Հավանաբար՝ արտաքին պարտքի բեռը ավելացնելու նպատակով: Այս ծրագրի լարման տրանսֆորմատորները ես տեղադրված են հենց երկաթուղու հարթակի վրա:

Հիմա կառուցվում է ինքնահոս ոռոգման վերոհիշյալ ծրագրի դեպի Ագարակ ձգվող աջակողմյան ճյուղը: Շուրջ 10 կմ երկարությամբ, մոտ 400 մմ տրամագծով խողովակաշարը ամբողջովին անցկացվում է երկաթուղու առանցքով:

Թե ինչու են այլընտրանքի առկայության պայմաններում կառուցապատումներն արվում երկաթուղու վրա՝ խոչընդոտելով երկաթուղու հետագա վերականգնումը, թող իշխանությունները բացատրեն:

Իսկ առաջատար երկրների դեսպանները շարունակում են հետաքրքրվել երկաթուղով... ●

ՎԵՐԱԿԱՌԱՅՈՒՄՆԵՐ

Արաքսի վրա Յայաստան-Իրան կամուրջը. ինչպես այն կառուցվեց



ԺՈՐԱ (ԳԵՎՈՐԳ)
ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

1 984 թվականից Խորհրդային Միությունում սկսված վերակառուցում-արագացում գործընթացն ազդարարում էր կայսրության փլուզումը:

Վերակառուցման բազում խնդիրներից մեկը միութենական հանրապետություններին լայն իրավունքներ տրամադրելն էր՝ հարևան երկրների հետ տնտեսական գործունեության և, հատկապես, սահմանային առևտուր ծավալելու ասպարեզում՝ այդ նպատակի համար օգտագործելով գոյություն ունեցող ցամաքային ճանապարհները, երկաթուղիները և հաղորդակցության այլ միջոցները:

Յայաստանի Հանրապետությունը, բնականաբար, իր տնտեսական գործունեությունը և առևտուրը կարող էր ծավալել ընդամենը երկու սահմանակից հարևան երկրների՝ Թուրքիայի և Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Սակայն այդ պահին Յայաստանի համար Թուրքիայի հետ միջպետական հարաբերությունների մեջ մտնելը կամ առևտրատնտեսական գործունեություն սկսելը պատմաբանական հայտնի պատճառներով գրեթե անհնար էր, չնայած Յայաստանը նրա հետ ուներ Լեինսական – Ղարս երկաթուղային կապը Ախուրյան կայարանի սահմանային հանգույցով, Մարգարայի կամուրջը՝ Արաքս գետի վրա:

Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանային առևտրի ծավալումը, ապագայում էլ միջպետական հարաբերություններ հաստատելը, շատ ավելի հեշտ էր:

Բայց այս բոլորով հանդերձ, որպեսզի սկիզբ դրվեր հարաբերությունների զարգացմանը, բացակայում էր դրա գլխավոր տարրերից մեկը՝ ճանապարհը: Յայաստանի Հանրապետությունը, Իրանի հետ սահմանակից լինելով հանդերձ, չուներ նրա հետ որևիցե կամուրջ, որով հնարավոր լիներ տնտեսական գործունեություն նախաձեռնել և իրականացնել: Յայաստանը, իհարկե, Իրանի և տեղի հայ համայնքի հետ միշտ էլ ունեցել է մշակութային, մարզական կապեր, իսկ տնտեսական, գիտատեխնիկական և այլ գործունեություններն իրականացրել են միայն միութենական գերատեսչությունները և տնտեսական խառը հանձնաժողովները:

Այդ հանձնաժողովներից մեկն էլ հենց կոչվում էր Խորհրդային Միության և Իրանի Իսլամական Հանրապե-

տության միջև տնտեսական հարաբերությունների կորդինացիոն միջպետական հանձնաժողով, որի՝ ԽՍՀՄ-ի կողմից նախագահն էր հաղորդակցության ճանապարհների նախարար Արկադի Կոներկը: Հիմնականում այդ հանձնաժողովի երաշխավորությունների միջոցով էր, որ նախապատրաստվում և իրականացվում էին Իրանի և Խորհրդային Միության միջև առևտրատնտեսական բոլոր գործարքները, որոնց միութենական հանրապետությունները չէին մասնակցում որպես առանձին երկրներ. դրանք կատարվում էին միութենական գերատեսչությունների կողմից որպես միութենական մենաշնորհ:

Եվ ահա այդ ժամանակ, երբ արդեն միության կառավարության նախագահ Նիկոլայ Ռիժկովի կողմից առաջադրվել ու հրապարակվել էր որոշում, որով թույլատրվում էր միութենական հանրապետություններին իրենց սահմանակից երկրների հետ սկսել առևտրատնտեսական գործարքներ, Յայաստան էր ուղարկվել Կոներկի գլխավորած խորհրդաիրանական հանձնաժողովի արձանագրությունը: Դրանում նշված էր, որ Թուրքմենիայի, Ադրբեջանի և Յայաստանի Հանրապետություններին, որոնք ընդհանուր սահման ունեին Իրանի հետ, իրավունք է վերապահում ինքնուրույն ծավալելու որոշակի առևտրական գործարքներ՝ օգտագործելով միջպետական ճանապարհները և հաղորդակցության այլ միջոցները: Իսկ Յայաստանի մասին գրված էր առանձին կետ. «...Հայկական ԽՍՀ-ը Իրանի Իսլամական Հանրապետության հետ չունի ցամաքային հաղորդակցության ճանապարհներ, ուստի և նա Իրանի հետ կարող է սկսել սահմանային առևտրական գործարքներ Ադրբեջանի և Թուրքմենիայի հանրապետությունների ցամաքային կամ ծովային ճանապարհների և հաղորդակցության այլ կապերի միջոցով»:

Արձանագրության այս կետը շատ ցավալի էր և թերևս բոլորից շատ էր դիպչում մեր ինքնասիրությանը, որովհետև ունենալով Իրանի հետ մոտ 49 կմ միջպետական սահման, դարձյալ պետք է հայտնվեինք խնդրողի դերում, հատկապես Ադրբեջանին, որը ժամանակին հանգամանքների բերումով տիրացել էր Զուլֆայի թե՛ երկաթուղային և թե՛ խճուղային հիանալի ճանապարհներին, որոնք ուղղակի կապ են ստեղծում Զուլֆա-Թավրիզ հատվածում: Եվ մենք թույլտվություն պետք է խնդրեինք, որ Յայաստանի առևտրական բեռները դեպի Իրան և հակառակը անցնեն նրանց տնօրինության տակ գտնվող սահմանային կետով: Իսկ եթե այդ խնդրանքը միութենական կառավարության մակարդակով ստանան իր լուծումները, այնուամենայնիվ, հայկական կողմին գոհացում տալ չէր կարող, որովհետև արդեն սկսվել էր որոշակի լարվածություն այդ գծի վրա. կարծեք թե մոտենում էր Ղարսբաղյան շարժման սկիզբը, ադրբեջանցիները անընդհատ քարկծում էին Երևան-Ղափան մարդատար գնացքը, ճանապարհային կանխամտածված միջադեպեր էին ստեղծում Երևանից Նախիջևանով դեպի Մեղրի գնացող ավտոբուսների վարորդների և ուղևորների հետ, պետավտոտեսչության աշխատակիցները կազմակերպում էին միտումնավոր ստուգումներ, թալանվում էին բեռները: Եվ չնայած միութենական իշխանությունների հավաստիացումներին, թե պատշաճ կարգ ու կանոն ստեղծելու նպատակով կկիրառվեն հսկողական միջամտություններ, այնուամենայնիվ, որոշակիորեն զգացվում էր, որ Նախիջևանի իշխանությունները կանխամտածված և մեթոդաբար թե՛ ժաջանում էին իրադրությունը, և հեռու չէր այն օրը, որ այդ հաղորդակցության ճանապարհը Յայաստանի համար առհասարակ կփակվի: Այդ պարագաներում Յայաստանում նույնպես աստիճանաբար համոզվում էին, որ Իրանի հետ լայն գործունեություն ծավալելու նպատակով իրականում այդ ճանապարհը անվտանգ և ապահով լի-



Նել չէր կարող:

Բայց Հայաստանի կառավարության կողմից պետականին, առևտրի նախարարությանը, Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդին կից արտաքին տնտեսական հարաբերությունների և Հայաստանի մաքսային ծառայության բեռնափոխանակության վարչություններին արդեն տրվել էին համապատասխան ցուցումներ՝ նախապատրաստվելու և նույնիսկ ներկայացնելու արտասահման ենթակա ապրանքների հայտերը: Եվ այդ ողջ գործողության պատասխանատվությունը դրվել էր պետականի նախագահի առաջին տեղակալ Մարատ Էդիպյանի վրա: Սկզբնական շրջանում հարցի իրականացումը թվացել էր շատ դյուրին, կարծում էին, ահա-ահա կսկսվի բեռներով բարձած քարավանների անցուդարձը, նույնիսկ ճշգրտվում էին առաքման ենթակա ապրանքների ցուցակները: Բայց երբ սկսել էին առնչվել իրական գործողություններին, հետզհետե համոզվել էին, որ այդ հարցերի լուծումը կապված է բազմաթիվ դժվարությունների հետ:

Նախ և առաջ, սեփական արտաքին առևտուր ունենալու համար պետք է ունենալ սեփական արտաքին հարաբերություններ ընդհանրապես և ծանոթ լինել նրա վարման կարգերին մասնավորապես, ինչն այդ ժամանակ Հայաստանը իրականում ունենալ չէր կարող: Չնայած այն բանին, որ դեռևս Հայրենական պատերազմի վերջերին, ավելի ճիշտ, 1944 թ. փետրվարի 1-ին արտաքին գործերի նախարար Վյաչեսլավ Մոլոտովի առաջարկությամբ միութենական հանրապետություններին թույլատրվել էր արտաքին գործերի և պաշտպանության նախարարություններ, ինչը հաստատվել էր գերագույն խորհրդի կողմից, այնուամենայնիվ, այդ գերատեսչությունների ստեղծումը և առկայությունը ավելի շուտ կրում էին ձևական կամ, ավելի ճիշտ, քարոզչական բնույթ. նրանք իրավասու չէին ստեղծելու և վարելու իրական արտաքին հարաբերություններ: Արտաքին քաղաքականության, ար-

տաքին տնտեսական հարաբերությունների ողջ համալիրը գտնվում էր միութենական ենթակայության տակ, և ցանկացած փոքր թե մեծ խնդիր լուծելու համար, թեկուզև դա վերաբերեր անմիջական սահմանային պետությանը, միևնույնն էր, բոլոր գործողությունները պետք է կատարվեին միայն Մոսկվայի միջոցով:

Սահմանային երկրի հետ առևտրատնտեսական հարաբերություններ սկսելու երկրորդ բարդությունը կապված էր պետական սահմանը հատելու խնդրի հետ: Այստեղ հարցը էլ ավելի էր բարդանում, որովհետև ողջ սահմանի պաշտպանությունը դրված էր միութենական սահմանապահ զորքերի վրա, որոնք անմիջապես ենթարկվում էին պետական անվտանգության կոմիտեին, իսկ մաքսային ծառայությունը ենթարկվում էր միութենական մաքսային վարչությանը:

Եվ ահա, առաջացել էր խնդիր՝ ինչից սկսել և, որ ամենակարևորն էր, ինչպես սկսել: Չէ՞ որ հարևան պետության հետ առևտրատնտեսական հարաբերությունների ստեղծումը, որի իրավունքը միութենական կառավարության կողմից արդեն տրված էր, ինքնըստինքյան խիստ կարևոր գործ էր, պետք էր անհապաղ օգտվել այդ առիթից: Մասնավորապես որ Հայաստանում խիստ զգացվում էր արտաքին առևտրի ծավալման անհրաժեշտությունը, գիտակցվում էին ապրանքափոխանակության շահավետությունը, նրա որոշակի դերը հանրապետությանը լայն սպառման ապրանքներով ապահովելու և հումքի ու արտադրանքի ներմուծման խնդիրները կարգավորելու գործում:

Բայց, եթե անգամ հնարավոր լիներ միութենական գերատեսչությունների հետ համաձայնեցնել առաջացած բոլոր հիմնահարցերը, միևնույնն էր, չկար ամենազխալորը՝ այն կապող ճանապարհը, որի վրայով պետք է սկսվեր մեր սեփական ապրանքաշրջանառությունը Իրանի հետ:

Եվ ահա այդ ժամանակ (1967 թ.), երբ ես՝ տողերիս հեղինակը, գործուղման մեջ էի Մոսկվայում, մի առիթով ծանոթացա Իրանում խորհրդային դեսպանատան առաջին

ՇԱՐՈՐԴԱԿԱՅԻՆ ՈՒՐԻՆԵՐ



քարտուղար Ալեքսանդր Շոյտովի հետ: Իմանալով, որ ես տեխնիկական գիտությունների թեկնածու եմ և տիրապետում եմ պարսկերենին, առաջարկեց կազմել ռուս-պարսկերեն պոլիտեխնիկական բառարան:

Բառարանի կազմման աշխատանքները տևեցին մոտ վեց տարի, և այն լույս տեսավ 1973 թ. Մոսկվայում «Սովետսկայա Էնցիկլոպեդիա» հրատարակչության կողմից, որը Աֆղանստանի հայտնի դեպքերի կապակցությամբ վերահրատարակվեց 1984 թ. այս անգամ արդեն «Ռուսկի յազիկ» հրատարակչության կողմից և տպաքանակի մեծ մասը ուղարկվեց Աֆղանստան:

Բառարանի վրա աշխատելու տարիներին կամա թե ակամա պետք էր հիմնովին ծանոթանալ Իրանի գիտատեխնիկական գրականության, արդյունաբերության, շինարարության և, առհասարակ, այդ երկրի տնտեսության հետ և ինչ-որ չափով տեղյակ լինել նաև քաղաքական անցուդարձին: Եվ դա էր հիմնական պատճառը, որ արդեն 1987-ի վերջերին, երբ սկզբնավորվում էին Նոր մոտեցումներ Իրանի հետ կատարվելիք առևտրատնտեսական քաղաքականության մեջ, տողերիս հեղինակը չէր կարող անտարբեր նայել կատարվող տեղաշարժերին և պետք էր օգտագործել այդ տարիներին կուտակված Իրանին վերաբերող գիտելիքները և փորձը Չայաստանին ինչ-որ չափով օգտակար լինելու համար: Հենց այդ ժամանակ էր, որ ես որոշեցի ստեղծել նախաձեռնող խումբ, որի առաջին և գլխավոր նպատակը պետք է լիներ ուսումնասիրել և առաջարկություններ կառավարությանը՝ Մեդրու շրջանում Արաքս գետի համապատասխան մասում տարանցիկ կամրջի կառուցման վերաբերյալ, կամուրջ, որի առկայության դեպքում դյուրին կղաճախին մնացած խնդիրների լուծումները: Այդ փոքրիկ նախաձեռնող խումբը սկզբից բաղկացած էր երկու հոգուց՝ ես և պոլիտեխնիկական ինստիտուտի կամրջաշինության ամբիոնի վարիչի տեղակալ, դոցենտ Ալբերտ Ավետիսյանը: Իսկ որոշ ժամանակ անց մեր նախաձեռնող խմբին միացավ նաև

Թեման Տեր-Պետրոսյանը:

Մեր գործունեությունը սկսվեց նախնական փաստաթղթերի և առկա հնարավորությունների ուսումնասիրությունից: Մենք պետք է մեկնեինք Մեդրի՝ տեղանքը ուսումնասիրելու և նախնական առաջարկությունների փաթեթը կազմելու և ներկայացնելու համար: Բայց հենց այդ ժամանակ տեղի էր ունեցել ադրբեջանցիների կողմից սանձազերծված սուվագայիթյան ռճրագործությունը, և իր ողջ թափով սկսվել էր դարաբաղյան շարժումը: Երևանից Մեդրի գնալու համար ճանապարհի Գորիս-Ղափան-Մեդրի հատվածը դարձել էր խիստ վտանգավոր: Շատ դժվարությամբ էին լուծվում կամ երբեմն Նույնիսկ չէին լուծվում իրավական հարցերի վերաբերող խնդիրները՝ այնպիսիք, ինչպիսիք են սահմանին մոտենալու, փշալարերից այն կողմ դիտարկելու, առավել ևս չափումներ կատարելու թույլտվությունները, անցագրերի ձևակերպումները և այլն: Նույնիսկ Երևան-Բաքու գնացքով մեկնելիս գետի ափերին մոտիկ տեղերում վագոնների երկու դռների վրա միշտ կանգնում, ուղեկցում և հսկում էին երկու ավտոմատավոր սահմանապահ զինվորներ: Պետական և զինվորական բարձրաստիճան ղեկավարներից բացի, ոչ ոք սահմանին մոտենալու թույլտվություն չէր ստանում: Իսկ եթե խիստ անհրաժեշտություն առաջանար, ապա մարդկանց բնութագրող փաստաթղթերը այնքան շատ էին, որ երբեմն ուզում էիր հրաժարվել առհասարակ անցագիր ստանալու պահանջից:

Եվ այսպես ողջ 1988 թիվն անցավ միայն տարբեր փաստաթղթերի ձևակերպումների, կառավարության կողմից Մոսկվայի հետ կապված հարցերի համաձայնեցման, վաճառքի՝ ենթադրող ապրանքների ցուցակների ճշման, անցաթղթերի ձևակերպման և այլ մեծ ու փոքր հարցերի լուծման վրա:

Բայց, այնուհանդերձ, մեզ հաջողվեց 1989 թ. գարնան սկզբին մեկնել Մեդրի՝ նախնական բանակցությունների և համաձայնությունների ձեռքբերման համար: Եվ ահա

առաջին անգամ անցնելով Մեղրու լեռնանցքով, մենք համոզվեցինք, թե որքան բարդ լեռնային ճանապարհ է Հայաստանի այդ հատվածը՝ համեմատած Երևան-Նախիջևան-Զուլֆա-Օրդուբադ-Մեղրի՝ Արաքսի հովտի հարթավայրային ճանապարհի հետ:

Մեր այդ առաջին ուղևորության ընթացքում Մեղրու շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Ռոբերտ Մեհրաբյանի աջակցությամբ կարողացանք ծանոթանալ Մեղրու կիրճի հետ, որովհետև հենց սկզբից ենթադրվում էր, որ այդ կիրճում, Արաքս գետի վրա պետք է տեղադրվի Հայաստանի և Իրանի միջև առաջին միջպետական տարանցիկ կամուրջը:

Մեղրու կիրճի տեղանքին նախնական ծանոթանալուց և հետագա աշխատանքները շարունակելու նպատակով ձեռք բերված համաձայնություններից հետո մենք վերադարձանք Երևան, որտեղ պետական մարմինների և ներկայացրինք նախնական առաջարկությունները:

Կամրջի կառուցման ենթադրվող տեղի ուսումնասիրությունները շարունակելու նպատակով 1989 թ. մայիսի 14-ին մեր նախաձեռնող խումբը, որին արդեն գործուն մասնակցություն էր ցուցաբերում «Հրազդանմեքենա» արտադրական միավորման գլխավոր տնօրենի պաշտոնից հանիրավի տեղափոխված և այդ ժամանակ Երևանի «Էլեկտրոն» գործարանի տնօրենի տեղակալի պաշտոնը զբաղեցնող Թեյման Հակոբի Տեր-Պետրոսյանը, որը միաժամանակ ԽՍՀՄ դիրեկտորատների խորհրդի անդամ էր, կրկին մեկնեց Մեղրի:

Եկանք ընդհանուր համաձայնության, որ մեր խմբի անդամներին կթույլատրեն մոտենալու սահմանային բոլոր կետերին, որտեղ մենք կցանկանանք կատարել ուսումնասիրություններ, ընդհուպ մինչև ջրի ափը, անհրաժեշտության դեպքում և անհարկի միջադեպերից խուսափելու համար կկապվեն իրանական կողմի ուղեկալների հետ, և մի քանի գինվորներ կառանձնացվեն մեզ ուղեկցելու և օգնելու համար:

Առաջին օրը մենք ոտքով անցանք Ագարակ ավանի ներքևի մասից գետի ձախ ափով, որտեղ Մեղրու կիրճի և Արաքսի ամենանեղ հատվածն է մինչև Մեղրի-Ագարակ ճանապարհի հատման կետը, որովհետև գետի այդ հատվածի երկու կողմն էլ բավականաչափ լայն են, իսկ ջրի հոսքը՝ համեմատաբար դանդաղ:

Ծանոթանալով Արաքս գետի հիմնական պարամետրերի հետ՝ մեր խմբի անդամ Ալբերտ Ավետիսյանը կատարեց նախնական անհրաժեշտ գրառումները:

Այդ օրը պետական անվտանգության կոմիտեի աշխատակցի օգնությամբ և միջնորդությամբ մեզ տրամադրեցին ողջ տեղանքի և Արաքս գետի աջ և ձախ ափերի երկրաբանական և գեոդեզիական քարտեզները, սեյսմաբանության և գետի առավելագույն բարձրացման նիշերը, որոնք բնորոշ են լեռնային գետերին, հարակից շինությունների պլանները, տեղեկություններ՝ այդ շրջանում Արաքսի մեջ թափվող գետակների մասին և այլ փաստաթղթեր:

Զուլֆա-Մեղրի հատվածի սահմանային պաշտպանության գործերի խմբի հրամանատար գնդապետ Ռակովիչի կարգադրությամբ Կարճևան կայարանի դիմաց Արաքսի ափերի երկու կետերում մենք նորից ընդհուպ մոտեցանք Արաքսի ափին: Ուսումնասիրելով ողջ տեղանքը, բարձրությունները, իրանական կողմի ճանապարհի և նրանց ուղեկալի պոստի դիտակետի մոտիկությունը՝ կատարեցինք բազմաթիվ գրառումներ:

Մեզ տրամադրված քարտեզներից և պլաններից Ալբերտ Ավետիսյանը վերցրեց այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ էին կազմելու կամրջի նախնական սխեման, նրա կառուցման վայրը և երկրաբանագեոդեզիական այլ տվյալներ: Եվ երբ մենք վերադարձանք Երևան, կազմե-

ցինք կամրջի ու նրա տեղանքի նախնական սխեման և մնացած փաստաթղթերի հետ ներկայացրինք պետպլանին:

Այստեղ ի պատիվ Ալբերտ Ավետիսյանի, անհրաժեշտ է նշել, որ կամրջի կառուցման տեղի նրա ընտրությունը այնքան ճշգրտորեն էր կատարված, որ մեր հետագա բոլոր բանակցությունների ընթացքում թե՛ ժամանակավոր և թե՛ հիմնական կամուրջների տեղերին վերաբերող հարցերում այն համարյա ոչ մի անգամ փոփոխության չենթարկվեց:

Երևանում դարձյալ երկար ձգձգվեց Մեղրու կամրջի կառուցման քննարկումը: Անընդհատ ճշգրտվում էին արտահանման ենթակա ապրանքների ցուցակները: Կամրջի կառուցումը անտեղի կապում էին առհասարակ Մեղրու շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հետ: Իսկ կառավարությունը 1989 թ. նոյեմբերին հանձնարարել էր պետպլանին և մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների՝ կազմելու մի ծավալուն փաստաթուղթ, որը կոչվում էր «Մեղրու շրջանի տնտեսության ամրապնդման և հետագա սոցիալական զարգացման միջոցառումների մասին»:

Այս որոշման նախագծի կազմման մեջ էլ ամնասն չէր մեր նախաձեռնող խումբը: Մասնավորապես խմբի անդամ Թեյման Տեր-Պետրոսյանը անընդհատ կապի մեջ էր նախարարների խորհրդի նախագահ Վլադիմիր Մարգարյանի և, մասնավորապես, նրա առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանի հետ: Այդ որոշման հատկապես 6-րդ կետը և այն կետերը, որոնք կազմված էին ճանապարհների և տրանսպորտի զարգացման հետ, խմբագրված էր մեր ներկայացուցչի կողմից:

Մեղրու շրջանը խորհրդային իշխանության ողջ ժամանակաշրջանում, համարվելով Հայաստանի հարավում «հեռու ընկած» մի շրջան, երբեմն պատշաճ վերաբերմունքի չի արժանացել՝ զարգացնելու իր տնտեսությունը, չեն կառուցվել հարմարավետ ճանապարհներ, օդանավակայան, գազամուղ, և դրա համար էլ, կարծես թե այդ փաստաթուղթը իրոք տեղին էր և անհրաժեշտ: Սակայն այնքան ծավալուն աշխատանքներ էին նախատեսված այդ փաստաթղթում (լքյալ գյուղերի վերականգնում, Լիճք-Քաջարան ավտոտրանսպորտային թունելի կառուցում, բնակարանային շինարարություն, գյուղատնտեսության զարգացում, ճանապարհների վերակառուցում և ընդլայնում, օդանավակայանի գործարկում, գազիֆիկացում և այլ), որ կամրջի հարցը փաստորեն կորել էր այդ ծով հարցերի մեջ: Մինչդեռ կամրջի խնդիրը պետք է առանձնացվեր և լիներ ամենաառաջին տեղում, քանզի նրա կառուցման հետ էր կապված շրջանի տնտեսական զարգացման հիմնական հեռանկարը:

Մենք ստիպված նորից եղանք պետպլանում, բացառությունք հարցի հրատապությունը թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական առումներով և խնդրեցինք, որ կամրջի հարցը առանձնացվի շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր պլանից:

1989 թ. դեկտեմբերի 29-ին պետպլանում հրավիրվեց կամրջի վերաբերյալ հատուկ խորհրդակցություն, որի օրակարգն էր՝ «Մեղրու շրջանով Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանամերձ առևտրի կազմակերպման և Արաքս գետի վրայով տարանցիկ կամրջի կառուցման առաջարկությունները»: Այդ խորհրդակցությունում, որին հրավիրված էին մեր խմբի անդամները, ինչպես նաև պետպլանի բոլոր օղակների ղեկավար աշխատողներ, պետշինի և այլ գերատեսչությունների աշխատակիցներ: Ելույթներ ունեցան նաև մեր խմբի անդամներ Թեյման Տեր-Պետրոսյանը և Ալբերտ Ավետիսյանը: Խորհրդակցությունում հանգամանորեն քննարկվեցին թե՛

սահմանային առևտրի և թե՛, հատկապես, կամրջի հետ կապված հիմնահարցերը:

Մեղրու շրջանում Արաքս գետի վրա կամուրջ կառուցելու մեր նախաձեռնությունները, իհարկե, միակողմանի չէին: Իրանական իշխանությունները, զգալով հայկական կողմի խիստ շահագրգռվածությունը այս հարցի վերաբերյալ, իրենք նույնպես սկսել էին հետաքրքրվել և որոշակի դրական տրամադրվածություն ցուցաբերել այդ գաղափարին: Մասնավորապես նախարարների խորհրդում տեղեկություն էր ստացվել այն մասին, որ Մոսկվայում Իրանի դեսպանությունը ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությանը արդեն տեղեկություններ էր ներկայացրել իրանական կողմի մտադրությունների մասին և առաջարկել էր այդ հարցի քննարկման իրենց տարբերակը: Նրանք մասնավորապես առաջարկել էին, որ քննարկվի ոչ միայն Մեղրու կամրջի կառուցման հարցը, այլև, առհասարակ, խորհրդախորանական սահմանային Արաքս գետի վրա լրացուցիչ կամուրջներ ունենալու խնդիրը: Եվ հենց դրանից հետո էր, որ Մոսկվայում կարծիքների փոխանակության և համապատասխան բանակցությունների արդյունքում հրապարկվեց ԽՍՀՄ նախարարների խորհրդի Նախագահ Նիկոլայ Ռիժկովի հայտնի հուշագիրը (որը հայտնի էր որպես Ռիժկովի մեմորանդում) Արաքս գետի վրա վեց անհրաժեշտ կամուրջներ ունենալու մասին, որից չորսը գոյություն ունեին, իսկ մնացած երկուսը պետք է կառուցվեին՝ մեկը Հայաստան-Իրան, մյուսը՝ Ադրբեջան-Իրան սահմանային կետերում:

Այս բոլոր լուրերը ոգևորել էին, իհարկե, նաև Իրանի մեր հայրենակիցներին, որոնք միշտ փայփայել են այն հույսը, որ իրենց հայրենիքը վերջապես կունենա իր միջպետական ճանապարհները դեպի Իրան, որը ոչ միայն կհեշտացնի հայ-իրանական տնտեսական, մշակութային և հոգևոր կապերը, այլև կնպաստի հայապահպանությանը, և որ իրենք ամենուրեք հպարտությամբ կներկայացնեն իրենց ազգային պատկանելությունը:

Իսկ Իրանի իշխանություններն էլ իրենց հերթին այդ ժամանակ որպես բարի կամքի դրսևորում Երևան էին գործողել Իրանի խորհրդարանի (Մեջլիսի) հայազգի պատգամավոր Արտավազ Բաղումյանին, որը հանդիպել էր այդ ժամանակվա կառավարության նախագահ Վազգեն Մանուկյանի հետ բանակցություններ էր վարել կառավարության անդամների հետ:

Դրանից հետո, այդ նույն նպատակով Երևան ժամանեց իրանահայ մեր հայրենասեր ազգակիցներից ևս մեկը՝ պրն Լևոն Ահարոնյանը: Նա ԽՍՀՄ «Տեխնոպրոմէքսպորտ» ընկերության հրավերով Իրանի կառավարական մարմինների կողմից պաշտոնապես գործողվել էր խորհրդային Միություն և այնտեղից եկել էր Հայաստան՝ հատկապես իր անձնական նախաձեռնությամբ ծանոթանալու մեր ճանապարհներին, դրանց տեխնիկական հնարավորությունների և Իրան-Հայաստան կապի հնարավոր միջոցների ստեղծման խնդիրներին:

Մեր հանդիպումը պրն Ահարոնյանի հետ տեղի ունեցավ Երևանում, «ԱՆԻ» հյուրանոցում: Մինչ այդ նա արդեն հանդիպել էր վարչապետ Վազգեն Մանուկյանի և կառավարության մի քանի անդամների հետ: Վարչապետի կարգադրությամբ Լևոն Ահարոնյանին և Թելման Տեր-Պետրոսյանին Մեղրիում ծանոթացրել էին կամրջի կառուցման վերաբերյալ ձեռնարկվող միջոցառումներին: Հայկական կողմից նրանց ուղեկցել էր ավտոմոբիլային ճանապարհների կառուցման և շահագործման հանրապետական միավորման գլխավոր մասնագետ Ռուդիկ Աթաբեկյանը: Ես նրան մանրամասն ծանոթացրեցի մեր նախնական գործողություններին և այն իրադրությանը, որ առկա էր Հայաստանում:

Պրն. Ահարոնյանին մասնավորապես խնդրեցի նաև Թեհրան վերադառնալուց հետո, օգտագործելով թե՛ իր և թե՛ կառավարական շրջանակներում ազդեցություն ունեցող մեր հայրենակիցների հնարավորությունները, նպաստել կամրջի վերաբերյալ որոշումներ ընդունելու և կառուցումն արագացնելու գործընթացին:

Եվ իրոք, պրն Ահարոնյանը վերադառնալով Թեհրան, կազմեց մի ծավալուն զեկուցագիր՝ «Հայաստանի տնտեսական ճանապարհները և նրա ստրատեգիական դիրքը հարավային Կովկասում» թեմայով և հանձնեց Իրանի արտաքին գործերի նախարարությանը և առևտրական պալատի, արդյունաբերական և օգտակար հանածոների վարչության գրասենյակի ղեկավարությանը, որը պատշաճ գնահատականի արժանացավ Նշված գերատեսչությունների կողմից:

Պարոն Ահարոնյանը այնուհետև էլ շարունակեց իր անվերապահ օժանդակությունը մեր հանձնախմբին, և Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի հայ պատգամավորներ Վարդան Վարդանյանի և Արտավազ Բաղումյանի հետ համախորհուրդ կամրջի կառուցման անհրաժեշտությունը հիմնավորելու ուղղությամբ աշխատանքներ կատարեցին պետական շրջանակներում: Պարոն Լ. Ահարոնյանի ներկայացրած զեկուցագիրն շուտով արձագանքեցին Իրանի պետական և գործարար շրջանները:

1991 թ. սկզբներին Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերության պալատի և հայ-իրանական գործարար համագործակցության ընկերության հրավերով Հայաստան ժամանեց և փետրվարի 15-ից 20-ը առևտրի և արդյունաբերության ղեկավարների հետ հանդիպումներ ունեցավ Իրանի Իսլամական հեղափոխության ընչազուրկների և պատերազմներից տուժածների՝ «Մոսթազաֆին Վա Ջանբազան» օգնության բարեգործական ֆոնդի պատվիրակությունը կազմակերպության արդյունաբերության և օգտակար հանածոների վարչության փոխնախագահ Ֆարիբորզ Շաբանիի գլխավորությամբ:

Սա Հայաստանի Հանրապետության՝ 1990 թ. օգոստոսին ընդունված անկախության հռչակագրից հետո Իրանի Իսլամական Հանրապետությունից ժամանած առաջին պաշտոնական պատվիրակությունն էր, որի մեջ ընդգրկված էին նաև մեր հայրենակիցներից Ռուբեն Կարապետյանը, Վիգեն Ասլանյանը և Ռոբերտ Կարապետյանը: Այնուհետև նրանց էր միացել նաև Նորայր Շահբազյանը:

Այդ խորհրդակցությանը հրավիրված էինք նաև մենք՝ Մեղրու կամրջի նախաձեռնող խմբի ներկայացուցիչներն՝ տողերի հեղինակը և Թելման Տեր-Պետրոսյանը:

Մենք Իրանից ժամանած պատվիրակներին մանրամասն ծանոթացրինք կամրջի կառուցման հետ կապված հիմնախնդիրների հետ: Նշեցինք, որ առանց ցամաքային հարմարավետ ճանապարհների անհնար է իրագործել այն նպատակները, որի համար էլ մասնավորապես ժամանել են մեր իրանցի բարեկամները: Համամիտ լինելով մեր մտքերին պրն Շաբանին և պատվիրակության մյուս անդամները հավաստիացրին, որ հայրենիք վերադառնալուց հետո իրենք լօգտագործեն այն բոլոր լծակները և հնարավորությունները, որով օժտված է իրենց կազմակերպությունը (որն, ի դեպ, մեծ հեղինակություն է վայելում և շատ մեծ ազդեցություն ունի Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի և Կառավարական մարմինների շրջանում), որպեսզի ճանապարհի հարթեն արդեն միջպետական մակարդակով կամրջի և նրան հարակից ճանապարհների կառուցման՝ համապատասխան որոշումները ընդունելու համար:

Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչեց 1991 թ. դեկտեմբերի 25-ին: Եվ հենց դրանից քիչ ժամանակ անց, այսինքն՝ 1992 թ. փետրվարի 8-ին պաշտոնական այցով Իրան ժամանեց ՀՀ կառավարական պատվիրակությունը: Արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը և Իրանի արտաքին գործերի նախարար Ալի Աբբաս Վելայթին ստորագրեցին հռչակագիր Իրանի և Հայաստանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ ստեղծելու և Թեհրանում ու Երևանում մեկ ամսվա ընթացքում դեսպանություններ բացելու վերաբերյալ:

Հռչակագրում առանձնապես նշվել էր սահմանային կապեր և միջպետական ճանապարհներ ստեղծելու անհրաժեշտությունը: Ստորագրվեցին նաև համաձայնագրեր երկու երկրների միջև տրանսպորտային փոխադրումների, սահմանային Արաքս գետի վրա կարճ ժամկետում կամրջի կառուցման և այլ հաղորդակցությունների ճանապարհով համագործակցության վերաբերյալ: Այդ փաստաթղթերը ստորագրեցին նոր նշանակված ՀՀ տրանսպորտի և հաղորդակցության նախարար Հենրիկ Քոչինյանը և Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների և հաղորդակցության նախարար Սայիդի Քիային:

Հիշյալ համաձայնագրի ստորագրումից հետո Մեղրու կամրջի կառուցման բոլոր գործողությունները բնականաբար պետք է անցնեին Հայաստանի նոր կառավարության տնօրինությանը: Այդպես էլ եղավ: Դրանից հետո այդ հարցի կապակցությամբ պատվիրակությունների հրավերները, հանդիպումները, փաստաթղթերի ձևակերպումները, պայմանագրի կնքումը, նախագծային և շինարարական բոլոր աշխատանքները սկսեցին կատարվել կառավարական մարմինների միջոցով և նրանց հսկողության ներքո: Նախորդող տարիների անորոշությունը և սեփական կառավարության բացակայությունն էր, որը ստեղծել էր անհրաժեշտություն՝ ունենալու նախաձեռնող խումբ այդ նպատակները իրագործելու համար: Բայց քանի որ արդեն ձևավորվել էր Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կար համապատասխան նախարարություն, ուստի և պետք էր կամրջի կառուցման տնօրինությունը դրվեր պաշտոնական մարմինների վրա: Բայց, այնուհանդերձ, նախաձեռնող խումբը, որը տարիների ընթացքում շոշափելի փորձ էր կուտակել կամրջի կառուցմանը վերաբերող հարցերում, շարունակեց իր աշխատանքը՝ ընդգրկվելով արդեն պետական պատվիրակությունների կազմում և մասնակցելով հետագա բոլոր բանակցություններին: Դեռ ավելին: Երբ 1991 թ. վերջերին ստեղծվեց Հայաստանի և Իրանի միջև տնտեսական համագործակցությունների կոորդինացման պետական հանձնաժողովը, մեր խմբի երկու անդամներ, տողերիս հեղինակը և Թելման Տեր-Պետրոսյանը ընդգրկվեցին այդ հանձնաժողովի կազմում և շարունակեցին գործունեությունը արդեն ոչ միայն կամրջի կառուցման, այլ բոլոր այն հարցերում, որոնք առնչվում էին հայ-իրանական տնտեսական և այլ ոլորտների համագործակցությանը:

Հայ-իրանական հարաբերությունների զարգացմանը նոր թափ հաղորդվեց հատկապես Իրանի արտաքին գործերի նախարար Վելայթինի Հայաստան կատարած առաջին այցից հետո: 1992 թ. փետրվարի 28-ին նա ժամանեց Երևան: Նրան ընդունեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Ինչ խոսք, արև Վելայթինի առաջին հերթին Անդրկովկաս էր ժամանել միջնորդական առաքելության շրջանակներում դարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման հնարավորությունները ուսումնասիրելու և քաղաքական նախաձեռնությունների շուրջ փոխըմբռնման եզրեր գտնելու նպատակով: Նախարարը այդ հանդիպ-

ման ժամանակ, ի թիվս այլ հարցերի, կարևորեց նաև Իրանի համար Հայաստանի որպես իր անմիջական և հուսալի հարևաններից մեկի հետ լուրջ հարաբերություններ ստեղծելու անհրաժեշտությունը: Տեղեկացնելով, որ առաջիկա օրերին Երևանում կբացվի ԻԻՀ դեսպանատունը, և կարճ ժամկետում կձևավորվեն լիարժեք դիվանագիտական կառուցվածքներ, Վելայթին նշեց, որ գործնական հարաբերությունների ոլորտում ոչ մի խոչընդոտ չի տեսնում, և այժմյանից արդեն կարելի է Մեղրու հատվածում ձեռնամուխ լինել ավտոճանապարհների շինարարությանը, լոջորեն քննարկել Իրան-Հայաստան գազատարի կառուցմանը, և երկաթուղու նախագծմանն առնչվող տեխնիկական խնդիրներ: Նա ավելացրեց նաև, որ Իրանը Հայաստանի համար կլինի աշխարհին հաղորդակցվելու ամենակարճ միջոցը, և վերջինիս այլևս չեն սպառնացում Հայաստանի շրջափակումները: Նա ասաց, որ մոտ ապագայում Հայաստան կայցելի մի պատվիրակություն, որը գործնական քայլեր կմշակի Իրանի և Հայաստանի միջև բեռնափոխանակումները ավելի արդյունավետ դարձնելու և Արաքս գետի ափերը կամրջելու ուղղությամբ:

Եվ իրոք, արդեն 1992 թ. մարտի 11-ին Երևան ժամանեց Իրանի հաղորդակցության ճանապարհների և փոխադրումների նախարարությունից 14 հոգուց բաղկացած պատվիրակությունը տրանսպորտի գծով փոխնախարար Սայիդ Նեժադիի գլխավորությամբ: Հայկական պատվիրակությունը գլխավորում էր տրանսպորտի և հաղորդակցության նախարար Հենրիկ Քոչինյանը: Պատվիրակությունները հենց սկզբից բաժանվեցին չորս խմբի: Առաջին խումբը պետք է բանակցություններ վարեր Արաքս գետի վրայով անցնող ինչպես հիմնական, այնպես էլ ժամանակավոր կամուրջների կառուցման հարցերով: Այս խմբի մեջ, բնականաբար, մասնակցում էր տողերիս հեղինակը, որը կատարում էր նաև թարգմանչի դեր, որովհետև չկային ոչ միայն հաստիքային թարգմանիչներ, այլև տվորակական թարգմանիչները դժվարանում էին կատարել տեխնիկական, շինարարական և այլ տերմինների թարգմանությունները:

Երկրորդ խումբը զբաղվում էր երկաթգծի շինարարության հնարավորությունների որոնումով: Քանի որ Երևան-Նախիջևան-Ջուլֆա-Թավրիզ երկաթգծը փակվել էր, և բացման հեռանկարներն էլ մոտ ապագայում չէին զգացվում, ուստի քննարկվում էր մի տարբերակ, թե ինչպես կարելի էր Մեղրիից երկաթգծի կառուցել կամ դեպի Երասխավան, կամ դեպի Ջերմուկ՝ հետագայում Մարտունի-Շորժա գծին միանալու պայմանով: Իսկ իրանական կողմը, որն, ի դեպ, ավելի շատ էր շահագրգռված երկաթուղային անմիջական կապ ունենալ Հայաստանի հետ, գտնում էր, որ Իրանի տարածքում երկաթուղագիծ պետք է կառուցվի ոչ թե Ջուլֆայից մինչև Մեղրի, որի հեռավորությունը 64 կմ էր, և որը կանցներ Արաքսի ափերով և Նախիջևանի կողմից վտանգի ենթարկման հավանականություն ուներ, այլ այդ գիծը նպատակահարմար էր կառուցել Ալամդար քաղաքից մինչև Մեղրի 45 կմ երկարությամբ, որը գալիս է երկրի խորքից և չի անցնում սահմանամերձ ճանապարհներով:

Այս հարցը մյուս հարցերի համեմատությամբ թերևս շատ ավելի բարդ էր այն պատճառով, որ հատկապես Հայաստանի տարածքում բարդ ռելիեֆային պայմանների պատճառով այդ գծի ստեղծումը պահանջում էր հսկայական միջոցների ներդրում: Իսկ ինժեներատեխնիկական տեսակետից նրա լուծումները ևս կապված էին մի շարք բարդությունների հետ: Չէ՞ որ Մեղրուց մինչև Ելփի-Նի բարձունքը հասնելը 220 կմ-ի վրա գիծը պետք է բարձրանար մոտ 1500մ: Այդ պատճառով էլ՝ հարցի քննարկումը վերջնական եզրահանգումներ չունեցավ, չնայած որ

րական համապատասխան ճյուղերի ձեռնարկությունների տնօրեններից, արդյունաբերության նախարարության ղեկավարներից և մեր խմբի անդամներից: Մեր ներկայությունը այդ պատվիրակության կազմում նպատակամղված էր ոչ այնքան ցուցահանդեսի աշխատանքների կազմակերպմամբ և մասնակցությամբ, որքան պատեհ առիթ էր, որ մենք իրանական ներկայացուցիչների հետ ստուգենք Ջուլֆա-Նորդուզ ճանապարհահատվածի վիճակը և վերականգման աշխատանքների ընթացքը:

Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ 1992 թ. ապրիլի 15-ին Թեհրանի միջազգային ցուցահանդեսների սրահներից մեկում, որի բացման արարողությանը մասնակցելու համար ժամանել էին Իրանի առևտրական պալատի, ծանր արդյունաբերության նախարարության ներկայացուցիչները, մեջլիսի պարսիկ և հայ պատգամավորները, հայ համայնքի ներկայացուցիչները:

Բացման հանդիսավոր արարողությունից հետո սկսվեց մեր ներկայացուցիչների հանդիպումները Իրանի գործարար շրջանների, վաճառականների, կառավարության այլ գերատեսչությունների հետ:

Չնայած այդ ցուցահանդեսին Հայաստանը ներկայացրել էր սահմանափակ քանակությամբ արդյունաբերական ապրանքներ, այնուամենայնիվ, հետաքրքրությունը բավական մեծ էր հատկապես ներկայացրած էլեկտրատեխնիկական սարքերի և նրանց պատրաստման տեխնոլոգիայի նկատմամբ: Մեր մասնագետները և բացատրություններ, և սպառիչ պատասխաններ էին տալիս դիմողներին: Մայրաքաղաքի մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը նույնպես հաղորդումներ հրապարակեցին մեր ցուցահանդեսի մասին:

Իսկ մենք հիմնականում ժամանել էինք կամրջի հարցով և հենց առաջին օրվանից սկսեցինք մեր հանդիպումները խնդրի առևշվող այն լիազոր ներկայացուցիչների հետ, որոնք մեզ հետ պետք է մեկնեին Ջուլֆա-Մեղրի հատվածի դիտարկման համար: Այս լիազոր ներկայացուցիչների կազմում էին պրն Դաստղեյան, որը կառավարության կողմից մասնակցում էր այդ առաքելությանը և բավական ազդեցություն ուներ խորհրդարանական շրջաններում, տրանսպորտային բեռնափոխադրումների ներկայացուցիչ պրն Անոն Ահարոնյանը և պրն Հաջի Աբդուլլահ Ռուդաբին, թեև սկզբնական շրջանում պարզ չէր վերջինիս պաշտոնական դիրքը: Սակայն հետո պարզվեց, որ Հաջի Աբդուլլահը Իրան-Իրաքյան պատերազմի հերոսներից է, մի քանի անգամ վիրավորված և ռազմածովային ուժերի բարձրաստիճան սպաներից է: Պետք է խոստովանեմ, որ սկզբում այն տպավորությունը չէր թողնում, որ նա բարձրաստիճան սպա է. նա շատ անմիջական և շատ բարդակամ անձնավորություն էր: Ըստ երևույթին նրան ընդգրկել էին այդ հանձնախմբի մեջ, որ Ջուլֆա-Մեղրի սահմանային հատվածը անցնելիս մեզ համար առանձնապես խոչընդոտներ չառաջանան և լրացուցիչ ստուգումներ չկատարվեն: Այդ բոլորը պետք է կարգադրեր պրն Ռուդաբին, որին, հավանաբար, լավ ճանաչում էին մարզպանը, սահմանային կոմիսար գնդապետ Նադաբին և Ջուլֆային քաղաքային իշխանությունները: Դա պարզորոշ երևում էր նրա նկատմամբ խիստ հարգալից վերաբերմունքից և զինվորական կեցվածքից:

Ապրիլի 23-ի վաղ առավոտյան Իրանի երեք ներկայացուցիչները, Թեման Տեր-Պետրոսյանը և տողերիս հեղինակը օդանավով Թեհրանից մեկնեցին Թավրիզ, իսկ այնտեղից մեքենաներով հասանք իրանական Ջուլֆա: Այստեղ կարճատև հանգստից հետո սկսվեցին Ջուլֆա-Նորդուզ ճանապարհահատվածի դիտարկումները: Այդ հատվածը ընդհանրապես կազմում է ողջ Իրանը շրջագծող և կառուցվող ճանապարհի մի մասը, որը Իրա-

նի կառավարությունը սկսել էր տակավին շատ վաղուց: Դիտարկումներից պարզվեց, որ Ջուլֆա-Նորդուզ հատվածը, որի դիմաց Արաքսի հայկական ափին գտնվում է Ագարակ ավանը, 64 կիլոմետրից մնացել էր ընդամենը 8-9 կմ, որտեղ պետք է կատարվեին լրացուցիչ պայթեցումներ՝ ճանապարհը լայնացնելու և ասֆալտապատելու նպատակով: Այստեղ Իրանի ներկայացուցիչները և շինարարները հավաստիացրին մեզ, որ մինչև ժամանակավոր կամրջի բացման օրը, որը ենթադրվում էր մայիս 5-ին կամ 6-ին, ամբողջ ճանապարհահատվածը պատրաստ կլինի շահագործման: Եվ իրոք, նրանց խոստումները անտեղի չէին: Ճիշտ մայիսի 4-ի առավոտյան, երբ նրանց պատվիրակները ժամանել էին ժամանակավոր կամրջի կառուցման իրանական կողմի աշխատանքները գլխավորելու համար, հաղորդեցին, որ Ջուլֆա-Նորդուզ ճանապարհահատվածը ամբողջությամբ պատրաստ է շահագործման:

Իսկ մենք ապրիլի 23-ի երեկոյան ժամը 16-ին հասանք Ագարակ ավանի դիմացը գտնվող Արաքսի իրանական ափը, ապրիլի 8-ին տեղադրված ապագա կառուցվող կամրջի տեղը հաստատող Նշաճողի մոտ: Հայկական կողմում արդեն սկսվել էին նախապատրաստական աշխատանքները: Այստեղ էին տեղափոխվել շինարարական տեխնիկա, երկրաբանական հետախուզումների համար ծակող և փորող մեքենաներ, բուլդոզերներ, շինանյութ: Մեղրու շրջանի ճանապարհաշինության և շահագործման վարչության տնօրեն Վիկտոր Մկրտչյանը, որին հանձնարարված էր կատարելու նախապատրաստական աշխատանքները, գետի մյուս ափից ձայն տվեց, որ ամեն ինչ կատարվում է ժամանակին՝ կառուցումը սկսելու համար: Բայց, ցավոք, արդեն խորը շրջափակում էր սկսվել, չէր բավարարում հեղուկ վառելիքը, դրա համար էլ նա հաճախ ձայն էր տալիս «սոյարական վերջանում է, ինչ անեն»:

Այդտեղ Նորդուզի սահմանային ուղեկալի հրամանատարը և զինվորները մեր խմբին և Ջուլֆայում մեզ միացած կոմիսար Նադաբին, սահմանային հրամանատարը և Ջուլֆայի քաղաքապետարանի ներկայացուցիչը հյուրասիրեցին թեյով և քաղցրավենիքներով, նկարվեցին մեզ հետ որպես հիշատակ: Կարճատև հանգստից հետո մենք վերադարձանք Ջուլֆա: Ջուլֆայում մեզ ծանոթացրին Արաքսի վրա նախկինում կառուցված երկու կամուրջների՝ երկաթգծի և ավտոճանապարհային կամրջին, որին փայտե կամուրջ են անվանում (փոլե չուբի):

Ջուլֆայից ուշ գիշերին մենք մեքենաներով վերադարձանք Թավրիզ և գիշերեցինք հյուրանոցում: Հաջորդ օրը, ապրիլի 24-ին, վաղ առավոտյան մեզ մոտ եկավ Թավրիզի հոգևոր խորհրդի անդամ, համայնքի լավագույն ազգային գործիչներից մեկը, պրն Հոսայր Աբրահամյանը, որին մեր նախորդ ուղևորություններից շատ լավ ճանաչում էինք և մի քանի անգամ հյուրընկալվել էինք նրա տանը: Բարևելուց և գրկախառնվելուց հետո նա հայտնեց, որ պատճառ չէր լինի, եթե մենք, լինելով Թավրիզում, չայցելեինք Թավրիզի թեմի առաջնորդին՝ Նշան Թոփուզյանին և առաջնորդարանի խորհրդի անդամներին, այն էլ մեծ եղեռնի տարելիցի օրը: Իսկ ես շատ էի շտապում, որպեսզի առավոտյան, որքան հնարավոր է շուտ, հասնել Թեհրան, որովհետև մեր Թավրիզ մեկնելուց առաջ հայտնի էր դարձել, որ ապրիլի 24-ին սպասվում է թեհրանահայերի մեծ քայլարշավը Վիլայի եկեղեցուց սկսած, որտեղ պետք է հավաքվեին համայնքի ողջ ներկայացուցիչները և ցույց պետք է կտրեր 12 կիլոմետր ճանապարհ՝ քաղաքի ամենաբանուկ մասերով և հասնել մինչև Արգենտինայի հրապարակը, որտեղ տեղակայված էին ՄԱԿ-ի ներկայացուցիչների գրասենյակները:

Բայց ստիպված էինք տեղի տալ: Մենք սկզբում այցե-

լեցինք Թավրիզի թեմի առաջնորդին, եղանք հայ երեխաների մանկապարտեզում և հանդիպեցինք, պատմեցինք մեր առաքելության նպատակները: Այնուհետև պրն Չրայր Աբրահամյանի կազմակերպած հյուրասիրությունից հետո մեկնեցինք օդանավակայան: Բայց արդեն շատ ուշ էր: Բոլոր դեպքերում Թեիրանում նախատեսված քայլարշավին հասնել չէինք կարող: Մեր ինքնաթիռը Թեիրանի Մեհրաբադ օդանավակայանում վայրէջք կատարեց ժամը 13-ին: Այդտեղից մենք՝ հայկական խմբի ներկայացուցիչներս, շտապ եկանք ցուցահանդես, որտեղից էլ ես խնդրեցի, որ ինձ որքան հնարավոր է արագ հասցնեն Արգենտինայի հրապարակը:

Հրապարակում դեռևս խմբված էր թեիրանահայերի մի հոծ բազմություն՝ թուրքերի եղեռնագործությունները դատապարտող հայերեն, պարսկերեն և անգլերեն լեզուներով բազմաթիվ պաստառներով: Դեռևս մեկը մյուսի հետևից ելույթներ էին ունենում հայ համայնքի անվանի ներկայացուցիչները՝ մտավորականներ, արվեստագետներ, ուսուցիչներ, պետական պաշտոնյաներ, ուսանողներ, հոգևորականներ, գրողներ:

Ցույցը շարունակվեց մինչև ուշ երեկո: Թեև Թուրքիայի դեսպանատան դիմաց նախատեսվող միջոցառումը արգելվել էր քաղաքային իշխանությունների կողմից և պաշտպանվում էր ոստիկանական ուժեղացված շրջափակների միջոցով, այնուամենայնիվ, Արգենտինայի հրապարակի ցույցի մասնակիցների մի մեծ խումբ շարժվեց դեպի Ֆիրդոսու պողոտան, որտեղ գտնվում էր Թուրքիայի դեսպանատունը և այնտեղ շարունակվեց ցույցը:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՄՐՁԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1992 թ. սկզբից Հայաստանի ցամաքային ճանապարհների շրջափակումը ճեղքելու և դեպի արտաքին աշխարհ դուրս գալու խնդիրը դարձել էր խիստ հրամայական: Միաժամանակ, զգացվում էր նաև, որ հիմնական կամրջի շինարարությունը այդպիսի ծայրահեղ լարված պայմաններում տևելու է շատ երկար: Հույս կապել, թե Մարգարայի կամրջի վրայով հնարավոր է դուրս գալ դեպի Իրան, նույնպես անիմաստ էր, որովհետև Թուրքիան ցանկացած պահ պատրվակ դարձնելով դարաբայան հակամարտությունը, կփակեր այդ ճանապարհը: Ուստի Իրանի Իսլամական Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ ստեղծելուց հետո անհրաժեշտ էր շուտափույթ ձեռնամուխ լինել Արաքսի վրայով ժամանակավոր կամրջի կառուցմանը: Հենց այդ նկատառումով էլ ինչպես հիմնական, այնպես էլ ժամանակավոր կամրջի շինարարության հարցը իր բոլոր մանրամասներով ուսումնասիրվել և տեղ էր գտել Հայաստանի Հանրապետության կառավարության 1992 թ. մարտի 24-ի թիվ 175 հայտնի որոշման մեջ, որը կոչվում էր «Մեղրու շրջանում Արաքս գետի վրա ավտոճանապարհային կամրջի շինարարության մասին»:

Տեղին է նշել, որ այս կարևորագույն որոշման բոլոր կետերի իրականացման աշխատանքը, սկսած 1992 թ. մարտ ամսից մինչև 1996թ. հունվար ամիսը, այսինքն՝ մինչև հիմնական կամրջի շինարարության ավարտը, հաջողությամբ գլխավորեց Հանրապետության փոխնախագահ և հայ-իրանական տնտեսական հարաբերությունների կորդինացման պետական հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանը: Իրանի հետ տրանսպորտային համագործակցության զարգացման նպատակով 1992 թ. մարտի 11-ին երևան ժամանեց Իրանի առաջին պատվիրակությունը՝ տրանսպորտի փոխնախարար Սայիդ Նեժադիի գլխավորությամբ:

Այդ պատվիրակության հետ բանակցությունների ընթացքում անմիջապես առաջ քաշվեց Արաքս գետի վրայով դեպի Իրան ժամանակավոր կամրջը ունենալու

խնդիրը: Բանակցությունների ժամանակ հատկապես արձանագրվեց, որ երկու կողմերի մասնագետները (կամրջաշինարարներ, ճանապարհաշինարարներ և մաքսային ծառայության աշխատողներ) 1992 թ. ապրիլի 6-ին Թեիրանում հանդիպելուց հետո կմեկնեն կառուցվելիք ժամանակավոր կամրջի տեղը, կճշտեն մաքսատների տարածքները, սահմանային ստուգման կետերը, ժամանակավոր կամրջի միացման ձևերը Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների հետ և կվարեն համապատասխան բանակցություններ: Նշվեց նաև, որ կամրջի տեղը երկրաբանական հետազոտություններից հետո հայկական կողմը իր միջոցներով երկու ամսվա ընթացքում կկատարի և կավարտի բոլոր նախագծման աշխատանքները:

Իր հերթին, Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների և տրանսպորտի նախարարությունը, ըստ հնարավորությունների, կկատարի իր կողմի երկրաբանական հետախուզությունը և ստացված արդյունքները կորամադրի Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարարությանը:

Այստեղ իրանական կողմը «ըստ հնարավորությունների» ձևակերպումը բացատրեց նրանով, որ իրենք նախարարությունը իր ձեռքի տակ չունի համապատասխան հորատող մեքենաներ և սարքեր, ուստի պետք է դրանք ձեռք բերի վարձակալական հիմունքներով: Հետագայում պարզվեց, որ իրենց հնարավորությունները իրոք շատ սուղ են և, փաստորեն, մինչև ժամանակավոր կամրջի ստեղծումը իրանական կողմը չկատարեց այդ հետախուզությունները:

Նախնական ըմբռնմամբ, ժամանակավոր կամրջը հասկացվում էր որպես թեթև մետաղյա կառուցվածքներով և սահմանափակ չափերով ու բեռնաթողունակությամբ մի կամրջ: Այդ պատճառով էլ արձանագրության մեջ նշվում էր, որ հայկական կողմը պետք է կատարի նախագծման աշխատանքները և հետագա բանակցությունների ընթացքում պետք է համաձայնեցնի հակառակ կողմի հետ, ընդունված կարգով:

Միևնույն ժամանակ, տրանսպորտի և հաղորդակցության նախարարությունը «Հայտրանսնախագիծ» ինստիտուտին հանձնարարել էր, որ շտապ կարգով կազմվի այդպիսի մի նախագիծ և միաժամանակ ներկայացվի ժամանակավոր կամրջի նախահաշվային արժեքի հաշվարկները:

Նախագծման, արժեքների և հատկապես կառուցման ժամկետի հաշվարկները կատարելիս հեղինակները հանգել էին այն եզրակացությանը, որ ժամանակավոր կամրջի կառուցումը կտևի առնվազն 6-8 ամիս, նրա կառուցման արժեքը կկազմի 6 մլն. ռուբլի և այն էլ այն դեպքում, եթե մետաղյա կառուցվածքները հնարավոր լինի ներմուծել Ռուսաստանից: Եվ քանի որ ճանապարհները փակված էին, հետևաբար ներմուծման տարբերակը բացառվում էր: Ուստի որոշում էր ընդունվել, որ մետաղական կամրջի տարրերը կարելի է վերցնել պաշտպանական պահեստի միջոցներից:

Բայց, հանրապետության տնտեսական վիճակն այնքան ծանր էր, որ այդ ժամանակ սպասել մետաղյա կամրջի գործարկմանը, հնարավոր չէր, իսկ մյուս կողմից պաշտպանական խնդիրների համար նախատեսված նյութերն այդ նպատակի համար օգտագործելը՝ անթույլատրելի:

Այդ էր պատճառը, որ հայկական կողմը առաջ քաշեց ժամանակավոր կամրջի համար կամրջանավի (պոնտոն-նի) օգտագործման տարբերակը:

Ենթադրվում էր, որ այս տարբերակի դեպքում կամրջը կգործարկվի ավելի արագ և համեմատաբար քիչ

ծախսումներով:

Դրա համար էլ Հայաստանի Հանրապետության կառավարության Նախագահ Գագիկ Հարությունյանը 1992 թ. մարտի 24-ի թիվ 175 հայտնի որոշումով հանձնարարեց տրանսպորտի և հաղորդակցության նախարարությանը, արդյունաբերության նախարարության հետ համատեղ ուսումնասիրել կամրջանավի (պոնտոնի) շինարարության հարցը և, Հայաստանի Հանրապետության սահմանափակ գործերի հարավարևմտյան խմբի հրամանատարության թույլտվությունը ստանալուց հետո, մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություն:

Խնդրի ուսումնասիրությունը և առաջարկության ներկայացումը երկար չտևեցին: Մարտի 28-ին հանրապետության վարչապետի մոտ կայացավ խորհրդակցություն և վերջնականապես որոշում ընդունվեց որպես ժամանակավոր կամուրջ հավաքել կամրջանավ՝ զուգահեռ սկսելով հիմնական կամրջի նախագծային շինարարական աշխատանքները: Այս որոշումից հետո ժամանակավոր կամրջի շինարարության համար հավաքովի մետաղյա կառուցվածքների օգտագործման հարցը կորցրեց իր իմաստը և բացառվեց պաշտպանական պահեստից մետաղյա տարրերի օգտագործումը:

Դրանից հետո Արաքս գետի վրա կամրջի, մաքսային ծառայության համալիր և հսկիչ անցագրային կետի շինարարության աշխատանքները կողորհնացնելու և այն ժամանակին շահագործման հանձնելու նպատակով ստեղծվեց աշխատանքային խումբ և կառավարության նախագահի որոշմամբ այդ խմբի ղեկավար նշանակվեց Թելման Տեր-Պետրոսյանը:

Աշխատանքային խումբը անհապաղ սկսեց որոնել կամրջանավ: Իսկ այդ ընթացքում կամրջանավ տեղադրելու վերաբերյալ հայկական կողմի որոշումը հաղորդվեց Թեհրան և ստացվեց պատասխան, որ ապրիլի 8-ին Մեղրի կժամանակ իրանական պատվիրակությունը և վերջնականապես կճշտի կամրջի տիպը, կնշագրի նրա կառուցման տեղը, իսկ երկու կողմերի սահմանային կոմիսարները կնշեն և կհաստատեն կամրջի կառուցման տեղում սահմանային գիծը:

Այդ հանդիպումը տեղի ունեցավ ճիշտ ժամանակին, և առաջ քաշած բոլոր խնդիրները դրական լուծում ստացան: Ընդամենը մեկ շաբաթ հետո իրանական կողմը հայտնեց իր լրիվ համաձայնությունը կամրջանավի տեղադրման և նրա պարամետրերի ընդունելիության վերաբերյալ:

Իսկ կամրջանավի տեղադրման աշխատանքային խումբը արդեն ուսումնասիրել և իր բանակցություններն էր սկսել համապատասխան մարմինների հետ: Հասկանալի է, որ պոնտոնները գտնվում էին զինվորական իջխանությունների տնօրինության ներքո: Այդ առումով էլ բանակցությունները տարվում էին Խորհրդային Միության՝ Հայաստանում տեղաբաշխված գործերի 14-րդ բանակի հրամանատարության հետ: Հրամանատարությունը սկզբունքորեն դեմ չէր, որ ստեղծված իրադրության պայմաններում մեզ տրամադրեր մեկ հատ պոնտոնային կամուրջ, բայց միաժամանակ պահանջում էր Խորհրդային Միության պաշտպանության նախարարության համաձայնությունը՝ նմանատիպ կամուրջ տրամադրելու հարցում: Դրական լուծման դեպքում նա պարտավորվում էր, որ ինժեներական գործերի սպաները և զինվորները կաշակեցնեցին կամրջի տեղադրմանը, քանզի նրանք այդ գործի մեջ վարժված և հմուտ մասնագետներ են:

Չինվորականներից նավակամուրջ ստանալը այդքան էլ հեշտ գործ չէր: Տարբեր պատրվակներով նրանք ձգձգում էին, և մեր դիմումները մնում էին անպատասխան: Պահանջվեց նույնիսկ հանրապետության ղեկավարներ

րի միջամտություններն ու միջնորդությունները: Դրանից հետո միայն Խորհրդային Միության պաշտպանության նախարար Եվգենի Շապոշնիկովը կարգադրեց անդրկովկասյան գործերի հրամանատար, գեներալ Պատրիկեևին՝ մեկ նավակամուրջ, այն էլ 3,5 միլիոն ռուբլի արժեքով տրամադրել Հայաստանին՝ Մեղրիում Արաքս գետի վրա տեղադրելու համար:

Իսկ այդ պահին Հայաստանի կառավարությունը ֆինանսական հնարավորություններ չունեց զինվորականների կողմից պահանջված գումարը վճարելու համար: Մնում էր դարձյալ մեկ միջոց. դիմել գործարաններին և ձեռնարկություններին՝ այդ գումարը հանգանակելու և աշխատանքային խմբի տրամադրության տակ դնելու համար:

Ի ուրախություն մեզ, պետք է նշեն, որ շատ շուտով արդյունաբերության նախարարության մի քանի գործարաններ և արտադրական միավորումներ արձագանքեցին մեր այդ կոչին: Մասնավորապես «Հայէլեկտրո», «Կանազ», «Հրազդանմեքենա» գործարանները, «Գարուն» արտադրական միավորումը և ուրիշներ հանգանակեցին պահանջվելիք գումարը և փոխանցեցին կամրջի կառուցման ֆոնդին, որը և հատկացվեց զինվորականներին:

Դրանից հետո միայն գեներալ Պատրիկեևը կարգադրեց Մցխեթիում (Վրաստան) տեղակայված գործամատերի պահուստից մեկ նավակամուրջ տրամադրել Հայաստանին:

Բայց այնտեղից տեղափոխման հարցը նորից կապվում էր որոշակի մաքսային դժվարությունների հետ, որն ստեղծվել էր մասնավորապես այն պատճառով, որ այդ ժամանակ Վրաստանի Հանրապետությունը տակավին ԱՊՀ-ի անդամ երկիր չէր: Բացի դրանից, պարզվեց, որ Մցխեթիում գտնվող կամրջանավը շատ մաշված է, և օգտագործման ժամկետը կարող է լինել սահմանափակ:

Այդ պատճառով աշխատանքային խմբի ղեկավարը նորից դիմեց գեներալ Պատրիկեևին, որ նա վերանայի իր որոշումը և նավակամուրջը տրամադրի Հայաստանում (Գյումրիում) տեղակայված ինժեներական գործերի ֆոնդից: Այդ խնդրանքը գեներալը բավարարեց և շուտով նավակամրջի տարրերը սկսվեցին տեղափոխվել Մեղրի:

Հարկ է նշել «Երջինավտոտրանս» միավորման վարորդների հերոսական աշխատանքը, որոնք իրենց «Կրազ» բեռնատար ավտոմեքենաներով հաղթահարելով Զանգեզուրի լեռնանցքների բուքն ու մառախուղը, կարողացան նավակամրջի մասերը Գյումրիից անվնաս տեղափոխել Մեղրի: Նավակամրջի տեղադրման աշխատանքներին և բացման արարողությանը մասնակցելու համար 1992 թ. մայիս 5-ին մեր պատվիրակությունը ուղղաթիռով մեկնեց Մեղրի և օդանավակայանից անմիջապես ուղևորվեց նավակամրջի տեղադրման վայրը: Նավակամուրջը արդեն հավաքված էր հայկական ափում գետի հունի ուղղությամբ և պատրաստ էր տեղադրվելու նախատեսված վայրում: Ըստ պայմանավորվածության, ինչպես հայկական, այնպես էլ իրանական կողմերը պետք է ավարտեին նաև նավակամրջի մատուցների հարթեցման աշխատանքները և միացնեին մեր կողմից Կարճան կայարանի դեմով անցնող, իսկ իրանական կողմից Նորդուգ տանող ճանապարհները:

Չինարարական եռուզեռ էր. գործի էին դրվել բուլդոզերները, գրեյդերները, ինքնաթափ մեքենաները, որոնք անընդհատ խճաքար, ավազ և ասֆալտ էին հասցնում շինարարության տեղամաս: Նույն տեսարանն էր նույնպես Արաքսի իրանական ափում: «Կամազ» էքսկավատորները դեպի Նորդուգի մայրուղին տանող ճանապարհները հարթեցնում էին, պոկում էին գետափի ծառերը և թափում Արաքս գետը:

ՎԵՐԱԿՈՆԿՐԵՍԱԿԱՆ ԳՐԱՅԻՆ ԳՐԱՅԻՆ ԳՐԱՅԻՆ ԳՐԱՅԻՆ

Իսկ մենք, հայկական կողմից մի քանի հոգով հերթական անգամ մոտորանավակով անցել էինք իրանական ավի՛ ճուղանների տեղադրման վայրը իրանցի մասնագետների հետ համաձայնեցնելու համար: Մեր կողմից շինարարական աշխատանքները ղեկավարում էր տրանսպորտի և հաղորդակցության նախարարի տեղակալ Ռուբեն Քրոմյանը: Կամրջի հավաքման ու տեղադրման համար նրան օգնում էր ինժեներական ծառայության մայր Վասիլի Իվանենկոն: Նրանք, աշխատանքային խմբի ղեկավար Թելման Տեր-Պետրոսյանի հետ միասին իրանական կողմի պատասխանատուների հետ համադրում էին նավակամրջի բացման արարողության մանրամասները:

Հենց այդտեղ էր, որ ես նկատեցի Նորդուգի բնակիչներից մեկին, որը կանգնել էր ջրի ափին, ցավով ու լուռ նայում էր իր համար այդ սրտաճմլիկ տեսարանին, թե ինչպես են բուլդոզերները հռնդալով բնահաս անում ծառերն ու թափում գետը: Ես նրան իսկույն ճանաչեցի: Նրա հետ հանդիպել էինք երկու անգամ: Դեռևս ապրիլի սկզբներին, երբ մենք առաջին անգամ մոտորանավակ անցել էինք գետի մյուս ափը՝ ապագա կամրջի տեղը նշագրելու: Նա դեռ այն ժամանակ ընդվզում էր այդտեղ կամրջը դնելու համար, որովհետև նա ժամանակին այդ տարածքում բոժոժի թթենիների մի այգի էր հիմնել, իսկ հիմա կամրջը տանող ճանապարհը պետք է անցներ հենց նրա այգու միջով:

Երկրորդ անգամ, երբ ապրիլի վերջերին մենք իրանական կողմից ճանապարհը շահագործման համար պատրաստ լինելու խնդրանքով Ջուլֆայից եկել էինք մինչև Նորդուգ և Ագարակ, դարձյալ հանդիպել էինք նրան: Այդ ժամանակ արդեն իրանական իշխանությունները նրան համոզել էին, որ միևնույն է՝ հենց այդտեղով է անցնելու կամրջը տանող ճանապարհը և նրան խոստացել էին պետականորեն ընդունված գներով վճարելու այգու արժեքը: Նա ստիպված որոշ չափով տեղի էր տվել, բայց ինչպես ինքը պատմեց, մինչև վերջին պահն էլ չէր ուզում հավատալ, որ կգրկվի իր այդ գեղեցիկ տնկիներից ու այգուց:

Այս անգամ ես նրան հորդորեցի և ասացի, որ պետական շահերն երբեմն վեր են կանգնում անհատի շահերից և ինչ-որ չափով մխիթարեցի նրան: Չգիտեմ՝ որքանով նա մխիթարվեց, բայց մինչև ուշ երեկո չէր հեռանում իր սիրած այգու տարածքից:

Մայիսի 6-ի առավոտյան սկսվեցին կամրջանավը իր նախատեսված վայր տեղադրելու գործողությունները: գործի էին անցել հայկական կողմի շինարարներն ու բանվորները Մեղրու շրջանի ճանապարհաշինության և շահագործման վարչության տնօրեն Վիկտոր Մկրտչյանի գլխավորությամբ:

Մասնագիտական ուղղություններ էին տալիս ինժեներական գործերից հրավիրված մասնագետները, սպաները և զինվորները:

Առավոտյան շուտ նավակամրջի մեկ ծայրը արձակվեց գետի ափից, իսկ մյուս ծայրի ճուղանները ամուր ամրացվեցին մեր ափում տեղադրված ու բետոնապատված կարճ ձեյների սյուների: Այնուհետև բանվորները արձակված ծայրը սկսեցին հրել ափից, որը միաժամանակ մյուս ափից քաշում էին հզոր տրակտորները և ուղղում նավակամրջը գետնին ուղղահայաց ուղղությամբ: Տեղադրման աշխատանքները ավարտվեցին կեսօրին, իսկ ժամը 14-ին նշանակված էր նրա հանդիսավոր բացման արարողությունը:

Պետք է նշել, որ բացման օրը՝ մայիս 6-ը, պատահական չէր ընտրված: Այդ օրը Թեհրանում հանդիպելու էին Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության նախագահները: Նախատեսված էր այնպես, որ հենց այդ օրը լրատվական գործակալություն-

ները պետք է հաղորդեին ժամանակավոր կամրջի բացման և երկու երկրների միջև ցամաքային ընդհանուր ճանապարհ ունենալու մասին լուրը:

Ժամը 14-ին սկսեց բացման արարողությունը միայն հայկական կողմում: Իրանական կողմի պատվիրակությունը հանդիսությանը մասնակցելու համար չէր ժամանել: Հետագայում պարզվեց, որ հենց այդ օրերին Իրանում տեղի էին ունենում նահանգական ընտրություններ և, հավանաբար պաշտոնատարների մեծ մասը զբաղված լինելով նախընտրական ծրագրերով, ավելորդ ժամավաճառություն էր համարել մասնակցելու կամրջի բացման արարողությանը:

Եվ այսպես, Մեղրու Ագարակ ավանի դիմաց մայր Արաքսի ափերը կամրջվեցին միմյանց: Սահմանային փշալարերից այն կողմ թերևս երբեք այդքան մարդ չէր հայտնվել, որքան զարնանային այդ գեղեցիկ օրը: Հագարավոր մեղրեցիներ էին եկել միմյանց հետ կիսելու այդ պատմական իրողության ուրախությունը: Այստեղ էին շրջանի ճանապարհաշինարարական վարչության նորաստեղծ «Արևիք» շինարարական ֆիրմայի, ավտոձեռնարկության, Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատի աշխատավորները, այն մարդիկ, որոնց ջանքերի շնորհիվ նույնպես հնարավոր դարձավ ընդամենը մեկ ամսվա ընթացքում կյանքի կոչել եզակի այս կառույցը, ինչպես նաև «Երջինավտոտրանս» միավորման այն 19 վարորդները, որոնք, հաղթահարելով լեռնային տեղանքի դժվարությունները, կարողացան մեկուկես օրվա ընթացքում նավակամրջի կառուցվածքները Գյումրիից տեղափոխել Մեղրի:

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության դրոշներով զարդարված նավակամրջի շահագործման հանձնելու արարողությանը մասնակցելու համար Մեղրի էր ժամանել հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանը: Կամրջի շինարարության ավարտի մասին աշխատանքային խմբի ղեկավար Թելման Տեր-Պետրոսյանի զեկույցից հետո ելույթ ունեցավ պրն. Հարությունյանը: Նա նշեց, որ Մեղրու նավակամրջի շահագործումը մեծ ծրագրի սկիզբն է, որով մշտական կայուն կապ է ստեղծում հարևան և բարեկամ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ:

Դրանից հետո ծայր առան երգն ու երաժշտությունը:

Այնուհետև հանրապետության փոխնախագահը և Հայաստանի ու Իրանի միջև տնտեսական համագործակցության կողողինացման պետական հանձնաժողովի անդամները մոտեցան նավակամրջի կենտրոնին և ծաղիկներ դրեցին սահմանային գծի վրա: Իսկ իրանական կողմում դեռևս շարունակվում էր աշխատանքային եռուզեռը: Ուղեշինարարները աշխատում էին օր առաջ ավարտել դեպի երկրի խորքերը տանող ավտոմայրուղուն կամրջը կապող ճանապարհահատվածը:

Բացվեց ժամանակավոր կամրջը, սկսվեցին ուղևորների ու առևտրական բեռների տեղափոխումներն ու գնալով աշխուժացավ այս ճանապարհը, որը մի արյունատար անոթի նման սկսեց սնել այն օրգանիզմը, որը շրջափակման հետևանքով հետզհետե հյուծվում ու բարակում էր:

ՀԱՏՎԱԾ «ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑՎԵՑ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՎՐԱՅԻ ԿԱՄՈՒՋԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ և ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ» ԳՐԹԻՑ, ՀԵՂԻՆԱԿ Ժ. Մ. ՄԻՐՉԱԲԵԿՅԱՆ, ԵՐԱՆ, 1996
HTTPS://WWW.ANIARC.AM/2024/12/30/ARME-NIA-IRAN-BRIDGE/



Քաջարան–Մեղրի ճանապարհի գործարկումը

Կարեն Դեմիրճյանի մեծություները որպես հեռատես ազգային-քաղաքական գործչի, մեր ժողովուրդը ըմբռնեց հատկապես 1988 թ. սկսված հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ, երբ Մեղրի-Քաջարան-Երևան ճանապարհը Հայաստանի համար դարձավ կյանքի ճանապարհ: Այդ ճանապարհի կառուցման նախապատմությունն այսպես է եղել:

Մեղրին մայրաքաղաքին կապող 260 կմ երկարությամբ միակ երկաթուղային ճանապարհն անցնում էր Նախիջևանով: Տևտեսապես արդյունավետ չէր Մեղրի-Քաջարան-Երևան 400 կմ երկարությամբ ավտոճանապարհը, և դա էր պատճառը, որ ոչ ոք չէր մտածել հսկայական ներդրումներ անել՝ կառուցել Մեղրի-Քաջարան 48 կմ ավտոճանապարհը, և Մեղրին միացնել մայր երակին:

Քաղաքական գործչի մեծությունն հենց այն է, որ նա ավելի հեռուն է նայում:

Մեղրի կատարած առաջին իսկ այցից հետո Կարեն Դեմիրճյանը խնդիր դրեց կառուցել Քաջարան-Մեղրի ավտոճանապարհը, քանի որ Պարսկաստանի հետ սահմանամերձ Մեղրիի շրջանը պետք է անմիջականորեն տրանսպորտային կապ ունենար հանրապետության հարևան շրջանի հետ:

Ավտոճանապարհի շինարարությունը նախատեսված էր ավարտել 1985 թ.-ին: Սակայն հաշվի առնելով այդ ճանապարհի ռազմավարական նշանակությունը՝ Կարեն Դեմիրճյանը ճանապարհաշինարարների առջև նոր խնդիր դրեց. աշխատանքներն ավարտել 1980 թվականին:

Աշխատելով բարձր լեռնային ծանր պայմաններում՝ ծովի մակերևույթից ավելի քան 2000մ բարձրության վրա, ճանապարհաշինարարները ցուցաբերեցին իսկական

Մեղրի կատարած առաջին իսկ այցից հետո Կարեն Դեմիրճյանը խնդիր դրեց կառուցել Քաջարան-Մեղրի ավտոճանապարհը, քանի որ Պարսկաստանի հետ սահմանամերձ Մեղրիի շրջանը պետք է անմիջականորեն տրանսպորտային կապ ունենար հանրապետության հարևան շրջանի հետ:

արիություն և խիզախություն: Ի դեպ, Մեղրիի լեռնանցքը Անդրկովկասում ամենաբարձրն է (2535մ):

1980 թ. նոյեմբերի 2-ին արևոտ օր էր Մեղրու գետափովիտում: Դեպի լեռնանցք էին շարժվում ավտոմեքենաների շարասյուները մեղրեցիները գնում էին մասնակցելու ավտոմայրուղու հանդիսավոր բացմանը Նվիրված հանրահավաքին:

Նորակառույց ճանապարհի երկայնքով մեկ հնչում էր երգն ու երաժշտությունը: Ցնծությունը համակել էր մեղրեցիներին: Նրանց ուրախությունն ու բերկրանքը կիսելու էին եկել ԶԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար Կարեն Դեմիրճյանը և կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Դիմելով ժողովրդին՝ Կարեն Դեմիրճյանն ասաց.

- Այս օրերին, երբ Հայաստանի աշխատավորները ամենուրեք պարտավորվում են արժանավայել դիմավորելու Հայկական ԽՍՀ կազմավորման 60-ամյակը, մեր ճանապարհաշինարարները հաղթանակ տարան, ժամկետից շուտ ավարտվեց Մեղրի-Քաջարան ավտոմոբիլային ճանապարհի շինարարությունը և հանձնվեց շահագործման: Դա մի հրաշալի նվեր է, որով կարող է հպարտանալ ամբողջ հայ ժողովուրդը:

Այդ օրը ոչ ոք դեռ չգիտեր, որ ընդամենը 10 տարի հետո նույն ճանապարհը պետք է դառնար ողջ հայ ժողովրդի հույսի ճանապարհը: Չլինե՞ր այդ ճանապարհը, գուցեն, հնարավոր չլինե՞ր պաշտպանել Մեղրիի տարածքը:

ԸՆԴՈՒՂԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՒՆԵՐ


Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-45 թթ.) կառուցվեց Զուլֆա-Մինջևան (Միջևաձևան) երկաթուղին, որով կապ է հաստատվել Մեղրու տարածաշրջանի ու Երևանի միջև





ԸՆԴՈՒՊԱՆՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԵՏԵՐ

Կամուրջներ
Մեղրի գետի
վրա, 16-17-րդ
դարեր



ԸՆԴՈՒՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՒՆԵՐ

Կամուրջներ
Մեղրի գետի
վրա, 16-17-րդ
դարեր



Մեղրի-Կապան ավտոմայրուղին հանձնվեց շահագործման

«Մեղրի-Կապան ավտոմայրուղին հանձնվեց շահագործման»
Առաջին հերթին պետք է շնորհակալ լինել այն մարդկանց, ովքեր կառուցել են այս ճանապարհը: Իմ խնդիրը որոշում կայացնելն էր, ստիպելը, գործի ընթացքին հետետելը – Մեղրի-Շվանիձոր-Վերիջեն-Ծավ-Կապան ավտոճանապարհի բացման արարողությանը Նշեց ԳՂ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը: - Մինչ այս գործող ճանապարհը խորհրդային տարիներին վեց տարում է կառուցվել: Մենք սա երեք տարում կառուցեցինք: Սա փաստում է, որ մեր մասնավոր ընկերությունների, շինարարների հնարավորություններն ավելի լուրջ են, քան կարծում ենք: Բայց սրանով չենք բավարարվելու: Մեղրին մոռացված չէ ու մոռացված էլ չպիտի լինի: Սկսելու է զարգանալ: Իրան-Հայաստան գազատարը կառուցվեց, Մեղրին գազֆիկացվելու է, հիմա էլ երկաթուղու շինարարության հարցն է լրջորեն քննարկվում: Այսինքն՝ սա փաստում է, որ մենք ի վիճակի ենք խոշոր ծրագրեր իրականացնել: Այս ճանապարհն անցնում է վեց գյուղի միջով, որոնք, ըստ էության, մոռացված էին: Այսօր այդ գյուղերը շունչ կտանան: Իրանից բեռնափոխադրումներն այս ճանապարհով են անցնելու: Ուղղաթիռում արդեն քննարկվում էինք այս ճանապարհի շարունակության՝ Կապան-Սիսիան հատվածի շինարարության խնդիրը: Այս դեպքում այս ճանապարհը գործողին այլընտրանք կլինի: Կրկին շնորհակալություն շինարարներին:

Ի դեպ, այս ճանապարհի շինարարությունն սկսվել է 2005 թ. մայիսին (շինարարությունն արել են 4 կապալառու ընկերություններ՝ «Մեղրու ճՇՇՁ» ԲԲԸ-ն, «Դորոժնիկ» ՍՊԸ-ն, «Կապավոր» ՍՊԸ-ն և «Կապանի ճՇՇ» ԲԲԸ-ն): Գումարը հատկացվել է պետական բյուջեից՝ ընդհանուր առմամբ, ըստ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանի, 15 մլրդ 275 մլն դրամ: Ծիշտ է, նախորդ՝ գործող ճանապարհից դեռ 12 կմ էլ երկար է, բայց հարավային լանջերով է անցնում, ավելի արեկող է և ձմռանն էլ անցանելի:

Ճանապարհի երթեծելի մասի նվազագույն լայնությունը վեց մ է, առավելագույն երկայնական թեքությունը ինը տոկոս է: Առավելագույն բարձրանիշը ծովի մակերեսից 2215 մ է: Ճանապարհի կրողու-նակությունը կազմում է 11.5 տոննա փոխադրամիջոցի յուրաքանչյուր տնու հաշվով կամ առավելագույնը 80 տոննա՝ 1 ծանրաքաշ փոխադրամիջոցի ընդհանուր քաշի հաշվարկով: «Այս ճանապարհի շինարարության գաղափարը մեր երկրի նախագահինն է: Այս շինությունը կառուցելը բարդ էր, ինչպես Սելիմի լեռնանցքը, Դիլիջանի թունելը և այլն: Բայց կառուցվեց», – նկատեց Ա. Մանուկյանը:

Ճանապարհի բացումից հետո երկրի ղեկավարը Մեղրիում մասնակցեց բերքի տոնին հետաքրքրվեց այս տարվա բերքով: Շվանիձոր, Վարդանիձոր, Լեհվազ և այլ գյուղերի գյուղապետերն առում էին՝ բերքը նախորդ տարվա համեմատ քիչ պակաս է, որովհետև «ցուրտը վախեցրել է մի անգամ»: Նախագահը կանգ առավ նաև Ծավ ու Շիկահող գյուղերի մոտ, զրուցեց բնակիչների հետ:

ԸՍՏ ԳՂ-Ի

«Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր ուղիների ժապավեններն անհամար...»

Տերյան բա-
նաստեղ-
ծի տողերի
անորոշությունը
խորթ է մեզ, քանզի
ստույգ գիտենք, որ
մեր խնդրո առար-
կա ճանապարհի
ժապավենը ձգվում
է Կապանից Ծավ,
այնուհետև երբեմ-
նի մարդաբնակ Վե-
րիջեն գյուղը, որից
այժմ միայն 17-րդ



դարի եկեղեցին է կանգուն մնացել, այնուհետև իջ-
նում Մեղրու համեմատաբար բարեկարգ գյուղերից մե-
կը՝ Շվանիձոր և իր վերջին հանգրվանը գտնում մայր
Արաքսի ափին սփռված Մեղրիում: Մարզի գլխավոր
կառուցվող օբյեկտն է այն, որ շուտով կհանձնվի շա-
հագործման, ավելի ստույգ, վերջնաժամկետ է սահ-
մանված՝ սեպտեմբերի 15-ը: Ընթերցողի հիշողությու-
նը թարմացնելու համար Նշեցք, որ մարզի և երկրի
համար ռազմավարական նշանակություն ունեցող
մրցույթով շահել և իրականացնում են Մեղրու և Կա-
պանի ճանապարհաշինարարները, «Կապավոր» և
«Դորոժնիկ» սահմանափակ պատասխանատվությու-
յամբ ընկերությունները: Ճանապարհաշինարարնե-
րի գործերին ծանոթանալու մեր զրույցը սկսեցինք
Մեղրուց: «Մեղրու ճանապարհաշինարարական և
շահագործման ձեռնարկություն» ԲԲ ընկերության
շինարարությունը 2005 թվականի մայիսից սկսելով
ավտոմայրուղու մրցույթով շահած 19,7 կմ հատվածը
2006 թվականի դեկտեմբերին ավարտեց այն և պայ-
մանագիր կնքելով «Դորոժնիկ» ՍՊԸ-ի հետ որպես են-
թակապալառու՝ իրականացնում է ճանապարհի 8,3
կմ հատվածի շինարարությունն ևս: Ճանաչված ճա-
նապարհաշինարար Ազատ Գասպարյանը հավաս-
տիացնում է, որ նախանշված ժամկետում կավարտեն
ճանապարհի ասֆալտապատման ու կահավորումը,
իսկ ընկերության կատարած աշխատանքից հատ-
կապես կարելուց Արաքս գետի հունի ամրացումը
հարթաչափ քարերով (պիտի հենապատ կառուցելն,
բայց ծախսատար էր լինելու) ինչը հաջող քննություն
բռնեց այս գարնանը տեղի ունեցած աննախադեպ
վարարումների ժամանակ: Մեր զրուցակիցը պատեհ
առիթմը բաց չթողեց երախտագիտությունը հայտնել
«Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ
ընկերության գլխավոր տնօրենին՝ Արաքսի հունը նե-
ղացնելու նպատակով անհրաժեշտ տեխնիկա հատ-
կացնելու համար: Ավելի նպատակահարմար չէր,
ասենք, նոր այս ճանապարհի վրա ծախսված գումարի
կեսը ներդրվեր 1980 թվականից գործող ավտոմայրու-
ղին հիմնանորոգելու վրա, ինչի արդյունքում կունենա-
յինք ավելի ժամանակակից ճանապարհ, մասնավանդ
նոր ճանապարհի կառուցումը ոգեւորությամբ չընդուն-
վեց բնապահպանների (և ոչ միայն նրանց) կողմից՝

ՎՊՐԱԿԱՆ ԴՈՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՒՆԵՐ

կապված Շիկահողի արգելոցի կուսական անտառը հատելու հետ: Ա.Գասպարյանը համակարծիք չէր մեզ հետ, հիշեցնելով հայ-արքեպեանական հակամարտության օրերը, երբ Օրդուբադի կողմից գնդակոծվում էր Մեղրու տարածքը, ինչն առավել քան վտանգավոր էր դարձրել գործող ճանապարհով երթեկեցելը, ուստի մեր երկրի հարավային դարպասի համար երկրորդ ճանապարհի գոյությունն ավելի քան անհրաժեշտ էր. ճանապարհի երկայնական թեքությունները մեղմ են, մաներելու հնարավորություններն ավելի շատ, եւ այնպիսի ծնաբուք, որպեսին լինում է Դիբազի լեռնանցքում, կառուցվող ճանապարհի տարածքներում չի լինում:



Ա. Գասպարյանի դիտարկմամբ այս նոր ճանապարհի սպասարկումն ավելի էժան է լինելու: «Միշտ կրկնել եմ՝ ճանապարհը երեխայի խնամք է պահանջում, եթե խնամք չունեցավ, շատ արագ շարքից դուրս է գալու, ինչ որակով էլ որ կառուցված լինի: Շատ եմ կարեւորում ջրահեռացման աշխատանքների կատարումը: Ուսանողական տարիներից մի դեպք տպավորվել է մեզս, մի դասախոս ունեինք, մտավ լսարան, առանց բարե տալու նայեց բոլորիս եւ ասաց՝ ջուրը ճանապարհի թշնամին է»: Միակ թերությունն այն է, որ կառուցվելիք ճանապարհը մոտ 20 կիլոմետրով հնից երկար է, բայց այն նաեւ տնտեսական կարեւորագույն խնդիր է լուծում, քանզի Մեղրու եւ Կապանի տարածաշրջանների մոտ տասը գյուղ ավելի բարեկարգ ճանապարհով կկապվեն արտաքին աշխարհի:

«Դորոժնիկ» ՄՊԸ-ին ամենաբարդ հատվածն է բաժին հասել՝ Շվանիձոր-Վերիշեն-Ծավ (ընդհանուր երկարությունը՝ 29 կիլոմետր): Տեղ-տեղ բնահողը տասներորդ կարգի է, նույնիսկ հզոր «Կամացունները» այդ բնահողին չեն դիմանում 11 միավոր տեխնիկայից չորսը-հինգը շարքից դուրս է եկել, այն դեպքում, երբ պահեստամասերը չեն հերիքում, որոնցից որոշներն արտասահմանից են հայթայթում: Թագազվիկները նախկինում ձեռք էին բերում 15 հազարով, այժմ դրանց գինը հասել է... 120 հազար դրամի: Իսկ որոշ պահեստամասեր ձեռք են բերվում Ռուսաստանից, Արաբական էմիրություններից:

Շվանիձոր-Վերիշեն հատվածի տեղամասի պետ Կարեն Զակոբյանը ավարտել է երեսնի ճարտարապետաշինարարական ինստիտուտի տրասնպորտային շինարարության ֆակուլտետը: Վեց տարի է, ինչ ճանապարհաշինարարների հետ է եւ իր գործին գիտակ մասնագետի վստահությամբ ներկայացնում է գործերի ընթացքը: Աշխույժական տնակում՝ պատին կախված քարտեզին մայրուղին ներկված է երկու գույնով՝ կապույտը՝ հողագործական, սեւը՝ ասֆալտապատման աշխատանքներն են խորհրդանշում: «Դորոժնիկի» գործերը հետ ընկան, որովհետեւ փոխվեց նախագծի նախնական տարբերակը, որպեսզի Շիկահողի արգելոցը հնարավորինս քիչ տուժի, ընդ որում արդեն կատարվել էր յոթ-ութ կիլոմետր հողային պաստառի աշխատանք, ինչը փաստորեն ջուրն ընկավ: Բացի դրանից, Վերիշեն-Ծավ հատվածում ճանապարհ, որպես այդպիսին, գոյություն չունեւ, եւ ճանապարհաշինարարները, պայթեցումներ կատարելով, մետր առ մետր առաջ են գնացել: Մի տեղանք կա, որ տեղացիները Կապեր են կոչում, իսկ մեխանիզատորները Քարպաի անունով են կնքել: Ականատեսը եղանք, թե քարե բլուրները ինչպիսի հնազանդությամբ են հարթվում, դառնում ճանապարհ: Տեղամասի պետի համոզմունքով օբյեկտիվ չէ շինարարության ավարտի ինչ-որ ժամկետ սահմանել, քանի որ ընդերքն էլ իր անակնկալներն ունի...

«Կապավոր» ՄՊԸ-ի բաժին ընկած հատվածը ձգվում է Շիկահող գյուղի մուտք Շիշկերտի լեռնանցք (ընդհանուր երկարությունը՝ 20,1 կիլոմետր): Ընկերության գործադիր տնօրեն Մելա Զակոբյանյանը տեղեկացրեց, որ մոտ 150 շինարար է աշխատում մայրուղու երկրորդ հատվածում, որոնք ներկայացնում են հանրապետության տարբեր շրջաններ, բանվորական կազմի մի մասը համալրված է Շիկահողի, Սրաշենի և Ծավի մարդկանցով: «Կապավորում» միջին աշխատավարձը 100 հազար դրամ է մեխանիզատորները, բնականաբար, ավելին են վաստակում ճանապարհաշինարարների սոցիալ-կենցաղային պայմանները բարելավված են, ունեն բաղնիք ու ճաշարան, ի դեպ, ձգտում են ճաշարանում օգտագործվող մթերքները գյուղացիներից գնել: Ընկերությունում 50 միավորից ավելի շինարարական տեխնիկա է բաժնում՝ հիմնականում արտասահմանյան մակնիշի եւ հզոր: «Ի՛նչ հիմնախնդիրներ են խանգարում գործին», - ավանդական հարցիս Մելա Զակոբյանյանը հակադարձում է. «Եթե դու ցանկանաս, երբեք պորբեմ չի լինի, ցանկության դեպքում բոլոր հարցերն ինքնին լուծվում են»: Իսկ նշված ժամկետում կավարտե՛ն իրենց բաժին հասած ճանապարհի շինարարությունը, գործադիր տնօրենը հավաստիացրեց, որ եթե տարերքներ չլինեն, ինչպես վերջերս տեղի ունեցած հեղեղը, կտեղավորվեն ժամանակի մեջ: «Իսկ պայթեցումները չե՛ն ազդել Մթնաձորի կենդանական աշխարհի վրա», - անմեղ հարցին տնօրենը կատակով պատասխանեց. «Ձոռ չենք տվել» եւ ավելացրեց, թե շինարարության ընթացքում տարբեր կենդանիներ է տեսել, միայն մթնաձորյան հովազին լուսանկարից գիտի:

Ի դեպ, մեր գրուցին մասնակից էր նաեւ «Ճանապարհագիծ» ինստիտուտի ներկայացուցիչ Գեորգ Դավթյանը, որը եւ նախագծող է, եւ շինարարական աշխատանքների որակն էլ հսկում: Շինարարության ընթացքում նախագծային փոփոխություններից առաջնակարգը վաքերի (ջրատար կիսախողովակներ) տեղադրումը, որ հեղեղաջրերը չվնասեն ասֆալտի պաստառը:

Մենք երթեկեցեցինք նաեւ «Կապանի ճանապարհների շահագործման եւ շինարարական» ԲԲ ընկերության կառուցած ճանապարհահատվածով, որը 20,1 կիլոմետր է, պատկերացում կազմելով կապանցի շինարարների կատարածի մասին: Բայց քանի որ չկարողացանք հանդիպել ընկերության ղեկավարությանը, ուստի գուցե տեղեկատվություն տանք հենց ճանապարհի շահագործման օրը:

Հատված Ղևոնդ Ալիշանի «Միսական» գրքից՝ Արևիք

ՄԱՐՏԻ 2026Թ.

Արևիք պայծառանուն գավառն իր քաղցր անվան նման մի հովիտ ունի, ուր հոսում է Մեղրի փոքր գետը, որով եւ գրեթե ընդգրկում է այն ⁽¹⁾ միայն արեւելյան կողմից ունենալով փոքրիկ ձորակներ, որոնց ջրերը հոսում են Կովսականի խաչքոլու լեռների թիկունքով, եւ թափ առնելով, առանձին-առանձին թափվում երասխի մեջ՝ իջնելով հյուսիսից դեպի հարավ: Հիշյալ լեռներն այն կողմից Արեւիքի սահմանն են, ինչպես հյուսիսից Կապանի կամ Ձորքի լեռները, արեւմուտքից Դարուի բարձր լեռները, ուր է նաեւ նախապես ծանոթ Կապուտջուղը եւ Ալանգյազ լեռնաշարը, որի բարձրակետը Շխյուրտն է՝ 11180 ոտնաչափ բարձրությամբ, հարավից գավառը եզերում է երասխ գետը: Փոքրիկ ձորագետակների նման Մեղրի գետը, որ ունանք գյուղերից մեկի անունով Ջվար գետ են անվանում, ուղղակի հյուսիսից՝ Կապանի լեռների թիկունքից իջնելով հոսում է դեպի հարավ՝ աջից եւ ձախից Դարուի լեռնաշարից եւ Կովսականի կողմից բազում մանր վտակներ ընդունելով, որի շնորհիվ տեղանքը տրոհված է բարետես ձորակների՝ այգեվետ, ծառավետ եւ պողպեթ՝ հանդիսանալով մեր գավառի գեղեցկագույն եւ բարգավաճ տարածքներից մեկը՝ բացի այլեայլ արդյունքից առատորեն տալիս է շերամ եւ բամբակ: Սակայն օդը համաբնույթ չէ բերքին եւ գավառի կերպարանքին. ամառը խիստ տոթ է, իսկ ծմեռը՝ ցուրտ՝ բարձրաբերձ լեռներից փչող հողմերի պատճառով, որի հետեանքով միայն քչերն են հազիվ փրկվում սառնամանիքից: Սա իրենց համար փորձառություն դարձրին ռուսները 1810թ. առաջին անգամ գավառը գրավելիս՝ ավելի քան 1500 հոգի կորցնելով սրածությամբ, ու երեք տարի անց դադարեցրին պաշարումը:



Երկրի բնական հանածոների մեջ, ուր առհասարակ գերակշռում է ծիրանաքարը (Diorite), նշանավոր է Կարճավանի մոտ գտնվող, թող որ փոքր, արծաթահանքը, որ շահագործել է 1834 թ.՝ համաձայն Դյուբուայի ⁽²⁾ վկայության ⁽³⁾, եթե սա շփոթելի չէ Կապարահանքի հետ, որ ցույց է տրվում նրանից մի փոքր վեր, Ագարակ գյուղից հյուսիս:

123. Արեւիքի սահմանները նեղ են. հյուսիսից հարավ ընկած երկարությունն ընդամենը 15 մղոն է եւ գրեթե նույն է արեւելքից արեւմուտք ձգվող լայնությունը, թեպետեւ այս կողմից ավելի երկար է հարավային մասում, բայց նեղ է հյուսիսակողմում՝ ամբողջապես կազմելով 220 մղոն: Սակայն երթադրելի է, թե այն նախկինում չի եղել առանձին գավառ կամ իշխանական տարածք, որովհետեւ չի հիշվում նրա նահապետը կամ մասնավոր անունը, այլ ընդարձակ մի գավառի (թերեւս Գողթն) մասն է եղել, որ հետագայում անջատվելով համարվել է

Սյունյաց աշխարհի ինքնուրույն գավառներից մեկը: Անծանոթ է մնում անվան ծագումն ու պատճառը. այն առհասարակ գրվում է Արեւիք ձեռով, սակայն Բարթոլոմեոս առաքյալի քարոզության պատմության մեջ, որ Օրբելյանը վերցրել է մի հին պատմիչից, գրվում է նաեւ՝ Արեւեք ⁽⁴⁾, իսկ Սարգիս կաթողիկոսը կոնդակում անվանում է Արեւների տուն ⁽⁵⁾, եւ տուն անվանելով ցույց է տալիս երկրի փոքրությունը, որի աներկբա վկայությունը նաեւ սակավությունն է Սյունիքի աթոռահարկի մեջ հիշատակված գյուղերի, որոնք ընդամենը 24-ն են. դրանք են տուրքի հետ միասին.

Աղվանք կամ Աղվո վանք

7

Կառատի 15

Մացրի 8

Ափկավանք 8

Մալունու (Մանլեւ) 8

Տախյար 8

Մեղրո վանք 20

Լսհավանք. Լսնավանք 30

Որդիշո վանք 20

Լուսկա վանք 12

Խոլավանք 12

Ջվարի վանք 12

Կարճավան 12

Մոլոշան 12

Տաշտուն 12

Կուրավանք կամ Կորոնք 8

Ագարակ 8

Մանաղու կամ Մանուղու 6

Մել 6

Տեհի 8

Կորեկնեկ. Կորեկնեք 10

Թաղամայրի 6


Խոզուղյուղ 6

Վարդանաձոր 6

Սրանց մեջ, ինչպես տեսնում ենք, աչքի են ընկնում «վանք» բառով կազմված բարդությունները, որ այստեղ պատշաճ եմ նկատում հասկանալ ընդհանուր նշանակությամբ, այսինքն՝ մենակեցական բնակարանների իմաստով, քանզի այս գավառը որքան անծանոթ եւ անհիշատակ է քաղաքական պատմության տեսակետից, նույնքան քաջածանոթ է թվում համաձայն քրիստոնեական կրոնի՝ Բարթոլոմեոսի եւ նրա աշակերտների քարոզությամբ, որ մուտք է գործել այստեղ սահմանակից Գողթնից (որի մասն էր թերեւս ժամանակին): Հավանաբար Լուսկա վանքը (այդպես էր անվանվում) առաքյալի Լուսիկ կոչված մի աշակերտի անունով է, ըստ պատմության ⁽⁶⁾: Բայց, համաձայն Յուզյանի, տեղավայրը միայն մենակեցական վանքեր չունեն, այլ նաեւ ոչ քիչ թվով գյուղեր,

ՍՏԵՓԱՆՈՍ ՇԱՀՈՒՄԵԱՆ ԵՒ ՏՈՀՄԵ ՆՈՐԱ

301



որոնց հին եւ հեթանոսական անուններն աղավաղված են թվում, եւ կարծելի է, թե Գողթնին սահմանակից այս բնակավայրի բնակիչները հեթանոսական պաշտամունքի նախանձայնորդի հետեւորդ էին եւ գրեթե աներկբա արեապաշտ:

Օրբեյանը ծանուցում է, թե Արեւիքի փոխարեն երկու անուն էին տալիս երկրին՝ Դաշտոն եւ Մեղրի⁽⁷⁾. Երկու գյուղի անունով, որոնցից մեկը համարյա ձորահովտի գլխին է, մյուսը՝ գրեթե նրա ավարտին՝ Երասխ գետին կից: Երկրորդը, բոլոր շեների գլխավորն է: Այս պատճառով գետը եւ բովանդակ գավառը երբեմն կրում էր նաեւ Մեղրածոր (անունը), բայց Տաթեւի թեմի վերջին ցուցակում դրանց փոխարեն գտնվում են երկու այլ անուն եւ վիճակ՝ Մացրու եւ Կաքավաբերդ, որ համաձայն հին Ցուցակի առաջինի մեջ (Մացրու) արձանագրված են հետեւյալ գյուղերը.

- Թոս Աղավնյակ
- Գոմերանց
- Շվանիձոր Տիկնատափ
- Իշխուն
- Նավոն
- Մթնաձոր
- Կարթաթաղ
- Մեզրէն (Մացրի՛)
- Ափկես
- Երկաստանց
- Կռավանք, Կուրոս
- Վանքն
- Նուշանց

- Երկրորդի մեջ
- Լիճ
- Սեադարա
- Տիկնատափ
- Քարն
- Նորաշինիկ
- Թաղ մեծ
- Թաղ փոքր
- Թաղ միջին
- Թխկոտն, Թիկոտն
- Լեռք կամ Լեկ
- Կառոն
- Քուջերթ
- Կալեր:

Սրանցից բացի Դավիթ Բեկի պատմության մեջ հիշատակվում են նաեւ այս վայրերը. Գտանիս (Գիտեմնաս)

**Վահրավա
Բուղաբար
Լեազ
Լեչկին կամ Լեչկին
Քիս կամ Աքիս:**

Դավթի հիշյալ Պատմության մեջ Մեղրածորի միջակողմը կամ մեծ մասը նոր անվամբ կոչվում է Կենավուզ⁽⁸⁾, իսկ վարչատարածքների վերոբերյալ անուններն ամենեւին չեն հիշվում:

Արեւիք գավառը Սյունյաց աշխարհի հարավային մասն է, որով եւ ներկայացնում է Բաղազ կամ Կապանի թագավորների իշխանությունը, ըստ որում պատմիչն ասում է, թե այն բնաշինը է արվել Զարոն ամիրայի կողմից 1126 կամ 1128 թթ.⁽⁹⁾: Եվ այն ժամանակներից ի վեր թվում է, թե որոշ գյուղեր եւ բերդեր ավերվելով ծածկվել են մոռացությամբ, ինչպես անգլիացի ճարտար եւ ռազմագետ մի տեղագրող այս դարասկզբին իր ձեռագիծ ընդարձակ տախտակի վրա գրում է, թե այդ ժամանակ Կապանի լեռների թիկունքին եղել է «ավերված եկեղեցիների եւ գյուղերի բազմություն»^(2*): Սակայն Մեղրածորում վերոհիշյալ շուրջ վաթսուն գյուղի մեկ երրորդ մասն անվանումով եւ դիրքով տակավին հայտնի է: Որ թերեւս փոքր գետակների ձորակներում եղած նրանցից ոմանց, որոնցից քիչ գյուղեր են արձանագրված, օտար անուններով, համարենք մի առանձին վարչատարածքային վիճակ՝ Կենաուզ անվամբ:

Ա. Մեղրածոր

124. Մեղրի գետի ձորահովտի վերին կողմում, ուր երկիրը ճյուղավորելով տրոհում են բազում ձորակներ ու վտակներ, ըստ պատմիչի, Արեւիքի հյուսիսային մասում գտնվում էր Դաշտոնը, որովհետեւ այնտեղ բոլոր գյուղերի վերին (հյուսիսային մասում) եւ ձորագլուխներին կա համանուն գյուղ, որ գրվում է՝ Տաշտոն, եւ համաձայն Բաղրամի՝ Դաշտոնի, եւ պետք է որ բարգավաճ ու մեծ շեն լիներ, սակայն պատմության մեջ նրա վերաբերյալ որեւէ հիշատակություն չեն գտնում, այլ միայն հետագա ժամանակներում՝ 1684թ. հիշվում է Գալուստ անունով մեկը, որպես Թաղեի վանքում ձեռագիր մատյաններ կազմող, ով իր մասին ասում է, թե «**Ղափանի երկրից է, եւ գյուղից, որ կոչվում է Տաշտոն**»: Դավիթ Բեկի ժամանակ այս գյուղն ավերի եւ ավարի մատնվեց Որդվատի խանի ասպատակների կողմից, եւ բնակիչները փախչելով ապաստան գտան Չավնդուրում: Դաշտոնի եկեղեցին կոչվում է Ս.Ստեփանոս:

Գյուղի հարավակողմից Մեղրի գետին է խառնվում աջից, այն է՝ արեւմուտքից Ալանկեզ լեռից իջած մեծա-

գույն վտակներից մեկը՝ Սարի դերեն կամ Սարիդարը, որը եւ գյուղի անունով Լիշկ է կոչվում, որ խառնման անկյունամասում եւ աշխարհացույց տախտակի վրա Շեշկերտ է արձանագրված. սակայն կարծում եմ սա շփոթված է Կովսականի գյուղերից մեկի հետ: Իսկ Լիշկը դափանցիների պատմության մեջ հիշված Լեշկինը կամ Լեշկինն է, ուր եւ գետակը Ղոզղոզ է կոչվում⁽³⁹⁾: Այստեղ Պապի գնդի զորավարներից երկուսը միանալով փորձում են դավաճանել նրան, սակայն նա խոյս է տալիս նրանցից, եւ Դավիթ Բեկն այլ զորավարի միջոցով հաշտեցնում է նրանց: Գյուղի անունն աղոտ կերպով հիշեցնում է Արեւիքի հին Լուսկավանքը, եւ սա հավանաբար Բարթոլոմեոսի Լուսիկ կոչված աշակերտի անունով է, ով, ըստ Սյունյաց պատմիչի, վախճանվել է Վանանդի կողմերում⁽⁴⁰⁾:



ծանոթագրության մեջ, փոխում է աթոռը, որին դիմում է պատերազմների վրա իր ներգործությունն ունեցած մյուս Նշանավոր անձը՝ Տեր Ավետիքը), արժան եմ համարում ցույց տալ, որ շատ ժամանակներ առաջ Շահումյանների տոհմը ծանոթ էր Իտալիայի այս քաղաքում, որտեղ գրում եմ, ուր Ստեփանոսի հորեղբայրը՝ Սահակի որդի Ոսկանը 17-րդ դարի կեսերին (1650-ին կամ դրանից առաջ էլ) եկել եւ վաճառականական տուն էր հաստատել, որ հիշվում է նաեւ դարի վերջին թվականին: Նա հավանաբար վախճանվել է այնտեղ: Վենետիկի պատմության եւ Ս. Խաչ եկեղեցու տարբեր դիվաններում կարելի եղավ այսքանը ճշտել այդ տոհմի ազգաբանության վերաբերյալ.

Ստեփանոս Շահումյանը եւ

Նրա տոհմը

17-րդ դարի կեսերից մինչեւ 18-րդի կեսերը Վենետիկում բարգավաճում է Շահումյանների վաճառատունը, որի գլուխ եւ առաջնորդ դարձան Ոսկանի մահից հետո Գայրապետի որդի Պողոսը, Դավթի որդի Զաքարը, Պողոսի որդի Նահապետը (1728 թ.), նաեւ Ստեփանոսը, ապա Ռոքոսը՝ մյուս Դավթի որդին: Սրա մասին վկայում են հայագի վաճառականները դատավարական ատյաններում, այդ թվում նաեւ Զմյուռնիայի արքեպիսկոպոս Մինաս Փերվազյանը, վկայում է նաեւ մեր հայր՝ Մխիթար Աբբաս, քանզի Շահումյան տոհմի շառավիղներից երեքը՝ Ստեփանոս Վարդանիսյանը, Դավթի որդի Զաքարը եւ Պողոսի որդի Նահապետը 1736 թ. Ս. Ղազար կղզու իրենց վանքում Ս. Գրիգոր Լուսավորչի անունով կառուցել են տալիս վայելուչ մի խորան՝ պատկերներով հանդերձ, ապա (1737 թ.) սեղանի առջեւ պատրաստում են իրենց ննջեցյալների տապանը՝ վրան դնելով քառակուսի հավասարակողմ կափարիճ՝ մի վեմ կարմիր մարմարից, որի վրա արձանագրված է այսպես.

Ղափանեցի Շահումեանց տան Ետուն շինել զայս տուրք Սեղան.

Պարոն Զաքարն որ է Դաւթեան, եւ ընդ նմին զայս դամբարան

Պարոն Ստեփան Վարդանեսեան, Ի յիշատակ եւ ի կայան

Պարոն Նահապետն Պողոսեան. Բնաւից որք են ճիւղք Նոյնոյ տան.

Արդ, այդ ժամանակ Ստեփանոսը թելադրում է Մխիթար արքեպիսկոպոսին աշակերտներից մեկին, այն է՝ Գ. Ղուկաս Ստեփանյան Սեբաստացուն (մահ.1751)⁽⁴¹⁾ գրել «Ղափանցիների պատմությունը»: Նահապետը մահանում է 50 տարեկանում, 1758 թ. մարտի 28-ին, եւ բերվում ու թաղվում է այն դամբարանում: Ոսկանը մահանում է մեկ տարի առաջ (1757 թ. մարտի 12-ին) եւ թաղվում է այդ քաղաքում Վենետիկում⁽⁴²⁾: Իսկ Ստեփանոսը, որ մեր խնդրոք առարկան է, հայտնի է, թե մահացել է 1782-ից առաջ, սակայն երբ եւ ուր՝ անհայտ է: Նա 1733-ից մինչեւ 1750 թ. հիշվում է Ս. Խաչ եկեղեցու այլեայլ դիվաններում: (Այս եկեղեցում) Նա 1743 թ. կարգված էր իբրեւ երեսփոխան, այսինքն՝ իբրեւ տեսուչ եւ հոգացող (Guardian ըստ իտալացիների), ով համարվում էր այն տարվա հայ հասարակության գլուխը, եւ

Գետակին հարավակողմից եւ նրան կից եւս անանուն եւ խիստ նեղ ձորակով աջից խառնվում են նմանապես երկու գետակ կամ հեղեղատ. մեկը (արեւմտյանը) կոչվում է Թաղամերի՝ Թաղամայրի հին գյուղի անունով, որ գտնվում է ձորեզրի արեւելյան մասում: Դավիթ Բեկի ժամանակ այստեղ բնակվում էր 60 տուն թուրք, որոնք տեսնելով Լեվազի ձորում իրենց աջակիցների կոտորածը՝ աղերս ուղարկեցին Պապ զորավարին՝ խնայել իրենց, եւ խնայվեցին, սակայն, երբ Որդվատի Սափի Ղուլի խանը գիշերով հարձակվելով կոտորեց հայոց երկու գյուղ Սայ-անում⁽⁴³⁾, Նույնպես վարվեց եւ Մխիթար զորավարը՝ Դավթի հրամանով թաղամերացիների նկատմամբ: Երկրորդ գետակը պատշաճ է կոչել Կալեր գյուղի անունով (որ Ռուսաց մեծ աշխարհացույցի մեջ գրված է Կեալի ձեռով), որտեղից էր Պապ զորավարը՝ որդին Սրապիոնի, որի մասին բազմիցս հիշատակեցինք, ով այստեղ Դավիթ Բեկի հրամանով ձերբակալվեց՝ մահապարտ լինելով՝ իր վախճանը գտավ Շեշկերտում: Եկեղեցին նվիրված է Ս. Աստվածածնին: Կալեր գետակի աջից՝ սրանից մեկ մղոն կամ քիչ ավելի հեռու եւ Թաղամայրի մոտիկ գտնվում է Վանք գյուղը, որ արձանագրված է Կաքավաբերդի վարչատարածքային վիճակի մեջ, ինչպես եւ Կալերը: Սրանց միջակա տարածքում հաստատվել էին մերձակա գյուղերի բնակիչները՝ Որդվատ խանի արշավանքների ժամանակ: Եվ երբ Պապը խոյս տվեց, փախուստի դիմեցին նաեւ նրանք, եւ անցնելով Խաչալուի լեռներով, փրկվեցին Չավկ-դուր գավառում:

Կալերի հյուսիսակողմում, վտակներից մեկի մոտ մատնանշված է Եկտաստան ավանը, կամ ըստ Նոր ցուցակի՝ Երդաստայցը, որ հիշված չէ հիմում, եւ հայրենիքն է Ղափանցիների պատմության կամ Դավիթ Բեկի հեղինակի, ինչպես հիշեցինք ոչ քիչ տեղերում, այսինքն՝ Ստեփանոս Շահումյանցի, ով որդին է Վարդանիսի կամ Վրթանիսի՝ զորավարներից մեկի, որին իբրեւ գլխավոր կամ սիրելի անձ Բաֆֆին ընդգրկել է ծանոթ վիպասանության մեջ⁽⁴⁴⁾ ըստ երեսակայության հյուսելով գաղափարները դիպվածներ: Ինչը ստույգ էր՝ հիշեցինք տեղագրության ընթացքին, իսկ դեպքերից հետո եղածն անծանոթ մնաց: Եվ որպեսզի այլեւս անծանոթ չմնա ու օտարոտի չկարծվի նրա արեւմուտք գալը եւ Գոմեական եկեղեցու միաբաններին հարելը (ինչպես կարծում է նորագույն հեղինակն իր վեպի

ՏԵՐԻՆՈՒԹՅՈՒՆ

1745-46 թթ. անդիկոս, քանզի այսպես են կոչվում երեսփոխանի երկու օգնականները: Հայ ժողովականների դասակարգում միշտ առաջինն էր եւ Լճիկատների մեջ՝ առատաձեռն, ինչը Նշան էր առեւտրի մեջ նրա փարթամության եւ հաջողության: Ս. Խաչ եկեղեցու տապանի շինության համար տվել է վենետիկյան 100 լիրա, որ այն ժամանակ կրկին եւ ավելի արժեք, քան այժմ: Վենետիկի հայության 1750 թ. մարդահամարի մեջ Շահումյանների, Հ. Սեդրոսյանի, Միրիմանյանների ազնվաշուք տոհմից հետո եկեղեցու կառուցողների մեջ Նախքան ուրիշներն առաջին շարքում հիշված էր Նա⁽⁵⁷⁾: Շահումյանների վաճառքի գլխավոր առարկաները երեքն են՝ դամասկոսյան կերպասեղենը, հայելիները, ապակյա աշտանակները եւ տարաբնույթ արեւելյան իրեր, որոնց որակը, գինը եւ շահը կտեսնենք հետո, երբ խոսք կլինի հայոց ընդհանուր վաճառականության մասին: Հիշատակելի է, որ Վենետիկում Շահումյանների գործակիցն ու վաճառակիցը Նուրյանների տունն էր: Առեւտրի վայրիվերումներից գերծ մնալու նպատակով 1735 թ. Ստեփանոսը միանում է Նահապետին եւ Մարկոսի որդի Ադամին, գնեցին մի նավի (Ռոբոսի Պրիլի) քառորդ մասը ավելի քան 2000 դոկատով, եւ նավի անվանը, որ կոչվում էր Ս. Մարիամ Շնորհաց, ավելացրին Ս. Խաչ, ինչը եւ հովանավորության արժանացավ պետության կողմից՝ երբեմն բարբարոս ելուզակներին հարվածելու եւ այլ նավեր փրկելու պատճառով: Չգիտեմ, որ թվականին, սակայն թվում է 18-րդ դարակեսին Ստեփանոսն ամուսնանում է Վենետիկ քաղաքում, կնության է առնում Ռոզալյա (Ճերմակ վարդ) Մարիամ Վառվառենին (ծնվ. 1732 թ.), որ դուստրն է Հարությունի (որ զավակն է բանասեր եւ բարեպաշտ այդ Գեորգ Գարագաշյանի⁽⁶⁷⁾ եւ Թագուհի Անջելի՝ դստեր Չոլագ Խաչատուրի, որին խալացիք Ռոսսի (Կարմիր) էին անվանում:

Ստեփանոսի վերաբերյալ միայն իմանում եմ, որ երեք որդի է ունենում, առաջին երկուսը՝ Հովհան եւ Մարթա, ծննդից հետո մկրտվում եւ մահանում են, մյուսը՝ Մար. Աննա Անճելա (ծնվ. 1750), 30 տարեկանում պսակվում է քաղաքացի Մկրտիչ Ռեադի հետ (1780, ապրիլի 3) Հայոց Ս. Խաչ եկեղեցում, մահանում է 1783 թ. հունվարի 15-ին՝ դժվարածին երկունքի հետեանքով: Վենետիկում Ստեփանոսի մասին վերջին տեղեկությունն ինձ ծանոթ է հայոց վերոհիշյալ 1750 թ. օգոստոս ամսվա ազգահամարից, ինչպես նաեւ՝ նույն թվականի հոկտեմբերին երկրորդ դստեր ծննդից: Քիչ տարիներ անց, այն է՝ 1757 թ. (երբ վախճանվեց Ոսկանը) հարյուրամյա շահավաստակ գործունեությունից հետո մնանկանում եւ փակվում է Շահումյանների վաճառատունը, որից թվում է՝ վնասվում է Ստեփանոսը⁽⁷⁷⁾, ով այնուհետեւ մամք արդյոք Վենետիկում, թե՛ գնաց ուրիշ տեղ, չգիտեմ: Սակայն դստեր մատակարարի հասակը եւ սրա Վենետիկում ապրելը թույլ չեն տալիս կարծել, թե հայրն իսկույն մեկնում է:

125. Վերոհիշյալ չորս գետակները՝ երկուսն այստեղ եւ երկուսն այնտեղ, մեկտեղվում են Վանքի եւ Թաղամայրու հարավային մասում: Նրանց կցման վայրին մոտիկ մի մեծ գյուղ կա, որ Ռուսաց աշխարհացոյցն օտարոտի անվամբ արձանագրել է՝ Բինաթափուրթ (?), սակայն արձանագրության մեջ, ինչպես պատշաճ է թվում, գրված է Ջվար, որ հին Ցուցակում արձանագրված է Ջվարի վանք⁽¹²⁾, ու սրա դիրքին համապատասխան է թվում եւ Մեղրի գետի մեծությունը, որ, ինչպես վերև արձանագրեցինք, անվանվում է Ջվարչայ, Ղափանցիների պատմության մեջ Ավան է կոչվում, ուր Պապն առաքեց Լեւազի ձորի թուրքական գյուղերից գավթած ավարը եւ պահապան կարգեց նրա վրա⁽¹³⁾: Հին գյուղն այժմ ավերված է, միայն եկեղեցին է կանգուն, ուր եւ ուխտի են գալիս Վարդավառի տոնի ժամանակ:

Ջվարից հարավ գետն աջից ընդունում է նույն Ավանցյալ լեռներից իջնող երկու վտակներ, որոնցից մեծի անկյան միջնամասում կա Կյուլ կամ Կյուլ անունով մի գյուղ, որ թվում է՝ Կաթավաբերդ վարչատարածքի Լիճք գյուղն է՝ Ս. Գեորգ եկեղեցով: Սրանց եւ Լեւազի ձորի միջեւ գետից աջ կա մի փոքր գյուղ, որ հին Ցուցակում կոչվում է Տեղի⁽¹⁴⁾, որ այժմ աշխարհացոյցի մեջ Թեղի է գրվում: Սրանցից երկու մղոն հարավ գետի մեջ լցվում է մի փոքրիկ գետակ, որ իջնում է Շեյխ կամ Շխետուր կոչված լեռան բարձր կողից (300), եւ անվանվում է նրա անունով: Ձախից խառնման անկյունում կա Վերին Լեւազ գյուղը, սակայն թերեւս ոչ թե սա, այլ այն, որ սրա հարավ-արեւելյան մասից հոսող նույն մեծագույն գետակի մոտ է, բուն Լեւազի ձորն է, քանզի նրա խառնման տեղում աջից՝ հարավակողմում, կա Ներքին Լեւազը, որ Վերինից մեծ է՝ լինելով նրանից չորս մղոն հեռու: Հայ տեղագիրներից մեկը վայրը կոչելի է համարում⁽⁸⁹⁾ Լիճքվազ՝ գետի ջրերի սրընթաց հոսքի պատճառով, կամ էլ՝ Ալանգյազ (որ Արագած է անվանում) լեռների լճակների, իսկ մեկ ուրիշը՝ Լեշկված է գրում: Ասվում է, թե գյուղը մեղրեցիների ամառանոցն է՝ շրջապատված վայրի եւ ընտանի ծառերով (որոնցից հիշվում են թխկին, մախրին, հացին, հոնին, ոգլին, խնձորենին, շլորենին, գայլկեռասենին, մասրենին, թբրդին, ցախավելի, խեչել, մացառենի եւ այլն)⁽⁹⁰⁾: Ջրի ափին գյուղ կա՛ մոտ հիսուն տուն, շուրջ 40 տարվա ընթացքում (1850) տարբեր վայրերից գաղթած (բնակիչներով), որոնց կից է հին գյուղը՝ տների ու եկեղեցու հետքերով: Նույն գետակի մոտ հիշվում են թուրքերի Մյուլք եւ Մաշ գյուղերը: Թերեւս Լիճքվազ անվանման օգտին կարող է խոսել նաեւ լեռան վրա գտնվող լճակը, որից, ասում են, թե ականակիտ աղբյուր է հոսում: Թվում է՝ այս վայրն է հիշում մի նոր ճանապարհագիր (1831), որ թուրքաբնակ գյուղի մոտ ուխտատեղի հռչակված այդ տեղը կոչում է Փիրդուրան օտարաձայն անվանումով:

Փոքր Լեւազի ձորակի գլխին, Շխյուրտ լեռան ստորոտին է Բուղաքար գյուղը, որ հիշված է Ղափանցիների պատմության մեջ⁽⁹³⁾, լեռներից անցնելով՝ այնտեղ թափվեց Որդվատի խանի գործը, եւ Լեւազի ձորի գյուղերի թուրք բնակիչներին Որդվատի (գործը) անցկացրեց՝ ապահովելու համար հայոց ներկայությունից, եւ մնաց միայն երեք գյուղ՝ Դամալին, Շրդին եւ Պիրենան (չորրորդը, թվում է, Թաղամայրին է), որ Պապը կարգադրեց հարվածել, կողակտեղ նրանց ինչքերը, եւ Դավիթ Բեկը բաժանեց նրա գործն ու նրանից ապստամբածներին երկու գորավարի մեջ: Լեւազի ձորի այս գյուղերը, Ղափանցիների պատմիչն ասում է, թե Արձանաքարի կողմերում է, որ չգիտեմ, թե ինչ է լե՛ռ է, թե՛ հուշարձան: Վերին Լեւազին կից եւ հանդիակակց է գետի ձախ կողմում գտնվող Նուշկեկ գյուղը (արձանագրված է քարտեզի վրա), որ, անշուշտ, Կաթավաբերդի վարչատարածքի Նուշանցն է: Ստորին Լեւազի ձորի հարավից, որ ջրի աջ կողմում է, կա Վահրավար գյուղը, որ գրված է նաեւ Վայրավառ՝ Ս. Գեորգ եկեղեցով, ուր վերադառնալով՝ Պապն ավերում է Լեւազի այլ գյուղերը, եւ գտնելով ուրացողների 3 տուն, կոտորում բոլորին ու նրանց ինչքերն ավարելով հեռանում: Իսկ ձախից Վահրավարի դիմաց հին Աբկավանն է, քանզի կարծում եմ, թե այս է արձանագրված Դյուբուայի քարտեզում՝ Abshavaza: Ներքին Լեւազից մեկ մղոն դեպ հարավ կա մեկ այլ գետակ, որ դրանից արեւմուտք աջից թափվում է Մեղրաձորի մեջ՝ իջնելով Ազնվաբերդ լեռից, որ միջասահման է Արեւիքի եւ Գողթանի, 8900 բարձր, եւ նույն ձորակի մեջ են Գտանիսը եւ Ուճանապասը⁽⁹⁹⁾՝ (վերջինիս) հայեցի անվան աղավաղումով, եւ Ագարակը, որ արձանագրված է հին Ցուցակում. սրա մոտ է գտնվում Կապարահանքը: Ագարակի եւ Գտանիսի միջեւ Կուրունն է, որ, անշուշտ, նույն Հորոնքը կամ հին Ցուցակի Կուրավանը եւ կամ Տաթեփի թեմի նոր ցուցա-

կի կռավանքն է⁽¹¹⁾:

Մեղրածորի ձախակողմից, այսինքն՝ արեւելքից, Կալեթի ճորակից հետո, լոկ մի փոքրիկ ճորագետակ կա, որ Նուշանց գյուղից մեկ կամ մի փոքր ավելի մղոն հարավ-արեւելք թափվում է գետի մեջ, եւ հարկ է այն կոչել Վարդանաձոր՝ աջակողմյան երկու գյուղի անունով, որոնք ճորափի արեւմտյան մասում են: Ցանկալի այդ անունը գտնվում է հին Ցուցակում, բայց ըստ տուրքի չափի ենթադրվում է, թե մի փոքրիկ գյուղ է եղել այն ժամանակ, իսկ այժմ երկու գյուղ են եւ ոչ փոքր. Վերինը ճորագլխին է, Աշխալի լեռան ստորոտին, ստորինը՝ երկու մղոնով պակաս եւ շուրջ մեկ մղոն ու կես հեռու Տեհից: Վարդանաձորի եզրին կա Լեկ կամ Լյոք գյուղը, որ տարածված է ջրի երկու կողմում: Սրանից հարավ մի փոքրիկ վտակ թափվում է Մեղրածորի մեջ, ինչպես եւ՝ մեկ այլ վտակ ներքին Լեւազի ստորին մասում: Քարտեզում արձանագրված չեն Նրան կից շինություններ, ճորակները նեղ են, փոքրիկ իբրեւ կիրճեր. դրանցից մեկը պետք է որ Շրվանի ճորը լինի համանուն գյուղով, երկրորդին հանդիպակաց է Ագարակի գետակի խառնման տեղը:

126. **Շուրջ կես մղոն մոտիկ դրանց խառնուրդին հարավակողմից եւ շուրջ երկու մղոն երասխ մեծ գետի ափերից դեպ հյուսիս գտնվում է Արեւիք գավառի գլխավոր եւ գեղեցկանիստ շենք եւ գետի անվանատուն՝ Մեղրի ավանը, որ տարածված է Նրա երկու եզերքներին՝ այգետանների, թթենիների, բամբակի դաշտերի ու պտղատու պարտեզների մեջ, եւ անունն այսպես է ավանդված այդ կողմերի պատվական մեղրի պատճառով: Ճանապարհագիր Դյուբուան, ով Կարճավանի քարքարոտ ճանապարհով դժվարությամբ մտավ Մեղրու սահմանը (1834 թ. ապրիլի 11), ասում է. «Թվում է, կարծեք, դրախտ ենք տեղափոխվում, ուռենիներն արձակված ճյուղերով, ծորենիները՝ ծաղկած, բանջարանոցները, այգիները՝ տնկված դարեանադներին, տները՝ հողաշեն, քարածայռերը՝ սրագագաթ, որոնք իրենց վրա կրում են հնաշեն բերդի աշտարակները. (այս բոլորը) ներկայացնում են նկարագրելի մի տեսարան»: Սակայն այս ժամանակ բուսականության ոչ լիակատար աշխուժացումը հետեւանք էր կլիմայի խստության, եւ դրա պատճառը բարձր լեռներն էին, որ արգելք էին արեգակի ճառագայթների վաղ թափանցմանը եւ ուշ նահանջին, նաեւ՝ Ալանգյազից եկող ցրտաշունչ օդի: Սրան հակառակ ամառվա տոթը վայրը դարձնում է առողջության աննպաստ, որի պատճառով բնակիչները բարձրանում են Լիչքի գովասուն վայրերը: Իսկ Ռադոն, որ հունիսի կեսին (1830 հունիս 17) այստեղ էր հանգրվանել, նույնպես գովում է Մեղրու ջրերը եւ բուստերը՝ ամենուրեք նկատելով դալարություն եւ պտղավետություն՝ թզենիներ եւ ռնենիներ, թթենիներ, շլորենիներ, կեռասենիներ, լայնասաղարթ սոսիներ, բարձր կաղամախիներ եւ պարտեզներում՝ մայիսյան վարդենիներ, համաձայն պարսկական անվանումի եւ մոլոշագգի լավատրի (Lavatera), հիշում է նաեւ բամբակի առատությունը, նաեւ՝ շերամի բերքը, իսկ քարքարոտ եւ ապառաժ սահմանները պատված են ցամաքասեր բույսերով եւ փշերով: Մեղրին բաժանված է երեք թաղի, որ երբեմն ներկայանում է իբրեւ քաղաք կամ գոնե բազմաբնակ քաղաքավան: Մեկը գետի ձախ կողմում է, որ արեւելքից է, մյուս երկուսն աջից են, սակայն սրանցից մեկը հարյուր տարի է, ինչ համարյա իսպառ ավերված է, եւ հարկ է ավերակներում քննության արժանի բաներ գտնել⁽¹²⁾, նաեւ՝ աշտարակներում կամ մանր ամրոցներում, որ հիշում է հայտնի ուղեւորը (Դյուբուա), նրանք, որ տակավին փոքրիշատե կանգուն են մնացել բլուրների կատարին՝ շրջապատված շինություններով, եւ ավանը դարձնում են ամուր վայր, որի պատճառով է կոչված է Մեղրու բերդ: Տաթեւի թեմի Նոր վի-**

ճակագրության մեջ սրանք կոչվում են Մեծ, Փոքր, Միջին թաղեր, որոնց բոլոր բնակիչները միասին շուրջ հազար հոգի են⁽¹³⁾: Ըստ եվրոպացի Նորագույն ճանապարհորդի՝ Մեծ եւ Փոքր թաղերն ունեն մեկական քարաշեն եկեղեցի⁽¹⁴⁾, որոնք սակայն բարեխնամ չեն թվում, ինչպես Մեղրու Ա.Յովհաննես վանքը, որ գտնվում է արեւելակողմում՝ բնակավայրից մի փոքր հեռու, ուր առաջնորդից գատ, թվում է, թե միաբաններ չկան, այլ մի քանի պահապաններ, թեպետ մենաստանը քիչ թվով կալվածքներ չունի: 18-րդ դարասկզբին հիշվում է ոմն Դանիել վարդապետ Մեղրեցի որպես մեկն Ալեքսանդր կաթողիկոսի⁽¹⁵⁾ կտակը՝ նախապատրաստողներից: Ուշ ժամանակներում Մեղրում գտնվել են ուսումնական հրահանգներ, որից երեւում է, թե ժողովուրդն անփույթ է գտնվել բամբակի, շերամի եւ այգիների մշակության նկատմամբ. սրանց մեջ գովում են կարմիր գինին: Դժվար հասկանալի է նաեւ Նրանց բարբառը, գողթեցիների նման (Նրանց խոսքն ունի) պարսկախառն երանգավորում եւ ոճ, (քնորոշվում) հայերեն բառերի ծայրահեղ աղավաղումով⁽¹⁶⁾: Այսուամենայնիվ Մեղրու հետ կապված կորովաբան եւ հանճարեղ այրեր հույս են ներշնչում, որ (գավառը հետին չէ) կրթության մարզում, այդպիսիք են 17-րդ դարի հեղինակ երեմիա վարդապետը, որ ստեղծողն է մի Բառաբանի կամ Աստվածաշնչի բառերի բացատրության⁽¹⁸⁾, նաեւ՝ Մովսես կաթողիկոսի⁽¹⁹⁾ աշակերտ Իսրայել վարդապետը: Աբրահամ Գ կաթողիկոսն իր շրջագայության ժամանակ՝ 1735 թ. գալով այստեղ, գրում էր. «Եկանք Մեղրի, որտեղ կար պատվական եւ հաճոյական մի փոքրիկ Վանք, ուր մնացի երեք օր՝ սփոփելով նաեւ Նրանց»⁽²⁰⁾: Պատմության մեջ 11-րդ դարավերջին՝ 1083 թ. հիշվում է Մեղրու բերդի տեր ոմն Աբուսահլ, որ Տաթեւի եկեղեցուն նվիրեց «Մեղրու ձորի Բերդավազյանց կոչվող մեծ այգին»⁽²¹⁾: 12-րդ դարի առաջին կեսին այս ավանից Սյունյաց աթոռի եպիսկոպոսությանն ընծայվեցին երկու եղբայր՝ Նախ՝ Բարսեղը, որ «կարճ ժամանակ ապրելով՝ մի փորձանքով ջորու վրա հեծած ընկնում է երասխ գետի մեջ. Աստապատ գյուղի մոտ, եւ լողորդները մտնելով (ջրի մեջ) Նրան հանեցին այն կողմում, եւ մեծ լույս ճառագեց ջրի վրա, ու տանելով Նրան թաղեցին Մաղարթա վանքում»⁽²²⁾: Ապա Գրիգորը, որ Մեղրի ավանի ավագերեցն էր, «իր Ծամամ կոչվող սրբասեր եւ մեծահարուստ տիրուհուց հորդոր է ստանում. Ով երեց, Սյունյաց աթոռը ամայացավ, փութա եւ եղիր քահանայապետ, որպեսզի մեր որդին էլ լինի քահանայապետի որդի..., որից համարձակվելով գնում է Ներսեսի եղբոր՝ Չայոց տեր Գրիգորիս կաթողիկոսի մոտ, եւ այնտեղ ձեռնադրվելով եպիսկոպոս՝ գալիս է Սյունիքի վիճակ, եւ մնալով քսան տարի մահանում է Վայոց ձորի Խարձա գյուղում՝ իր հավատացյալ համայնքի մեջ շրջելիս Չայոց Ռժէ (1168) թվականին»⁽²³⁾: Սրանից տասը կամ տասնմեկ տարի առաջ այլազգիները գաղտագողի հարձակվելով տիրեցին Մեղրուն եւ խլեցին Սյունիքի վերջին տկարացած թագավորներ Գրիգորի եւ Սմբատի ձեռքից, եւ ոչ շատ տարիներ անց, համաձայն պատմիչի, նվաճելով Բաղաբերդը՝ «բնաջինջ արեցին Կապանի տունը, Արեւիք գավառը»⁽²⁴⁾:

Բայց հետագա դարերում մեղրեցիներին գոնե կարողացավ պահել ազգային ոգին, տնտեսվարությունը, ճոխությունը՝ հողի աշխույժ մշակությամբ, օտար երկրի մեջ կատարված առեւտրով: Եվ քանի որ մեծ էր բնակչությամբ եւ (մյուս կողմից էլ) ստանում էր մերձակա գյուղերի աջակցությունը՝ այլազգիների դեմ մեծ քաջուպան ցուցաբերեցին Դավիթ Բեկի պատերազմների ժամանակ, երբ Որդվասոցիները եւ այլ պարսիկներ Սեւ լեռների (Գարատաղ) կողմից 18 հազարով պաշարեցին ավանը: Մեղրեցիների առաջնորդներ Կոստանդինը, Յովհանն,

ՏԵՂԵԳՆԵՐ

Սարին և Առաքելը 400 զորականներով՝ բաժանվելով երեք թաղերի մեջ՝ գինավառվեցին Նրանց դեմ: Չկարողանալով առաջին թաղի դեմ, երբ այլազգիները հարձակվեցին և գրավեցին Փոքր թաղը՝ սրանք քանդելով կամուրջը՝ հրաձգությամբ վանում էին Նրանց և թույլ չէին տալիս մտնել մյուս երկու թաղերը: Նրանք մարդ ուղարկեցին՝ Դավթի զորավարներից օգնություն խնդրելու: սրանցից փութով օգնության եկավ Պայինդուրը՝ Կովասկան գավառում կենտրոնացնելով 2000 մարտիկ: Սակայն մինչև Նրանց հասնելը, մեղրեցիները գիշերով հարձակվեցին Փոքր թաղի վրա, մեծ կոտորած արեցին, և շատերին փախուստի մատնելով հետ շարտեցին Որդվատ իրենց գլխավորի հետ միասին: Պայինդուրը շուտ հասնելով (գործը գնդերի բաժանելով՝ լոկ 860 մարդկանցով 7 ժամվա ընթացքում սաստկորեն կռվելով՝ թշնամիներից կոտորեց 11000-ի, ձերբակալեցին Նաե Զառի Ծափի անունով Նրանց առաջնորդներից մեկին և բանտ նետեցին, նմանապես բազում ավար առան: Բայց ոչ քիչ թվով քաջ այրեր ընկան Նաե յուրայիններից, որոնց մեջ Լեազի քաղաքապետ Մուրումը և Նրա հորեղբոր որդին: Եվ շուրջ մեկ տարի անց Որդվատ եկավ Երեանի խանի եղբայրը և իմացավ կատարված դեպքերի մասին, դատի կանչեց մեղրեցիներին, սակայն քննելով ու տեղեկանալով, որ Նախ որդվատցիներն են վնասել մեղրեցիներին՝ արդարացրեց Նրանց և ազատ արձակեց, երկուստեք ազատ արձակեցին Նաե իրենց գերիներին և հաշտություն կնքեցին մի որոշ ժամանակ: Քիչ ժամանակ անց (1726-27) պարսիկների փոխարեն ավելի հզոր բանակով հարձակվեցին թուրքերը, երբ դարձյալ հայերին հաջողվեց դարաևամուտ լինելով՝ Մխիթարի և Տեր Ավետիսի առաջնորդությամբ՝ Նրանց շփոթի մատնել և հրապուրել դեպ Ուզունպենտ կոչվող կիրճը, որ տանում, դուրս է բերում Երասխի մոտ, և այնտեղ նեղը զցելով ոմանց կոտորեցին և ոմանց էլ գետի մեջ խեղդեցին, և անթիվ ավար առան, այդ թվում Նաե իրո ճարակ դարձրին 32000 հարկադրեցին: Սպանեցին Նաե Նորվիլ անունով մի Դաշտեցու, որ ուրացել էր քրիստոնեական հավատը:

Քաջերի հաջորդներն ու ժառանգները՝ մելիքության շառավիղները՝ հարատեցեցին և հարատեում են մինչև օրս, որոնցից անցյալ դարավերջին (18-րդ դ.) և Ներկա դարասկզբին (19-րդ դ.) գովասանքով են հիշվում Մելիք Յովհաննը և Պարոն Աղաբաբը: Սակայն թուրքերի, պարսիկների և Ղարաբաղի խաների դեմ մղած տարաբնույթ պատերազմների պատճառով ժողովուրդը նվազել է. 1877 թ. մի մեղրեցի գրում էր, թե ավանում բնակվել է 725 հոգի՝ տղամարդ և կին⁽¹⁵⁾, Նույնը վերաբերում է հինգ գյուղերին (որ միասին՝ Չիրվանի ձոր, Մանլե, Վահրավա, Գետնեխ (որ գրում է Գիտեմաս) և Կուրուս, ուր բնակվում են ազգակիցներից լոկ 684 հոգի: Իսկ մեկ այլ մեղրեցի ասում է, թե 1880 թ. Մեղրիում եղել է 150 ծուխ, և տեղի մելիքը եղել է Ասլանյանցը: Անցյալ դարի երրորդ քառորդին (1766 թ.) Յովսեփ էմինը⁽¹⁶⁾ Մեղրիով անցնելիս, որ քաղաք է անվանում և մի տեսակ հասարակապետություն, ասում է, թե այնտեղ 3000 տուն կար, հիշում է Նաե բերքառատ այգիների մշակությունը, մետաքսի ու բամբակի առատությունը, կանանց ճարտարությունը Նրանցից (հագուստ) հյուսելիս, գովում է Նաե մեղրեցիների քաջությունը, որովհետև մերժեցին Նադիր Շահի սպանվելուց հետո ոտքի ելած բռնակալներին, հետագային հանձն առան հնազանդվել Ղարաբաղի տիրակալ Իբրահիմ խանին:

Որ մեղրեցիների նախնիները միայն հողագործությամբ չէ, որ զբաղվել են, այլև մյուս դափանցիների նման՝ առևտրով, կարող են, անշուշտ վկայել եվրոպական քաղաքների դիվանները, մասնավոր՝ Վենետիկի, ուր, Իտալիայի մյուս քաղաքներից ավելի, հաճախում էին: Այնտեղ

Հայոց Ս. Խաչ եկեղեցու առանձին դիվանում 17-րդ և 18-րդ դարերում հիշվում են մեղրեցիներից Ադամի որդի Կոստանդը (1676-ից մինչև 1730), որ, ինչպես երևում է, ազգային առաջնորդներից էր, և այն տասն անձանցից մեկն էր, որ կարգված էր իբրև գործակալ և դատավոր ընդդեմ մի Նավապետի (Copessich). սա այրի լինելով՝ կնության է առնում Օգոստին Գաբելլերային, պատկվում է Մուրան կղզում (1694 թ., ապրիլի 27) և վախճանվում 80 տարեկան հասակում (1730 հուլիս 16), թաղվում Վենետիկի Ս. Սեբերում, ուր Նրա կինը հուղարկավորություն է կատարել տալիս եկեղեցու սպասավորներին: Տեր Ջաքարիայի որդի Հակոբը, որ 1689 թ. Ս. Խաչ եկեղեցու նորոգության առիթով մի պղնձյա կանթեղ է նվիրում և 20 դուկատ՝ արծաթյա կանթեղների պատրաստման համար: Պապուլի որդի Ոսկանը, որ 1695 թ. քսան այլ ազգակիցների հետ միասին աղերսում է (Վենետիկի) հանրապետությանը՝ իսպանացիների մոտ միջնորդել և իջեցնել իրենց ապրանքների գները, որովհետև Նրանց Նեապոլսեցի գործընկերները գերված էին իրենց Նավի հետ միասին, և խնդրագրում ասում էին, թե իրենք տասը տարի է, որ լինելով այստեղ (Վենետիկ) որպես պետության հպատակներ, իրենց առևտրով շահ են բերել (քաղաքին) մասնավոր այն ժամանակ, երբ Վենետիկի շահավաճառքը նվազել էր⁽¹⁸⁾: Նույնը հաջորդ տարում (1696) պահանջում էր մեկ այլ Նավապետի (Ֆրանգուլիչ) ժառանգներից Ջյուլուսիայում բռնագրավված իրենց ապրանքները: Սրանց ժամանակակից են ոմն Անտոն, Բադի, Պոդոս և Մալումի որդի Խաչիկ Ահարոնենցը, ով հիշվում է 1728-1745 թվականներին:

Հետագա ժամանակներում Արեւիքի երկրորդ Նշանավոր վայրը դարձավ Կարճավանը, որ ստուգապես Մեղրածորի բնիկ տարածքից դուրս է երեւում (թեպետ պատմիչը սրա մեջ է գետնդում այն)⁽²⁵⁾ և արեւմուտքից Նրան կից է լեռներով, սահմանակից Որդվատին, փոքրիկ առանձին ձորակով, գեղեցիկ և այգեվետ սահմաններով, որոնց փրփրոտ գիւնի գովվում է: Սակայն երկիրը հատկապես Նշանավոր է կապարի և արծաթի կամ արծաթախառն կապարի բովքի պատճառով, սակայն ինչպես լինելը չգիտեմ: Պատմության մեջ Կարճավանը հիշվում է 10-րդ դարասկզբից, երբ Սմբատ Ա Բագրատունի արքան գալով Տաթևի եկեղեցու Նավակատիքին՝ ըստ պատմիչի Նրան նվիրաբերեց Կարճավան մեծ ավանը, որ «Արեւիք գավառի Մեղրածորում էր, որ ինքը ձեռք էր բերել գնումով»⁽²⁶⁾: Կարեւոր և ամուր շէնքերից մեկն էր Նաե Սյունյաց թագավորների օրոք, որոնց ձեռքին մնաց Նաե Կապանի կորստից հետո, ավելի ուշ նվաճվել է այլազգիների կողմից մյուս բերդերի հետ միասին: Շուրջ մի կիճակագրության ժամանակ շուրջ 40 տարի առաջ հայազգի բնակիչները 23 տուն էին և 154 հոգի⁽²⁷⁾, իսկ 1873 թ. մարդահամարի ժամանակ արձանագրված էր 35 տուն, 366 հոգի և ռուսաց պատկանող մի տուն: Հայտնի է, որ այժմ դրանց թիվն ավելի են աճել է: Դյուբուսն ապրիլի սկզբին (1834 թ.) անցնելով Կարճավանից Մեղրի՝ ծաղկած սակավաթիվ բույսերից հիշում է դրանց մի տարատեսակը՝ Աբուրբինի (Euphorbia rigida) և Նրան մոտ ավազի ու ժայռերի վրայով սողում է Ջուղայի պարուրածե Կողզինջը⁽²⁹⁾: Ավանի եկեղեցին նվիրված է Ս. Աստվածածնին: Ավանից մոտ երկու մղոն հարավ-արեւմուտք մյուս վտակներին մոտիկ գտնվում է Կարճավանի սուրբ ուխտը կամ Ս. Ստեփանոս վանքը: Այստեղից էր Մովսես կաթողիկոսի աշակերտ Եսայի վարդապետը, որ կառուցեց և առաջնորդը եղավ Երևջակի Ս. Կարապետ վանքի: 1665 թ. հիշվում է Նաե Նրա եղբայրը՝ տեր Յովհաննեսը, որ 1660 թ. աղաչելով գիտնական վարդապետ Ստեփանոս Լեհացուն՝ թարգմանել է Յովսեփոսի Յրեից պատերազմների պատմությունը լատիներենից, որին կցում է և իր այս հի-

շատակարանը. «Ես մեղքով խոտորված, բանի պաշտամունքի քարոզության գործի մեջ անպիտան Յովհաննեսս, ըստ մարմնի եղբայրը Ապրակունիսի Սուրբ Կարապետ վանքը կառուցող Եսայու, սակայն Նրա արի գործերից ես քաջարտությունից զուրկ եմ հեռու գավառով Մեղրուց, գյուղով՝ Կարճավանցի, միշտ լսում էի Հայոց բոլոր պատմություններում Յովսեփոսի վերաբերյալ, եւ տեսնում էի այնտեղից բերված վկայությունները, եւ շատ փափագելով ցանկանում էի, բայց չէի տեսնում մեր ազգի մեջ: Այս պատճառով մեր սրբազնագույն մյուս եղբայրների մեջ թախանձեցի երջանկապատիվ մեր եղբորը՝ տեր Ստեփանոս վարդապետ Լեհացուն՝ թարգմանելու համար, որ տեղի տալով մեր աղաչանքին՝ սիրով թարգմանեց, եւ ես նույն միջոցներով ընդօրինակել տվի»⁽²⁸⁾:

Երասխի ափին երկու վտակների բերանի մոտ կա Նաե մի իջեան, որ կոչվում է Կարճավանի քարավանատուն:

Բ. Արեւիքի ձորակները՝ Կենավագ

Երկրի մի մասը, որ Մեղրաձորի եւ Պասուրի գետահովտի մեջտեղում է, կարծում եմ Արեւիք գավառի արեւելյան մասն է եւ նույնական է Ղափանցիների պատմության մեջ (հիշատակված) Կենավուզին՝ գեթ արեւելյան մասով: Այս տարածքում անջրպետ Կովսական լեռների թխկունքից իջնում են շուրջ տասը մանր վտակներ եւ խիստ նեղ ձորակներով ուղղակի հոսելով դեպ հարավ՝ թափվում են Երասխը, Մեղրու սահմանակցությունից արեւմուտքից սկսած առկա են հետեյալները. առաջինի սկզբնամասում արձանագրված է մի ավերակ գյուղ՝ Սեաստան անունով, որ, թվում է, Տաթեւի Նոր ցուցակի Սեաստարն է, որին հարավից կից է Կերոյու կամ Գերայու գյուղը (համաձայն ռուսական աշխարհագրոցի), ինչը, կարծում եմ, Գավառն է, որի միջով անցավ Աբրահամ կաթողիկոսը Մանլեից Մեղրի գնալիս: Երկրորդ ձորակը, որ մյուսներից երկար է, հարկ է կոչել Մանլեի անունով, որը եւ Մալեն է. հետագայում սա մեկն է դառնում Մեղրաձորի թխկունքում գտնվող գավառիս գլխավոր գյուղերից: Հին ցուցակում այն գրված է՝ Մալունու (Ռուսաց մեծ աշխարհագրոցում՝ Մալովալան), սակայն պատմության մեջ չի հիշվում, բայց միայն՝ Դավիթ Բեկի օրերին, որի ժամանակ որդավատեցի Սափի Ղուլին փորձեց գրավել եւ ավերել այն, բայց հայերը փութացին ամրացնել վայրը՝ չափնորոցի զորավար Թորոսի առաջնորդությամբ: Եվ այլազգիների գալու ժամանակ Քիս, Գայ կամ՝ Իգաց (որ թվում են մոտիկ եւ Մեղրաձորի արեւելյան եզրամասում), որ ապահովելով իրենց ընտանիքներն ավանի առջեւ գտնվող լեռնագագաթին՝ Թորոսը Մանլեի սկզբնամասում կանգնում է նրանց առջեւ հարվածելով նրանցից շատերին սատկացնում եւ մյուսներից փախուստի մասունում մինչեւ Քիս, եւ ինքը հրաման է տալիս զորքերին՝ այլեւս չհետապնդել նրանց, այլ գնալ հարվածել ու այրել նրանց տները, ավարել նրանց բոլոր ինչքերը եւ վերադառնալ: Եվ երբ կատարեցին այդ բոլորը, վերադարձան Մանլե: Եվ Թորոսը Մանլեում մնաց երեք օր, եւ այնտեղ թողեց Սրապիոնի որդի Պապ Կալերցուն՝ որպես զորավար եւ կառավարիչ Կենավուզի երկրի վրա⁽²⁹⁾: Այլազգիների մյուս հարձակման ժամանակ հայերը պատասպարեցին Մանլե, Կալեր, Քիս եւ Վանք գյուղերի շինականներին՝ տեղավայրի ամրության պատճառով: Հետագայում տեսնելով Պապի անվճռականությունը, նրանք պատասպարվեցին էլ՝ ավելի ամուր եւ հեռավոր վայրերում: Մանլեի վաճառականներից մեկի վերաբերյալ հիշատակարան է պահպանվել Վենետիկի Հայոց Ս. Խաչ եկեղեցում, այն է՝ Ս. Լուսավորչի պատկերը՝ նկարված 1714 թ.՝ ստորին մասում գրված է նրանց անուններն ու թվականը, այսպես. «Այս պատկերը հիշատակն է մեր Լուսավորչի սուրբ Գրիգորի, Ղափանցի Մանլեի գյուղից Անդրեասին,

եղբորը Ովանեսին, Մարտիրոսին եւ ծնողներին՝ մահուտի Պողոսին, մորը՝ Խաթունին. Հայոց Ս. Խաչ եկեղեցում, նկարվեց 1714 եւ Հայոց ՌՃԿԳ թվականին»: Հիշվածները կրում էին Ջիռիխյանք մականունը, որ իրենց բնակությունը հաստատեցին Վենետիկում (ուր եւ թաղված է այդ Մարտիրոսը՝ կոչված Սողոմոնենց [1743], նույն Ս. Խաչ եկեղեցում՝ այս տապանագրով):

Այս է տապանն Մարտիրոսի

Որդու Ղափանցի Պողոսի

Որ փոխադրվեց Տիրոջ մոտ այստեղից

Փրկչի թվականին, որ գրված է այստեղ.

1743. 17 ապրիլի⁽²⁰⁾:

Այս ժամանակ (1745 թ.) ոմն Գեորգ արքեպ Մանլեիցի Հոնեի (Ղրիմի) Սալաջա գյուղում գրել է մի տաղաչափված գովեստ Գրիգոր Տաթեւացուն, որ անարվեստ մի գրվածք է՝ տպված Գրիգորի Քարոզգրքի Ամառան հատորի մեջ: Այն ավարտվում է այսպես.

Աղջատիկ այս գրվածքը երկաբան

Գեորգ գործակալիդ աղքատիմաց

Հազար ինսուն (1641) թվին եղած

Սալայ գյուղում Հոնաց կոչվող երկրում⁽³⁰⁾:

Համաձայն Նոր ցուցակի՝ Տաթեւի վանքի թեմի մեջ դասվում է Նաե Մանլեի Ամենափրկիչ Անապատի կուսանոցը, որ սակայն չի հիշվում պատմության մեջ եւ ոչ էլ Աբրահամ Գ կաթողիկոսի ուղեւորության ընթացքում, երբ Նա անցնում էր այս գյուղով:

Մանլեից մեկ մղոն հյուսիս, ձորի ծայրին այստեղ-այնտեղ գյուղեր կան՝ Գարապաղը՝ աջից, Ափկիսը՝ ձախից՝ հաված մեկմեկու: Չգիտեմ, հին գյուղերի մեջ տեղ ունե՞ր արդյոք առաջինը՝ Քմրը, թե՞ Մթնաձորը, թե՞ այլ վայրում էր գտնվում. երկրորդը հարեանցիորեն հիշվում է Ղափանցիների պատմության մեջ: Մանլեից նույնքան հեռու, արեւելյան կողմից (ձորի ձախակողմում) կա աշխարհացույցում արձանագրված ավերակ Թիզ գյուղը, որ հավանաբար Տաթեւի ցուցակի Թոս-ն է: Ձորի հարավակողմում, Երասխից երկու մղոն հեռու, ջրի եզերքին, իրար մոտիկ եւ դեմհանդիման Մարգիգետ եւ Ալիտերէ կամ Ալտարա. առաջինն ինձ անծանոթ է, թե այն Տաթեւի նոր ցուցակի Մեգրեն, երկրորդը՝ Դյուբուան անվանում է թաթարական եւ պարսկական մեծ եւ գեղեցիկ գյուղ (Դ, 17), որ անցավ այնտեղից (1834, 12 ապրիլ), այգիների եւ ձիթենիների միջով եւ հյուրընկալվեց գյուղի գլխավորների կողմից: Ալտարայի անունով Երասխի ափին, ձորագետի բերանին կա պահակատուն կամ իջեան:

Երկրորդ ձորակը շատ փոքրիկ է, եւ շեն բնակավայր չի երեսում այնտեղ, սակայն երկու գյուղերին դեմհանդիման մեկ մղոն հեռու, չորրորդ ձորակի եզերքին, Երասխից նույնքան հեռու կան զույգ գյուղեր՝ հարավայինը Տաթեւի նոր ցուցակի Թխկոտն է, որ քարտեզի վրա գրվում է Թուխուտ, նաեւ գրվում է Թխկուտ մի Ավետարանի հիշատակարանում, որ 1671 թ. Նազար Ղափանցին նվիրում է գյուղի Ս. Հակոբ եկեղեցուն: Հյուսիսայինը, որ հեռու է մոտ քառորդ ժամ, Աստագորն է, որ այժմ կոչվում է Ախտահան, եւ չի հիշվում ցուցակներում ու մատյաններում, սակայն վերոհիշյալ ուղեւորն ասում է, թե բնակեցված է հայերով, եւ միաժամանակ հիացած է պարտեզների նորոգման համար ձորակի վրայի գեղեցիկ ու բարձր կամրջածե միակամար ջրի փողրակներով: Հռչակված է Աստագորի ազնիվ գինին, որ ասում են, թե կշռով են վաճառում՝ քաղցրահամ եւ փոքր ինչ տոտիայ⁽²¹⁾: Աստագորի անունով կա նաեւ պահակատուն Երասխի ափին՝ հինգերորդ ձորակի բերանին, որի մոտ արձանագրված չէ գյուղ, բացի մի ավերակից, նույնպես եւ վեցերորդ (ձորակի) մոտ: Իսկ յոթերորդ գետաձորակը կոչվում է Սարի տերե՝ ձոր-ծորներից մեկի գլխին ունենալով մի մեծ գյուղ համա-

ՏԵՂԵԳՆԵՐ

Նուն Կարճավանին, որովհետև քարտեզի վրա գրվում է՝ Գարաչեան, բայց չգիտեմ՝ արդյոք Նոր է, թե՞ հին: Իսկ ձորակի ստորին կողմում, աջից կա թաթարներին պատկանող մի մեծ գյուղ՝ Նյուդատի կամ Նյուվատի անունով, որ Երասխից հյուսիս է երկու մղոնի չափ: Վերոհիշյալ հետևետացի ճանապարհորդը, որ Մեղրուց գալիս էր այս կողմ՝ կտրելով անցնելով դժվարին եւ դժոխային, սեագույն, ժանգահար, լերկ բրգածե քարաժայռերով, որ Երասխի մակերեսային բարձր են 1500-ով կամ 2000-ով, մտնելով այս ձորահովտի մեջ գնալովում է այդ վայրերի գեղեցկությամբ եւ գյուղի խաղաղ դիրքով, որ Նորատիպ օազիս է անվանում, ինչը լինելով անպտուղ մի վայր, բազմարվեստ աշխատանքով դարձել է պտղաբեր: Տները սեւ քարից են՝ մեկը մյուսի վրա՝ հենված քարաժայռին, եւ բարձր պատերով հաստատված, եւ ոռոգման խողովակները բարձունքից իջնում են վար: Այգիների եւ թթենիների մշակությունը շերամի որդի համար է, որ օգտագործում են, եւ գետակի եզերքին դարավոր ընկուզենիների տակ դրված վառարաններում եռացնում են բոժոժը, իսկ այգիների բերքը վաճառում են հայերին, որ առնելով օդի են թորում՝ ավելի քան գինի պատրաստում: Ըստի որ այս արտեզների պտուղն ու նուռը: Գյուղի ավագը, որ շատ պատվեց հյուրին, ասում էր, որ թերեւս հազար տարի է, ինչ վայրը ժառանգել է Նախնիներից, որ ճանապարհորդը չափազանցություն է համարում եւ ասում, որ գուցե հայկական ծագում է ունեցել⁽¹²⁾, եւ Նույն հիացմունքով մեկնեց հաջորդ օրը, գիշերելուց հետո (1834, ապրիլ 12-ին): Ռատտեն, որ անցյալ տարի (1890, հունիս 16-ին) եկել էր Նյուդատի, բնակիչներին գտավ ուրախության մեջ՝ շերամի հաջող եւ առատ բերքի պատճառով, որովհետեւ մեկ սուլտանի (4,25 գրամ) իտալական ձվերի որդերը բերում են 30 ֆունտ բոժոժ, որ լինում է մոտ 12 կգ, եւ սա չափազանց թվաց նրան, քանի որ Մեղրիում լավագույնը 22 ֆունտ էր համարվում: Բույսերի մեջ Նշանավոր եւ չբնաղ է համարվում սահմանին գտնվող Նորատիպ միջուսի բույսը՝ (*Michauxia laevigata* Vent. արեւմտյան բուսախոյզ բուսաբաններ հոր եւ որդու անունով), որ ճառագայթաձեւ արմատներից մեկ բուն է արձակում, 1 կամ 1 ու կես չափով բարձր, ծաղիկները դեղնորակ գլխիկոր թերթիկներով: Բույսն առատ է խեժային կաթով: Կենդանական բարիքի մեջ ճանաչված է հակաթոյն այծյամը (*Bzoard*), որ շատ է Նյուդատի մայրիներում: Սարի դերե ձորագետակի բերանին կա մեկ պահակատուն եւս գյուղի անունով, որից մի փոքր վերեւ՝ մեկ այլ ձորագետակ (ութերորդը) խառնվում է առաջինի՝ վերնակողմում ունենալով Ըռնածոր գյուղը, որ քարտեզի վրա արձանագրված է՝ Էռնագիր, որի անունով էլ պատշաճ է ստուգաբանել եւ անվանել ձորակը: Արեւիքի ծանոթ գյուղերից, որ կանխավ հիշեցինք, բացի ձոր արմատով հիշատակված երկուսից, միայն Մթնածորն է մնում դիրքով անհայտ:

Ութերորդի վերջում գտնվող իններորդ ձորակը խիստ փոքրիկ է եւ միայն մի ավերակ գյուղ է արձանագրված նրա մոտ՝ Վաշտ անունով, որ չի հիշված գրքում կամ ցուցակում: Կովսական գավառի լեռնակողմի սահմաններում կա այդ ձորակներից ավելի փոքր եւս երկու ձորակ, որտեղ արձանագրված չէ շեն կամ ավեր տեղավայր, այլ, ստորին մասում, Երասխի ափին՝ մի պահակատուն, ուր մեծ գետն ընդդիմամարտելով բազմակնճիռ քարաժայռերին՝ առաջ է վազում, սակայն անցնելով Արեւիքի սահմանները, քիչ-քիչ հանդարտվում է, եւ հովիտն աստիճանաբար ընդարձակվում է, ու օժաբարուտ, կրաբարուտ ծիրանախառն քարաժայռերին հաջորդում են փոքրիկ դաշտերը, որոնցում երեսուն են թե՛ վայրի թզենիներ եւ թե՛ բազում այգիներ:

Ծանոթագրություն

- 1* Ասում է, թե սա Կարչավանի հովտում է. «Կարճավանի ձորը հայտնի է իր փրփուրն գինիով եւ բավականին աղքատ արծաթի հանքով, որը սակայն շահաբեր է». տե՛ս Dubois, IV, 44:
- 2* Սա Մոնթիթ գորապետն ու աշխարհագիրն է, որ տեսել է. «Շատ եկեղեցիների եւ գյուղերի ավերակներ». Montheith:
- 3* Պատմության տպագրված տարբերակում բացակայում է գետակի անունը, սակայն առկա է բնագրում, ու գտնվում է մեր գրատանը:
- 4* Թաղվում է Ս. Մարիամ Խորոտիկ (*S. Maria Formosa*) եկեղեցում, որի թաղատարածքում բնակվում էին հայ վաճառականներից շատերը:
- 5* Ցանկում ամբողջապես 70 հոգի են, որից 12-ը Շեհրիմանյան է, ապա՝ 4 ուրիշներ, իսկ 17-րդը այս Ստեփանոսն է:
- 6* Կրոնի պատճառով եղած վեճերի եւ հալածանքների հետեւանքով սա Կ. Պոլսից ընտանիքով փախչում է Վենետիկ, ուր եւ վախճանվում է 1729 թ., եւ ամփոփվում Մխիթարի վանքի Ս. Ղազար եկեղեցու տապանում:
- 7* Որովհետեւ նրա դուստրը՝ Մ. Աննան, մեկը լինելով հայոց կարոտյալ օրիորդներից, օգտվում էր 40 դուկատից (1780, 24 ապրիլ), որ ամեն տարի հանում էին Յավրի Բաղդասարի տուրքից՝ Նախատեսված նրանց համար, ովքեր մտնում էին կուսանոց կամ հարսնանում, ինչպես եւ սա, որ պատկանում էր 1780 թ.:
- 8* Մշակ, ԺԲ, 160:
- 9* Նոր դար, Ը, 159:
- 10* Ռուսական քարտեզում գրված է Կեճանան:
- 11* Ըստ Դյուբուայի՝ Kourour-ն է, որ չկա ռուսական աշխարհագրոյցի մեջ:
- 12* Արեւմտյան մարդաբան եւ հնագետ Շանդրը (*Chantr*) 1890 հունիսի սկզբին Մեղրու սահմանին հանձնարարեց բանալ եւ պեղել մի ավան եւ այնտեղից գտավ պղնձյա գարդեր, օղամանակներ եւ գեկքեր:
- 13* Մշակ, ԺԸ, 36, արձանագրում է 165 տուն, 955 հոգի:
- 14* Դյուբուան հիշում է միայն մեկ եկեղեցի, Դ, 45:
- 15* Խաչատուր Մ. Մամուլյանց, Մշակ, Ը, էջ 81:
- 16* Պապն է քաջածանոթ բանասեր-գիտնական Մկրտիչ Էմինի:
- 17* Այն Նավն անվանվում էր Ս. Անտոն Պաղոսացի, իսկ Ոսկանը գրված է իտալական ձեռով. *Uscan di Babul*: Վենետիկի հանրապետության առետրի ոստիկանները թեպետ հայերին չէին համարում Վենետիկի հնաբնակներ, բայց քանի որ այնտեղ հրավիրված էին 1623 թվականից, հարկ եղավ նրանց համարել կամավոր հպատակներ, եւ պաշտպանել նրանց մանավանդ, որ նրանց համար վաճառատուն էր բացվել այստեղ՝ մայրաքաղաքում:
- 18* Dubois, IV, 54:
- 19* Վախճանվել է 70 տարեկանում Ս. Սեւեր եկեղեցու թաղում այն ժամանակ եղել է Դայոց եկեղեցու մտղիկոսը (համարակալ), եւ քանի որ եկեղեցուն պարտք էր 280 վենետիկյան լիրա, եղբորորդին՝ Դովիաննետը, մարում է:
- 20* «Աստասուրը փոքր հայկական գյուղ է, որտեղ եւս զարմացա տեսնելով միակամար եւ շատ բարձր գեղեցիկ ջրմուղը, որը մղում էր ջուրը ձորի մի կողմից մյուսը՝ այգիները ոռոգելու համար», տե՛ս Dubois, IV, 47.
- 21* «Այս թաթարական գյուղի տեղը, առանձնացած աշխարհի մնացած մասից, հեռու որեւէ հարաբերություններից, շատ զգացված էր մեր այցից... Դարերի ընթացքում Նյուդատիում ոչինչ էլ չէր փոխվել:
- 22* Մեզ հյուրընկալողը հավաստիացրեց, որ հավասարաբար հազար տարի առաջ իր ընտանիքը զբաղեցրել

եւ հաստատվել է այս գյուղում, ինչը միգրացիոն շահագանցություն թվա, բայց որը ստիպված է եղել պատերազմ մղել բնության կողմից այնքան լավ պաշտպանվող այս երկրում: Իմ հյուրընկալը միանգամայն կարող էր Չայկազնի լինել»։ տե՛ս Du-bois, IV, 49, 50, 52:

Ծանոթագրություններ

1. Արեւիք գավառը գլխավորաբար ընդգրկում էր Մեղրի գետի ավազանը ու տարածքով գրեթե համապատասխանում էր այժմյան Մեղրու շրջանին: Հին ժամանակներում մտել է Գողթնի մեջ, ապա ընդգրկվել Այուսիքի կազմում: Համաձայն «Աշխարհացոյց»-ի՝ Այուսիքի 11-րդ գավառն էր, ուներ 625 քառակուսի կիլոմետր տարածք. տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 412, ծնթ. 24:

2. Դյուբուա դե Մոնպերիուս (Dubois de Montperriux Fredric. 1798-1850). Նշանավոր ճանապարհորդ, բնագետ եւ հնէաբան: Նեվշատելի ակադեմիայի պրոֆ.: Գլխավորաբար ուսումնասիրել է Հարավային Ռուսաստանը, Ղրիմը, Կովկասը եւ Ատրկովկասը: Ալիշանն օգտվել է նրա "Voyage autour du Caucase, chez les teher Kesses er les Adkases en Ceorgie, em Armenie, en Cremee" (Paris, 1839-1845) աշխատությունից:

3. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 76:

4. Հմմտ. Սարգիս Արք. Ջալալյան, ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տփղիս, 1858, էջ 313:

5. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 402-403:

6. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 77:

7. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 70, նաեւ՝ ծնթ. 25, էջ 412:

8. Տե՛ս «Դավիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցոց», Յառաջաբան, բնագիրը, խմբագիր օրինակ եւ ծանոթագրություններ, աշխատասիրեց հայր Սամուէլ վարդապետ Արամեան Մխիթարեան Ուխտեն, Վենետիկ, 1978, էջ 122-126, 133, 134, 152, 154, 156-160:

9. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 279:

10. Տե՛ս ծնթ. 6:

11. Նկատի ունի նշանավոր «Դավիթ Բեկ» վեպը:

12. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 403

13. Տե՛ս «Դավիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցոց», էջ 124:

14. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 403:

15. Տե՛ս «Դավիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցոց», էջ 126, 159:



Նյուվադի գյուղի հին լուսանկարը

16. Նկատի ունի Ալեքսանդր Ա Ջուղայեցի Հայոց կաթողիկոսին, որն աթոռակալել է 1706-1714 թթ.:

17. Մեղրու բարբառի հանգամանակից քննությունը տե՛ս Էր. Աղայան, Մեղրու բարբառը, ՀՍՍՀ, ԳԱ հրատ., Եր., 1954:

18. Տե՛ս [Երեմիա Մեղրեցի] Բառգիրք Հայոց. Քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Հ. Ս. Ամայանի, Եր., 1975:

19. Նկատի ունի Մովսես Գ Տաթևացի Հայոց կաթողիկոսին, որն աթոռակալել է 1629-1632 թթ.:

20. Տե՛ս Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, Քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան եւ ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Եր., 1973, էջ 155:

21. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 276:

22. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 283:

23. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 284:

24. Ավերը տեղի է ունեցել 1126 թ., Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 279, ծնթ. 977, էջ 488:

25. Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Այուսիքի պատմություն, էջ 210:

26. Տե՛ս ծնթ. 25:

27. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հտ. Գ, կազմեց Վազգեն Հակոբյան, Եր., 1984, էջ 933:

29. Տե՛ս «Դավիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցոց», էջ 123:

30. Ս. Գրիգոր Տաթևացու Ամառան հատորի մեջ (տպ. Կ.Պոլիս, 1741 թ.) նման հիշատակարան չգտնվեց: Հիշատակարան-բանաստեղծության մեջ արձանագրված Հայոց 1090-ը համապատասխանում է փրկչական 1641 թվականին:

**ԱՇԽԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾԵՏ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐԵՑ
ՀԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆԸ
ԱՇԽԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ Է ՎԵՐԱԾՎԵԼ և ԹԱՐԳՄԱՆՎԵԼ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ՊԱՏՎԵՐՈՎ**

ՄԱՇԽԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԹԱՆԱԳԱՐԱՆԻ ԳՈՐԾ

Ե՞րբ պիտի Մեղրին ունենա երկրագիտական թանգարան

Իմ լրագրողական պրակտիկայում նման բան չի պատահել, որ այսօրվա և 17 տարի առաջ գրած նյութերը նույն վերնագրերը ունենան՝ Ե՞րբ Մեղրին կունենա երկրագիտական թանգարան: Առաջին հրապարակումը տպագրվել է «Սյունյաց երկիր» թերթում, 2007 թվականի սեպտեմբերի 30-ի համարում: Զրույցը պատմաբան Նաիրա Հայրապետյանի հետ էր և նույն տեղում, ինչ հիմա՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու մասնաճյուղում, որի սենյակներից մեկում ծվարել են հնագիտական արժեքները, որ 1990-ականների սկզբից հավաքել-ժողովել էր դասավորել է մեր գրուցակիցը:

Մեր թերթի բարեկամներից է հիմնադրման ժամանակներից, բայց հանդիպելով նրան կես-կատակ, կես-շիտակ հարցում ենք՝ ո՞վ է ի վերջո Նաիրա Հայրապետյանը: Ժպտալով պատասխանում է՝ պարզապես մեղրեցի, ով մտահոգված է Մեղրու մշակույթի պահպանմամբ, արժևորմամբ և հանրահռչակմամբ: Մեր կողմից ավելացնում ենք՝ նաև պատմագիտական թեմաներով հոգվածներ է հրապարակում: Այս ամենը սկսվեց այն բանից հետո, երբ 1989 թվականին ավարտեց Երևանի պետական լսարանի պատմության ֆակուլտետը և հայրենի Մեղրի վերադարձավ: Ներկայումս զբաղվում է մանկավարժությամբ և հուշարձանների պահպանությամբ:

Պատմաբանի հետ մեր զրույցը սկսում ենք՝ «Մեղրու տարածաշրջանի ո՞ր հատվածը կհամարեք «թանգարան բաց երկնքի տակ»» հարցով: Ասում է, որ Մեղրու տարածաշրջանը հարուստ է ճարտարապետական հուշարձան-

ներով, հոգևոր նշանակության կոթողներով, ժողովրդական բանահյուսությամբ: Ընդ որում Մեղրիի եկեղեցիներն իրենց որմնակարչությամբ եզակի են Հայաստան աշխարհում: Նախ Փոքր թաղի Դավիանեն Մկրտիչ եկեղեցին է, որի որմնակարները 17-18 դարերով են թվագրվում և նորոգվել են Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան հովանավորությամբ և հանրապետության մշակույթի նախարարության նախաձեռնությամբ: Պատմական և հոգևոր-մշակութային արժեք են ներկայացնում Անապատանաց սուրբ Դավիանեն Մկր-



Ռազմավարական նշանակություն ունեցող Մեղրին (ինչպես սիրում են կրկնել) այս օրերին չի իջնում թերթերի էջերից, բայց ոչ մեկի մտքով չի անցնում, որ այդ կարևոր տարածաշրջանը ցայսօր երկրագիտական թանգարան չունի: Նաիրա Հայրապետյանն ասում է, որ գրավոր դիմել է Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությանը, բանավոր՝ Մեղրու համայնքապետարանին:

տիչ եկեղեցու որմնակարները: Այնուամենայնիվ, մեր գրուցակցի փոխանցմամբ, կողմ է, որ հնարավորինս շուտ իրականացվի Մեղրիի գործող մայր եկեղեցու՝ սուրբ Աստվածածնի որմնակարների պահպանումը, քանի որ դրանք մոմավառության ժամանակ ծխից ու խոնավությունից խուսացել են, նույնիսկ որմնակարների պատվիրատուների անունները ջնջվել են, իսկ դրանք բավականին ազգագրական նյութ են պարունակում, թե Մեղրիում ինչ տոհմեր են եղել, ո՞վքեր են հովանավորել:

Իսկ տասնյակից ավելի տոհմանուններ կան, ովքեր հովանավորել են որմնակարների ստեղծումը:

Եվ այնուամենայնիվ, ո՞րը կարելի է համարել «թանգարան բաց երկնքի տակ»: «Այս պահին շատ եմ կարևորում Մեղրու բերդի աշտարակների ամրակցման հարցը, - ասում է Ն. Հայրապետյանը, - ամենաբանուկ մշակութային վայրն է, որտեղ բազմաթիվ զբոսաշրջիկներ են այցելում: Նախ իր բարձրադիր տեղանքով, կարելի է ասել, դիտակետ է հանդիսանում, որովհետև այդտեղ բարձրացողները հիանում են Մեղրու համայնքապետարանում, նրա բնությամբ ու կոլորիտով: Բայց դեպի այդ աշտարակները տանող ճանապարհի չկա, այդտեղ ուզում են լինել նաև տարեց զբոսաշրջիկները, բայց չեն կարողանում: Եվ ամենակարևորը՝ բերդերը քարաթափ են լինում, ճաքել են պատերը»:

Նաիրան հիշում է, որ 2017 թվականին Մեղրու բերդի աշտարակներից մեկը փլուզվեց: Գործող կարգին հետևելով՝ դիմեցինք մշակույթի նախարարությանը: Մի քանի ամիս հետո պատասխանեցին, թե ֆինանսական միջոցներ չունեն: Գործը գլուխ բերեցին մեղրեցի տղաները, որոնց ջանքերով աշտարակը փրկվեց վերջնական փլուզումից: Նաիրա Հայրապետյանի համոզմունքն այն է, որ համայնքներին էլ որոշ հնարավորություն պիտի տան՝ վերականգնելու պատմական հուշարձանները:

Մեղրու տարածաշրջանում «թանգարան բաց երկնքի տակ» հասկացությունը միանգամայն վերաբերում է նաև այն բնակավայրերին, որտեղ այլևս մարդիկ չեն բնակվում, բայց տները տակավին պահպանվում են, որոշները՝ ճարտարապետական կոլորիտով: Կան բազմաթիվ գյուղատեղիներ: Կալեր գյուղը ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդավայրն է, նաև 18-րդ դարի ազգային-ազատագրական պայքարի կազմակերպիչ Պապ գործավարի հայրենիքն է: Կամ Կարճևան գյուղը ոչ միայն Նժդեհի զինակիցների անվան հետ է կապվում, այլև այդտեղ նշանավոր լեզվաբան Էդվարդ Աղայանի հայրական տունն է, որ փլուզման եզրին է, բայց վերականգնման, ամրակայման աշխատանքներ չեն կատարվում, թեպետ այն



գրանցված հուշարձան է: Կամ Զվարա վանքը, որ հուշարձանների պահպանման գործում է գրանցված, հարավային պատը փլվում է: Դեպի Զվարի ջրվեժներ գնացող զբոսաշրջիկները, անշուշտ, մտնում են այդ վանքը...

Թեև անմարդաբնակ դարձած, բայց նշանավոր բնակավայրեր են Մալևը, Ատկեզը, 13-րդ դարի հուշարձաններ կան: Մալևի Կուսանաց անապատում, պատմիչների վկայությամբ՝ ձեռագրահրատարակչական կենտրոն է եղել, ձեռագրեր են ստեղծվել: Աբրահամ Կրետացին Նադիր շահի մոտ ընդունելությունից վերադարձել է Կալբ, այնուհետև գնացել Կարճևան: Պատմական, հնագիտական արժեքներ ունի Շվանիճոր գյուղը՝ իր հանրահայտ ջրանցույցով:

Ի լրումն այս ամենի նշենք, որ գյուղական լքված տներ կան, որոնք դեռևս ճարտարապետական տեսք ունեն, դրանք պետական պահպանության, հոգածության ներքո պիտի լինեն: Ինչպես, ասենք, Գորիսի պատմական կենտրոնը, որի պահպանման համար գումարներ են հատկացվում:

Մեղրու Անապատանաց վանքում 2016 թվականից վերականգնողական աշխատանքներ են կատարվում, որոնց Նախորդում էին պեղումները: Այն իրականացնում է «Երկիր և մշակույթ» համազգային բարեգործական կազմակերպությունը: Քանի որ հարուստ մշակութային շերտեր կան, պեղումներն ու վերականգնումը շարունակական բնույթ են կրում: Բավականին արժեքավոր գտածոներ են հայտնաբերվել: Բայց ցուցանմուշները Վանաձոր են տեղափոխվել, այդտեղի թանգարանում ցուցադրություն պիտի կազմակերպվի, մինչդեռ դա պիտի արվեր թեկուզ Մեղրիի մշակույթի պալատում:

Նաիրա Չայրապետյանի համոզմամբ՝ հենց այդ հանգամանքը կնպաստեր, որ կրկին բարձրաձայնվեր Մեղրիում թանգարան ունենալու հարցը: Թե չէ՝ Մեղրու անցյալով հետաքրքրվողներին առաջնորդում են գեղագիտության կենտրոնի այդ միակ սենյակը, որտեղ իրար գլխի կուտակված են թանգարանային նմուշները: Զեյն միակ այդ սենյակի նորոգման խնդրով տարբեր ժամանակներում դիմել է քաղաքային իշխանություններին, բայց սայլը տեղից չի շարժվել...

Նաիրա Չայրապետյանի փոխանցմամբ՝ իր հավաքած ցուցանմուշները ավելին կարող էին լինել, բայց պահպանման միջոցներ չունենալով՝ բավարարվել են այդքանով, մինչդեռ թանգարանը և՛ այցեքարտ է, և՛ կրթադաստիարակչական միջավայր: Թանգարանը պարբերաբար պիտի համալրվի նոր ցուցանմուշներով, քանզի ժողովրդի մոտ տակավին պատմական արժեքի ցուցանմուշներ կան, բայց դրսից շատերը գալիս, հնություններ են գնում-տանում, շատ հաճախ մի քանի հազար դրամով:

Զընթացս հետաքրքրվում ենք, թե որն է ամենարժեքավոր ու հին ցուցանմուշը: Պարզվում է՝ Տերտերասարի հանքի շահագործման ժամանակ գտնված բրոնզե մանյակը, որ թվագրվում է առաջին հազարամյակով:

Այնուամենայնիվ, բաց դասերի, այցելությունների միջոցով ձգտում են պատմական այդ արժեքներին հաղորդակից դարձնել Մեղրու, Ագարակի, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի դպրոցների աշակերտներին:

Բացի այդ հողի տակից հանված ցուցանմուշները վկայում են այն մասին, թե Մեղրիում ժամանակին ինչ արհեստներ են գործել, գեղջկական-հասարակական կենցաղային զբաղվածությունն ի՞նչ աստիճանի վրա է եղել: Այդ ցուցանմուշները գույքագրման, ուսումնասիրության կարիք ունեն:

Միայն դա չէ խնդիրը: Մեղրին գիտական, կրթական, մշակութային, ազատագրական պայքարի գործիչներ



ունի, որոնց կենսագրության իրազեկումը դաստիարակչական մեծ նշանակություն ունի սերունդների համար: Երիտասարդությունը չգիտի, ով է Էդվարդ Աղայանը, Փարամազը՝ Ակնունին, Ագարիա Աղեյանը, առաջին բառարանագիրը Երեմիա Մեղրեցին է եղել, արժանահիշատակ է Մովսես Տաթևացու աշակերտը, ով իր ուսուցչի հորդորով գրել է «Պատմություն հրեիցը»...

Ռազմավարական նշանակություն ունեցող Մեղրին (ինչպես սիրում են կրկնել) այս օրերին չի իջնում թերթերի էջերից, բայց ոչ մեկի մտքով չի անցնում, որ այդ կարևոր տարածաշրջանը ցայսօր երկրագիտական թանգարան չունի: Նաիրա Չայրապետյանն ասում է, որ գրավոր դիմել է Զանգակատոսության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությանը, բանավոր՝ Մեղրու համայնքապետարանին:

Այստեղ են ասել՝ մնամ պատասխանիդ սպասող...

ՎԱՋՐԱՆ ՕՐԲԵՆՅԱՆ



ԹԱՆՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾ

Պապ Օհանյան. «Մեղրին պետք է ունենա երկրագիտական թանգարան»

Մեղրիի Փոքր թաղը պատմամշակութային մի միջավայր է, որտեղ հայտնվելով՝ ասես ուրիշ աշխարհի են ընկել: Փոքր թաղը հայտնի է նաև արվեստագետներով, որոնցից մեկին բարեբախտություն ունեցանք հանդիպել, հարողակցվել՝ Պապ Օհանյան:

«Միշտ կրկնել եմ տեսակետս, որ Մեղրիի Փոքր թաղում ծնվածը, աչք բացածը չի կարող չնկարել, արվեստ չսիրել կամ պարզապես չստեղծագործել, նման բան հնարավոր չէ: Եթե չի նկարում, մի գեղեցիկ բան անում է, քանդակում է և այլն», - այսպես սկսվեց զրույցը հետաքրքիր մարդու հետ:

Պապ Օհանյանն էլ մի քանի նախասիրություն ունի, որին հերթականությամբ կանդադարանաք ստորև:

Գեղանկարների թեմատիկան հայրենի Մեղրին է

Գեղանկարչությամբ սկսել է զբաղվել 1997 թվականին: Ուշ ստեղծագործելն իր պատճառներն ու հիմնավորումն ունի: «Միշտ ցանկացել եմ նկարել, բայց հնարավորություն չի եղել, Մեղրին փակ գոտի էր՝ անձնագրային ռեժիմով: Ներկեր ու կտավ հնարավոր չէր ձեռք բերել, մասնագետներ չկային, որոնցից կարելի էր խորհուրդներ հարցնել: Հիմա սահմանները բաց են, ներկերը պատվիրում եմ՝ ժամա-

նակին տեղ են հասնում: Երբեմն հարևան Իրան եմ մեկնում, Թավրիզում գեղարվեստի պարագաների մի շուկա կա, որտեղից ինչ ներկեր, կտավ մտքովդ անցնում է՝ կարող ես ձեռք բերել մատչելի գներով», - ներկայացնում է Պապ Օհանյանը, ում հետ զրուցում ենք նրա՝ թանգարանի վերածված արվեստանոցում:

Հետաքրքրվում ենք, թե ո՞ր գույնն է նախընտրում նկարելիս: Պատասխանում է՝ կավի գույնը և հիշեցնում, որ Աստված մարդուն հենց կավից է ստեղծել:

Գեղանկարիչներին բնորոշելիս կամ գնահատելիս ասում են՝ տիրապետում է գույնի և գծի լեզվին: Այս ձևակերպման առնչությամբ նա իր մեկնաբանությունն ունի. «Դրանք ինձ համար դատարկ խոսքեր են: Ոմանք էլ հարցնում են՝ ի՞նչ է գեղարվեստը: Ես չեմ կարողանում նրանց պատասխանել: Իմը նկարելն է, իմ ընկալումները արտահայտելն է՝ ես ի՞նչ գիտեմ: Գեղանկարչության մեջ ինձ համար կարևորը մարդու հուզաշխարհը ներկայացնելն է: Նկարը տեսնելիս մեկը պիտի ուրախանա, մյուսը՝ հուզվի, երրորդը վերհիշի ինչ-որ բան, հոգեպես թեթևանա»:



Այցեքարտ. ծնվել է 1969 թ. մարտի 7-ին Մեղրիի Փոքր թաղում: Ծննդավայրում ութամյա կրթություն ստանալուց հետո սովորել է Ղափանի շինարարական տեխնիկումում: Այնուհետև ծառայություն խորհրդային բանակում և վերադարձ բնօրրան: «Ուրիշ տեղ չեմ ապրել, միտք էլ չունեմ», - կռահում է միտքս: 1994 թվականից ծառայում է ՀՀ ոստիկանությունում, այժմ՝ մայրրի կոչումով: Ունի երկու զավակ՝ որդի և դուստր:

Իսկ որևէ մեկին ընդօրինակել փորձե՞լ է, նշանավոր նկարիչներից ո՞ւմ ազդեցությունն է կրել. «Ձգտում եմ որևէ մեկին նման չլինել: Նկարիչներ կան, որոնց գործերից զգում եմ, թե որ նշանավոր գեղանկարչի ոճն է օգտագործվել: Ես ունեմ գեղանկար ստեղծելու իմ ընկալումը, ինչը լիուպի ինձ բավարարում է»:

Պապն իր ուսուցիչն է համարում Ալիկ Ասատրյանին, ծննդով Ազարակից գեղանկարիչ, ով հիմա Նիդերլանդներում է բնակվում: Գեղանկարչի մի կտավ կա արվեստանոցում՝ «Պապի նռան գինին»: Այժմ Մեղրիում (իր իսկ կարծիքով) չկա այն գեղանկարիչը, ում հետ կարող է նստել, զրուցել, խորհրդակցել: Արվեստագետներից եղիշ Կարապետյանը Մոսկվայում է ապրում, Հաբեթյանի Խաչիկյանը մահացավ, Սամվել Սարգսյանը գեղանկարչությամբ չի զբաղվում...

Ընդհանրապես նրա գեղանկարների թեմատիկան հայրենի Մեղրին է՝ հնօրյա ու նոր: «Որդիս երբեմն ասում է՝ մարդիկ ուրիշ բաներ են նկարում, աբստրակտ և այլն, դու էլ փորձիր, բայց ես մնում եմ իմ տեսակետին՝ իմը Մեղրին է»:

Հընթացս տեղեկանում ենք, որ պատրաստվում է անդամիկի ցուցահանդեսը բացել երևանում: Գաղտնիք չէ, որ գեղանկարիչները նաև գոյատևում են իրենց վրձնած կտավները վաճառելով: Այս առումով նա դժգոհ չէ՝ գնորդներ գտնվում են, դեռ ավելին՝ մի անգամ պատահել է, որ կտավի վրա ներկերը տակավին չէին չորացել, երբ գնորդ գտնվեց: Խնդրեցի՝ մի քանի օր սպասել: Նաև պատահել է, որ գեղանկարը նվիրել է, որ Հայաստանից դուրս Մեղրին ճանաչելի դառնա: Նրա գեղանկարների մեծ մասը



գտնվում են մասնավոր հավաքածուներում:

Այժմ էլ նկարակալին հին Մեդրին պատկերող մի գեղանկար է, որ արված է լուսանկարից: Ասում է, որ մարդիկ իրենց տները եվրանորոգում են, հին նախշերը ոչնչացնում, փչացնում նախաստեղծ, հինավուրց տեսքը: Յնոբյա կոլորիտն անցնում է պատմության գիրկը: Ինքն այդ գեղանկարը ստեղծելով՝ հիմք է ունեցել 1920-ական թվականներին արված մի լուսանկար:

Մեդրին պետք է ունենա երկրագիտական թանգարան

Գեղանկարիչն արվեստանոցի պատերը զարդարել է հնաճ իրերով՝ պապից մնացած տրեխներ, երածտական գործիքներ, կենցաղային զանազան իրեր: Նրա երկրորդ նախասիրությունը հնագիտական և ճանաչողական արժեք ունեցող իրեր ու առարկաներ հավաքելն է, որով զբաղվում էր մինչև գեղանկարչությանը տրվելը: **«Երեխա ժամանակ մեր հողամասից ջնարակված սպասքի կտորներ էի հավաքում, հետո հին առարկաները հավաքելն ու պահպանելը դարձան հաստատուն զբաղմունք»**, - ներկայացնում է Պապը, և դրանում իսկույն համոզվում են՝ մի հայացք սահեցնելով արվեստանոցի պատերի և դարակների վրայով: Յետո սկսում է պատմել, որ ամենահին ցուցանմուշը թվագրված է՝ 1838 թվական (կարաս), ունի նաև մեդրեցի գործարար Շահսուվարովի շտամպով կարաս (մի մասն է պահպանված) 1888 թ. թվագրված: Բազմաթիվ են ազգագրությանն առնչվող առարկաները՝ խնոցի, կճուճ, կուժ և կուպ, պղնձե սրճեփ: Ցուցանմուշների թիվն անցնում է հարյուրը:

Աջի են զարնում տարբեր մակնիշի լուսանկարչական ապարատները, կինոապարատը, միևնույնիսկ սարքը, ընտանեկան ռադիոընդունիչը, որն այժմ թանգարանային նմուշ է, բոլորի հետ մի պատմություն և կապված և բոլորն էլ «աշխատող» են:

«Մեդրիում գիտեմ մարդկանց, որ հին առարկաներ են հավաքում՝ վաճառելու նպատակով: Յնաճ առարկաներ հավաքելով մարդիկ շահ են փնտրում՝ դրանք հարմար գնով վաճառելու նպատակով, բայց հետագայում այդ առարկաները գնահատող ու դրանցից հասկացող չի լինելու, և դրանք թափվելու են աղբարկղը», - մտահոգություն է հայտնում հավաքորդը: Այս համատեքստում նա ևս բարձրաձայնում է Մեդրիում երկրագիտական թանգարան բացելու հիմնախնդիրը, որն այդպես էլ չի լուծվում: Նաև ցավ է հայտնում այն առիթով, որ վերջին տարիներին Մեդրիի Անապատանաց վանքում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոները տեղափոխվել ու Վանաձորում են ցուցադրվել: **«Բա ամոթ չէ, թանգարան, նախևառաջ, Մեդրիում պիտի լինի»**, - նրա արձագանքն է կատարվածին, նաև հավելում, որ Մեդրիի մշակույթն անկրկնելի է:

Լուսանկարները վերակենդանացնում են անցյալը

Պապ Օհանյանը հին լուսանկարների հարուստ հավաքածու ունի, որն արտացոլում է Մեդրիի արդյունաբերության և գյուղատնտեսության անցյալը, հին Մեդրիի՝ ծեսերով, ավանդույթներով՝ հարսանիք, հուղարկավորում, կրոնական արարողություններ, Մեդրիի թաղերը՝ Գործարանային և այլն: Դրանց մի մասի լուսանկարները կարող եք գտնել համացանցում՝ «Հին Մեդրին և մեդրեցիները» ֆեյսբուքյան էջում: Ահավա-



սիկ, իլիկը ձեռքին, հայկական տարագրվ կինն իր պապի տատիկն է՝ Նանագյուլը: Յամացանցում մի հարսանիքի նկար էր տեղադրել՝ 1910 թվականին տեղի ունեցած, օգտատերերից մեկը ճանաչել էր իր պապին ու տատիկ: Առանձին հոգածությամբ է պահպանում գերդաստանի լուսանկարները: Ավամա մտածում են՝ եթե Պապի նման հոգատար անձնավորությունը չլիներ, պատմական արժեք ունեցող այս լուսանկարներն էլ չէին լինի:

Լուսանկարներից մեկում վաստակաշատ ճարտարապետ Մուրադ Յարաթյանն է՝ պեղումների պահին: Նրա թեկնածուական թեզի թեման Սյունիքի 17-18-րդ դարերի ճարտարապետական համալիրներն էին: Նրա ուսումնասիրության օբյեկտներից մեկը Մեդրին էր, որտեղ կատարել է եկեղեցիների պեղումներ և չափագրումներ, այնուհետև ներկայացրել իր աշխատության մեջ:


«Մեդրու տարածաշրջանի Ագարակ (Յգերակ) գյուղը չկա, բայց այդ գյուղի տերտերի նկարի տեղը գիտեմ», - ասում է նա, նաև մի փաստ հայտնում եթե Մեդրիում երկրագիտական թանգարան բացվի՝ իր ունեցած լուսանկարների 60-70 տոկոսը պատրաստ է անվճար հանձնել թանգարան, նաև ավելացնում է, որ իր հնոբյա լուսանկարներից ոչ մեկը չի վաճառվում:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ԾԱՆԹ ԴՎԵՐՈՒՄԻՈՒԹՅՈՒՆ



**ԱՆՈՒՆ ԸՄՍՈՆՆԵՐԻ
ԸՆՏԱԿԱՎԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ, 2026Թ.**



Քաղաք Ագարակ



Գյուղ Ալվանք

Մերի ՀԱՄԱՅՆԻ
ԸՆԿՈՒՄՆԵՐԸ, 2026Թ.



Գյուղ Այգեձոր



Գյուղ Գուդեմսիս

**Մերի ՀԱՄԱՅՆԻ
ԸՆՏԱԿԱՅԻՆԸ, 2026Թ.**



Գյուղ Լեհվազ



Գյուղ Թխկուտ

ՄԵՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ
ԸՆԿԱՎԱՅՐԵՐԸ, 2026Թ.



Գյուղ Լիճք



Գյուղ Կարճևան

**ՄԵՌԻ ՀԱՄԱՅՆԻ
ԸՆՏԱԿԱՅԻՆԵՐԸ, 2026Թ.**




Գյուղ Կուրիս



Գյուղ Նռևաձոր

Մերի ՀԱՄԱՅՆԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ, 2026Թ.




Գյուղ Շվանիձոր



Գյուղ Վահրավար

ՄԵՂԻ ՀԱՍՈՅՆՅԻ
ԸՆՏԱԿԱՎԱՅԻՆԸ, 2026Թ.



Գյուղ Կորիս



Գյուղ Նռնաձոր

Յին Արաքսը զարմանալի որոգայթներ ուներ: Նաև՝ զարմանալի քմահաճություններ ուներ: Անհիշելի ժամանակներից համառությամբ կռվում էր յուր անհավասար եզերքի հետ և կարծես դժգոհ էր այն նեղ շավղից, որ գծել էր նրա ընթացքի համար նույնքան քմահաճ բնությունը: Նա սիրում էր ընդարձակություն, սիրում էր ազատություն: Նեղ շավիղը վրդովեցնում էր նրան: Երբեմն լեռնային երկու զուգահեռական գոտիներ միաբանվում էին և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ծորակի մեջ: Այդ

թեքվում, երբեմն դեպի ահյակ էր խոտորվում, և երբեք ուղիղ ճանապարհով չէր գնում: Նա յուր ազատությունը խելացի կերպով վայելել չգիտեր: Հանկարծ վիթխարի թևքերը բաց էր անում, խլում էր ցամաքից մի կտոր հող և, ճնշելով յուր գով գրկի մեջ, կղզիացնում էր նրան: Առ ժամանակ երեխայական սիրելիությամբ՝ սկսում էր փայփայել և խնամել յուր խաղալիքը: Կղզին աճում էր, կանաչազարդվում էր, աճում էին թուփերը և վառվում էին ծաղիկները: Երկնքի թռչունը հյուսում էր այնտեղ յուր բույսը, վայրի



միջոցին նրա կատաղությունը չափ չուներ: Ահռելի հորձանքներով զարկվում էր յուր ապառաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր, և մարդ, կարծես, լսում էր նրա սոսկալի որոտմունքի մեջ այս ճակատագրական խոսքերը՝ «Նե՛ղ է... նե՛ղ է... խեղդվո՛ւմ եմ...»: Երբեմն լեռնային գոտիների միաբանությունը խախտվում էր, բաժանվում էին միմյանցից, հեռանում էին միմյանցից, և բաց էին անում նրա առջև լայն, ընդարձակ տարածություն: Այդ միջոցին նրա կամայականությունը չափ չուներ: Ազատվելով յուր նեղ կիրճից, մի չար վիշապի նման, անխնա կերպով ողողում էր, հեղեղում էր յուր հարթ, կանաչազարդ ափերը, - և կամ, մի արբեցած հսկայի նման, երբեմն դեպի աջ էր

անասունը սնուցանում էր այնտեղ յուր ձագուկներին: Կղզին ներկայացնում էր մի գեղեցիկ փունջ, որով զվարճանում էր նա և, պճնասեր երիտասարդի նման, զարդարում էր յուր հպարտ կուրծքը: Բայց հանկարծ, կարծես, ձանձրանում էր նա, այլիքները փրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբար մռնչում էին և մի քանի րոպեի մեջ կլանում, ոչնչացնում էին գեղեցիկ զարդը, և նրա հետքն անգամ չէր երևում:

**Րաֆֆի
Հատված «Սամվել» վեպից**



ԻՄ ՄԵՂՐԻ

ԼԻԼԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄՇԱԿՈՒՄԸ՝ ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Սրտիս հե՛տ է միշտ
Սիրո անասահման քո ջերմությունը,
Իմ մեղու՛շ Մեղրի...

Ու հոգուս մե՛ջ են
Արևիդ ոսկյա կայծկլտումները,
Որոնք ծփում են
Մայր եկեղեցու թախծոտ գմբեթին
Եվ հնադարյան քո պարիսպների,
Կամուրջների ու բուրգերի ուսին,
Իմ չքնա՛ղ Մեղրի...

Միշտ սրտիս մեջ են
Գարնան երկնքիդ անդորրը ծավի,
Արաքսից եկող սյու՛քը հովաշունչ
Եվ բարդիներիդ սվավոցը մեղմ,
Իմ քնքու՛շ Մեղրի...
Սիրում եմ ամռան այրող ջերմությամբ
Իրար շղթայված քո ժեռ քարերը,
Քո մի բուռ հողը՝
Մեղրի չափ քաղցր մրգերի համով,
Իմ քա՛ղցր Մեղրի...

Հոգուս մե՛ջ են միշտ
Իրիկնամուտիդ ծո՛վ անըջանքը,
Մայրամուտներիդ մունջ կախարդանքը,
Եվ լուսաբացիդ այգը բերկրալից...
Իմ անու՛շ Մեղրի...